

37(56)
S-37

ՄԱՏԵՆԱՇԱՐ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՅՈՒՀԱՆՆԷՍ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ
ԹՐԻԲԱՀԱՅՈՑ ՄԷՋ

1600-1900

Գ Ա Հ Ի Ր Է

1 9 8 3



1987

ՓՈՒԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԻ


Ասելի քան երեքշաբթի յիսուն ամբիներու անց-
եալ մը ունի թրքաշայց կրթական շարժումը եւ աս-
տիկա նկատի ունենալով նպատակադրեցինք զայն ու-
սումնասիրել ու գարձնել ժողովուրդին սեփականու-
թիւնը:

Մեր պրպատումներուն ընթացքին հանդիպեցանք
պոլսաշայ թերթերու կարգ մը հին հաւաքածոներու
մէջ մասնաւորաբար հետաքրքրական յօդուածներու,
որոնք կը վերաբերէին թրքաշայ կրթական խնդիրնե-
րուն եւ մենք երկար ամբիներ հետևողութեամբ,
ճիշտ թափելով կարողացանք գտնոնք մէկ կտեղել, հա-
մազրել իրարու հետ եւ ուրիշ պատմական տուեալնե-
րու հետ միաձուլելով ի վերջոյ գլուխ հանել սոյն
գործը, որ կը կարծենք թէ առաջինը պիտի ըլլայ իր
տեսակին մէջ:

Այս բանով սակայն, ցաւ ի սիրտ պէտք ենք խոս-
տովանել թէ թերի կողմեր պիտի գտնուին այս ու-
սումնասիրութեան մէջ, որովհետեւ յրեթացս մեր
պրպատումներուն մենք շատ գծուաբութեանց հանդի-
պեցանք, տեղեկագրութեանց մէջ անձերու անուննե-
րու անորոշութիւններ, դպրոցական վիճակագրու-
թեանց մէջ աշակերտներու, ուսուցչութեան, պիւս-
ճէի եւ այլ ծանօթագրութիւններով պակասաւոր կամ
անբաւարար տեղեկութիւններով հրատարակուած են
գտնուածքը, ինչ որ անխուսափելիօրէն կենթարկ-
են ուսումնասիրողը անել վիճակի մը:

Ասոր հետ մէկտեղ նշենք թէ՛ կարգ մը հայոս-
շատ շրջաններու կրթական գործունէութեան մասին
սեւէ տեղեկութիւն չգտանք եւ այդ պատճառ եղաւ
որ այդ շրջաններու հայոց դպրոցներուն մասին հի-
րանաբ մանրամասնութիւններ ամլ:

Հակառակ ասոր սակայն, մեր ունեցած կարելիու-
թիւնները եւ ճիղը ի սպաս դրինք որպէսզի, եթէ ոչ
կտարակալ՝ ոչ թ ըստ բաւականին լրիւ կերպով ներ-
կայացնենք թրքաշայց կրթական գործունէութիւնը:
Այտեղ պարտականութիւն ունինք մեր խորին
նորահայտութիւնը յարանելու Փարսիի նուպարեան
Մասենդարանայեան՝ Պր. Արտաշէս Գարսաշեանին
եւ «Արևի» օրաթերթի խմբագիր՝ Տոքթ. Աւետիս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ՄԱՐԿԱՆ
1878-1901

Եսփուճեանին, որոնք մեծապէս օգնեցին մեզի այս գործին յաջողութեան համար:

Տրուած Ելլալով որ Թրքոստայց կը թախան շարժուի սեւոզութիւնը բաւական երկար է եւ կը պարձուի շատ մը հայրազան շրջաններ, մտածեցինք մեր ուսումնասիրութիւնը այս գործին մէջ սահմանել 1600ական թուականներէն մինչեւ 1900 թուականը: Թողտալով անկէ յաջորդ տարիներու ուսումնասիրութիւնը ուրիշ ժամանակի մը, որոնք վառքը կը կազմեն Թրքոստայութեան:

Արդ, կը խորհինք թէ այս առիթով պատշաճ պիտի Ելլայ նախ քան նիւթին անցնելը, մտաւոր գազափորք մը ստալ ընթերցողին Թրքոստայց ԺԻ՛ղարտի դոյտով ինձակին եւ ազգային կենսութիւն մասին, հայանցիկ վիճակով մը ծանօթացնել այդ շրջանի իրողարձուութիւններուն, որպէսզի երազել Ելլայ թէ ինչպէս եւ ինչպիսի պայմաններու տակ Թրքոստայց մէջ կը թախան շարժումը սկիզբը առն ու զարգացաւ յաջորդական տարիներու ընթացքին:

Կ'անօթ երողութիւն է թէ ԺԻ՛ղարտ սկիզբները Օսմանեան կայսրութիւնը կը գտնուէր խոռվայոյց վիճակի մէջ, իրար յաջորդող բանակային ապստամբութիւններու հետեւանքով, որ պատմութեան մէջ յարջորջումը է ձէլալիներու ապստամբութիւններ կամ արշաւանքներ, որոնք խիստ ճակատագրական եղանակով Թրքոստայց համար:

Տարիներ շարունակ Օսմանեան Թուրքիոյ կ'առաջարկուի զբաղեցաւ այդ իրար յաջորդող ապստամբութիւնները զսպելու, որոնք Փոքր Ասիոյ ամբողջ տարածքին աւերածութեանց եւ արեւահեղուութեանց դուռ բացաւ: Այդ ապստամբութիւնները պատճառ եղան գանազան քաղաքներէն շատ մը գաղթականութիւններ կ'առաջարկին գէպի Կ. Պոլիս կամ արեւմտեան սահմաններու քաղաքներ, ուր բազմաթիւ ուրիշ վայրերէ աւելի խաղաղ էին:

Թուրք ժողովուրդին հետ հայ ժողովուրդն ալ աւաւոր գոյութիւն ենթարկուեցաւ այդ ապստամբութիւններու սեւոզութեան եւ բազմութիւն թուրքերու օրինակին հետեւելով հայեր, անոնք որոնք միջոցներ

ունէին գաղթելու, շտապով քաղաքական դժնդակ կացութեան, գացին հաստատուելու Կ. Պոլիս կամ անոր շրջակայ արուարձաններու մէջ եւ կամ հոնկէ անցան գէպի պալէստինեան երկիրներ կամ Եւրոպա:

Այս պայմաններու բերումով Կ. Պոլիս եւ շրջակայ արուարձանները խճողուեցան բազմաթիւ հայ գաղթականներով, որոնք ըստ ժամանակակից հայկական սպիւրներու, այն թուականներուն հարիւր հազարէն աւելի կը հասնէր, որ համեմատաբար ուրիշ շրջաններու շատ մեծ թիւ մը կը կազմէր:

Օսմանեան Թուրքիոյ կ'առաջարկուի թիւնը անգամ մը որ յաջողեցաւ գոպել այդ ապստամբութիւնները, առաջին գործը եղաւ խոսելու այդ գաղթականներէն շատ մը վերագործնել իրենց նախկին բնակավայրերը: Ասակն եւ այնպէս, ուրիշներ հնարաւորութիւնը ունեցան կայք հաստատել ու շարունակել մնալ իրենց տեղերը:

Խոստամուտ մը, որ ծայր սուաւ գաղութին մէջ շատ մը իրարանցումներու եւ վէճերու նորեկներու եւ բնիկներու միջեւ:

Բնիկ պոլսեցիները որոնք հինէն հաստատուած էին, չէին հանդուրժեր նորեկներուն, որոնք սեւապէս գաղթականներու անասչ վիճակով մնացին եւ իրենք զիրենք գերագոյնով անոնցմէ, չէին փափաքեր որ անոնք խոռուին տեղւորն ազգային գործերուն մէջ: Այս պատճառներով հնարու եւ նորերու միջեւ խեղդեցնելը անպակաս մնացին:

Անոր հետ մէկտեղ կ'ըն նաեւ Պատրիարքական Աթոռին տիրանալու ձգտումներ կը իրականացան խոսակցութիւններու եւ անոնց կուսակից աշխարհականներու միջեւ, որոնք անխորտ երկուոյթներ պարզեցին եւ սխուր շուտեւանքներ ունեցան զժողովուրդը:

Առաջին անգամ անօթայի ապստամբութիւնը պատճառը հանդիսացաւ Յովհաննէս Խուլ, որ գորտուր զիրք ունենալով, իր կողմնակիցներուն միջոցաւ յաջողեցաւ խել Կ. Պոլիս: Պատրիարքական Աթոռը Միւլիսիտեղեկ Գանձեցի ձեռքէն 1600 թուականին:

Ասակն Յովհաննէս Խուլ երկար չկացաւ մնալ իր այնքան պաշտած Աթոռին վրայ, որովհետեւ Գրիգոր

Կեսարացի Երուսաղէմէն նուիրակութեան պաշտօնով
Կ. Պոլիս դարձաւ, մեծ ժողովրդակառութիւն շահեցաւ
իր գլխանականի արժանեքով, կրօնաւորի օրինակչի
կենցաղով եւ մանաւանդ վառարար կերպարանքով եւ
արժանի եղաւ բնարուելու Կ. Պոլսոյ պատրիարք
1601-ին:

Յովհաննէս Սույ բնական է ճամբուց իր պաշտօ-
նագրկութիւնը եւ պայքար բացաւ Գրիգոր Կեսարացիի
դէմ: Թէեւ ան յաջողեցաւ Կրիգոր Կեսարացիի բացա-
կայութեան բարձիւ իր կորսնցուցած աթոռին վրայ,
սակայն կարճ ժամանակ ետք դարձեալ ճարկարուե-
ցաւ տեղի սույ արժանաւոր գահակալին:

Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռին չուրջ սա-
կայն պայքարը կը շարունակուէր մեծ ծաւալով: Այս
անգամ մրցակիցներ կը շատնային: Յովհաննէս Սույէ
ցառ ի յայտ կուգայ աւելնալու Չարբիտ վանեցի եւ
Գրիգոր Դարանապցի եկեղեցականները, որոնք ի վեր-
ջոյ կը յաջողին Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռին
սահմանները բաժնել երեքի:

Մենք պիտի չճանրանանք պատրիարքարանին
չուրջ կատարուող պայքարին մասին, որ կը վերաբերի
շահագիտական եւ դաւանական խնդիրներու, որոնք
մեր նպատակէն հեռու են եւ պիտի չուզենք մեր նիւ-
թէն շեղիլ:

Սակայն եւ այնպէս պէտք է դիտանաք, թէ երայ
տարիներ ալ, ազդեցիկ աշխարհականներ եւս նախամե-
ծար ճամբայցին Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Աթոռը
ուսէ կուսակցութեան մը բնարելիին յանձնելու տեղ,
Հասարակար իրենք վարել պատրիարքարանին գործե-
րը 1641-1650ին, յետոյ 1655-1657ին եւ սպա 1657-
1659ին:

Աշխարհական Տեղակալներու պաշտօնավարու-
թիւնը սակայն տեսական չլրացաւ ըլլալ, որովհետեւ
միշտ պայքարող կուսակցութիւններէն մէկը կը յա-
ջողէր ձեռք բերել իր բնարելիին ճամբար Պատրիար-
քական Աթոռը, մասնաւորաբար գրգռելով պէճերու
բնագործողութիւնը, որ մեծ դեր կատարում էր
պատրիարքական բնարուելու մէջ:

Պատրիարքական Աթոռին առգնապալի շրջանին

էր որ, կաթողիկ միախոնարներ իրենց գլուխ ունենա-
լով Հաստի Գրիգոր ժԴ. Պապը, կը ջանային իրենց
եկեղեցական ազդեցութիւնը թափանցել Սերձուոր
Արեւելք:

Այդ նպատակին ճամբար առաջին հերթին Հայեր
կը դառնային ուշադրութեան առարկայ, իրենց քրիս-
տոնեայ ազդեցութեան սահմաններու մէջ ամենա-
զօրաւոր ճամբայց: Եւ որովհետեւ այն օրերուն, ինչ-
պէս շինք, Պատրիարքական Աթոռին չուրջ կատար-
ւած պայքարներու հետեւանքով խրատումներ յառա-
եկացած էին գաղութիւն մէջ եւ խոռովալ միճակ մը
ստացած էր, պատե՛հ առիթը սեպեցին օգտուիլ այդ
կացութեան եւ ջանացին իրենց գործակալներ որսալ,
որպէսզի հեշտօրէն կարելի ըլլար իրագործել իրենց
նպատակը:

Պրանսական կառավարութիւնն ալ կաթողիկէ կղե-
րի հետապնդած ծրագրով կաշխատէր իր կարգին
մուտք գործել ու տեղաւորուիլ Թուրքոյ մէջ, իր
բողոքական ջահերը սպառնալու մտադրութեամբ:

Ան թէ ինչու ճամբար Պրանսական կառավարու-
թիւնը գործողք կը կանքներ կաթողիկէ կղերին եւ ուժ
կուտար անոր փրոսիականաւ առջ տանելու Թուրքոյ
մէջ:

Եւ իրապէս կաթողիկէ միախոնարներ կը յաջողին
իրենց կողմը շահիլ մի քանի Հայ առաքելական եկե-
ղեցականներ, ինչպէս Կիրակոս Երեւանցին, Սաւա-
տուր Սերաստացին, Թովմաս Բեքիացին, Յովհաննէս
Ուսէյանցին, Պօղոս Տիմրիկեցին եւ ուրիշներ, որ-
ոնք կաթողիկէ փրոսիականացի ալ աւելի կը ճա-
հէին կիրթերը եւ մասնաւոր ջանքեր կը թափէին Կ.
Պոլսոյ Պատրիարքական Աթոռին տիրանալու եւ Դա-
ւիթ Արեւելքի պատրիարքը - որ Հայ Առաքելական
եկեղեցւոյ վերստին պաշտօնան էր - պաշտօնագրկելու:

Երբ Դաւիթ կ'իմանայ այս թշնամական խոռուար-
դը եւ Հայ Առաքելական եկեղեցականներու լրատին
կրօնաւորներու դազանի դաւաճութեան մը մէջ
դանուիլը, պետական պաշտօնատարներու միջոցաւ
ձեռքաւարել կուտայ դաննք, որոնցմէ միայն Թով-
մաս եւ Պօղոս կրնան խոյ տալ:

Օսմանեան թուրքերոյ կառավարութիւնը այն օրերուն պատերազմի մէջ ըլլալով եւրոպական երկիրներու դէմ, կ'զգուշանար օտար թախանջուձէ երկրին մէջ, որ կրնար վտանգել երկրի ազատութիւնը: Եւ արդէն նախապէս կատարուած սորձերը պետական լուրջ արդելքներու հանդիպած էին ու ձախողութեան մատուած:

Սակայն երբ ժամանակները փոխուեցան եւ Օսմանեան թուրքերոյ եւ եւրոպական պետութիւններու միջեւ բարեկամական շարքերու թիւններ դոյալան, թուրք իշխանաւորներու եւ կաթոլիկ կղերականներու միջեւ ալ իրար հասկացողութեան միջնորդա մը կ'ստեղծուի, Օսմանեան պետութեան կարգ մը քաղաքներու մէջ հետզհետէ կը հաստատուին միախոնտրական ուսումնարաններ, որոնք հետագային դործունէութեան բնագրծակ դաշալ պիտի ունենային:

Թրքահայոց դիրքը որքան որ առաջնակարգ տեղ կը գրաւէր Օսմանեան պետութեան մէջ առեւտրական եւ մշակութային գեանի վրայ, սակայն այդ օրերուն կը թեկան դործունէութիւնը նոր սկիզբ կ'առնէր Կ. Պոլսոյ եւ կարգ մը շրջաններու մէջ եւ հայ ժողովուրդը բնագծանուր առճամբ խոր տգիտութեան խաւարի մէջ կը ստնայտէր:

Մեր սոյն ուսումնասիրութեան նպատակը ուրեմն աւելի պարզութեան է, պատշաճ կերպով, հանգուստօրէն ներկայացնելու իրաց դրութիւնը ու անդրադառնալ կրթական շարժումին զարգացումներուն հիմնուելով պատմական առեւանջներու վրայ:

Ժ. դարու փերթերեալ փերթիչեոյ ամփոփ տեղեկագրութիւնը բաւարար է, բնթերքողին դիւստանկնալի դարձնելու եւ յաճողական շրջաններու անդրերուն հետեւիլ կարենալու:



ԿՐԹԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ

Ժ. դարու սկզբնաւորութեան, երբ Օսմանեան թուրքիս կը գտնուէր խառովեալ վիճակի մէջ, արտաքին ու ներքին թշնամիներու պատճառաւ, թրքահայոց մէջ սկիզբ կ'առնէր կրթական ձեռնարկներ, մի քանի քաջակորով եկեղեցականներու կողմէ, որոնք հակառակ տերող դժուրակ պայմաններուն, շնորհիկցան եւ իրենց միաբը դաշնակցելով կամքին հետ համբերաւոր սկիզբ ու յաճառ աշխատանքով, ձգտեցան տգիտութեան մէջ թանձրամած հայ ժողովուրդը առաջնորդել զէպի լոյս:

1603 թուականին մենք Կ. Պոլսոյ մէջ երեք վարդապետներու կը հանդիպենք, որոնք են Յակոբ Ալթինթուրքի, Մաղաքիս թողաւեցի ու Զաքարիա Վանեցի (տես Հ. Գր. Ծ. Վրդ. Գալէմբեարեանի «Կենսագրութիւններ» Ա. հատր էջ 42): Այս վարդապետները որոնք Կիլիկիայէն եկած էին, իրենց ժամանակին ամէնէն նշանակելի դէմքերը կը նկատուէին, որոնք դործակցարար կրթական կազմակերպութեան մը հիմքերը դրին:

Գրիգոր Վրդ. Դարանաղցի իր «Ժամանակագրութեան» մէջ մեղի կը ծանօթացնէ Յակոբ Վրդ. Ալթինթուրքի իրրեւ «հռչակեանքն ընդ ամենայն աշխարհն Հայոց» (էջ 69) եւ էր «Մեծ աւաղ վարդապետ (էջ 113): Անեկա աշակերտն էր եղած Աղաքիս Զուպայեցի կաթողիկոսին: Ժամանակ մը թոմարալայի վանքը կ'եցած է (1588ին), ապա 1596ին գացած է Չէլթիւն ու հոնկէ հեռացած է կարին, ուր մնացած է երկու տարի: 1598ին իրրեւ առաջնորդ կ'երթայ թողաւ. սակայն մեղի ծանօթ ձէլալիներու ապստամբութեանց պատճառաւ ուրիշ գաղթականներու հետ կ'երթայ հաստատուելու Կ. Պոլիս:

Համաձայն Դարանաղցիի հաստատումին, Մաղաքիս թողաւեցի աշակերտած է Պետրոս Կարեւանցի կաթողիկոսին (էջ 363): Ան կարճ (էրջագալութենէ ետք եկած է Կ. Պոլիս հաստատուելու, իսկ Զաքարիա Վանեցիի մասին Դարանաղցի կը գրէ թէ «եղև վարդապետ ի Պետրոսէն» (Պետրոս Կարեւանցի կաթողի-

կանին Յ. Տ. Պ.), որ նախ մեծ Բարսեղին էր աշակերտակալ, ինձանկ ապա աս Պետրոսն եկեալ, որ Գիշի որդի առեւ» (էջ 364) :

Վերոյիշեալ այս երեք վարդապետներու հիմնած դասարաններ կամ «դպրատուն մանկանց»ները (Գասարանացի, էջ 345) մեր կարծած դպրոցներուն չէին նմաներ, այլ անոնք եկեղեցիներու կից խուցեր էին, ուր փոքր աղաք հաւարուելով կ'ստանային կրօնական կրթութիւն: Ժամանակակից լեզուակարաններու մէջ մենք կը հանդիպենք ՚ժամ դասարաններու, որոնք Կ. Պոլսոյ մէջ եղած են թրքաշայ կրթարանները շարժումին սկզբնաւորութեան:

Կ. Պոլիս իրբև Օսմանեան թուրքիոյ մայրաքաղաք ունէր բացառիկ կարեւորութիւն ոչ միայն այլազգի ժողովուրդներուն, այլև հայերու համար: Հոն էին երկրին աւագանին, կրօնական պետերը, օստր պետութիւններու ներկայացուցիչները եւ կարեւոր առեւտրականները: Այս առեւտրութիւնները բնակչոջարար նկատի անենալով է որ, բնդհանրապէս սեւէ ձեռնարկ սկիզբ առած է նախ մայրաքաղաքին մէջ եւ ապա Հոնկէ արածուած է միւս մեծ ու փոքր քաղաքները:

Հետևաբար, թրքաշայց կրթական շարժումին սրբազան չէր կրնար տարբեր ըլլալ, քանիս Պատրիարքարանը հոն հաստատուած էր եւ ազգային ջոշիւր (որոնք մեծ մասամբ պետական զանազան ծառայութեան մէջ էին) մեծ առեւտրականները կայք հաստատած էին այնտեղ եւ անոնք է որ ի վերջոյ պիտի ստարեկին անոս դարգացումին նիթապէս եւ բարձրացէս:

Այն թուականներուն Կ. Պոլսոյ Պատրիարքութեան ակնուակայն էր Գրիգոր Կեսարացի, որ նոյնպէս համարուար գիտնական մըն էր, իր կարեւոր դասիներ բերաս Եսայր Զէյթունցիի, Մադարիս Թոստեցիի եւ Զարբիս Վան՝ գիե ձեռնարկած կրթական շարժումին:

Պատմական տուեալներ կը պահին ստուգելու համար թէ ո՞ր թապն մէջ առաջին անգամ բացուած էին վերոյիշեալ վարդապետներու դասարանները: Սա

կայն այդ ուղղութեամբ Ա. Ալպոյսահեան հետեւութիւններ կ'ընէ առանց սակայն հիմնուելու սեւէ քստտի մը վրայ: Ան կը կարծէ թէ Բէֆէցլոց թապն Ս. Նիկողոս կամ Էսիրնէ Գարուի Չարխափան Ս. Սասածամինի եւ կամ վերջապէս Սամթիւիոյ Սուլբ Մուրաճաբբի Ս. Գէորգ եկեղեցիին կից պէտք են եղած ըլլալ այդ դասարանները (տես Ա. Ալպոյսահեանի «Պատմութիւն հայ դպրոցի» էջ 547) :

Գրիգոր Կեսարացի պատրիարքն ու միւս վարդապետները դասուանողած են իրենց աշակերտներուն Ս. Գրոց մասին, որ այն ժամանակ կարեւորագոյն գիտութիւնը կը համարուէր:

Այդ դասարաններուն կամ խուցերուն մէջ հաւաքուած աշակերտներէն կը սրբաբաւտուին ազգայն եկեղեցականներ, որոնք պիտի ծառայէին Հայ եկեղեցւոյ եւ ժողովուրդին:

Մինչև այն ասին թրքաշայերու մէջ ուսույ եկեղեցականներ չկային դժբախտաբար, հետևաբար պահանջը մը կը դառնար ուսեալ եկեղեցականներ պատրաստելու խնդիրը:

Այցելու վերոյիշեալ երեք վարդապետներուն գնբը այդ ուղղութեամբ մեծ եղած եւ գնահատուիլ աշխատանքներ կատարեցին ու աշակերտներ հասցուցին:

Սակայն պատրաստուած աշակերտներու թիւը այն օրերուն տերուարքը էր օրուան պահանջը բոսցանելու, իսկ միւս կողմէ կաթողիկ կղերը կը ջնաբօզուուելի առիթէն եւ իր բարակամաբ թափանչել Արեւելք, պատրաստուած միտնարներու միջոցու եւ իրենց հետևողները որսալ:

Այդ ուղղութեամբ 1609-ին Յրանսայի գեապաններ՝ Տը Պրաֆէս եւ Տը Մալիսն աշխատանք կը սանին որպէսզի Օսմանեան Թուրքիոյ կառավարութեան թոյլտուութիւն ստանան Յիսուսեան կղերականներու մուտքը Թուրքիոյ մէջ եւ անոնց տալու գործելու ազատութիւն:

Երկար բանակցութիւններէ ետք ի վերջոյ Օսմանեան թուրքիոյ կառավարութեան հաւանութեամբ Յիսուսեաններ կը յաջողին իրենց նպատակին հասնիլ եւ Պապին կարգադրութեամբ կը հաստատեն գլորոց

ներ և սպարաններ:

Ասիկո թրքահայութիւնը լուրջ վստանդի ապիւ-
կը դնէր: Պոլսահայութիւնը պարսկաուսած ըլլալով
պարսկաբարձիւն և այլ խնդիրներով, չէր կրնար
լուրջ աշխատանքի լծուիլ, որպէսզի հայ ժողովուրդը
կարենար գերծ պահել օտար ազդեցութենէն:

Այս վիճակը լաւագոյնս օգտագործեցին կաթո-
լիկ միսիոնարներ և գործի լծուեցան ու յաջողու-
թիւններ ձեռք բերին սչ միայն Կ. Պոլսոյ մէջ, այլև
երեսց կրօնածառայ քաղաքներով իրենց բր-
բակաւոր տարածեցին պատաններ մէջ ևս:

Անոնք լեզու սորվեցնելու պատրաստիւով իրենց
մեթոտիկ գործունէութեամբ կարողացան հայերէն
աւանք հրատարակել, մօտենալով մօտեւանդ կարա-
ւաշներու մօտ և խոստումներով դանոնք իրենց հետ-
եացնել:

Այս ձևով հայերու մէջ կազմուեցաւ լատինա-
միտներու խմբակցութիւն մը, որոնց գլուխ կը կե-
նային կաշառուած ազգեցիկ դերք ունեցող անձնաւո-
րու թիւներ և կղերականներ:

Կաթոլիկ բրորակաւար լաւ կերպով տանելու հա-
մար, միսիոնարներէն մի քանին նոյնիսկ հայերէն
լեզուն սորվեցան իմաստներ փանքին մէջ: Ասոնցմէ
մին Պօղոս Փիրոմալի Սեպեհնացին էր, Հայաստանի
և Վրաստանի մէջ կարծ գործունէութեան շրջան մը
անցնելէ ետք, կ'անցնի Կ. Պոլիս ու իր անուշ լեզուն
և սերակահի բնիկ ազգեցիկ հայ դեկալարներէն շա-
տներու բարեկամութիւնը և արտօնութիւն կ'ստանայ
նոյնիսկ հայ եկեղեցիներուն մէջ քառողելու:

Ասոր կը յաջորդէ Կդեմէս Կարանոս կրօնաւորը,
որ Պօղոս Փիրոմալիի պէս ան ալ Հայաստան և Վրաս-
տան երեք տարիի շափ կը մնայ Հայերէն լեզուն սոր-
վելու և սպա հրաման կը ստանայ Հոսոմի Պապէն Պո-
լիս անցնելու քառողել Հայերու մէջ:

Նախ Ղալաթիա թաղին մէջ իրեն պաշտպան փան
ար Լահէյ, Չրանասոյի դեսպանին օգնութեամբ ու-
սուցչութեան կը սկսի և իր հայաստանութիւն իր
նպատակներուն և ծրարներուն յաջողութիւն կու-
սայ և գիտու հայ աշակերտներ կը հաւաքել իր

լուրջ (սեւ «Ազգապատմ» էջ 2466):

ինչպէս բարձր վերը, հայ բարձրաստիւան եկե-
ղեցականներ՝ ինչպէս Կիրակոս Երևասցի, Խաչա-
տուր Սեբաստացի, Թովմաս Բերկացի, Յովհաննէս
Ուսահայեցի, Պօղոս Տիլիքիկեցի և ուրիշ եկեղեցա-
կաններ, կրթական շարժման անունով տարուող՝ բայց
խալութեան մէջ կաթոլիկութիւնը մտցնելու աշխա-
տանքին կը յարին:

Միայն հայերու մէջ չէր որ նման երեսութիւնը
պարտուեցան, այլև յոյն հայասցիներ մէջ ալ պատ-
կառւած սասք կ'էաւ և մէճերու դուռ բացու:

Յոյն ժողովուրդին պէս հայերն ալ նախանձ-
խոզիք էին իրենց եկեղեցւոյ անաղարտութեան և
կո դժուհէին կաթոլիկ միսիոնարներու Կ Պոլսի
մէջ տարած գործունէութենէն:

Գալուստ Վրդ. Լճեցի թարգման հանդիսանալով
հայ ժողովուրդի գալուսթիւն, կը գրէ հետեւեալը իր
ՔԿ. Պօլիս Հայոց Դուռ Կորստեան և Դուռ կենաց
Բացեալք գրքովին մէջ: Այս ստղարով գալուսթները
ճիշդութեամբ բուսաններն էին՝ որոնց անունը հայերէն
անունը Յիսուսեան կը թարգմանուի, բայց անպիսի
անուն մը՝ որ ստանալով՝ հրեշտակ և, օճան՝
աղանի, բուսելուն կը նմանի: Ասոնց ամէն մէկ քաշ-
լովախը՝ որ Եւրպայիոյ քաղաքակիրթ ժողովուրդ լե-
ցուն աշխարհէն երկրին երկրաշարժ և շունչներն
այ որ իրկից որտաւ կը պատճառէր, ինչպէս
ասն ատենի հայոց ամէն տեսակ շարժներով և թըշ-
ւոտութիւններով կուրցած ու տկարացած ժողովուրդ-
եան ձեռքէն բռնելով՝ չէին կրնար տանիլ ուզած տե-
ղերնին կապել կազմանդել (էջ 11-12):

Բողոքական միսիոնարներ տեսնելով կաթոլիկ-
ներու յաջողութիւնը Թուրքիոյ մէջ ամէն գնով ջա-
նացին սրգելք հանդիսանալ անոր ծաւալումին և
Սեղիտոյ ու Հոլանասոյի կառավարութիւններու ազդե-
ցութեամբ անոնք կարողացան Օսմանեան Թուրքիոյ
կառավարութեան կապիտալիզմ գործնել և նոյնիսկ
հարածանքի ենթարկել սալ պրնոնք:

1628-ին Օսմանեան Թուրքիոյ կառավարութիւնը
իր երկրին մէջ սպահալելու համար աղոտորութիւնը

և զերժ կայացանելու ասար սպիտակութիւններէ, կարասքով Յիսուսեան մխրտարաններ երկրէն և անոնց հաստատած կրթարաններ կը փակէ (տես «Ընդ դարձակ Օրացոյց Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի» 1901 էջ 95-ձրանգ Աստուտքի յոգևածք):

Ասիկա շուսագոյն տոխթ պէտք էր ըլլալ հայերուն համար, կարենալու համար գորտցնել կրթական շարժումը թրքահայոց մէջ, սակայն դժբախտաբար գաղտնիքն ներքին խնդիրները և գաւանական վէճերը պատճառ կ'ըլլային յապաղեցնելու այս շատ կենսական գործը:

Այս պայմաններու սակ Կ. Պոլսոյ մէջ սկիզբ առած շարժումը շատ նախնական և անշուք վիճակի մէջ էր և յառաջացում չէր արձանագրեր:

1610-11-ին Հիմնուած Արմաշի դպրեկանքը Թագէտս եպ. Ի ե. Գրիգոր Գաղանազարի կողմէ, բողոքատմամբ միւս կրթարաններուն նշանակելի գործունէութիւն ցոյց չէր տար:

Հայ կրթական շարժումը Կ. Պոլսոյ մէջ զգալի փոխադրութիւններ կրեց ժէ. դարու երկրորդ քաւոր դէն ետք: Գուճ Գարուի Ս. Աստուածածին Մայր եկեղեցիին, Ստամբուլոյ Ս. Գէորգ, Ղալաթիչ, Սիկեստրի Ս. Կարապետ, Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցիներու կեց կրթարան-դասարաններու մէջ, իննէն առանկեք ասորեկան սղոյց կ'ուսուցուէր կրօնական գիտելիքներ, բաւական զարգացած քահանաներու կողմէ:

Այդ շրջանի աշակերտներէն Երեմիա Չելչպի Բէճմիրճեան, որ հետագային դարձած է Կ. Պոլսոյ սպիտակ անձնուսուրբիւններէն մին, մեղի թողած է կարևոր անդեկութիւններ իր ժամանակի Կ. Պոլսոյ գաղտնի կանգնի մասին:

Իր «Օրացրութեան» մէջ ՌՂԸ.—1649 թուականի «Փետրուար ամսոյ ԺԳ. յաւուր տօնի սրբոյ զուարեան Բրիտանսի քառասորոյ ի Տաճարն ձեռնադրեաց Երուսղէմի նախակի Սալատուր վարապետն Գ. քահանայս՝ զՏէր Վարդան, զՏէր Իշխատիոս, զՏէր Յովաննէս փոքր՝ ի Սուրբ Աստուածածին եկեղեցի, և բողոք գպիրս՝ ի Զ. եկեղեցեաց ձեռնադրեաց,

որ ի կիրակոս վարդապետն մինչև ցոյսմ ոչ թողէին գողբ փոխ և քարոզ սակ յեկեղեցի կամ շապիթ գեղեցու և դպրութիւն տանել, յարց մ'ըջէ կայի և չնչինս, և եկեալ ի Սուրբ Սարգիս եկեղեցի մեր» (էջ 6):

Սոյն առիթը կ'ապացուցանեն թէ՛ այդ թուականներուն շատ մը աշակերտներ կ'ուսանէին Եղիազար Այնթապցիի և անոր նման բարձր զարգացումի աէր Մարտիրոս Ղրիմեցի վարդապետներու հսկողութեան սակ, որոնց կ'աջակցէին հոյլ մը ուրիշ վարդապետներ, ինչպիսիքն էին Յովհաննէս Չնքուշցի, Մեծ Յովնան (կամ Ռհան), Ներսէս (Թաթեի առաջնորդ), Իղնատիոս, Կիրակոս, Ղալաթ (Սերաստիացի), Տէր Յովհաննէս քահանայ և ուրիշներ, որոնց անունները մեկի անձանօթ մ'ապագծ են:

Անոցի Յակոբ դպիր, որդիի Սապիւղ բնակող Ակնցի Սոճա Մահաեսի վաճարատի, և կնոջ Եղագակաթի, կը հաստատէ թէ ինք աշակերտած է Իլովցի Յակոբ Սարկաւաղի և Արիսաակէս քահանայի, որ Ս. Հրեշտակապետ եկեղեցու քահանայութիւն մէկն էր և բողոքով ձեռագրիներ գրած է:

— Յակոբ դպիր ինքն ալ գրած է կարգ մը ձեռագիրներ և պատմութիւն մը Ս. Նիկողոսի դրաման և Ս. Հրեշտակապետ ոտարցութե մասու (էջմիւսինի մատենադարանը կը մնայ) (տես Ա. Արդոյմճեանի «Պատմութիւն հայ դպրոցի» էջ 562):

Չնուգիրներու ընդօրինակութիւնը ինքնին ապացոյց մըն է հաստատելու թէ ժէ. դարու երկրորդ կէսին կրթական մակարդակը աւելի բարձրացած էր հայկական կրթարաններուն մէջ և ուր լուսաւորեալ կղերականներու հետ կը պարտասուէին զարգացած աշխարհականներ ալ:

Միւս կողմէ սակայն, Յիսուսեան կաթոլիկ կղերականներ, հսկաւակ անոր որ 1626-էն ի վեր թրքական իշխանութեան կողմէ հարձուած էին ու պաշտօնապէս արգելուած անոնց գործունէութիւնը թուրքոյ մէջ, սակայն անոնք կը շարունակէին ծածկարար իրենց գործը բո՛ւ իշխի, ուսուցելի և այլ պիտակի սակ:



1670-ին սահմանները կաթողիկոսականությանը և Արմենիայի թուրքական կաթողիկոսականությանը միջև յարաբերությունները վերստին կը սկսին սերտանալ շնորհիվ Ֆրանսայի թուրքականությանը, Յիսուսականների քաղաքականությանը և Գրիգորյանների իրենց ազատ հրատարակչին գործունեություն կսկսին և առաջին անգամ Կ. Պոլսի մէջ կը հաստատեն Ecole des jeunes de langues ou Armeniens, որուն նպատակն էր լեզուագիտութիւնը պարզացնել, բնականաբար անոր հետ կաթողիկոսականութեանը բնեւոյժ, որ գլխաւոր նպատակն էր:

Այս դպրոցը հաստատուած էր Կ. Պոլսի Բերթութիւնի մէջ և կը գտնուէր Քաթողիկոսական կղերականներու վարչութեան տակ, ուր գնահատու լեզուներու հետ սովորեցնուած, իրաւագիտական, աշխարհագրական, պատմական, բժշկական, երկրագիտական և մատենագիտական ու դժուարական գիտելիքներ կը ստանանդուէին: Կրթութիւնը ճիշդ էր այդ դպրոցին մէջ, ինչ որ կ'ենթադրուէր հրատարակչի գաղափարով, ինչ որ կ'ենթադրուէր Կ. Պոլսի մէջ, ինչ որ կ'ենթադրուէր Կ. Պոլսի մէջ, ինչ որ կ'ենթադրուէր Կ. Պոլսի մէջ, ինչ որ կ'ենթադրուէր Կ. Պոլսի մէջ:

Կաթողիկոսականութեանը, կամ քննչէս սոյնը էր կոչել գրեթէ ճշգրտութեամբ, չզուրկեցնել կաթողիկոսականութեանը արտաքին գործը հայերէն և յոյներէն ու ազգայնացի մէջները վերստին սկսան և ծայրայնություններու հասնել:

Հակառակ համայնքային նուստիւ վիճակին Կ. Պոլսի մէջ կրթական շարժումը հայոց մէջ կը շարունակուէր: Մենք կը հանդիպինք Տ. Աբրահամ Քննչի, որ Ալեքսանդրի Ս. Խաչեկեցիին խորանին Ետե գտնուող իր բնակարանը 1678-ին դպրոցի կը վերածել և կաթողիկոսական արանութեամբ աղոց Աւետարանի բնութեցումով կրթութիւն տալ կ'սկսէ: Թէև խորանաբար աշխատանքներ կը տարուին, սակայն կաթողիկոսականութեանը կը դադարանէ Տէր Աբրահամ Քննչի և մասնաւոր Թէրմանով մըն ալ կը հրատարակուի որ դպրոցը պահուի և կրթութիւնը բնօրինի շարունակուի:

Այս դպրոցին մէջ կը ստանան վարձը 1710-ին Ս. Խաչեկեցի Տէրմանով արտաքին:

Նոյնպէս, գրեթէ յիշատակարաններու վրայ հիմնուած կ'ըսենք թէ 1703-ին Խաչեկեցի մէջ Խաչատուր անուն քահանայ մը, իր անունը ազգայնորէն վերածած էր, ինչպէս նաև Քի ան իւրում վարձէր մանկունս: Իսկ 1729-ին Խաչեկեցի եկեղեցիին շինութեան անմիջապէս ետք, հոն գոյութիւն տուած էր «պարտու» մը, ուր կը գտնուէր Նոստր Աբրահամ դպիր Յովհաննէսեան, (տես Ա. Ալպոյաճեանի «Պատմութիւն հայ դպրոցի» էջ 563-564):

1701-ին ապրիլին Մխիթար Աւետարանի Կ. Պոլսի Բերթութիւնի մէջ դպրոցի դպրոց մը կը հաստատու պարտանի մը մէջ, (Կաթողիկոսական վարձէն որ կըրնայ հայտնուի) հայրն ասոր աշակերտներով: Այդ դպրոցը ապագային իր որոշ ուղղութեամբ ուրոյն անցը ունեցաւ հայ դպրոցներու պատմութեան մէջ, հակառակ անոր որ սկզբնական շրջանին խիստ հայտնուած էր Կ. Պոլսի հայ Պատրիարքարանին կողմէ:

Կ. Պոլսի հայեր պայքարել կարենալու համար կաթողիկոսներու դէմ, էջմիածինէն քանի մը վարդապետներ բերին Կ. Պոլիս, որոնց մէջ աչքաու զէմք մը կ'ուս. Աստուածատուր վրդ. Աղաւնի, որ Ջուղայի վանքին միաբաններէն էր և ուսումնական մարզու համար կը վարձէր:

Ան քիչ շատ շուտիկ յաջողութեան ունեցաւ Կ. Պոլսի մէջ աշակերտներ հասցնելու դժուար: Իր պատարասած աշակերտներէն անունին գարձու Պաղատար Իպիր Կեսարացին, որ իր մասնակցին թրքահայ կրթական շարժման մէջ կատարեց կարեւոր դեր:

Ըստ վատարկութեան Ա. Ալպոյաճեանի Երուսաղէմի վանքը Սիլվեստրի մէջ ունէր Գրիգոր Պարտարի օրերէն սկսեալ ընդարձակ աղի մը, ուր կ'առուցուած էր փոքրիկ մատուռ մը և Երուսաղէմի միաբաններուն համար հոգեւորան էր, ուր կ'իջեանէին նաև էջմիածինի նուիրակները:

Այդ հոգեւորանը Եղիշապիկի պատրիարքին հաստատութեամբ վերածուած է 1719-ին վարժոցի, ու-

սումնական եկեղեցականներ պատրաստելու համար: Հոն կը գրաստեւէին նոյնիսկ նոյնինքն կոյրս եւ հուկրս Վրդ- Արքեպիսկոս խորհրդոցի, որ զիտէր խորհրդէն, լրաններէն, յունարէն: Ժամանակին զիտուններուն ուսած գլխաւոր լիզուները (սեռ Ա. Աբրիսյանի «Պատմութիւն հայ դպրոցի» էջ 574):

Հոն գրաստեւած են նաեւ Ամուսայ Ժակունուով ճանչցուած Գասպար Գալիք Արքեպիսկոս, որուն տնունը մեծ գոյնատոյ յիշատակած են կոյրս եւ Նալ-Կան պատրիարքները (սեռ նոյն էջ 574):

Այս կրթարարներ մէջ կրօնական գիտութիւններէ զատ կ'աւանդուէին նաեւ փիլիսոփայութիւն եւ այլ գիտութիւններ, որ այլ ժամանակին գործու ուսման ամենակարեւոր մասը:

Կ. Պոլսոյ մէջ սկիզբ առած կրթական շարժումը բնական է անարձագանգ չմտայ եւ Թուրքիոյ գահագրանքաբաններու մէջ ուր հայեր ընտելութիւն հաստատած էին, իրենք եւս նոյնանձանեղիք կ'զուր կրթական խնդիրոյ գրողելու եւ կրթարարներ հաստատելու ճիղեր բրին:

Կ. Պոլսոյ ընտան է իր աշխարհաբանական սիր-քով առաւելութիւններ ունենալուն օտարներու հետ եւ անշուշտ թէ, որքան որ կաթոլիկներու գէժ մտա-նաւոր պայքար ցոյց տրուեցան: Հայոց Պատրիարքա-րանի կողմէ, սակայն ասիկա խիստ եղաւ որ հայեր Կաւէի լրջօրէն աշխատին, կրթական խնդրին մեծ կարեւորութիւն տան: Եւ բնականաբար որո՞՞ք կերպով ալ օգտուեցան անոնցմէ, եւ որպէս ժեթոնները իր բացելոյ իրենց գործունէութեան մէջ:



ՆԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ ԲԱՆԱԼՈՒ ՃԻԳԵՐ

Թրքահայերու կրթական շարժման գլխաւոր կեդ-րանն էր Կ. Պոլսոյ եւ ինչպէս տեսանք, հայ աշակերտ-ներ հասարակոյ եկեղեցիներու եւ վանքերու կից խուցկերու կամ «գրասրահ»ներու մէջ, կրօնական գր-նագրան գիտելիքներ կը սորվէին հայերէն լեզուով:

Իրիւր ժամանակն Թուրքիոյ մայրաքաղաքի, հայեր կրք առիթ կ'ունենային շօտմ ունենալու օտար-ներու հետ եւ գործի բերումով կը ճամբորդէին եւրո-պական երկիրներ, բնական է կ'ուզէին օգտուիլ յոս-մացեալ երկիրներու ունեցած առաւելութիւններէն, ինչպէս սուլտանական, անտառական ու մասնաւորա-պէս կրթական անսպէկտով:

Ուսումնասէր հայեր անուշա կը փափուցէին իր-ենց գրագրութե օժանկ կրթական բարձրորակ հասա-տատութիւններով, սակայն զմիտարարք ժամանակն Թուրքիոյ մէջ խաւարմա իշխանաւորներ արդի-րած էին հանրային դպրոցներու հաստատումը: Բայց եւ անպէս, արանում էր կրօնական ուսումը, որ ինչպէս ցոյց տուինք, կը շարունակէր համաձայն ծրար-քի մը, այն սպոց, որանք հետամուտ էին հետեւելու կրօնագիտութեան եւ կամ եկեղեցական գրանալու: Հետեւաբար, Կ. Պոլսոյ հայեր հարկադրուած էին գոհանալ կրօնական հանգամանք ունեցող կրթա-րաններով եւ պո՞՞չ սահմանափակ թիւով աշակերտ-ներ:

Այդ կրթարաններուն կամ վարժոցներուն ծրար-քիբը շատ սեղմ էր - Քերական, հեղարան կամ Փոքր Սաղմոս (Սաղմոսի Ա. Գոլախը) Սաղմոս, Նարեկ եւ Յովնամ (Թուարանութիւն) որ շորս գործողութիւնէն անդին չէր անցնէր (սեռ «Արեւելք» թիւ 3813 Սեպտ. 19): Հոկտ. 1898): Աւելի ուշ սակայն, այդ ծրարքիբը ճոխացած է ուրիշ ներթերով, ինչպէս՝ փիլիսոփա-րութիւն, աշխարհագրութիւն եւ այլն, որոնք քիչ մը անէի բարձրագուցած են այդ կրթարաններու մակար-գակը:

Կ. Պոլսոյ հայեր նոյնանձանեղիք էին իրենց կր-թարաններու մակարդակը հասցնելու ուրիշ երկիրնե-

բու մէջ գտնուող, յատկապէս կոսիկոսի հայկական կրթութեանը բարձունքին, ուրիշ կ'ենլին զխոնարհան եկեղեցականներ:

Իրբև հայկական մեծագոյն կրթութեանը կը նկատուին Կ. Պոլսոյ մէջ Սկիւտարի վարժոցը (որ կը գտնուէր Պատրիարքարանին հսկողութեան տակ եւ որ 1741-ին Կոլոտ պապիւրքերն անդրանկի աշակերտ եւ յաջորդ՝ Յակոբ Նաշանի կողմէ Սկիւտարէն Կում-գափու փոխադրուած է) եւ Արմաշի վանքը:

Շնորհի Պաղատասք դպիր Կեսարացիի Զանգե-րուն, Սկիւտարի այս վարժոցը վերածուեցաւ դպրոցի եւ կոչուեցաւ «Ուսումնարան Պատրիարքարանի»: Այս դիտնական եկեղեցականը այս դպրոցին մէջ ցոյց առաւ ընդուն գործունէութիւն եւ ընթաց արդիւնաբեր հունձք: Այդ դպրոցէն ելած են ի միջի այլոց Սի-մէոն Կաթողիկոս, Բասէնցի Յարութիւն Վրդ. Բեր-դաճեան Պետրոս առաւածաբան, որ կը կոչուի նաև Սահակ Ահագին, Դափնացի Վրդ. (Ներսէս Աշաբա-կեցի կաթողիկոսի մօրեղբայրը), Աղաթախան եւ Բարսեղ Կեսարացի տես «Արեւելք» թիւ 3813 Սեպտ. 19 (1 Հոկտ. 1898):

Հանրային առաջին դպրոցն էր այս, որ սակայն կրօնական հանդամներ ունենալէ չէր զազդէր եւ կը մտար միշտ Պատրիարքարանի հողածութեան տակ: Ասիկէ վաս կային ուրիշ «դասարան»ներ ալ, որոնց մէջ յիշատակութեան արժանի են 1752-ին Տիրացու Գէորդ Կեսարեանի վէղիբ թանի մէջ հաստատած դասարանը եւ Օրթոգիզի մէջ բացուած դասարանը, ուր քերականութիւն եւ տրամաբանութիւն կը դասախօսէր ժամանակին արժէքաւոր դասախօսներէն Գրիգոր պատուելի Փէշտիմալճեան (տես Մ. Մարտիանի «Գրիգոր Պատուելի Փէշտիմալճեան» էջ 8) 1773-1790 թուականները:

Դպրոցախնութեան օրինակին հետեւողներ գտնուեցան Կ. Պոլսոյ ուրիշ թաղերու մէջ եւս, որոնք ճիշդ չմտայնցին կրօնական պիտակի տակ հայ հասարակութիւնը ուսուցանել հոյակերէն լեզուով: Այսպէս, օրինակ՝ 1773ին բացուած Սարգիս Դպիր Յովհաննէս

եանի «մանկատուն»ը Պալատի մէջ, 1782 - 1787-ին Խաչուր Վարժ. Արայանեանի «մանկատուն»ը Բերքալի մէջ: Նոյնպէս, Մասթիշու Դպիրի «մանկատուն»ը, որ կ'ըսուի թէ իր քրոջ՝ Բարբին Նուարի գործակցութեամբ, Պալատի մէջ, շարժական քահանայ վարայով աշակերտներ կ'ընդունէին (տես «Բիւզանդիան» թիւ 2160 - 24 Հոկտ. 1903):

Սակայն Սուլթան Սէլիմ Գ. ի գահակալութիւնէն ետք կրթութիւնը Օսմանեան Թուրքիոյ մէջ գտաւ սոցալութիւն եւ 1789-ին ուսումնասէր Սուլթանը քննչկց վարդապետի ղէմ անխմաստ արգելքը եւ նոյնիսկ քաջակրեց պաշտօնապէս հանրային նախակրթութիւնը:

Դիտել տանք թէ՛ կրթութիւնը կրօնական գոյն ունէր ոչ միայն հայ, յայն կամ այլազգի համայնքներու մէջ, այլ ամբողջ Օսմանեան Թուրքիոյ տարածքին:

Միշտեւ Սուլթան Սէլիմ Գ. ի գահակալութիւնը, Թուրքերը ունէին երկու կարգի բաժնուած կրթարաններ, մին՝ Մէֆթեպ, իսկ միւսը Մէտրեփէ, որոնք մզկիթներու կից սենեակներ էին եւ նախկալ Շէյխիւլ - Խալֆութեան, միայն իմամ, միւսէնքրիս եւ դասը պատրաստելու կոչուած էին անոնք:

Ուսուցիչները իլլիմուլ-էր էին, որոնք միանգամայն գաւառորութեան պաշտէր կ'մարէին, որովհետեւ օրէնք եւ ուսում միեւնոյն իլլ - (գիտութիւն) բառն կը կազմուէին եւ իւզմաները (գիտունները) դասուոր եւ դասատու միանգամայն էին:

Քրիստոնեաներունը սնուցէր չէր, ինչպէս մեր ազգային կրթական շարժման սկզբնաւորութեան պարագային ցոյց առինք իր տեղին:

Այս ընթացքով բարենորոգչական սեւէ քայլ հասնուեցաւ սուլթաններու կողմէ եւ մոլեռանդութեան պրոտեստաւ կրթութիւնը լծուցած վիճակի մէջ մտց կրօնական ծիրին մէջ եւ հայեր իրբև հպատակներ շարկողուած էին յարմարել ստեղծուած կացութեան:

Սուլթան Սէլիմ ուրեմն առաջին Թուրք գահակարը եղաւ որ աշխատեցաւ Թուրքիոյ մէջ բարեկար-

դուքիւններ մտցնել ևւ արդիականացնել կրթութիւնը ևւ կրօնական ազդեցութեան ձերբազատել գոյն:

Ասիկա առիթ մը եղաւ Հայաստան ար օգտուն Սուլթան Ալիբէի շնորհած ազատութեան:

Մկրտիչ ամիրա Միրքիճանեան (որ Իսապիտայ մէջ առած էր իր անունը ևւ բարեխաղ զէրքի հասած թուրք կոտորածական շրջանակին մէջ) առաջին անգամ ինք պողոտայի շրջալու «թագաւորին եկեղեցւոյն անուակին հասոյթներովն ևւ առջոյց թաշակներովը ծախքերն հողացուելու պայմանաւ» վարժարան մը բացաւ ևւ իր անձնական միջոցներով հիմնեց Կ. Պոլսոյ անդրանիկ թագաւոր վարժարանը 1790-ին Գուճգափու, Լանկա, Ճըշըճը փողոցին մէջ ևւ անոր համար Չաքաբիա պատրիարքէն ստացաւ օրհնութեան կանոնակ մը, որուն մէջ շնորհք կ'անուանուի ևւ անկէ ետք այդպէս կը ճանչցուի (տես «Քիւզանդիոն» թիւ 2160-2A Հոկտ. 1903):

Մկրտիչ ամիրայի (Շնորհք) այս գեղեցիկ օրինակը վարակիչ դարձաւ ևւ ուրիշներ ևւս որոնք ի վեճակի էին նիւթական մեծ գահողութիւններ ընել զպրօցներ հիմնելու ճրարքին համար, անոնք ևւս շարժեցան Մկրտիչ ամիրայի ազդուութեան այս ձեռնարկին պատրիկ իրենց նուիրատուութեանց մասնակցութեամբ ու կարճ ժամանակի մը մէջ, 1790 թուականին, հետզհետէ կը բացուին ուրիշ թագաւոր վարժարաններ, ինչպէս օրինակ Սահաթիտայ մէջ Ս. Դէօրդ, Օթթիպիլի, Պարթի Ս. Յուրո 1796-ին, Ղալաթիտայ Ս. Լուսաւորիչ, ապա Սիլուստրի Ս. Խաչը 1797-ին ևւ Գուրուչէճէ Ս. Խաչը 1798-ին:

Իսոյր այս դպրոցները, բացի Պատրիարքարանի Աւստմարանէն, կամ Մարմարժարանէն, սարբական նախակրթարաններ էին, որոնք կը հետեւէին նոյն այն ճրարքին, զոր կը կիրարկուէր նախակէս «վարժոց»ներու կամ «գլխաւոր»ներու մէջ:

Սեւ արեւարութիւն մասն էր պոլսահայութեան մէջ ևւ մեծ հողածուրթիւն կուտային իրենց կրթական շարժման ընդարձակման ևւ զօրացման:

Յովհաննէս Չամաչըճեան, որ այն թուականներուն կը դաձակուէր Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթո-

սին, իր կողմէ ևւս ճիշդ կ'ընէր աւելի կողմուարելու կրթական գործը Կ. Պոլսոյ հոյս գաղութի զարթոններուն մէջ ու միւսներն առնի Պատրիարքարանին շարք համալսարան գաղութի գեղեցիկ արարքը կը մղէր աւելի մեծ թափ աւելու համար զպրօցաւոր նպիւթան:

Այսպէս արեւմտ, շրջապայք կը բացուին ճեւեւեւու զարթոններ Եէնի Գափու թաղին մէջ 1803-ին, Թօփ-Գափուի մէջ 1805-ին: 1807-ին Բելլայի մէջ Ս. Էմիլիանի վարժարանը կը բացուի ևւ նոյն թուականին Նարլը-Գափու թաղին զարթոն ալ կը բացուի: 1809-ին Գարակէճըքի թաղն ալ կ'ունենայ իր վարժարանը:

1810-ին Մուրաւ ամիրա, Մկրտիչ ամիրայի որդին, էրք Մարմարժարանին միւթեղէնի կը կարգուի, զպրօցին շէնք շնորհու անոր կ'ընդարձակուի ևւ սակերիչ Եւստոփ հսկող ու մասակարար կ'անուանուի վարժարանին:

Անկէ գտա, Բերա թաղին մէջ Ս. Երրորդութեան եկեղեցւոյ կից, Գրիգոր ամիրա Չէրէզեանի ջանքով զպրօց մը կը բացուի (տես «Քննարկայ Օրացոյց Ս. Փ. Ազգ. Հիւանդանոց» 1901 էջ 176 է. Աստուրի յոդուածը): Սակայն 1810-ին Ապրիլ ամսուն պատահած հրդեհէն կ'աքի այդ վարժարանը եկեղեցիին հետ ևւ հոն պաշտօնավարող մանկավարժ Նասիպ, անպրճ մնալով, Գարակէճըքի կ'երթայ, հոն պաշտօն ստանձնելու համար:

1811-ին եկեղեցին ևւ զպրօցը կը վերանորոգուին ևւ զպրօցը կը վերաբացուի յատակ միւթեղէնիով ու հողարարձութիւնով, որ կը կարգէ Յովհաննէս պատրիարք իր կոնդակով:

Իսրձեւ 1810 թուականին է որ Սիլուստրի Ս. Կարապետ եկեղեցւոյ մօտ կը բացուի զպրօց մը: 1812-ին Էլուպ վարի թաղն ալ կ'ունենայ իր զպրօցը, ինչպէս նաեւ Յովհաննէս Չէլէկու Տիւլայ, սաւառար պուրձար Յարութիւն ամիրա Պէղճեանի, Գարթալի մէջ կը բացուի զպրօց մը, իսկ 1813-ին Պէլքոզի մէջ Թուղաճի Մարտիրոս աղա կը հիմնէ զպրօց մը: 1814-ին Գասը գիւղն ալ կ'ունենայ իր թագաւոր վարժարանը:

ժարանը:

Չամաչըճեան պարբերաբար յաջարկող Պետրոս պարբերաբար օրով 1815-ին Սամաթիոյ մէջ ուրիշ վարժարան մը կը բացուի, Տիբացու Ասաբեկի կողմէ եւ վարժապետ կը կարգուի Հոն Միբայէլ քահանայ բարեփան գիտնականը: Իսկ կէտիկ վարժարի թաղին մէջ կը բացուի դպրոց մը նոյն թուականին:

1816-ին Պարթ թաղին մէջ կը բացուի ուրիշ վարժարան մը, որուն կը տրուի «Խորէնեան անունը (տես Գ. Ճ. Սիրունիի «Պոլիս եւ իր դերը» Բ. հատոր էջ 110):

Ինչպէս կը տեսնենք, տարիէ տարի կրթական պահանջը կ'. Պոլսոյ մէջ կ'աւելնար եւ դպրոցներուն թիւը բարձրագոյն կըլլար անհրաժեշտութիւն կը դառնար: Արդէն բոլոր կարեւոր թաղերու մէջ գոյութիւն ունէին դպրոցներ, ուր կը դաստիարակուէին հայերէն լեզուով թաղին աղաքը:

Այս դպրոցներուն մէջ կրթական մշակներու բնոյթը (անչուշտ այն օրերու շաբանիւրով) հայլ մը կար: Անոնց մէջ յայտնի գէտքեր կը հանդիսանաւ էրբ յումայի Տէր Մեսրոպ քահանայ, որ Մայր Եկեղեցւոյ առաջնորդն էր, միեւնոյն տանն Մայր-վարժարանի հարեւն ուսուցիչն էր եւ իր ժամանակին լաւ գործ-գացում ունեցողներէն մէկն էր: Ան 1808-ին հրատարակած իր Զերիակնութեան յիշատակարանին մէջ կը վկայէ թէ՛՝ այդ միջոցներուն, ամէն կողմ կրթութիւնը ձրի էր. (տես Ընդարձակ Օրացոց Ս. Փ. Արդ. հիւանդանոցի 1901 էջ 176):

Տէր Մեսրոպէն ետք աչքաու ուսուցիչներ էին Պետրոս Վրդ. Այթունեան, Գրիգոր պատուելի Փէշ-տիտայճեան, Սամաթիոյ Խաչատուր վարժապետը եւ Պարթիցի Գէորգ Գայիր, որ հմուտ էր թարգմանական եւ բանասիրական աշխատանքներուն մէջ:

Կրթական զարգացման աշխատութիւնները ա'լ տեսիլ ուղևորուած կը դանենք կարապետ Պարթիցի արարիւթբին օրով (1823-1831): Ան 1824 Յունիս 10 թուակիր շրջաբերական կոնդակով մը կը հրահանուէր «Հաստատել դպրոցս ի կրթութիւն մանկանց եւ գէր «Հաստատել դպրոցս ի կրթութիւն մանկանց եւ կեղեցւոր» եւ 1828-ին Սրբազումսր Ժողովին հետ կը

կազմէր նաեւ Ուսումնական Ժողով մը, որուն անդամներն էին Պետրոս Վրդ. Այթունեան, Գրիգոր պատուելի Փէշտիտայճեան, Թաղւոր վարժապետ Արալանեան: Անոնք իրբեւ Ուսումնական Ժողովի անդամներ, այցելութիւններ կուսային թաղական դպրոցները, քննելու եւ մօտէն հետաքրքրուելու համար դպրոցներու մէջ կրթական աշխատանքին: Անոնք յիշգորտած էին նոյնիսկ խառնուելու դպրոցներու ներքին խնդիրներուն եւ իրաւասութիւն ունէին դպրոցներուն մէջ ուսուցիչներ պաշտօնի կոչելու եւ կամ պաշտօնազրկելու:

Ուսումնական Ժողովի կազմութեամբ սկիզբ կ'առնէր սպառայ Ուսումնական Խորհուրդներու կազմակերպութեան, որով դպրոցները պիտի ենթարկուէին Պարբերաբարներին ուղղակի իշխանութեան եւ պիտի մատակարարուէին անոր հսկողութեան տակ:

Այս տեսակէտով կրթական շարժումը պիտի աւնէր ծրագրեալ աշխատութեան ուղի մը, ինչ որ մտովին ու ձեւ առնել սկսաւ 1853-էն ետք եւ «Ուսումնական Խորհուրդներու պաշտաբար ներշնչուած էր, ինչպէս շարք վերը, «Ուսումնական Ժողովի» կազմութեանէն:

Թէեւ «Ուսումնական Ժողովները տեսական շարհեցին իրենց գոյութիւնը կրօնական-սիրաբացական մէջներու հետեւնով, սակայն պաշտաբար մնաց ինչպէս, որ կրթական շարժման զարգացումին համար կարեւոր մարմին մը դարձաւ:

Թաղային առաջին նախակրթարանները շատ անշնչան վերափութեամբ ունէին ուսման հետեւեալ ծրագրերը, զոր առած է մեղի Մ. Գ. Մալեան իր «Գրիգոր Պատուելի Փէշտիտայճեան» գրքին մէջ:

Հայերէն. - Պնակ, Գերական, Հեգարան, Սաղմոս, Գործոց եւ Նարեկ:

Կրօնք. - Քրիստոնէական, զոյց սորվելի ազօթքներ, դրօթիակ, Հայր մեր, Անկանխօք առաջին քո, Հաւատամբ:

Գիր. - Այբուբէն, «Յարա գիր» որ սովորաբար պարտաւորահէ կը, նախ հայերէն (պատճառ դրոյս

այս է հասցին) եւ այս թուրքերէն լեզուով:

Թուարանուրիւն.- (բախմա) կ'անունդուէր թուրքերէն լեզուով, կը բողկանար շորս գործողութիւններէն, 1) խաբաժիւմէ: 2) շեխմա, 3) դարպ, 4) թախիմ: Պարզ գործնորութիւնէն յետոյ կ'անունդուէր կուսակաւորը, «ուսուպու», պուշուխու, շուխախախ, այս «զինծիրի թախիմ», եւ «օրթախ փայլ» կը շուսած գործողութիւնները, որոնք լրումն էին թուարանական գիտութեան (էջ 10):

1816-ին Պայաթի մէջ իտրէնեան վարժարանին հաստատութիւն ետք, նոր դպրոցներ բանալու մեծ ձեռնարկներ կը կատարուին ու յաջորդաբար կը բացուին Չուքուրի գիւղոցը 1817-ին, Մուսղիդի գյուղոցը 1818-ին: 1820-ին Գումա-Գափու կ'ունենայ աջկանց դպրոց-այնչեսնանոցը, Գասթ փաշա թաղը եւս կ'ունենայ իր գիւղոցները 1823-ին: Նոյն թուականին կը բացուին դպրոցներ Պէշիկթաշի, Հիսրբի, Եէնի գիւղի, Սաբ մաթթաբի քի (Բազրգունց թաղ - Քէֆէշի մահայէէ), Թագ-Գափուի Լեւոնեան գյուղոցը 1825-ին, Գարս-Կէօմրի կի մէջ՝ Սրբոց Ասիականց դպրոցը նոյն թուականին: Իսկ 1828 թուականին Գումա-Գափու թաղին մէջ կը հիմնուի Պէղճեան - Լուսուրչեան վարժարանը: Այս՝ 1830 թուականին Սաթաթիւլ մէջ ալ գյուղոց մը (անու «Արեւելք» Սիպու. 21 - 3 Հոկտ. 1898):

Կարանու պարտիքը ոչ միայն ողի ի բռնի աշխատեալ, գործնոր դպրոցներ բանալու աշխատանքին, ալ եւ մեծ կարեւորութիւն տալու անոնց բարեկարգութեան:

Թնրուս Աջանեան այս ուղղութեամբ կարեւոր մտերմացիք մը ի յայտ բերած է իր «Պէղճեան վարժարան» գիրքին մէջ, որ կը վերաբերի բարեկարգութեան կանոնագիրի մը 10 յօդուածները բողկալուած, որուն մէջ կը ճշգրտին աշակերաններու եւ ուսուցիչներու անօրեայ փոխադարձ պարտաւորութիւնները (էջ 31):

Հասարակական է, բայց միեւնոյն ատեն երկարապատում է անոր բովանդակութիւնը եւ գոր կ'որեւէ չէ այսուեղ ալ մասին անդրադարձ բնել, ինքիէն

չեղիլու համար:

Կարանու պարտիքին ուրիշ յատկանշական ձեւանակը կ'ըլլայ Հաստատել «Բնծարան» մը 1829 Մարտ 18-ին, որ յաճախողներ պիտի ստպէին «զբարեկարգութիւն, որ է դուռն եւ բանալի ամենայն գիտութեանց, ընդմէն եւ զայլ գիտանի ուսումս օգտակար անձանց իւրեանց եւ հարկաւորութեան»:

Սոյն «Բնծարան»ին վերակացու եւ միւթէվէլի կը կարգուի Յովհաննէս ամիրա Բինկեանցի, իսկ տեսուչ եւ նազըր կ'անուանուին շինգ «բարեպաշտօն իշխանապետը»՝ Յարութիւն ամիրա Պէղճեան, Ակնցի կարանու ամիրա Աջուսբեան, Ճանիկ ամիրա մահա-տեսի Սիմոնեան, Միքայէլ ամիրա Փէշիկեան եւ Յարութիւն ամիրա Կէլէվեան:

Յիշատակարարն որ այն պատմական ժողովին որոշումները կը նախընտրէի, ստորագրուած է ներկայ 90 երեւելիներէն, եկեղեցական թէ աշխարհական: Այս նոր հաստատութեան մասին կ'անել Պէղճեան ամիրայի նիւթական արհեստիւթեամբ (անու Յ. Ճ. Սիբուրի «Պոլիս եւ գերը» Բ. Հատոր, էջ 112):

«Բնծարան»ը որուն անօրէնն ու զլիսուոր ուսուցիչն էր Գրիգոր պատուելի Փէշաթաճեան, պարտաւոր գաղութին բարձրագոյն կրթարարը կը համարուէր այն օրերուն: Սոյն կրթական հաստատութեան մէջ հմուտ մասնաբաժան Գրիգոր պատուելիի կողքին կը շորձէր ուրիշ սկանաւոր լեզուապէտ՝ իստատուր Պարտիգպանեանը, որ կ'անողէր իստական լեզուն: Անոր ձեռ մէկտեղ երաժշտութեան գաւաթաուսութիւնները կը կատարէր համբաւուր Պայաթ համբարձում Լիմոնճեանը:

Սոյն կրթական հաստատութիւնը ունենալով բարձրակ ուսուցիչներու հոյլ մը, կարճ ժամանակի մէջ պատրաստեց կարող ու մասնաբաժան պաշարով ի յիմնադրանքներ 1833-ին, որոնք սպաղային գործան աչքաու դէմքեր: Ինչպէս օրինակ Գրիգոր Քիւտաթէճեան (որ յետագային դարձաւ կաթողիկոս Ամենայն Հայոց - Գէորգ Գ.), Տիգրէս Պօղոս պատուելին, Յովսէփ Վարդան փաշա, Նիկողայոս Զօրաբեան, Պուէտ ինչպատուր Միսաբեան, Յովհաննէս

Հիւնքաբարդէյէնտեան քհնյ., Յոյսէփ Մալէզեան պատուելի եւ ուրիշներ (տես նոյն, էջ 113):

Մանչեստր կրթութեան այս եռուզեռին Կ. Պոլսոյ հայութեան մէջ կը սկսի ազդեանց կրթութեան նոր շարժում մը:

Այժկանց կրթութեան դադարէր ներմուծում էր Եւրոպայէն եւ ասոր պատպան կը հանդիսանայ Յարութիւն ասիրա Պէդճեան, որ եռանդուն գործուող կրթիւն ցոյց կուտայ նիւթական զոհողութիւններ ու ընելով այս ինդիքին յաջողութեան համար:

Անկիւ իգական սեռի գորգպուսք կրեւոր նկատելով, ժողովուրդին մէջ կը ջրասպարէզ ազդիկներ քու զպրոցներ բանալու գաղափարը եւ գործնական քայլեր կ'առնէ 1820-ին Գում-գափուի մէջ զպրոցարհեստանոց մը հաստատելով:

Պէդճեան ամերայի օրինակին կը հետևի ծանիկ ամերա Փափազեանի քոյրը, որ իր կարգին Սամսթիւոյ մէջ ազդեանց վարժարան մը կը հաստատէ 1821-ին:

Աւելցնենք նաեւ որ 1741-1745 թուականներուն ազդեանց արհեստանոց - զպրոց մը եւս գոյութիւն ունեցած է Գում-գափուի մէջ (Թիւրքէնտճի Հիւսուէ-տտին թատր): Գպրոցին միւթէյէլլին էր Օհանեան Լուսթիկ ամերա, իսկ անոր յաջորդութեան ջաշաղիր եղած է Նալեան պատրիարք, ընդհանուր հսկողութիւնը ինք ստանձնելով: Բայց եւ այդպէս լրացուցիչ տեղեկութիւններ կը պակսին այդ մասին (տես Յ. Ճ. Սիրունիի «Պոլսու եւ իր դերը» Բ. հատոր էջ 113):

Պէդճեան ամերա այլ արհեստանոցին մէջ պատրաստել տուած է եկեղեցական ծանրաղիր զգեստներ եւ նուիրած էջմիածնայ, Երուսղէմի, Սիւրի, Ալթաթարի, Վենետիկի Ս. Դադարի մանքին եւ Կ. Պոլսոյ եկեղեցիներուն, (տես «Արեւելք» Սեպտ. 21) 3 Հոկտ. 1898):

Գաղէզ Արթիւի ամերան (Թուրք կառավարական շրջանակին կողմէ այդպէս յորժորջուած էր) 1826-ին սկսեցի Տիրացու Սերաբէի խորհուրդով Բերայի մէջ սահմանադրծութեան զպրոց մը կը հաստատէ: Սա-

կոյն, ինչպէս զիտել տունք վերը, ազդեանց այլ զպրոցներուն մէջ սահմանադրծութեան զտու ուրիշ բան չէր սորվեցուներ Եւստան սեւէ ծրարիք գոյութիւն չունէր անոց համար:

Ծանիկ ամերա Փափազեան չզոհաւարով ազդեանց արհեստանոց-վարժարաններ հաստատումէն, կրեւորութիւն կուտայ անոց ուսումնական ինդիքին, առջին անգամ ինքը կ'ըլլայ Զարբիա քահանայի օգնութեամբ, Բերայի Գանալուլա եւ Աբորուէլա թագաբուն մէջ հաստատող երկու ազդեանց վարժարաններ 1830 թուականին, մին՝ Ս. Հարիսիմեանց եւ միւսը Ս. Գալեանեանց անուններով (տես «Արեւելք» Սեպտ. 21-3 Հոկտ. 1899): Այս վերջինը 1848-ին սահմանադրծութեան արհեստանոց մըն այ ունեցած է:

Բերայի վերոյիշեալ ազդեանց վարժարաններու հոգածութիւնը վստահուած էր Արապիներուն:

Կարողեան պատրիարքին նման Ստեփանեան Ազգանի պատրիարք եւս կրեւոր բովին մը բերած է զպրոցայինութեան աշխատանքին Կ. Պոլսոյ հայ պոթիւն մէջ:

Անոր օրով (1831-1839 թթ.) բուսական նոր զպրոցներ բացուած են եւ քանից որ եղած են հինէն բացուածներ սեւիլ՝ զարգացնելու:

1840-ին Պէդճեան ամերան հիմնեց էյուպի Պէդճեան վարժարանը եւ Գում-գափուի գուրաք՝ ունեցու Պողոսեան եւ Վառլաւեան մանչերու եւ ազդեանց վարժարանները յանուն իր հօրն ու ծօր:

Նոյն ասորին Պոսթիլի եւ Ֆիւնէրի բարձունքին վրայ գտնուող Գանլ-Բիլիսէ թաղին մէջ նոր զպրոց մը կը բացուի Ս. Առաքելոց անունով, որուն ծրար հայ դիտեպանները գտանձնած էին: Այս զպրոցին մէջ սուսցուութիւն կ'ընէր Աւետիս Պէրպէրեան պատուելին, որուն կ'աշակերտէին Կարապետ Իւթիւճեան, Բարունակ Գրթիկեան (խոսք՝ Տարթ. Բարունակ պէյ Ֆէրուհյան), Աբրահամ Ֆրէնկեան եւ ուրիշներ (տես «Մասիս» ամսաթիւրթ 1893 էջ 148, Կ. Իւթիւճեանի յօդուածը):

Ասկէ զտու Գէաիկ-փաշայի մէջ կը բացուի Ս.

Մեկուսացիան վարժարանը, (նախկին անունն էր Ս. Յովհաննու Աւետարանչի վրժ.), 1832ին, Լանկոյի մէջ վերանորոգուած է Մայր-գլորոցը, ապա շինուած է, Մամթիոյ եկեղի Մահալլէ կամ Ալիք Մերմէրի դպրոցը (տես «Արեւելք» Սեպտ. 21) 3 Հոկտ. 1898) :

Մ. Օրմանեան այս գլորոցներուն վրայ կ'աւելցնէ կասեղօյի Սուրբ Ներսէսեան վարժարանը (տես «Ազգաստուած» Գ. հատոր էջ 3718 - Պէյրութ) :

Ասոնք բոլորն ալ, ինչպէս գրեցինք նախորոք, թաղային եկեղեցիներու Միութէի վիճակներու վերին հսկողութեամբ կը վարէին, որոնք յաջորդող տարիներուն ժողովուրդի կրթական պահանջքին անբաւարար կը դասնային :

Սուլթան Մէճիթի օրերուն այս հարցը ոչ միայն թուրք ժողովուրդին այլև հայտակա այլազգի վտարածանութեանց համայնքային կեանքին մէջ եւս իր կարեւորութիւնը կը ստանար եւ անհրաժեշտութիւն կը դառնար երկրորդական կրթութեան պէտքը :

Սակայն դժբախտաբար կարեկիրութիւններ չկային ոչ թուրքերու եւ ոչ ալ հայտակա ժողովուրդներուն համար: Նախ գլխաւոր պահառը ներթափանցի պահանջ էր եւ երկրորդ՝ բարձրագոյն ուսման աէք ուսուցիչներու թիւը անբաւարար էր այդ պահանջքը իրականացնելու համար:



ԳԱԿԱՌՆԵՐՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռին շուրջ տեղի ունեցող մրցակցութեան ծախն էր կը գրէինք նախորոք, մենք իր տեղին ակնարկութիւն ըրինք Կ. Պոլսոյ Պատրիարքութեան բաժանումին, երկը հոգեւորականներու միջեւ՝ որոնցմէ մէկն էր միայն որ պարտիով կը ճանչցուէր Օսմանեան Թուրքիոյ կառավարութեան իրբեւ Պատրիարք (Գրեղոս Կեսարացի) եւ միւսները անոր օգնականներն էին 1612-ին:

Այս խնդրին առնչութեամբ Օրմանեան Պատրիարք իր «Ազգայատում» մեծահատոր ուսումնասիրութեան մէջ, յատկանշական բացատրութիւն մը կուտայ Հայոց Պատրիարքարանին ներթափայ շրջաններու եւ անոր սահմանումին վերաբերող խնդրին շուրջ, հետեւեալ ստղծելով. «Կ. Պոլսոյ Պատրիարքութեան սկիզբները բոլոր Օսմանեան կայսրութեան վիճակները, դռնէ մայրաքաղաքէն որը չհետաւորութեամբ շրջանակի մէջ, ուղղակի Պատրիարքին վիճակը կը նկատուէին եւ թեմական իրաւունքներ անր կը պատկանէին, եւ վանքերու ու քաղաքներու մէջ գանուող եպիսկոպոսներ ու վարդապետներ՝ թեմակալ չէին, այլ պարզապէս իրք մուրախիսա կամ պատուիրակ կը նկատուէին, եւ Պատրիարքին իրաւունքը կը յարգէին: Առաջին անգամ Սուլ Յովհաննէսը, վանեցի Չաբարխայի եւ Դարանաղեցի Գրեղոսի միջեւ կատարուած բախումը, որ ուղղակի իրաւունքներու վայելքին համար էր, սկիզբը տուաւ սոսմորդական վիճակներու կամ թեմակալութեանց բաժանման, որ պատահական առիթէ ծաղում առնելով՝ Հասապատուն իրաւունքի փոխուեցաւ, եւ այս պիտի նկատուի իրք պատահաւ, որ նայնիակ Կեսարացիին պատրիարքութեան ներքեւ, Դարանաղեցին ալ, վանեցին ալ Կեսարացիին հետ հաշաւ շրջաւորի իսկ, կրնան պահել իրենց թեմական եւ առաջնորդական իրաւունքը»: (Բ. հատոր էջ 2360) :

ԺԷ. դարու վերջերը Կ. Պոլսոյ Պատրիարքարանը

իր իրուստութեան սահմանը կը տարածէ Ամասիա - Մարդուան - Եդեսիա եւ Կեսարիոյ շրջաններուն վերջնայ, իսկ յաջորդ դարուն սնոր կ'ենթարկուէին Արարկիւրը, Երզնկան, Ակիւր, Եւզոպիան, Խարբերքը, Կարան ու Ախալցխան:

Այստեղ թեմագրութիւն ընել չէ մեր նպատակը, այլ պարզապէս ցոյց տալու Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իշխանութեան հետզհետէ ծաւալումը գաւառի հայաբնակ շրջաններուն վրայ, ինչ որ բարեբար դեր կատարեց ազգային, մշակութային, առևտրական եւ մասնաւորապէս՝ կրթական շարժումին զարգացման ու ծաւալման:

Կ. Պոլսոյ մէջ սերած ու հետզհետէ զարգացող կրթական շարժումը իր արժապանաբար ունեցու գաւառներու մէջ, առաջին հերթին Իգմիթի մէջ, որ կային մեծ թիւով հայեր, որոնք մեծ մասամբ կը զբաղէին առևտրով եւ կ'ազմած էին գաղութային կեանք մը:

Կ. Պոլսէն ետք Իգմիթն էր Օսմանեան թուրքիոյ կարեւորագոյն առևտրական կեդրոնը եւ ունէր յարաբերութիւններ և բոլորական երկիրներու հետ եւ շահառան մըն էր դարձած:

Հետևաբար Իգմիթի հայերը, որոնք սեւէ կերպով եւ չէին մնար Կ. Պոլսի հայերէն, իրենք ևս նախանձախնդիր կ'ըլլան կրթական գործունէութիւն ցոյց տալ իրենց բազմաթիւ մէջ ժԸ. գարու կէտերուն:

Հակառակ այդ ցանկութեան, Իգմիթցի հայեր չունէին կարելիութիւններ որպէ՛սզի կարենային կողմակերպել կրթական շարժումը, ուսուցիչներու պակասին հետեանքով: Իսկ պոլսեցիներն ալ հազիւ կը բաւարարէին իրենց դպրոցներու պահանջները եւ օժանդակել չէին կարող իգմիթցիներու կրթական խնդրին:

Իսկ եւ այնպէս աւելցնենք թէ, կըր Կ. Պոլսոյ մէջ թաղային կանոնաւոր դպրոցներ չէին հաստատւած, Իգմիթի մէջ 1779-ին Ղուկաս Եպո. Կարնեցիի կողմէ ճիգեր կը կատարուէր (որ այն ժամանակ Իգմիթի առաջնորդն էր) հաստատել վարժարան մը Ս. Մեարոյեան անունով:

Այս վարժարանը, որ վառարչէն տուն մըն էր,

նուիրում էր Ապրո ընտանիքին կողմէ, որ հաւաքւած մանուկներուն կարգաւ գրել պիտի սովորեցուէր:

Մկրտիչ ամբաստան (Շնորհք) կրթական եռանդուն գործունէութեան ընթացքին, Կ. Պոլսէն Իգմիթ կը գրիտի իրեն ուսուցիչ Տ. Յովհան քնն. Միքայ Կանանդեցին (տես Թէոփիլի Ամենուն Տարեցոյցը) 1913 էջ 176) 1798-ին:

Ան Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Մարմարժարանի աշակերտներէն էր, որ Իգմիթի Ս. Մեարոյեան վարժարանին մէջ երկու ամիսներ աշակերտներ հասցուցած է: Իր պատրաստած աշակերտներէն համարուող եղած է Ֆիդիքոս Պողոս պատուելին: Այս վերջին 1808-ին Կ. Պոլսի գացած է եւ Ալեքսանդրոպոլսի Պողոս վրդ. էն արժանացած է Ֆիդիքոս պատուանին, իր բնագիտութեան հմտութեան համար:

Ապրո ընտանիքին նուիրած վառարչէն չէնք անբաւարար կը գտնար Իգմիթի հայոց ուսումնական պահանջին եւ ատոր համար դան կը քանդեն եւ Ս. Ստեփաննոս Եկեղեցիին թերած հասցիով նոյն վայրին վրայ կը կառուցանեն նոր չէնք մը, որուն շինութեան նիւթական օժանդակութիւն կ'ընեն Գրիգոր Պոպոյեան (Անդրիոյ հիւպատոսարանին թարգման) եւ Աւետիս Էքիզեան: (տես Հր. Յակոբ վրդ. Բօսնիի շաքի Զմիռնիս եւ շրջակայս) Ա. հասար էջ 118):

Տ. Յովհաննիս կաթողիկոս Տ. Գալուստ ազգեցիկ քահանայ, որ յատկապէս զեղարարութիւն ուսուցանելու պաշտօն կը վարէր:

Տ Յովհան քնն. ի պաշտօնավարութիւնը Ս. Մեարոյեան վարժարանին մէջ կը տեսէ 7էն 8 ամիս: Իրեն կը յաջորդէ Անդրէաս վարժապետ Փաթարեան 1831-ին որ հմուտ էր իտալերէն լեզուին, որովհետեւ ան իր ուսումը կատարելագործած էր Իտալիոյ մէջ:

Անդրէաս վարժապետ սոյն վարժարանին մէջ բարեկարգութիւններ կը կատարէ եւ ուսման ծրարքին մէջ փոփոխութիւններ կը մտնէ: Իր օրով, վարժարանին մէջ կը դասաւանդուի ոչ միայն իտալերէն լեզուն, այլև թրքերէնի հետ յունարէն ալ, Պետրոս

Եւուսուֆեանի մտաուցած նիւթական օժանդակութեան ապրիւնները:

Այն օրերուն Իգմիբի աւաջնորդը՝ Գարբէէլ (Պատրիարք Երուսաղէմի, որ իր Աթոռէն Հեռացած էր անձամարար եւ Իգմիբի աւաջնորդութիւնը կը վարէր) ամէն կերպով կ'աշխատի խափանել Անդրէաս վարժապետի բարեկարգութիւնը վարժարանէն ներս, սակայն չի յաջողիր (տես Հր. Յակոբ վրդ. Քօստանի «Հայր ի Զմիւռնիա» Ա. հատոր էջ 123):

Այդ ժամանակներուն Անդրէաս վարժապետին կուրաց աջակցելու Տ. Յովհան քհնյ. Միտղս վանանդեցիի որդին՝ Տէր Մարգար քհնյ. եւ կարճ ժամանակի մէջ վարժարանին կրթական ժակարդակը կը բարձրանայ, այնքան որ, ուրիշ բողոքներէն ալ հնչող աշակերտներ եւս կ'ընդունին վարժարանը (տես «Հանդէս Սեփոքեայ» 1890 Մայիս, էջ 106-109):

Ժամանակ մը ետք, այն վարժարանին մէջ կ'աւանդուի նաեւ անդլերէն լեզուն ալ:

Այն վարժարանին Հողարարձութիւնը կը վարէին այն օրերուն Գրեղոր Կոստանդեան, Ստեփան Պարսանեան եւ Յովհաննէս Կուսարեան:

Մինչեւ 1845 թուականը վարժարանը կ'ունենայ շատ վարյուն վիճակ մը, սակայն հաջիւթէ սկսած էր նախանձեղի գիրքին հասնել, 1845-ին պատահած հրդեհը մեծ հարուած մը կը պատճառէ Իգմիբի Հայոց կրթական շարժումին եւ զգրուցը այրած ըլլալով ամբի մը ամբողջ փակ կը մնայ:

Վարժարանը վերակառնելու անյաող ճիգեր կը կատարուի Անդրէաս վարժապետ Փափաղեանի կողմէ, սակայն այս վերջինը հողարարձութեան Հեռանձամաշուութիւն կ'ունենայ, ապա 1857-ին կը մեռնի:

Ս. Մեսրոպեան վարժարանի վերջինութեան նկատմամբ Թրեխդէէն՝ Պետրոս ամիրոս Եւուսուֆեան 4500 լիբրայն աւելի նուիրատուութիւն մը բրած է: (տես «Արեւելք» թիւ 4007, 6-18 Մայիս 1899):

Թուրքիոյ գաւառներուն մէջ առաջին անգամ աղջկանց վարժարան ունեցողը եղած է Իգմիբ: Աղջիկներու ուսումը հոն ալ բաւական ստան աւելորդ պեր-

ծանր մը կը համարուէր ժամանակ մը եւ շատ քիչ թիւով աղջիկներ գտնուած են որոնք ժամանաւոր ուսուցիչներէ առանձնական միջոցներով կարողալ ու զբիւսոված են: Իսոյց կրք Կ. Պոլսոյ մէջ աղջիկներու համար գոյրոցներ չինուիլ սկսան, Իգմիբցիք եւս 1820-ական թուականներուն ձեռնարկեցին աղջիկներու դպրոցներ հաստատելու:

Իգմիբի Ազգ. Հիւանդանոցին մէկ սրահը կը յաւկայուի աղջիկներու կրթութեան համար: Ստեփան 1838-ին Յակոբ ամիրոս Սարգիսեան իր նիւթական միջոցներով չինել կուսալ Սարգիսեանց աղջկանց վարժարանը, ուր կը փոխադրուին Հիւանդանոցի մէջ ուսում աննոյ աղջիկները:

Նոր վարժարանին մէջ աղջիկ ուսուցողներուն թիւը կը բարձրանայ: Ուսուցիչ կը կարգուի Յովհաննէս վարժապետ Շահնեան:

Յակոբ Սարգիսեանի կոսուցած այս միտայրի ու գեղեցիկ զգրուցը ակնկալուած արդիւնքների թէլեւ տուաւ, սակայն գծրախաւարար մեծ հրդեհի մը հետեւանքով հրոյ ճարակ եղաւ եւ աշակերտութիւնը մի քանի տարիներ զբկուած մնաց կրթութիւն անակէ, մինչեւ որ արկին Հոխիսիճ Գ. Կոստանդեան (որ Պետրոս ամիրոս Եւուսուֆեանի բողջ աղջիկն էր) Աւետիս էջեղեանի օժանդակութեամբ վարժարանը կը վերակառուցուի 1849-ին եւ կը կոչուի Հոխիսիճեանց:

Ապա այս վարժարանը առաջնորդարանին հաւանութեամբ կը ծախուի եւ ուրիշ հոյ մը կը գնուի, որուն վրայ աւելի մեծ եւ հոյակապ քարակերտ վարժարան մը կը շինուի Տ. Մելքիսեղեկ սրբապետին առաջնորդութեամբ եւ ժողովրդային հանդանակութեամբ: (տես «Արեւելք» թիւ 4008 7-19 Մայիս 1899):

Ազգային կրթութեան զարգացման համար ժողովրդային այս ծանաղարթութիւններու առնիթեր, ինչպէս Կ. Պոլսոյ, նոյնպէս Իգմիբի մէջ եղած են անհատական ճիգեր, դարձկ ալ ու համար ստանալով կրթութեան գործին եւ հաստատուած են նաեւ մասնաւոր վարժարաններ:

Անդրէաս Փափաղեանի ուսուցչութեան շրջանին,

կերբ շատ փոյլուն վիճակ մը ունէր Մեքսիկոյի վարժարանը, 1851-ին Փարիզի Մուրաթեան վարժարանի ընթացակարգները Մատիէս Մամուրեան եւ Մարիոս Ալարէկեան հարկ թէ թուրքիս վերադարձած, թերադուելով Անգրէսս վարժարանէն, կը հիմնեն Ալարէկեան վարժարանը, որուն մէջ ուսումը կը կատարուէր նոր մեթոտներով, նման եւրոպական դրուժեան:

Այս նոր դպրոցը իր ուժը կուսայ ոգտակար գործի մը, չմշակուած աշխարհարար հայերէն լեզուին կանոնաւորութեան ու գտումին: Ան ընթերցասիրութիւնը ընդհանրացնելու համար իրմիջոցներու մէջ, բացառիկ ճիշդ ի գործ դրաւ:

Վերոյիշեալ դպրոցին մէջ է որ կը սկսի աւանդուն իր երկրաշուքութիւն եւ դժուարութեան գրասիր, ինչպէս նաեւ Հայաստանի աշխարհագրութիւն եւ հայոց պատմութիւն: Ասոնց հետ մէկտեղ առաջին անգամ ըլլալով հայ դպրոցներու մէջ մուսաք կը գործէ մարմնակրթանքը եւ Ալարէկեան ու Մամուրեան անձամբ կը մասնակցին աշակերտներու մարդկան խաղերուն:

Նոր մեթոտներուն անընտել էր թրքահայ ժողովուրդը եւ չէր կրնար հանդուրժել ուրիշ եղափոխութիւններ, զորս առաջ եկան շնորհիւ Ալարէկեանի եւ Մամուրեանի:

Այդ մասին մենք աւելի ուշ պիտի անդրադառնանք, ցոյց տալու համար հին մասձեւերակրպղին հերթական փոփոխութիւնները:

Իրմիջոցի հայեր ոչ միայն իրենց բողոքներ կրթական գործով կը դրողէին, այլև սկսան իրենց շրջակայ հայ դարձնաօձոյններու կրթական շարժման նպաստել թէ նիւթական եւ թէ բարձրական կերպով:

Երբ Աւետիս Էքեղեան 1831-ին Մանիսս կը հաստատուի իր ընտանիքով, տեղւոյն եկեղեցիէն դաս, անոր կից առաջնորդարան եւ մանչերու եւ աղջիկներու դպրոցներ այ կը կառուցանէ 1838-ին (տես «Արևելք» Սեպտ. 22-4 Հոկտ. 1898):

Չորս տարի ետք, շէնք դիտեր ինչ պատճառներով Աւետիս Էքեղեան կը հեռանայ Մանիսսէն, հաս-

տատուելու համար ընտանիքով Մեննէէ եւ ուր իրմիջոցներու օժանդակութեամբ եւ Էքեղեանի ղեկավարութեամբ կը շինուի տեղւոյն եկեղեցին բլրակէ մը վրայ:

1840-ին Աւետիս Էքեղեանին կը հանդիպինք Գասպայի մէջ: Ան Իրմիքի առաջնորդ Պօղոս Եպս. Թաղթեպեանի ճիշդով եւ ժողովրդային հանգանակութեամբ, ինչպէս նաեւ իրմիջոցներու նպաստով, շինել կուսայ դպրոց մը ինչպէս նաեւ կը կատարուի նորակառոյց եկեղեցիին օժոմբ (տես «Արևելք» թիւ 4007 6-18 Մայիս 1899):

Նոյն խանդավառութեամբ Էտէմիշի հոգեբ (Էտէմիշ Իրմիքին երկթուրիսի ճիշդ ժամ հետո կը գտնուի Պօղոսայի աբաւանդ հովիտի մէջ) ետ շին մնար իրմիջոցներէն, եւ նոյն թուականներուն, Ուրու-Սօղազ կոչուած սրղոսայի վրայ մանչերու վարժարան մը կը շինեն, Ջուլիսիան ընտանիքին բարեբարութեամբ: Այս ընտանիքը իր կատարած մեծամեծ գործերով եւ առատձեռն նուիրատուութիւններով ու թողած կատկերով Էտէմիշցիներու բարգանքն ու սէրը կը վայելէ: (տես «Երեզնդներ» թիւ 3514 Ապրիլ 18-1 Մայիս 1908):

Պուրսո, որ մերձակայ վայր մըն էր Կ. Պոլսոյ, չէր կրնար հաղորդակից ըլլալ պուրհայերու կրթական շարժումին:

Պօղոս Արբելոս. Գարբաղեան, որ Արմաշի վանքին ուսումնարանին հիմնադիրն էր եւ որ իրբեւ առաջնորդ Պուրսո եկած էր, առաջին դպրոցը կը շինէ Ս. Պօղոսեան անունով, սակայն յերթացս մեր ուսումնասիրութեան չկրցանք ստուգել թէ ճիշդ ո՞ր թուականին հիմնուած էր այդ վարժարանը:

Հակոսակ ստոր, 1834-ին կողմուած դպրոցական վիճակագրութեան մը համաձայն (որո սմբոյջութեամբ պիտի տանք այս գլուխին վերջուորութեան) Պուրսո բողոքը ունէր մէկ դպրոց: Այս կապացուցանէ թէ Ս. Պօղոսեան վարժարանին շինութեան թուականը պէտք է ըլլայ 1834-էն առաջ:

Պուրսոյի հայոց Առաջնորդարանին ենթակայ երկու թեմերու՝ Եէնիճէի եւ Ճէրանի մէջ այն թուականներուն մեր պրպարումներուն ընթացքին չենք

զաներ զպրոցներ, բայց և այնպէս, վերոյիշեալ վարժարանական վիճակագրութեան մէջ զարժանալիօրէն եկեղեցի գրեղեն մէջ կը նշուի զպրոց մը: Ասիկա մեզի ենթադրել կուտայ թէ, այդ զպրոցը թէև զոչութիւն ունեցած է, սակայն չկրնար լսուիլ ծախքերուն, դասաւարտուած է գոյուելու, որովհետև 1844-ին վերոյիշեալ գրեղենուն մէջ սեւէ զպրոցի մասին յիշատակութիւն եղած չէ:

Ուրիշ պարագայ մըն ալ որ նկատուի ինչպէս կ'ստենք, այն է, Պուրսոյ վարժարանին մէջ յունարէն լեզուի դասուանդութեան խնդիրը 1844 թուականին, երբ այն ստեղծուեց: Պուրսոյ և Իզմիրի մէջ Ֆրանսերէն, անգլերէն կամ իտալերէն լեզուները մաս կը կազմէին զպրոցներու կրթական ծրագրին թրքերէն լեզուն հետ, որ երկրին լեզուն էր:

Կ. Պուրսոյ անմիջական ազդեցութեան տակ էին Պարբէսիքը, Պանարմա, Մելիարձ, Քերմուսիք, Էսթիմիկ, Հայ գիւղ կամ Էրմէնի Քէօյ, ուր կրթական շարժումը արձագանք գտաւ շնորհիւ Արմաշէն չրջանաւարտ ելած ուսուցիչներուն:

Համաձայն Պատրիարքարանին կազմած վերոյիշեալ զպրոցական վիճակագրութեան, 1834 թուականին վերոյիշեալ քաղաքներու մէջ ևս գոյութիւն ունեցած են զպրոցներ, բայց անոնց մասին մանրամասնութիւններ կը պահանջ:

Աւելորդ է կրկնել, թէ այդ զպրոցները աւելի վարժողներ էին, ուր կը հաւաքուէին Հայ տղաք, սորմիւն համար քիչ մը գրել կարողալ և թուարանութիւն:

Երկու տարի ետք է որ աւելի մեծ թափ կ'ստնէ ուսումնական խնդիրը այդ քաղաքներուն մէջ և 1836-ին Պարբէսիքի մէջ կը հիմնուի Հայկեան վարժարանը:

Ասիկէ անմիջապէս յետոյ Պանարման ևս կ'ունենայ Ս. Լուսաւորչեան վարժարանը, որ սկիսէ 1834 Օգոստոս 25ին քաղաքին մէջ պատահած մեծ հրդեհին կ'արի:

Քէօթաշիւն կամ Կուսիւնի (որ յախճապիկի ճարտարութեամբ մեծագոյն քաղաքն էր և համարու-

ած ոչ միայն Օսմանեան թուրքիոյ, այլ երկրպագան շատ մը երկրներու մէջ) մասն շուրջ Կ. Պուրսոյ, բնակչութեամբ անտարբար չէին կրնար մնալ Քէօթաշիւնը հայեր և իրենք ևս մշտեցան զարկ տալու իրենց քաղաքին կրթական շարժումին, քանզի նիւթապէս բարգաւաճ էին և ի վիճակի էին զպրոցներ բանալու և ուսուցիչներ պահելու:

1761-ին Կոլոս Պարիարքի աշակերտներէն մի քանին այցելած են Քէօթաշիւն, սակայն կարճ ժամանակ մնալէ ետք, հեռացած են ուրիշ քաղաքներ: Իրենց կեցութեան, անշուշտ թէ անոնք ձեռնածալ չեն նստած ևս զբաղած են տեղւոյն կրթական խնդիրով:

1766-ին Պաղատար Դպիրի աշակերտ՝ Յովհաննէս Վրդ. Կարնեցին (որ միեւնոյն անուն ճանչցուած էր Տէալ Յովհաննէս Վրդ.) երբ Քէօթաշիւն կը հասարտուի պաշտօնով, քէօթաշիւնը հայեր պատահած սիթե սեպեղով, ամէն ճիգ ի գործ կը զննն անոր հետ գործակցութեամբ զպրոց մը բանալու (սեւ Ա. Արքայաճեհանի «Յուշամատեն կուսիւնահայերու» էջ 73):

Այն զպրոցը որ Ս. Սարգիս եկեղեցիէն մօտը հաստատուած էր իրականին մէջ մէկ սենեակ մըն էր, ուր, կ'ըսուի թէ 220 տղաներ կը հաւաքուէին գրել կարողալ սորվելու համար: (սեւ «Հանդէս Ամսօրեայ» 1948 էջ 414-418):

Տէալ Յովհաննէսի այս զպրոցին կապակցութեամբ վերոյիշեալ տուեալները ինչպէս կ'երևի հակասական են: Ինչպէս կարելի էր այդ փոքր սենեակին մէջ 220 աշակերտներու կրթութիւն տալ: Այս մեզի մտածել կուտայ երկու բան. կամ այն է թէ աշակերտներու թիւը սխալ է և կամ՝ կ'ստնաւոր զպրոց մըն էր և ոչ թէ սենեակ մը:

Մեզի այնպէս կը թուի թէ աշակերտութեան թիւն է սխալը, որովհետև այդ թուականներուն կանոնաւոր զպրոցներ բացուած չէին գաւառներու մէջ:

1775-ին Յովհաննէս Վրդ. Կարնեցին Կ. Պուրս կը կանչուի և անոր գործը այդ զպրատան մէջ կը շարունակէ Յովհաննէս Վրդ. ի աշակերտներէն Տէրապետ Յարութիւնը, որ իր գիտութեամբ համարուած էր:

Գիտնական Տերցյուզ Գարութիւնին պաշտօնա-
վարութիւնն ալ երկար չըլլար եւ հազիւ տարի մը տն-
ցած Կ. Պոլիս կը կանչուի:

Անոր դարձը կը շարունակէ Մահուէի Սահակ
Աւարդ-սարկաւազ Շիւքրեւանը, որ Տերցյուզ Գարու-
թիւնին չափ հմուտ էր ու գիտնականի ալ կոչում
ստացած էր ժողովուրդէն: Անոր պաշտօնավարու-
թեան շրջանը երկու տարիներու ընթացք մը ունեցած
է 1776-1778:

Անոր կողքին կ'աշխատին Տ. Աստուածատուր
քհնյ. եւ Գաւիթ քհնյ. Տաւութեանցը, սակայն այս
փերջինները Չարբիս պարսիկարբին հրահանգով Կ.
Պոլիս կը կանչուին 1778-ին, որովհետեւ կաթոլիկ-
ներու հետ յարաբերութեան մէջ ըլլալով, ամբաստ-
նուած էին իրբեւ գաւառագիտիներ, ինչ որ այն թուա-
կաններուն լուրջ նկատողութեան առնուելիք խնդիր
մըն էր:

Կաթոլիկ թափանցումին հետեւնորով Քէօթաճ-
իոյ հասց կրթական շարժումը կը կրէր մեծ մտա-
նեք, զրկուելով ուսուցիչներէ, որոնք Կ. Պոլիս կ'ը-
նած ըլլալով կաթոլիկներու հետ մերձեցումի ամ-
բաստանութեամբ, դպրատունը զատապարտուած էր
փակուելու:

Այս պայմաններու տակ Քէօթաճիոյ հայեր դժ-
բախտաբար երկար ժամանակ առանց ուսումի կը
մնան:

1834-ին Կ. Պոլսոյ Պատրիարքարանին կողմէ
կազմուած վիճակագրութեան մը մէջ կը տեսնենք
Քէօթաճիոյ մէջ մէկ վարժարան, իսկ նոյն վիճակին
ենթակայ Պիլճճիկի մէջ էս վարժարան մը: (տես Ա.
Արցոյ լուծեանի «Յուշամտեան կուտիւնահայերու» էջ
74):

Կանոնաւոր դպրոցներու հաստատումը Քէօթաճ-
իոյ մէջ սկսած է 1840 թուականէն ի վեր, առաջին
հերթին կառուցանելով Ս. Էմմիսէին անունով Ս.
Սարգիս համաձեռն եկեղեցւոյն տեղը, Ս. Ստուա-
ծածին սաճարին կից:

Այն օրերու Առաջնորդն էր Թովմաս վրդ. Ռու-
բինեան (Կ. Պոլսեցի), որուն պաշտօնավարութեան

չրթանին (1840-1847) կրթական շարժման կարեւոր
գիւր կատարած է եւ կանոնաւոր դպրոցներ հաստա-
տումին սահմիրան նկատուած:

Կնաճատելի այս աշխատանքին առնթերը, ցուով
պէտք ենք նշել այստեղ, թէ Քէօթաճիոյ հայեր ան-
փոյթ մտացած են իրենց ազլիկներուն ուսման խնդ-
րին: Միայն 1880-ական թուականներուն էր որ արդ-
ուագրութեամբ աշխատանքներ սկսած են կատարուիլ:
Իրճիսի կամ Նիկոմիդիոյ դուաւին մէջ էս կը
թական շարժումը սկիզբ առած է Բարթողիմէոս եպս-
կոպուսիկի կողմէ, Չարբիսի մանրին մէջ հաւա-
քելով աշակերտներ:

Պօղոս Արքեպս. Գարագոշի օրով այդ վանքը քիչ
շատ գոհացուցիչ ազլիկները տուաւ: Անոր խոր
հուրով եւ միջոցով Անդրապլէն (Էնկիւրբե) ընտելե-
ցաւ Պօղոս անունով զարգացած վարդապետ մը եւ որ
սեռու չ կարգուեցաւ Չարբիսի մանրին:

Ստեփաննոս Աղանին իրեն օգնական ըլլալով,
կրթական կարեւոր գործունէութիւն ցոյց տուաւ:

1834-ին Կ. Պոլսոյ Պատրիարքարանի դպրոցա-
կան վիճակագրութեան համաձեռն իրճիս ունէր մէկ
հաս դպրոց մը: Ատարկարի չորս թաղերուն մէջ ալ
չորս վարժարաններ գոյութիւն ունեցած են: Տէօլէօզ
ունէր յաւեւ երկու դպրոցներ եւ վիճակին 31 միւս
գիւղերուն մէջ մէկ մէկ դպրատուններ կային: Հետ-
եւս, բայտ վիճակացոյցին մէջ արուած թուանշա-
ներուն, իրճիսի (Նիկոմիդիոս) թեմը ունէր 38 դպ-
րոցներ (դպրատուններ) բացի Արճուշի մանրին մէջ
գանուոց ուսումնարանէն:

Երբ իրճիսի եւ Մանիսայի կրթական շարժումը
համեմատութեան գնենք իրճիսի կրթական գործու-
նէութեան հետ, պիտի տեսնենք աւելի մեծ նուա-
ճումներ իրճիսի մէջ եւ աւելի հնորի Ստեփաննոս
Աղանի ջանքերուն էր եւ Պօղոս վրդ. ին, որոնք ճիւղ-
այնուցին կրթութիւնը ծաւալելու գաւառին մէջ:

Իրճիսի կրթական շարժումին Կ. Պոլսոյ մեծա-
հարուստներէն ձանկի ամիրա Փափաղեան մեծ օգուտ-
կարութիւն ունեցած է նիւթական իր կարեւոր նպաս-
տովը 1830 թուականին:

Աւելի ուշ, 1840-ական թուականներուն Իգմբուխ կրթական շարժման գաղափարներն իրենց նիւթական օժանդակութիւններովը կը փայլէին Տասանն ծանօթ գերդաստանը, ինչպէս էին Տիւղեանները:

Պարտիզակի մէջ եւս կրթական շարժումը ի սկզբանէ միւս գաւառներու նման եկեղեցիներու կից բացուած դաստասաններու մէջ աշակերտներ հաւաքելով կը կատարուէր եւ անոնց կը ջաճարուէր կրօնական գիտելիքներ, քիչ մը գրել կարգաւ եւ թուարանութիւն:

Գժրախատարը Պարտիզակի այդ պարտասաններուն կամ դասարաններուն մասին չին թուականներէն ի վեր սեւէ ակեղեկութիւն չէ գրուած թերթերուն մէջ եւ ոչ ալ այդ ուղղութիւնում ուղեւորի ասուարութիւններ գտնելու յրնթացք մեր պրպարումներուն եւ ստոր համար ստիպում ենք կարծ ակնորկութեամբ դռնանալ:

Արդէն Գրեգոր Յ. Մխալեան իր «Պարտիզակի ու պարտիզակցի» գիրքին մէջ (սեւ ԼՂ 184) ակնարկելով Պարտիզակի կրթական շարժումին, կը գրէ թէ, մինչեւ 1833 թուականը «Պարտիզակի մէջ վարժարանական մասնաբաժնի չէր գոյութիւն ունեցած է: Կանախէն քահանաներ ժաման մէջ (եկեղեցի Յ.Տ.Պ.) կամ իրենց տուններ կը հաւաքէին իրենց ազգ հետ մեծերու սոցաներ եւ կարգով գրելու փորձեր աւ վարժութիւններ քննչ կուտային անոնց: Աւելի ետքը մտեթափներու (մագման) խառնութիւնը եղած են սեռակ մը վարժարաններ ուր կարգով գրել ստիպիլ ու պոզ պղպիտներ կ'երթային ու գաս կ'առնէին մտեթափ վարժարանէն:

«Աւելի վերջ, կ'ուշիցն Մխալեան, Տէր Արքաճամբ օրով, էրր Աստրաղացի Արքաճամբ վարժարանը կը բերնիլ գուրակն իրքեւ վարժուած վարժարան, Աստրաղաց կը շահմարտիլ գիւղին իշխաններուն պատիկ սեռակ մը շինել: Եկեղեցիէն կուտար, իրր գարնցի յատուկ չէնք: Այս նպատակով պատիկ պարզ չէնք մը կը շնորի ար կ'ըլլայ Պարտիզակի վարժարանին անդրանիկ չէնք:»

Աւելի, ըստ Գրեգոր Յ. Մխալեանի օրովհետեւ

փաստեր չէ սուած (Յ.Տ.Պ.) կատարուած է 1833-ին եւ կ'ըսէ թէ Մխալեանի նախաձեռնութեամբ եկեղեցին կը շնորի եւ օրովհետեւ գետնը անբաւարար կ'ըլլայ եկեղեցիին համար, ստիպումը դարձող կը իջցուի եւ անոր գետնը կը միացուի եկեղեցիին գետնին եւ այսպէսով դարձող կը փակուի:

Երբ եկեղեցիին շինութիւնը կ'աւարտի, պահարաններէն մէկը տարիի մը չափ կը յատկացուի դպրոցական ազգ եւ արնց ուսուցչութիւն կ'ընէ Չամուր ձի Տէրոյնց պատուելիին քնորդին՝ տիրացու կարպետը, որ այն օրերուն կը մայիլէր մեծ համար իրր կարող հաշարան եւ քերականութեան հմուտ գաստու:

Անուշտ թէ այս ձևով կարելի չէր կրթութիւնը տարածել Պարտիզակի մէջ: Հետեւաբար կը մտածուի անհրաժեշտութիւն դարձած կանոնաւոր վարժարանի մը համար սեփական չէնք մը կ'աւուցել:

Խօսքէն գործի անցնելով պարտիզակցիներ կը ձեռնարկէն դպրոցին շինութեանը նոր եկեղեցիին կից դարձեալ, որուն մասին ժամանակակից եւ ակնատես Մխալեան մանրամասն ակեղեկութիւններ կուտայ, որոնք դանց կ'առնենք աւելորդարանութեամբ չփոթեցնելու համար բնթերցողը:

Նորաչն վարժարանին ուսուցիչ կը կարգուի Մովսէսէնց տիրացու Յակոբը, որ Սարը Յակոբ ալ կը կուտուէր, ձայնաւոր ու շարականող է եւ որ խալճֆայով (օգնական) մը կ'աւաճարած է դպրոցը:

Մինչեւ 1833 թուականը պարտիզակցիներ ընտւ չէին մտածած աղջկանց դարձուցումին մասին: Մխալեան 1840-ական թուականներուն Տասան տիրացու Մտեթափն էր առաջինը, որ բովանդակ բաղաբին մէջ գաստար կը տարածէ աղջկանց ուսման նկատմամբ եւ դարի օրինակը կուտայ իր սեփական տան մէջ հաւաքելով դրացի պղպիտ աղջիկները ու կը նուիրուի անոնց գրել կարգով ստիպեցնելու աշխատանքին:

Աղջիկներու կրթութեան համար հետզհետէ կ'օգտին մտածել պարտիզակցիք, էրր կը սեռանել ուսումնասանչ աշակերտուհիներու բարձրութիւն մը իրենց առջեւ:

Հետևաբար աղջիկներու համար սեփական վարձարանի մը պէտքը կը զգացուի եւ մանչերու դպրոցին կից կ'ըլլայիններու սունը կը դնեն Մակարեան Ստեփանէն եւ հոն աղջկանց դպրոց մը կը բանան:

Սոյն վարձարանին ուսուցիչ կ'ըլլայ Տայեան տիրացու Ստեփան:

Ուրեմն, ինչպէս կը տեսնենք, մանչերու եւ աղջիկներու դպրոցները իբրք մօտ էին եւ այդ գրութեամբ Երկու դպրոցներու աշակերտութիւնը մէկ դեանի վրայ եւ միեւնոյն կրթական ծրագրով կ'ուսանէր: Եւ այս փորձը շատերու նկատողութեամբ, մասնաւորապէս էրկսեռ մանուկներու ուսուցումը կատարել մէկ յարկի տակ:

Կ. Պոլսոյ անմիջական շրջանակներու եւ անոր բարոյական ազդեցութեան տակ կը գտնուէին եւրոպական կամ արեւմտեան թուրքերոյ երկու հայաբնակ գուսանները, Էտիբնէն եւ Ռոստոֆնոն:

Ասոնք Կ. Պոլսոյ մօտ Ելլալուն միշտ յարաբերութեան մէջ էին եւ ազդուած են պոլսաբնակ հայերու կրթական յոռավորութիւնէն եւ անոնք եւս նախաձեռնիչներ Ելլալով կը ձեռնարկէն դպրոցաշինութեան:

Կ. Պոլսոյ Պատրիարքարանին 1834-ի վիճակագրութեան համաձայն Էտիբնէն ունէր մէկ վարժոց:

Էտիբնէի մէջ առաջին կրթարանը բնաւու Տիգրեր կատարած էր Միքայէլ Արքեպս. Չօպանեան (1794-ին) տեղւոյն եկեղեցին վերաշինելէ ետք 1806-ին:

Ան Կ. Պոլսէն կը ճշուելիչ ուսուցչութեան պաշտօնին իր հաստատած դպրոցին մէջ Չաբարթա անունով վարդապետ մը:

Ախոսս որ չկրցանք գիտնալ այդ դպրոցին անունը, ստեւաններու պահպանն պատճառաւ:

Ասկէ անմիջապէս ետք կը բացուի նոսե աղջկանց դպրոց մը Ս. Թորոս Մայր-եկեղեցիին կից, որուն մասին ոեւէ տեղեկութիւն չկրցանք գտնալ եւ մեզի անորոշ կը մնայ թէ Ե՞րբ եւ որով կողմէ հաստատուած էր այդ դպրոցը կամ սենեակը ուր աղջիկներ կ'ուսանէին:

Էտիբնէի կրթական շարժումին հետեւացան ու-

ստացիոններ եւս ու աշխատանքի լծուեցան դպրոցներ բնաւու:

Առաջին անգամ 1830-1835 թուականներուն էր որ փորձեր կ'ըսծ են դասարան մը հաստատելու, սակայն Չաբարթա անուն վարդապետի մը (որ կ'ըսուէր թէ կրթութիկ էր) 1840ական թուականներուն ուսումնասենչ ազգը իր սան մէջ Հաւաքած է եւ անոնց կանոնաւոր ուսում ստած է:

Այս կրթութիկ կարճեցեալ վարդապետին սակզած հոռնոր խթան եղաւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ կղերականներուն, որունք սկսան շարժել, իրենց յատուկ վարձարանով մը օժտելու քաղաքը:

1847-ին Թաղէոս եպս. Ի նախաձեռնութեամբ (որ Առաջնորդն էր այն օրերուն) կը հաստատուի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ կից գտնուած աան մը մէջ դպրոց մը, որ կը կոչուի Ս. Փրկչեան վարձարան:

Անպարան կամ Էնկիւրին Կեդրոնական Փոքր Ախոյ հնագոյն առաջնորդական վիճակը, (որուն ենթակայ էին Պօլու, Սիվրիհասար, Աֆէոն-Պարաշեասար, Ազլէչիք եւ Գոնիա եւայլն), ետ շմնաց միւս հայաբնակ գուսաններու մէջ կրթական դժով սարած աշխատանքներէն եւ 1834-ին Կ. Պոլսոյ Պատրիարքարանին դպրոցական վիճակագրութեան մէջ վերոյիշեալ քաղաքներուն մէջ մէկտեան դպրոցներ կը նշուին:

Ամսիա, Մարզոսն, իրենց ծովեղերեայ գերբով, այսինքն՝ Սաժմոնի շրջանակով (Ճանիկ գաւառ) կը ներկայացնեն Փոքր Ախոյ արեւելեան - Հիւսիսային ծայրագաւառը:

Այս հայաբնակ շրջանակը միւս գուսաններու համընթաց ունեցած է կրթական գործունէութիւն:

1834-ի մեզի ծանօթ Պատրիարքարանի վիճակագրութեան համաձայն, Ամսիայ մէջ գոյութիւն ունեցած է Էրեք դպրոցներ, իսկ Մարզոսնի մէջ միայն մէկ հատ:

Այս գուսաններու գիւղերուն մէջ նշանակելի են Սիժ Հաճր գիւղը, որ այն թուականներուն ունէր իր սեփական դպրոցը, նոյնպէս Վէլգիր-բէօփրի գիւղը որ ունէր մէկ դպրոց: Չարլամպա եւ Պաֆրոս ունէին

նաև մէկական դպրոց:

Տարթ. Բարունակ պէյ Ֆէրուխան որ 1847-ին այդ շրջանակը այցելած է, իր գրած տեղեկագրութենէն կը գիտանանք թէ Սամսոնի մէջ եւս դպրոց մը գոյութիւն ունեցած է (քաղած ենք Ա. Այգոյաճեանի նոթերէն, որուն աղբիւրը անյայտ է, Յ.Տ.Պ.):

Թողաւ վաղուց ի վեր ունեցած է «Վարժատունք Մանկանց»ներ, օրինակելով Կ. Պոլսոյ մէջ կաարւած աշխատանքներէն:

1833-ին Թօզատի առաջնորդ Եփրեմ Վրդ. Պապական, իր շուրջ համախմբելով տեղւոյն ուսումնասէր սարբերը, կը հաստատէ Ս. Յովակիմ Անուոյի վանքին մէջ վարժարան մը: Տասնհինգ մանուկներ հաւաքելով անոնց ստրկեցուցած է եկեղեցական գիտելիքներու հետ քերականութիւն եւ թուարանութիւն:

Կ. Պոլսոյ Պատրիարքարանի դպրոցական վիճակագրութիւնը մեղի ցոյց կուտայ թէ Թօզատ քաղաքը ունէր երկու դպրոցներ, իսկ անոր շրջակայ գիւղերուն մէջ Նիկասր, Զիլե եւ Հէրէք ունէին մէկական դպրոցներ: Սենեքերթմ Տէր Մինասեան, որ 1836-ին Թօզատ այցելած է, կուտայ հետեւեալ տեղեկութիւնը վարժարաններու նկատմամբ. «Եպրատունը տանելու գացի, ու հոն իմացայ սորոցը թիւը 150ի շուրջ ըլլաւ, բայց մէջը քերականութեան արհեստը անուսով միայն ըլլալուն համար, ուրախութիւնով զուրս ելլելու տեղը, արամութիւնով ելած մեր սնուակը գացի» (տես Ա. Այգոյաճեանի «Պատմ. եւ պակ-իոյ հայոց» էջ 923):

Յակոբ Եպս. Սերոբեան երբ կը յաջորդէր Եփրեմ Վրդ. ի Թօզատի հայոց առաջնորդութեան, 1841-ին շինել կուտայ «Ուսումնարան» մը, ուր կը ջամբուէր աշակերտներուն կրթութիւն:

1847-ին Բարունակ պէյ Ֆէրուխան վերոյիշեալ իր տեղեկագրութեան մէջ, Թօզատի վերաբերմամբ անդրադարձաւով կը հաստատէ կրթարաններու գոյութիւնը սյանակ, առանց սակայն յիշատակելու անոնց թիւը եւ անունները: Մեղք որ 1840-1860 թաւառեայ շրջանին վերաբերմամբ ուրիշ տեղեկութիւններ չկան,

սակայն ստաց կ'որ դպրոցները շարունակած են պահել իրենց գոյութիւնը:

Արասատիոյ մէջ ալ ուսումնական աշխատանքներ կատարուած են, այնպէս ինչպէս կատարուած են ուրիշ գումաներու մէջ, եկեղեցիներու կից խուցերու եւ կամ անհասարակ ընտանքանքներու մէջ:

Դպրոցներու հաստատումը սակայն այստեղ յայտնուած է երկրորդ անգամ, շենք գիտեր ստոր պատճառները:

Մեր պրոպագանդան ընթացքին դժբախտաբար չ'անդակեցանք լուրջ տեղեկագրութեան մը, որով ճանօթանալինք թէ դպրոցներու անուններուն եւ թէ անոնց յարակից խնդիրներուն: Հետեւաբար, հիմնուելով 1834-ի Պատրիարքարանին դպրոցական վիճակագրութեան, կը հաստատենք թէ Սերասատիոյ մէջ բացուած են չորս դպրոցներ: Երջակայ գիւղերուն դպրոցներու յիշատակութիւն շենք գտներ սոյն վիճակագրութեան մէջ:

Եսպին Գարահիսար, Թամգաբա եւ Անպարիի մէջ եւս գրեթէ նոյն վիճակը ունէր կրթական շարժումը: Ատր պատճառը Կ. Պոլսէն շատ հեռու ըլլալն էր եւ անոր ազդեցութենէն չէր օգտուէր ոչինքան:

Կ. Պոլսոյ Պատրիարքարանին վերոյիշեալ վիճակագրութեան համաձայն Եսպին Գարահիսարի եւ շրջակայ գիւղերուն մէջ ասանմէկ դպրոցներ գոյութիւն ունեցած են: Առաջնորդանալու քաղաքը ունէր երկու դպրոցներ, իսկ Անգրէաս քաղաքը ունէր երկու դպրոցներ: Սակայն միւս վայրերու անունները մեղի անձնօթ կը մնան, ուրտր մէկական դպրոցներու յիշատակութիւն եղած է:

Տրապիզոն ուշ ունեցած է իր կրթական հաստատութիւնները: Միայն 1834-ի առաջնորդանալու Տրապիզոն քաղաքին մէջ մէկ դպրոց կը գտնենք եւ 1847-ին Բարունակ պէյ Ֆէրուխան իր սուղեւորութեան ընթացքին կը հաստատէ այդ:

Արէլ վրդ. Մխիթարեանց Տրապիզոնի հայ գաղութին վերաբերմամբ 1853-ին գրած գրքոյկին մէջ հետեւեալ բացատրութիւնը կուտայ այնտեղի հայերու կրթական շարժումին մասին.

«Թէեւ Տրուպիզոնու մեր հայազգիք իրենց զուգուհուքը առանց դպրատան չեն թողուցեր, եւ դպրատանց համար ալ մեծ մեծ գումարներ առնն առնն ծախեր են, բայց ուսման եւ գիտութեան սէրը առ առուշին՝ 1840 թուականէն արժարժեւ սկսած է մէջերնին, անկէ յոսաջ՝ ուսում եւ գիտութիւն՝ միայն իրենց սոցալոց ժամագրքի եւ սաղմոսի մէջ վարժիր եւ գիր գրելը կը ճանչնային, եւ ասկէ աւելի սորվել ուղղոք՝ ծառայական արճեստի պիտի մտնար որ սպրուստ գտնէր, ինչու որ մինչեւ առ ասե՛ն, սորգարեւը կոր իրենց մէջ սոցայիններէն մէկ մը, որ գիտութեամբ եւ սոցալոսական արուեստից ուսմամբ սպրուստ գտնէր գէթ Տրուպիզոնի մէջ:

«1840 թուականէն գիտութեան ոգին Տրուպիզոնի սոցայինոց մէջ արթննալ սկսու, երբ որ բարեխնամակ Կ. Պոլսեցի Եփրեմէան Արիստակէս վարժապետը սոցային վարժապետ բնորոշելով ուսում դաս տալու հիմն գրու. դպրատանը մէջ, աշակերտք դարգանալով անոր գաւախարակութեամբ, ճանչցան ուսման արժէքը, եւ ծնողաց վարժաք արթնցուցին գիտութեան յարգ անոնք ալ ճանչնալու:

«Երկեւլ պատուելի վարժապետէն Էտրո՝ անոր նախագաս աշակերտներէն փոխառակեց վարժապետութեան պշտանք Յարութիւն Պետրոսեան, հասակակից աշակերտք բուսական ուսման ճաշակ տներ կ'են, եւ հիմա սոցակերտու մէջ երիտասարդական հասակը անցուցած՝ խոհեմ եւ արդոյ անձնիք են:

«Գիտութիւնը սաս հեղինակող վարժապետին առ անդրանի աշակերտը, որ իւր ուսուցչին յաջորդեց, ստար ստրի մանկանց գաւախարակութեան զեկը ուղղելով քերականական արճեստին մէջ, իւր խոհեմ եւ պարկեշտ յարատուութեամբ գիտութիւնը այնքան սիրելի քրու ժողովրդեան առջեւ, մինչեւ որ ծնողք ալ իրենց գաւախարք հետ, անոր հետ անոր քողորութիւնը վախճածի պէս՝ 1850 թուականին մէջ մեծ եւ հոյակապ դպրոցին շինութեանը ձեռք գործիին սոցային միարժանեան սիրելու եռանդեամբ:» (տես «Մէկայ Գաղթականութեան Հայոց Տրուպիզոնու» էջ 55-57):

Արեւ վրդ. ի վերջիչեւալ սողերը պերճախօս սպրոցային է Տրուպիզոնի այն օրերու կրթական վիճակին եւ չի կարատիր մեկնաբանութեան: Բայց աւելցնենք որ, Տրուպիզոնի Ենթակայ վիճակներուն մէջ միայն Կիւմրի: յանէն էր որ ունէր դպրոց մը:

Կեսարիա եւ իբր հարսնակ կարեւոր կեդրոն մը, ունեցած է «Վարժատունք Մանկանց»ներ, որունք անհասական նախաձեռնութեամբ բացուած են:

Ժէ. զարուն Յակոբ քհնյ. Կեսարացի մը կը լիջուր, որուն արուած է նաեւ «ուսումնասէլք» եւ «Կատարեալ վարդապետ» տիտղոսները, ունեցած է վարժոց մը: (տես «Բագրատէպ» 1922 էջ 162):

Շատ հուանական է որ, Յովհաննէս Հօնեցիի պէս, Աստուածատուր Մեչիլի նման զարգացած կրթականներ որոնք ժամանակաւոր կերպով մտացած են Կեսարիա, կրթական դարձունէութիւն կատարած պէտք են ըլլալ, հակառակ անոր որ սեւէ պատմական ստուկներ չկան այդ ուղղութեամբ:

Աւելի ուշ թուականներուն Կեսարիոյ մանքերուն մէջ կը բացուին կրթարաններ եւ քահանայերու, սարկաւազներու եւ դպրիներու կատարաններ, որ հայ սոցար կարգալ գրել կը սորվէին:

Այսպէս 1754-ին կը յիշատակուի Անարիանուպոլսեցի Պետրոս դպիր Պէլլէր անուանեալ «զվարդապետն մանկանց», որդին՝ արեւելեան վարժոց ճարի Պարուն Սէհէրիլիլին: Այս անձը որ ապահովարար է Խբլբէլէ սպրած է եւ շիտա՛մ ունեցած՝ Տ. Պարսա՛մ քհնյ. ի սերունդին հետ, անոնց աշակերտներէն Տ. Յակոբ քհնյ. ին գրել տուած է «Մէկնութիւն Մաղմուսոց Վարդապետ»-ի գործը: Ասիկա վարժապետ էր ու բնակչաբար ուսուցչութիւն քրած է (տես Ա. Աւարոյանեանի «Պատմ. Հայ Կեսարիոյ» էջ 1092-1093):

Ինչպէս Կ. Պոլսոյ, նոյնպէս Կեսարիոյ մէջ թագային վարժարաններ բացուած են, բայց աւելի ուշ ժամանակով:

1820ական թուականներուն հիմաւորց կրկու եկեղեցիներուն՝ Ս. Աստուածածին եւ Ս. Սարգիս Եկեղեցիներուն քով արդէն կային դպրոցներ: Սարգիս Կրմեան անուն սոցային մը զարգացուց կ'ունենայ

1826-ին առանց կրթութեան չձգելու քաղաքին հասնալ, կը հասարակ դպրոց մը, որ քանի մը տարի մասնակրթութիւն ետք, կը յանձնէ Ս. Սարգիսի թաղապետներուն:

Այս դպրոցը, որուն ուսուցիչն էր Գարսմիրճան անուն վարժապետը, որ թրքախօս էր եւ սեղաջիբ իր դպրոցին Գարս Մէրճան մէքթէպի կը կոչէին, կը գոյատևէ մինչև 1857 թուականը:

Ասիկա սպառնաց մըն է, թէ այդ թուականին արդէն կային թաղային վարժարաններ, ինչ որ կը հաստատէ 1834-ի Պարսիսրքաբանին վիճակագրութիւնը: Համաձայն այդ վիճակագրութեան, Կեսարիա քաղաքին մէջ երկու դպրոցներ նշուած են եւ թաղային մէջ մէկ վարժարան:

Ակն եւս ժԹ. դարուն առաջին կէտին կրթական շրջան մը բոլորած է, շնորհիւ իր անտեսական առաւելութիւններուն: Գործախառնարք, բացի Պարսիսրքաբանի 1834 թուականի վերոյիշեալ վիճակագրութենէն ուրիշ վաւերագիր չունինք մեր ձեռքը, որուն մէջ երկու եւ վիճակին երթակայ գիւղերուն եւ քաղաքներուն մէջ մէկտրուելով վարժարաններ նշանակուած են: Իսկ «Ակն եւ ակնցիք» երկուստեան մէջ մենք կը տեսնենք Ակնայ դպրոցներու վերաբերմամբ գրութիւն մէջ վերոյիշեալ վարժարաններու աշակերտութեան թիւը 1847-ին 230ի կը հասնէր: Սակայն հետզհետէ անտեսական անկում կրելով, քաղաքին կրթական շարժումն ալ կը կրէ իր միասնեք եւ տակաւ առ տակաւ վարժարաններու աշակերտութեան թիւը կը նուազի:

Արարկիբի կրթական վիճակը գրեթէ Ակնայ համապատասխան էր, սակայն վարժանալիքն ալ է թէ՛ Առաջնորդանիտ քաղաքը դպրոց չունէր, մինչդեռ անոր ենթակայ վիճակին՝ Մաչկերտի մէջ դպրոց մը կը գտնենք մեզի ծանօթ Պարսիսրքաբանի վարժարանական վիճակագրութեան մէջ:

Կարբերդի մէջ կրթական շարժումը սկսած է 1820 թուականներէն, հակառակ անոր որ պատմական առեւտրներ կը պակսին ճշգրտու համար ապիտ: Միակ վաւերագրութիւնը որ կայ մեր ձեռքը, Պարսիսրքաբան

ինն վերոյիշեալ վիճակագրութիւնն է, որուն մէջ մէկ դպրոց յիշատակուած է: Հակառակ ասոր սակայն, Բարունակ պէյ Ֆէրուխան 1847-ին իր ճանաչման գրութեան մէջ շատ ցարժակութիւն տեսէ յիշատակութիւն չէ բրած ասոր մասին:

Կարբերդի կուսակալութեան արեւելեան ծայրագոյն գաւառակը՝ Բալուն եւս պէտք է ունեցած ըլլալ եկեղեցիներու կից կրթական յարկեր, որոնց մասին սակայն ոչ մէկ տեղեկութիւն գտանք: Բայց եւ այնպէս, շատ հասնական է որ միւս հարթեակ գաւառներու դպրոցներէն ամբար վիճակի մէջ չ'են կրնար ըլլալ:

Նոյն է պարագան Երզնկայի եւ Կարինի կրթական վիճակը, որոնց մասին ի ձեռն ունինք Պարսիսրքաբանին վիճակագրութիւնը միայն, որուն մէջ նշուած է մէկտրուելով դպրոցներ ասին քաղաքներուն մէջ, սակայն ուրիշ պատմական աղբյուրներ կը պակսին ասելի մանրամասնութիւններ ստուգ:

Մարաշի մէջ եւս կրթական շարժումն սկզբնաւորութեան ստույգ թուականներ անորչ կը մնայ սպիտակներու չդոյութեան պատճառով:

Համաձայն Յարութիւն Նաշալեանի ստուած ծանօթագրութեան, Մարաշի ուսումնական կեդրոնները կ'ըստ են Ս. Թորոս եւ Ս. Յակոբ վանքերը: (տես Գր. Հ. Գալուստեանի «Մարաշ կամ հերոս Չէյքուն» գիրքը էջ 428): Աշակերտները հոն կը սորվէին եկեղեցական երգեցողութիւն, ալքրեւարանէն ետք Սոգմոս, Նարեկ եւ Աւետարան կարդալ:

1820-ին եւ անկէ առջ Մարաշի վեց եկեղեցիներուն կից Ծղղկացիներ գոյութիւն ունեցած չեն, այլ վերոյիշեալ վանքերու միաբաններէն գրեթէ կարգաւ սորվողներ իրենց ջուլհակի գործատեղիին մէջ իրենց աշակերտներուն կը սորվեցնէին նախ ալլուրէն՝ Թալսու (սախառակ) կարգացնելով:

Թախառան քառակուսի սախառակ մըն էր սակայն անտեղիով, որ ժողովներուն վրդէն կը կախուէր: Այդ թախառան վրայ մերձեցող գրուած կ'ըլլար այլ ուրիշը, որք վերջացնելէ ետք կը տրուէր Պզտիկ Սոգմոսը, Մեծ Սոգմոսը, Աւետարանը եւ Նարեկը

կապին:

1824-ին Ստեփան Գարսեափուճեան անուն երբ-
ասարող մը իր նախնական կրթութիւնը ստանալէ ետք
Մարտի մէջ, կ'երթայ Կեսաբիոյ Ս. Կարապետ վան-
քը սորվելու գրաբար, քերականութիւն եւ կասութե-
րագործելով քահանայ կը ձեռնադրուի իրբեւ Յով-
հաննէս:

Այս նորընծայ քահանայ Ս. Գէորգ եկեղեցւոյ
մէջ զպրոց մը կը բանայ 1828-1830-ի ստեղծելու բարձ
բարձր իր կրթութիւն ասլու համար երիտասարդու-
թեան:

Այն զպրոցին աշակերաններէն եղած են Մկրտիչ
կաթողիկոս Քէֆարիան, Տ. Նահապետ Ա. Քհնյ. Տէր
Կարապետեան, Տ. Մկրտիչ Քհնյ. եւ ուրիշներ:
(տես նոյն էջ 430):

Տ. Ղևոնդ Ա. Քհնյ. Տէր Նահապետեանի համա-
ձայն, Մարտի Ս. Գէորգ եկեղեցւոյ երեսկիներէն
Գէորգ ազա թօփալեան անուն մը կը շինէ եւ Կեսաբ-
իայէն Կարապետ անունով ուսուցիչ մը բերել կուտայ
էր ասն մէջ դասատուութիւն ընելու: Մահայն Գէորգ
ազա թօփալեան օր մը Մարտիչի երեք ժամ հետուա-
բուժեամբ ծառան գետին կամբօջէն անցած պահուն
քանի մը աւազակներու կողմէ սպաննուելով զպրոցը
կը դասաւարտուի փակուելու: (տես նոյն, էջ 430):

Վերոյիշեալ երկու անդեկազրութիւնները զպրո-
ցին մասին թէ եւ զբեթէ միեւնոյն բաները կ'աւանդեն
մեզի վայրին եւ աշակերտութեան մասին, սակայն կը
խտտրին իրարմէ ուսուցիչին վերաբերմամբ:

Յամենայն դէպս մեզի հետաքրքրողը ուսուցիչ-
ներէն աւելի զպրոցի վայրին ստուգումն է: Այս այս
զպրոցին մէջ քիչ շատ ուսում աւնող աշակերտներու
միջոցաւ է որ 1840-ական թուականներուն կը բացուին
Մարտի վեց եկեղեցիներուն մէջ Մաղկոցներ:

1845 թուականներուն էջմիածինէն Մարտչ կը
հասնի Սեբովբէ Մ. վրդ. անունով ուսումնական վար-
դապետ մը, որ Ս. Գէորգի նոյն զպրոցին մէջ հին-
գէն վեց սարի ուսուցչութիւն կ'ընէ:

Այդ սարիներուն ուն զպրոցին մէջ կը դասա-
ւանդուէր գրաբար, շարագրութիւն, քերականու-

թիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, թու-
բանութիւն եւ աշխարհագրութիւն:

Սեբովբէ Մ. վրդ. ի բով իրենց ուսումը կը շա-
րունակեն Տ. Նահապետ Ա. Քհնյ. Տէր Կարապետե-
ան, Տ. Յովհաննէս Ա. Քհնյ. Վարժապետեան, վար-
գափա Գույումճեան եւ ուրիշներ:

Սարգիս էֆ. Աղաբէկեան անունով հայ բարձրաս
տիճան պետական պաշտօնեայ մը, կ'աւազմարական
գործով կը մտայ Մարտչ քանի մը ամիսներ, այդ սու-
թէն օգտուելով մօտէն կը հետաքրքրուի քաղաքին
սոցալին կեանքին մասին:

Աղաբէկեան ուսեայ եւ զիսակցի հայ մը ըլլալուն,
կ'աշխատի Մարտչի հայ ժողովուրդի կեանքը կարգա-
կերպել եւ զարկ տալ կրթական շարժման գարշացման:
Ան Ս. Բառասուն Մանկանց Մայր եկեղեցիին մէջ
Քաղաքական ժողովի ներկայութեամբ, վեց եկեղե-
ցիներու թաղական խորհուրդներու մասնակցու-
թեամբ ընդհանուր ժողով մը կուստրել կուտայ եւ
այդ ժողովին կը շնչաէ պէտքը բարձրագոյն կրթու-
թանի մը: Ժողովը ի վերջոյ կ'որոշէ բանալ վարժա-
րան մը Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ (տես նոյն, էջ
432) 1862-ին ձեւարան անունով Տ. Յովհաննէս Ա.
Քհնյ. Վարժապետեանի տեսչութեամբ:

ձեւարանին մէջ ուսուցիչներուն կ'աւանդուէր
շարագրութիւն, ճարտասանութիւն, տրամաբանու-
թիւն, աշխարհագրութիւն, գրաբարէ աշխարհագրաբ
թարգմանութիւն եւ Ս. Գիբրիէ մեկնաբանութիւն:

ձեւարան վարժարանը թէ եւ 1864-ին հրոյ ճարակ
կ'ըլլայ, սակայն ժողովուրդին նախարատութեամբ
եւ Տ. Յովհաննէս Քհնյ. ի ջանքերով զպրոցը կը վե-
րաշինուի:

Այն վարժարանին ուսուցիչ եղած է գրաբար-
գէտ Բարութիւն Ժամկոչ Եփրեմեան:

Հաճեմի մէջ կրթական շարժումը սկիզբ առած է
երեք եկեղեցիներու (Ս. Գէորգ, Աստուածածին եւ
Ս. Թորոս) մէջ պաշտօնավարող 12-15 քահանայներու
զարգացումով, որոնցմէ կարողագոյն էր Ս. Գէոր-
գի Աւագ-երէց Տէր Յակոբ Քհնյ. Գրքեւաբաննայ,
իրբեւ գրաբարագէտ եւ ուսուցիչ: Իսկ աշխարհական

ներու շարքին անլի ուչ աչքի զարնոյ ուսանողներ
Հանդիսացած են Պալեան Հաճի (ուկերիչ եւ կիսա-
բժիշկ), Մանկրեան Մարտիրոս, Թուրաբաղիսան
Մարգրիտ, Սէդ-Չէնեան Մինաս (մինչեւ մահ Հաճույ
քաղաքացեալ), Էօրէճեան Հաճի, եւ ուրիշ շատ շատեր
(տես Յ. Պ. Պօղոսեանի «Հաճնի ընդհանուր պատ-
մութիւնը եւ շրջակայ Գօգան-Տաղի Հայ գիւղերը» էջ
413) :

Վերսիլեալ վանական մասնակի դրութեան կը
յաջորդէ զայրոցական (Մարգրիտ) շրջանը ԺԹ. զարուն,
զոր կարելի է շարունակութիւնը նկատել կրթական
չարժուածին :

Ըստ Մարտիրոս ազա կէթմէնեանի տեղեկու-
թեան, Հաճնի երէք եկեղեցիներուն մէջ մէյ մէկ
զայրոցներ բացուած էին 1844-ին (տես նոյն, էջ 414) :

Յիմ ժամանակս, կը գրէ Մարտիրոս ազա կէթ-
մէնեան (ակնարկելով իր զայրոցին մասին, որ էր
Ս. Գէորգ եկեղեցիին կից) անկա արդէն շինուած ու
բնացած էր: Այս Ս. Գէորգ եկեղեցին եւ զայրոցը Հա-
ճնի երեսելիներէն՝ Հաճի Մարտիրոս ազա Մանկր-
եանի եւ անոր յաջորդ Մարգրիտ ազա Թուրաբաղիսանի
աշխատութեանց շնորհիւ շինուած էին» (տես նոյն,
էջ 414) :

Մարտմամուտութիւններ կը պակսին այլ շրջանի
Հաճնի կրթական շարժումին առնչութեամբ: Մեզի
այնպէս կը թուի թէ կրթութիւնը Հաճնի մէջ իր
զարգացումը ունեցած է 1850-ական թուականներէն
ետք, որովհետեւ, մինչեւ այդ թուականները կրթու-
կան գործունէութեան մասին տեւէ յիշատակութիւն
չէ եղած:

Այնթապի մէջ առաջին անգամ զայրոց բացած է
նիկոմիդիացի Արբուշամ վարժապետ 1826-ին, որուն
ժաւէն յետոյ, զործը շարունակած է անոր ազան՝
յայտնի կրթական գործի: Մուրաթ Սարգիսն, որ կը
ճամբորդէ Երուսաղէմ, Կիպրոս, Մարսէյ, Էջմիած-
նին, կը սորվի ձրաններէն, ու իր հմտութեան ճա-
մար Արմաշի վանքին վերադառնալ կը նշանակուի:
Բաղձաթիւ աշակերտներ պատրաստած է թէ Այնթա-
պի եւ թէ Արմաշի մէջ: (տես Լեւոն Չորմիսեանի

«Համա յապառակը Արեւմտահայոց Մէկ Դարու Պատ-
մութեան» Ա. հատոր, էջ 465) :

Այնթապի մէջ կրթական շարժումը անլի թեղ-
նաւոր արդիւնքներ տուած է Համեմատաբար նախորդ
աւրիներուն, 1850 թուականէն ետք: Մենք պիտի
անդրադառնանք այդ մասին ուրիշ տեղ:

Չէյթունի մէջ էս նոյն էր պարտաւ: Մինչեւ
1850 թուականը Չէյթունի Հայերուն մէջ կրթութիւնը
մեծ կարեւորութիւն չէ գտած շատ մը պատճառնե-
րով: Սուրբ Գիւրք եւ այլ եկեղեցական զէրքեր կը
կարգաւորէին միայն կղերականները, իսկ մտաւի վրայ
հաշտուող մի քանի պատանիներ եւ երիտասարդներ
որոնք խանութներու մէջ եկեղեցականներէն կը սոր-
վէին քիչ մը կարգաւոր ու գրել, որովպէս կարեւորին
վարձուելի Սաղմոս, Նարեկ, Աստուածաշունչ ընթե-
նայ:

Սակայն 1850 թուականէն ետք, Չէյթունցիներ
ապրոցցին թէ իրենք եւս ուսումնասէր ժողովուրդ
մըն են եւ տեւէ կերպով ինչ ճին մնալ միւս հայրենակ
զաւաններէն: Եւ արդէն այն թուականին պարզ ըն-
թեքցանութիւն ու գրելի զիտոցողներու թիւը քան-
կերթի կը հասնէր: (տես «Չէյթունի պատմութիւն»
էջ 919) :

Ուրֆայի Հայերուն մէջ ալ կրթական շարժումը
ուչ սկսած է: Մինչեւ 1850 թուականը Ուրֆայի մէջ
կրթութիւնը շատ խոճալի վիճակ մը ունեցած է: Ե-
կեղեցիներու կից սենեակներու մէջ շատ անհայտ
թիւով աշակերտներ կուգային քահանաներէն կամ
զպիրներէն կարգաւոր ու գրելի կը սորվէին Ս. Գիւրգէն,
Սարմուէն եւ կամ այլ եկեղեցական զիրքերէն:

Կրթական շարժումը Ուրֆայի մէջ մեծ թափ
առնել սկսած է 1855 թուականէն ետք, որուն մասին
տաիթ պիտի ունենանք զբնու անլի ուչ:

Աստանայի մէջ կրթութիւնը Հայոց մէջ ԺԻ. դա-
րէն սկսեալ գոյութիւն ունէր Համաձայն մեղի Հասած
յիշատակարաններու տեղեկատուութիւններուն:

Այս ուղղութեամբ բնագաղղ եղլալեան էր «Ա-
ստանայի Հայոց Պատմութիւն» կարեւոր ստուարածա-
ւայ ուսումնասիրութեան մէջ մեղի ցոյց տուած է

ձեռագիր յեշտակարաններ, որոնք կ'ապացուցանեն Ատանայի մէջ կատարուած ուսումնական գործունէութիւնները, որոնք ինչպէս ուրիշ վայրերու նման զուտ կրօնական բնոյթ ունեցած են:

Սակայն բանք որ, այցելու կարգ մը վարդապետներ, իրենց Ատանա կեցութեան կարճ տեսողութեան, վանքերու և կեդեցիներու մէջ ճիշդք չեն խնայած կղերականներ հասցնելու աշխատանքին առնթեր՝ ոչ-եկեղեցական ազոց այլ քամբել էկեղեցական գիտելիքներ: Ս. Գիրքէն, Սարգսուն և այլ կրօնական գիրքերէն կարգալ ու գրել սորվեցուցած են անոնց: (տես աւելի մանրամասն հեղինակին ուսումնասիրութեան էջ 611էն երկարող մինչև 617 էջերը):

Մենք խուսափելով երկրորդաբարձ մանրամասնութիւններէ, կարողացանք դաւառական կրթական կազմակերպչական ճիշդքուն մասին ընդարձակ՝ բայց ամփոփ կերպով ասլ, այն կարևոր իրադարձութիւնները թուող իրականութիւններուն փաստերը ԺԼ-դարէն մինչև 1850-ական թուականները երկարող շրջանին, որ լրացումն է Կ. Պոլսոյ կրթական գործունէութեան և այսպէսով մեր առջեւ կ'ունենանք ընդհանուր պատկերը թւրքահայ կրթական Շարժումին:



1834-ի Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԿԱՐԱՆԻՆ
ԴՊՐՈՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1.- Էտիրնէ քաղաքին մէջ 1 դպրոց, իսկ Փիլիպէի մէջ 1	2
2.- Թէրթումալ քաղաքին մէջ 1 դպրոց	1
3.- Շումանի քաղաքին մէջ 1 դպրոց	1
4.- Նիկոմիդիա քաղաքին մէջ 1 դպր., Աբմաշ վանքին ուսումնարան, Ատարազար՝ 4, Սէօլեօղ 2, և 31 գիւղերու մէջ մէկական դպրոց	39
5.- Պուրսո քաղաքին մէջ 1 դպր., Ենիեճէ գիւղ 1 դպրոց	2
6.- Իգլիր քաղաք 1 դպրոց, Մանիսա	3
7.- Պանարմա 1, Մահալլէ 1, Քիւրմաղը 1, Պարլէպի 1, Էտիեճիկ 1, Էրմէնի քէօլ 1	6
8.- Կուսինա քաղաքին մէջ 1, Պիլէճիկ 1,	2
9.- Մարցուան, Ամասիա 3, Հաճը գիւղ 1, Քէօքքի 1, Պաֆրա 1	7
10.- Թօցաս 2, Նիկասար 1, Չիլի 1, Հերէկ 1, 11 թամազար 1	5
12.- Գաղատիա 1, Սթանուս 1, Պօլու 1, Տէվրէկ 1. Սիլիբիհիսար 1, Գարաճիսար 1, Աղչէճի 1, Գոնիս 1	1
13.- Կեսարիա քաղաքին մէջ 2, Թալաս 1	3
14.- Սեբաստիա 4,	4
15.- Շապին Գարա-Հիսար 2. Անտրէաս 2, Բալը 1	5
16.- Երզնկա 1	1
17.- Ակն 2, Ապուլէիս 1, Կամիլիսայ 1, Կարուլս 1 Բնիկեան 1, Լիճ 1, Լարվէր 1,	8
18.- Մաշկերա 1,	1
19.- Եղեսիս 1,	1
20.- Չարչամպա 1,	1
21.- Տրապիզոն 1,	1
22.- Կարին 2, Ախլցիս 1, Աբտուին 1, Յօխրապակերա 1,	5
23.- Վան 3	3
24.- Ածպրդեր 1, Աղվանիս 1, Չբալիս 1, Ծապէրի 1, Արգապիս 1,	5

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ
ՆԿԱՏԱՄԱՐ ԾՐԱԳՐՈՒՄՆԵՐ

Թրքահայ դպրոցներու ուսումնական մակարդակի բարձրացման խնդիրը ժ.Թ. դարու երկրորդ կէտէն ետք է որ մեծ կարեւորութիւն առնել սկսաւ, երբ Եւրոպայէն՝ յատկապէս Փարիզէն վերադարձող հայ ուսանողներ, իրենց հետ կը բերէին Կ. Պոլիս կրթական դարգացումին համար նոր դադափարներ եւ մեթոտներ:

Մինչեւ այդ թուականները, ինչպէս տեսանք, թրքահայ բոլոր կրթարանները՝ Էլլան անոնք Եփրատի կամ դպրոց, իրենց ուսումնական ծրագրով շատ նախնական էին եւ չէին բարձր բեր որոսան պահանջներ:

Թուրքերու հետ երբ հայ ուսանողներ պատահում թիւն ունեցան երթալու եւ ուսանելու եւրոպական մեծ քաղաքներու մէջ, անոնք իրենց ուսումնական շրջանին իւրացուցին յատկապէս երկիրներու կրթական մեթոտները: Ու երբ աւարտելէ ետք իրենց ուսումը, մէկ մէկ մասնագէտներ դարձած ելին, Կ. Պոլիս, ձեռնարկեցին ազգային դաստիարակչական գործերը:

Շատ բնական է, անոնք յառաջացած երկիրներու գաղափարներով տողորումը Էլլայով, պիտի շահուարժէին ազգային շրջանակէն ներս տիրող հնամուտ գրութիւնը: Եւ երբ Կ. Պոլիս Պատրիարքարանը 1853 Հոկտ. 22-ին լրջօրէն նկատուողական կ'առնէր կրթական խնդիրը, Գերագոյն Ժողովը որոշում կուտայ այդ ուսումնական երիտասարդներու գիտութիւնները, ու անոնցմով կազմել առաջին Ուսումնական Խորհուրդը, որուն անդամները եղան հետեւեալները.

- 1.- Գահիր Ամասան (հողագործ),
- 2.- Արքահայ Երամեան (լեզուագէտ),
- 3.- Կարապետ Իսթիւճեան (խմբագիր),
- 4.- Գարութիւն Հովիւեան (բանասէր),
- 5.- Սարիմ Մարտուտաճ (լեզուագէտ),
- 6.- Նիկողոս Պալեան (ճարտարագետ),
- 7.- Մաշատար Պարտեղպանեան (բանակագէտ),
- 8.- Նիկողոս Ռու-

սինեան (բժիշկ), 9.- Գովհաննէս Վահանեան (տարբարագէտ), 10.- Սերոյբէ Վիչնեան (բժիշկ), 11.- Սիսակ Աւարել Տատեան (ճարտարագետ), 12.- Գարեգին Գարութիւն Տատեան (բանագէտ), 13.- Պ. Սիսոն Տատեան (ճարտարագետ), 14.- Գրիգոր Օտեան (գրագէտ):

Այս հոյլ մը մտաւորականները, որոնց վիճակում էր բարեկարգել թրքահայ վարժարաններու ուսումնական վիճակը, իրենց առաջին գործը եղաւ եւրոպական գրութիւնը ի գործ դնել հայկական դպրոցներէ ներս, այդ հիմամբ կրթական ծրագիրներ վերամշակել ու մանաւանդ եւրոպական դադափարներ յայտնարելով, ազգային մեթոտներու մասին ձեռնել, այլ խօսքով, անոնց միտք բանին շրջանէ կը հնուանդ գրութիւնը հայ դպրոցներէն ներս ու ներմուծել յառաջացիկ երկիրներու դաստիարակչական եղանակը:

Անխորձ երիտասարդներ էին անոնք ու անհետաւան: Իրենք պատրաստուած մասնագէտներ Էլլայով, իրենց կոչումին կատարելով գիտակցութիւնը ունէին ու խանդավառ իրենց ստանձնած պաշտօնով: Եւ իբրեւ մի մեծ ոգիով, ապարէղ իջած էին կտրուկ քայլեր տունը միանգամայն դիմելու Վնչելու եւ ազատագրելու հայ վարժարանները ճահճացած հին գրութիւնէն:

Շատ զեղեցիկ խօսքեր եւ դադափարներ, մեծ ու խրատուիչ ծրագրերն էին անոնք, սակայն անոնք չէին խորհեր որ այնքան հեշտ չէր մէկ օրէն միւսը իրենց յանդուպն գործելակերպով յաջողցնել իրենց նպատակները:

Հետեւելով այն օրերու կրթական խնդիրներուն եւ պատահած անցուդարձերուն, առաջին հերթին մեր ուշագրութիւնը կը կեդրոնանայ Տ. Գահիր Արքեպիսկոպի Դաւթիոյ մէջ հրատարակած 1858 թուականին փոքրածաւլ զբօսիւ «Նուսուրթաններ եւ լուսաւորութիւնը» խորագրով, որուն մէջ գաղափարներ կը յայտնուին հինին եւ նորին միջեւ Թրքահայ կրթութեան բարեկարգման հարցին վերաբերմամբ եւ հակաճանութիւններու կը հանդիպինք նոր մեթոտի ջատագովներուն դէմ, որոնք հետաքրքրական են ու կարեւոր: Հետեւաբար անկէ հատուածներ արտագրելը

կենսական կը գտնենք այստեղ, առ ի լուսարանութիւն
ընթերցողին:

«Այս քաղաքիս Հայոց (խօսքը Կ. Պոլսոյ Հայ-
կրուն կը վերաբերի Յ. Տ. Պ.) ժողովուրդը երկու
կարգի կը բաժնաւի իրեն սկզբանցը հասնեամբ: Առա-
ջին կարգի մարդիկը ազգայնաբանական են եւ
ազգին մեծագոյն մասը կը ձեռնարկեն: Ասոնք լուսա-
ւորութիւնը վսեմ բաներով բացարձեւ կարող չեն,
սակայն անոր պահանջած քաջ գիտնէն եւ կը կատար-
են: Ասոնք ասպիւնութիւնները կը թուրեմար չեն
ստացեր, այլ իրենց կրօնքն եւ ծնողքն հայրենական
աւանդութեամբ ժողովուրդը են, եւ իրենց սկզբանց
հարգամբ կը մնան միշտ: Իսկ երկրորդ կարգի մար-
դիկ՝ ազգային աւանդութիւնքէն հեռանալով՝ եւ-
րոպական լուսաւորութեան ջանադով կը պրծին:

«Լուսաւորութիւն, լուսաւորութիւն կը գոչեն
աւելոյ ձայնը, որոյ արձագանքը Արարտայն բարձուն-
քը կը գոռացնեն: Կրթութիւն, կրթութիւն կը գո-
չեն զարձակոյ նոյն քաջամարտիկները: Լուսաւորու-
թիւնը անոնց դրօշակն է եւ կրթութիւնը անոնց
երգը» (տես էջ 4):

Վերոյիշեալ ասոցերը մեղի ցոյց կուտան հայ
հասարակութեան երկու հասանքներու բաժնուած բը-
լակը: Մեծամասնութիւն կողմոց գանդուածը հասա-
տարեմ մտալով կղերականներու եւ պահպանողական
ազգայական դասակարգին, կը պաշտպանէին անոնց
անակեղանները կրթութեան հնաւանդ դրութեան նկատ
մամբ, ու անոնց հետ ձայնակցելով կը պահարկէին
մտքամասնութիւն կողմոց եւրոպական կրթութեան
նոր մեթոտներուն ջանադովներուն:

Վեր ասնելով ազգային կրթութեան խնդիրը,
դրբորդին հեղինակը կը շարունակէ իր համախոհնե-
րուն պաշտպանած կրթութիւնը պարզաբանել, աւելի
ուսիրտութեամբ գրելով. «Բաջալերութիւն, քաջա-
լերութիւն, ընթացէք այն հրեղէն շաւիղին մէջ, լու-
սաւորեցէք ազգը, կրթեցէք ձեր որդիքը, որպէսզի
ազգին եւ ձեր որդեայ յախտնական երախտագիտու-
թեան արժանանաք: Քանզի վա՛յ այն ազգին որ այս
լուսաւորեալ դարի մը մէջ ազգասութեան քողին ներ-

քիւ կը ծածկուի: Ե՛մ դառաւոր ազգայի մը շունի
իրաւունք: Ի՜նք էք ուրեմն ազգին յայտը (խօսքը
անշուշտ նորահաս սերունդին է Յ. Տ. Պ.), դուք է՛ք
ազգին արեւը, արձակեցէ՛ք ձեր ծառայութիւնը անոր
միջոյ եւ լուսաւորեցէ՛ք զնա: Վարժեցէ՛ք զնա պիտու-
թեանց մէջ, առէ՛ք անոր կարողութիւն իւր հանձարը
բանեցնելու, պարարեցէ՛ք անոր միտքը կրօնքին
գորութեամբ, որպէսզի օր մը ձեր ազգին ալ լուսա-
ւորեալ ազգաց տուժարին մէջ գոյութեամբ յիշա-
սակուելու արժանի ըլլայ: Ահա՛ այն է լուսաւորեալ
ժողովուրդին ձայնը, այս է ազգայնաբան ազգայիք:
Քայց նախ ո՞վ ջանադովք լուսաւորութեան (խօսքը
ուղղուած է եւրոպական մեթոտին կողմնակիցներուն
Յ. Տ. Պ.) բացատրեցէ՛ք մեզ այն լուսաւորութիւնը,
որ ձեր դրօշակին վրայ գրուած է. երգեցէ՛ք այն եր-
գը որ ձեր բերնէն յարձած կը լսենք, որպէսզի տես-
նենք թէ՛ ձեր վարդապետութիւնները եւ յաշխատի՞ն
մեր միտքը, եւ ձեր ներքաշխատիքիւնները կ'զմոյ-
լեցնե՞ն մեր լսելիքը»: (տես էջ 4-5):

«Տգէտ» բառին վրայ որ շեշտը դրուած է վերո-
յիշեալ ասոցերուն մէջ, իր պատճառները ունի:

Եւրոպական կրթական նոր մեթոտին կողմնա-
կիցները «ազգայն» կ'որակէին այնպիսիները, որոնք
կրթական հին դրութեան իրաբաժ մնացած էին, կը
մերժէին ընդունելու ունէ՛ նոր գաղափար որ կրեալ եւ
կենսաւորել վարժարաններու մէջ դաստիարակութիւ-
նը, մտաւելի եղանակով ի գործ դնել կամ կերպրել
ուսումնական ծրուցիւնները: Այդ բոլոր բուսածները
զպրոցական բարեկարգութեան վերաբերմամբ, պահ-
պանողական ազանք ձեռք ձեռքի տուած նախապա-
շտեալ միտքի տէր կղերականներուն, այլաւերուծի
զմանոց ուղեցին տեսնել անոր մէջ եւ յերբարձոյ
խօսքերով բարեմիտ ու ազգայն գանգուածին վրայ ի-
րենց ազդեցութիւնը պահել կարենալու համար, բար-
թէ եւրոպական կրթական մեթոտին պաշտպան հան-
դիսարարներու միտք ձեռք բանին, հս լիական կրթական
յարկի բէ՛նքն օտար գաղափարներ ներմուծելով, խա-
թարել է անոնց հայկականութիւնը:

Զարմանալի բան մը չէք այս, ու բնականաբար նոր

մեթոտին անհամաձայն այս մարդիկը, իրենց մեկտարելութիւնը չարունակելու համար, ամէն կերպով պիտի ջանա չին հակադրել այդ փոքրամասնութեան վրայ, որ յուսկնութիւնը կ'ունենար մէկ անգամէն հիմնովին ջնջել հին դրութիւնը, և աւերակ տրուարդիական կրթական ծրագիրներու վրայ կանգնել հայկական դպրոցները:

Տ. Յակոբ Արքեպիսկոպոս իր հակաճառութիւնները չարունակելով նոր մեթոտին կողմնակիցներուն դէմ, կը գրէ հետեւեալները ի միջի այլոց. «Կը ծիծաղին յիմար հարցմունքիս վրայ, կը ցախն տղիտութեանս, կը դժարանան յանդգնութեանս դէմ այսպիսի անխոհեմ հարցմունք մը յարուցանելուս համար՝ և վերջապէս արհամարհանօք դէմքերնին կը դարձնեն: «Այլ ևս դարձեալ կը դիմեմ ձեր առատագիտութեան, ո՛վ լուսւորելուք. թոյլ տուք որ տղէտ մարդ մը ձեր բերնէն ընդունի լուսւորութեանս առաջին գասը: Դուք որ ջաշք ձեռքերնիդ ունիք՝ մի գրկէք անոր լոյսը չինէն:

«Այս անգամ լուսւորելոց դիտութիւնը չարմոցի, և ահա՛ կը տեսնեմ անոնց պարէն քաջամարտիկ մը, ասեանք կ'եկէ և այսպէս կը սկսի խօսիլ «Լուսւորութիւնը մտքին ջահն է, նոյն ջաշք որ և որպէս կան ազգաց վրայ կ'արձեղէ իւր լոյսը, և գոր մեք կ'ողջունենք ի հեռուսս ի խորոց սրտի: Մեզի համար դեռ նոր արշալոյսը կը ծագի, բայց քիչ ժամանակէն արեւն ալ կը տեսնենք:» (տես էջ 5): ... «Լոյսը լուսւորութիւնն է կ'երկրորդէ իմաստուն քաջամարտիկը, իսկ դա՛յն վարիւելու համար պարփոսնիկա բլլու է:» (էջ 6):

Կրթական հին դրութեան և արդիական մեթոտներու կողմնակից երկու հաստատմանքու միջևե գոյտանեղ բանադրանքները սուր հանգամանք կ'առնեն: Աւանդապատներ պարփոսնիկա որակելով իրենց ընդիմակիցներ, խիտ կերպով կը քննադատեն դանձնք ու կը դատապարտեն անոնց նորոյթին մերձեցումին, որ խորթ կը թուէր իրենց աչքին:

Հակառակորդ ճակատը յառաջադրած երկիրներու գաղափարներով սողորուած, չէր կրնար հանդուրժել

գաղափարն ճահճացած գործունէութեան և ուղի իրան պայքարեցաւ անոր դէմ և իրեն հանդէպ եղած արդիականութուն ու ամէն առթիւ իր խօսքին մէջ շեշտեց վարժարաններու բարեկարգութեան անհրաժեշտութիւնը և որպէսզէն նոր դրութեամբ:

Կրթական եղանակութեան վերաբերմամբ կ'արժէ վեր տանել հաստատման վերոյիշեալ զբոյժիչէն.

«Մե՛զ կ'իմանաս պարփոսնիկա բնույթի... Եկեղեցի սակայ չերթայ ծնրագրութիւն շրջել և չի խաղանքիլ, քանզի այն ռաճկական սովորութիւն մ'ըն է: Հին գաղափարի տէր մարդիկը անարգել և չի պատուել, և որպէսզէ մէջ շրջիլ դէժ մէկ ամիս, և և որպէսզէ սովորութեանց և արտաքին ձևերուն բազարի յարմարիլ, մինչև անգամ անոնց շարժմանց և բայտութեան կերպը անուշ, թատրոն և պարտանդէս կերթայ, պարիլ, երգել, մէկ խօսքով պարփոսնիկա բլլու: Ահա՛ ասանք և՛ մեր և մեզի նման լուսւորելոց սխաղոմները... Լաւ, կը պատասխանեմ, այս է ուրեմն լուսւորութիւնը, այս է ձեր նշանը, այսպէս կը լուսւորէք, դուք որ անոր սանձը ունենալու կը խորհէք և ջահ մը բռնած յառաջ կը դիմէք:

«Ազգը լուսւորութեամբ պիտի լուսւորեմք, կը պատասխանէ խոհական քաջամարտիկը: Ազգը պիտի լուսւորենք դպրոցները ծագիկցնելով՝ նորոնոր վարժարաններ հաստատելով՝ այլ ազգոցուտ հաստատութիւններ բնելով ազգին կարգ կ'առնն ապով, սողախորութեան բոցը տանուն սրտին մէջ արձարձելով:» (էջ 6):

Վերի հաստատմանքը մեկի որոշ երևոյթի կուտան այն թուականներուն կրթական ինդիքի չուրջ կատարուող երկու համեմատարար անհաւասար հաստատմանքու միջևե մէջներուն, որոնք հետզհետէ սուր հանգամանք առին, այնքան որ, այդ հակաճարտութեանց հետեւնորդ ազգային լուսւորութեան նկատմամբ կատարուող ախառանքներ սկսան կարգայ, և ատիկա պատճառ եղաւ, առաջին Ուսումնական Խորհուրդը գաղափարներու անգործութեան և ի վերջոյ

լուծարքի:

Արչակ Այսոյաճեան այս խնդիրներուն առնչութեամբ հետեւեալ բացատրութիւնը կուտայ, որ կարելու է, մահաւանդ ան բանով որ, ան գրեթէ ժամակակից է, քաջատեղեակ ամէն իրադարձութիւններուն եւ ստոր համար իր բաժնեկէր կշիւս ունին եւ արժանահաւատ են:

«Այս առաջին Ռուսմահան Խորհուրդը, կը գրէ ան, որ ինչպէս ըսինք, ժամանակին ուսեալ երիտասարդներէն կը բաղկանար, աւելի ծրագրական մարմին մը եղաւ, քան թէ գործնական: Նոր եռանդով եւ աւելնով լեցուն մեր վարժարաններու բարեկարգութեան գործին ձեռնարկեցին այնպիսի յախուսն ուղղութեամբ մը, որ նոյնիսկ իրենց կազմալուծմանը պատճառ եղաւ: Ինչ որ ժամանակը պիտի բնէ, պէտք է թողուլ որ հասուննայ: Ժամանակը կանխել կրթական այսպիսի պահու մը մէջ, յորում բնաւ ընդունակ չէ ժողովուրդը նորութիւն մը լսելու կամ տեսնելու ամէն ատենուան համար զգուշանալի է: 1853-ի Ռուսմահան Խորհուրդի անդամները՝ մահաւանդ Բարիզի մէջ գաստիարակուողներու խումբը, փոխանակ ժողովուրդին գաստիարակուողներուն բարեգումներն ստորձանական բարեփոխումներով բնելու պաշտօնարն բնդգրկելու, զան ամէնէն փոփոխ կէտէն սկսաւ եւ եկեղեցականներն իր ոչմ լարոյց: Տղէտ ժողովուրդի մը գարգայում եւ ուսում տալու համար, պէտք է ամէնէն առաջ կրօնաւորները գործակից ունենալ քան թէ հակառակորդ, մասնակի կողերի ձայնը՝ գատելու անվարժ ժողովուրդի մը համար մահաւանդ միշտ գորուոր է: (տես «Բիւզանդիոն» թիւ 2162 27 Հոկտ. 1903):

Այսոյաճեանին բրած դիտողութիւնները շատ տեղին են անդամնիկ Ռուսմահան Խորհուրդի գործունէութեան նկատմամբ: Ինչպէս գիտե՞լ տուինք մերը, Ռուսմահան Խորհուրդի երիտասարդ անդամները հետատեսութիւնը չունեցան, ոչ ալ ճկուն դիւանադիտութիւն, իրենց մշտեած երթական ծրագրերին գործադրութեան ժամանակ: Անոնք նոյնիսկ անխոհեմ գտնուելով, նկատողութեան ջրախն կղերին ունե-

ցած սպիկցութիւնը ազգային հաստատութեանց վերայ, որ գորուոր արժաններ ձգած էր գարելու ընթացքին: Հետեւաբար, հնարաւոր չէր կրօնաւորներու հակակշիւն տակ գտնուող հակակհան գաղտնեկուն մէջ հիմնական փոփոխութիւններ մտայնել, այն ալ կարճ ժամանակի մը մէջ:

Անհրաժեշտ է գիտնալ վէճերու ասան սուղ խնդիրները:

Ռուսմահան Խորհուրդի երիտասարդ անդամները շատ արդարացի իբրուանք ունէին իրենց կրթական ծրագրին մէջ առաջին հերթին ուղղութեան աւարակայ գարծնել ու կարեւորութիւնը շեշտել հակակհան գաղտնեկուն մէջ աշխարհաբար մուտքը, եւ սուրջ ձեռնարկեցին հրատարակել «Ուղղութեան թիւն»-ը, որ փրկականութեան զբոք մըն էր, պարսպատուած բոլիշի նիկողոս Ռուսիիեանէ, արժակցութեամբ Հր. Տիմոթէոս Թընկերեանի (յետոյ աշխարհական) եւ կ'ուղէին ալ զիբրէն բաւնդել հայերէն լեզուի աշխարհաբար գաղտնեկուն մէջ:

Ասեկա որքան որ անհրաժեշտ էր հայ աշակերտութեան մատչելի կերպով հայերէն լեզուն սորոյեցնելու, սակայն մտազին միայ յայտնի փոփոխութեան մը եղաւ:

Ռուսմահան Խորհուրդի այս ձեռնարկութիւնը գժպոհեցուց կղերականները: Անոնց գործին չեկաւ այս բանը, որովհետեւ իրենց մեծն շորհը եղած էր հիմնի ի վեր, կրօնական զիբրեանէր գրարար լեզու սորոյեցնելը, որմէ հազիւ կ'օգտուէր աշակերտութիւնը:

Դրարար լեզուով սորոյած քիչ մը հայերէնը անբարար էր սղու մը համար, մահաւանդ էրր ան սղատ չուկայ պիտի իջնար սղորուտ հարելու: Երկակային մէջ, բնական է ընթացաւարտ երիտասարդը չգործածելով գրարար լեզուն, պիտի մոռնար: Եկեղեցական ըլլալու կամ շատ աղօթանէր ըլլալու պարագային ան պիտի չարունակէր կարողալ կրօնական աղղիբերը, սակայն եւ այնպէս հայ լեզուին պիտի չկրնար տիրապետել աղղ միջոցաւ եւ հայերէնագիտութեան ստորձանաղղ պիտի մարր գրեթէ նայր:

Հակառակ այս իրականություն, կղերք բուն
կերպով բողոքեց Ռուսումնական Սորճուրդին առած
քայլերուն դէմ և զօրաշարժի ենթակից իրեն հա-
մախոհ աղաչական դատարարք, որպէսզի արգելք
հանդիսանար զպրոցներս մէջ «Ուղղախօսութեան»
դատաւանդութեան, առարկելով որ, Ռուսմտական
Սորճուրդը կը ձգուէր իր նոր կամ ինչպէս կ'ըսուէր
այն ժամանակ, ալաֆանկա մեթոտով քանդել քան
իէ բարեկարգել հայկական պրոցները: Եկեղեցական
զիրքերէն ամբար դատաւանդութեան հաստատութեա-
մբ, աշակերտութիւնը պիտի առաջնորդուէր անհա-
ւատութեան և աղպէսով պիտի եղծանուէր զպրոց-
ներու մէջ զպատշէն ոգին:

Այս ամբաստանութիւնները խոր ազդեցութիւն
գործեցին հասարակութեան վրայ, որ ինչպէս ըսինք
նախօրօք, անտեղեակ էր իրաց կացութեան և դժ-
բախտաբար այն բարձրութեան վրայ չէր բերուելու:
Եւ դատելու այն ինչ որ կ'ենտական էր թղթահալ կր-
թական շարժան գործարարութիւն համար:

Ընդգրկած ըլլալով ժողովուրդը կը ձայնակցէր
դժգոհներուն և կը դատապարտէր Ռուսմտական
Սորճուրդի առած քայլերը: Ահա այդ պատճառաւ
էր որ, Ռուսմտական խորճուրդի անդամները ամբ-
նայս շխտքանելու և կիրքերը հանդարտեցնելու հա-
մար կ'ստիպուին յանձնաժողով մը կողմէն Ռուսիո-
եանէ, Նիկողոս Պաշեանէ, Խաչատուր Պարսեղոյան-
եանէ և կարապետ Իւսիւճեանէ, քննելու համար
իրաց կացութիւնը: Սակայն կոնքրետապահան դանդ-
աժը Ռուսմտական Սորճուրդի անդամներուն որո-
ցարեքած հասկացողութեան դարև բարի արամագրու-
թիւնը արժամարձեց և ստիպեց Պատրիարքար-
նը որ արգիլելու ամ: «Ուղղախօսութեան»
գործածութիւնը զպրոցներէ ներս: Պատրիարքար-
նը հարկադրուեցաւ ուղղակի խնդրին միջամտել, մէ-
ծերուն վերջ գնելու համար և 1855 Յունուար 25-ին
պատմական յայտարարութեամբ մը արգիլեց Ռու-
սիեանէ «Ուղղախօսութեան» դատաւանդութիւնը:

Ենիք: այսպիսի գործ մը, աւանդապաշտ հին
գրուի մարդոց քիսճան հաշիւներուն զոհ կ'երթայ և

այնուհետև չկարենալով այդ թնամական մթնոլոր-
տին մէջ գործել, Ռուսմտական Սորճուրդը կը հար-
կադրուէր իր հրաժարականը ստլ, թողուլով զպրոց-
ները վարելու պարտականութիւնը ըստ առաջնոյն
կղերականներուն:

Այնուհետև, երկու ամբիւր շափ Գերագոյն ժո-
ղովը չկրցաւ ուրիշ Ռուսմտական Սորճուրդ մը բնա-
նել, իսկ զպրոցներու մէջ կրթութիւնը կը շարունա-
կուէր համաձայն Ռուսմտական հին ծրագրին:

Սակայն կարելի չէր կրթական շարժումը թողուլ
նախնական միջակին մէջ և ամիկա Գերագոյն ժողո-
վի օրակարգին առջնահերթ խնդիրը եղած էր:

1857-ին Գերագոյն ժողովին ներկայացուած ծրագր
ուած յայտարարելի մը մէջ, Լօրնֆէլթ Գրեգոր Մար-
կուսեան ժողովին ուշադրութիւնը կը հրուրէրէ, չորս
տասակ հաստատութիւններու վրայ որոնց երկնոր-
դը կը համարէ «լուստարութեան արդիւր ըլլալից զպ
րատանները, որք յատուկ յանձնաց և նոր բարեկար-
գութեանը կարող են»: (տես «Յիւլիանիոն» թիւ
2162 27 Հոկտ. 1903 - Ա. Ալպոյաճեանին յղուածը):

Գերագոյն ժողովը փափուկ կացութեան մը առ-
ջև կը գտնուէր: Կար զպրոցական և կրթական բարե-
կարգութեան խնդիրը, սակայն չէր կրցած նոր Ռու-
սումական Սորճուրդ մը կողմէն, հաստատական
խնդրները վերաբարձելու վախէն: Արդէն առաջին
փորձը իր դաժնագոյն պատուը տուած էր, ըսյց
պէ՛տք էր ձեռնածալ նստիլ: Ո՛ր:

Այս անգամ Գերագոյն Սորճուրդը զազալարը կը
յղանայ փորձ մը ընել նոր Ռուսմտական Սորճուրդ մը
կարելու եկեղեցական և աշխարհական անձնաւորու-
թիւններէ, որպէսզի խորճուրդակցարար կարելի ըլլար
յարձոյնել զպրոցներու ուսումնական մակարդակը
բարձրացնել ու միեւնոյն աստե՛ն բարեկարգութեան
խնդրին լուծում տալ:

Ի վերջոյ 1857 Սուրբի 11-ին կ'ընտրուի նոր Ռու-
սումական Սորճուրդը, որուն մաս կը կազմէին
չորս եկեղեցականներ և տասներկու աշխարհականներ:
Եւ որպէսզի վէճերէ պերձ դասէ ժողովը, հետու կը
կեցնէ այն ամբարքը, որոնք այնքան կրքոտ պայքար

մղած էին իբրբայ և զի, իբրք վերաւորող արասյա Եսայի թիւնն ի յոյժ:

Միակ անձը, որ էր Կարապետ Իւթիւճեան, հակառակ անոր որ համախոհներէն մէկն էր անդրանկի Ռուսոմոսկան Սորհուրդին, բացառաբար մաս կը կազմէր նոր Ռուսոմոսկան Սորհուրդին:

Ռուսոմոսկան այս Սորհուրդը իր վրայ դրուած յոյսերը չկարողացաւ իրականացնել, և կրթական խնդիրը, ինչպէս նաև դպրոցական բարեկարգութեան հարցը յուժուժ չգտաւ դժբախտաբար:

1858 Փետր. ին Օսմանեան Թուրքիոյ կոռապարութեան Մէլարիֆի Խոսն ժողովին կազմած դպրոցներու վեճակագրութեան մէջ, հայ վարժարաններու նկատմամբ Տարթ. Բարուսի պէլ մէքուխան, 1859-ին Հետեւեալը ներկայացուցած է. — 42 վարժարան, 4376 մանչ և 1155 աղջիկ աշակերտներ, 197 ուսուցիչներ և 875 հարկաւորը. (արձաթ դրամ) տարեկան ծախք: (Տես «Բիւզնէսիոն» թիւ 2162 27 Հոկտ. 1903):

Այս թուանշանները խօսուն են և ցոյց կուտան Կ. Պոլսոյ հայ դպրոցներու աստիճանը և աշակերտութեան բարձրութիւնը: Մինչդեռ տասնհինգ տարիներ առաջ վարժարաններու թիւը հարկի 30 կը հասնուէր:

1860-ին Ազգ. Սահմանադրութիւնը գործադրութեան գրուելէն ետք, առաջին անգամ Հոկտ. ին կ'ընտարուի ուրիշ Ռուսոմոսկան Սորհուրդ մը, որուն անդամներն էին Մատթէոս Արթուրեան, Բարուսի պէլ (ատենապետ), Սիմոն Միքայէլեան, Տարթ. Նահապետ Ռուսինեան, Ելան Օսման, Թէոդորոս Գիւսակ պէլ, Մկրտիչ Միւհէնիսեան, Երսէս Տասեան, Պէլ գրա Ռաֆա, Օղակն Շահանեան: (տես «Բիւզնէսիոն» թիւ 2162 27 Հոկտ. 1903):

Այս Ռուսոմոսկան Սորհուրդին առաջին գործը կ'ըլլայ վտրձի համար պատրաստել «Ռուսոմոսկան Հիմնադիր» մը, ինչպէս նաև դասադիրքերու պատրաստութեան համար խորհրդակցութեան մէջ մտնել դասատուներուն հետ, առաջին հերթին 1861 մարտ 1-ին Ղարաթիոյ Եկեղեցիին մէջ, տեսնապետութեան

մը իտարանակ պէլի և ուր յաւուր պատշաճի բանախօսութիւն մըն ալ ըրած է Յակոբ Ոսկան:

Սոյն խորհրդաժողովին պատշաճ կը դատուի, ստոր հասցէէն անձերէ յանձնաժողով մը կ'ազմել Քերթաւանութեան զիրք մը պատրաստելու համար և կամ կ'որոշենք մին քննիչ ետք, ընդունել զայն բոլոր վարժարաններու համար իբրև դասագիրք:

Քերթաւանութեան այս զիրքը աշխարհաբար քերթաւանութիւն չէր, ինչ որ կ'ուզէին ընել Ռուսինեան և իր միւս ընկերները 1853-ին, այլ դրարարի քերթաւանութիւնն էր, որ դժբախտաբար այդ ալ կարելի չէր: Այս պատրաստել ժողովականներու հաւարական աշխատանքի անհամբաշխութեան և տեսակէտներու սչնայնացման պատճառաւ: Հետեւաբար ծրագիրը անգործադրելի մնաց և Քերթաւանութիւնը շարունակուեցաւ աւանդուել դպրոցներու մէջ Տ. Մեսրոպի, Փէլ-ախմարճեանի և այլոց հրատարակութիւններէն: Աւելի վերջ հրատարակ ելաւ Գարայգչեանի քերթաւանութիւնը, որ համեմատաբար միասնորուն աւելի մասնակի էր դպրոցականներուն: Սակայն աշխարհաբարի մասին ոչ ոք կը համարձակէր խօսք բերել, եկեղեցականներու և անոնց նիւթակայ աշխարհական ազգայիններու երկիւղէն:

Իսկ ինչ կը վերաբերի ընդհանուր դաստիարակութեան «Հիմնագիր» ի խնդրին, նպատակն էր ստէն դպրոցներուն միօրինակ ընթացք մը տալ համաձայն ծրագրի մը և բարեկարգութիւնը անոր հիման վրայ կատարել: Սակայն խօսքը մնաց խօսք և գործադրութիւնը յայտնուեցաւ երկար ժամանակով:

Հակառակ այս իրականութեան, միւս կողմէ օլտախար ձեռնարկութիւն մը եղած է 1960 իրականին «Ռուսուցաց Օգնութեան Միտուկ» ի մը հաստատումը, որուն կանոնադրին ըստ 45-րդ յօդուածին, «Գոյրատանց դաստիարակներուն կացութիւնը բարելոնելու և սպառան անդորրելու խնամք տանել»: (տես «Ժամանակ» 24 Գեկտ. 1965): Այս կանոնադրութեան մէջ, ուրիշ տեղ մը կը կարգանք հետեւեալը «Ազգին մէջ յաջողակ և քաջամտ դասատուներ հասցնելու և

զպրոցական դասակարգերը պատրաստելու ջանք եւ փայտ ունենայ» (տես նոյն) :

Ուսումնական Խորհուրդը գտնուելով կղերականներու ազդեցութեան տակ, կազմուեալ էր աշխատելն գործելէ եւ ասոր համար ալ վարժարաններու բարեկարգութեան նկատմամբ եւ ոչ ալ ուսման մշակարգակի տեսակէտով կարողացաւ զգալի յառաջդիմութիւններ արձանագրել :

Ստուգիւ պատճառը այն եղաւ որ, Ուսումնական Խորհուրդի վերջին հինգ անդամները հրատարին: Ասոնց տեղը դոցելու համար պաշտօնի կոչուեցան 1861 շտաբաններին հետեւեալ ազգայինները. Մկրտիչ Աղաթոն, Յակոբ Ոսկան, Կարապետ Իւթիւճեան, Յովհաննէս Վաչանեան եւ Յովսէփ Մալէգիան: (տես «Ֆիւզիոն» թիւ 2162 27 Հոկտ. 1903):

Սակայն այս փոփոխութիւնն ալ ունէլ ազդեցութիւն չգործեց կրթական յառաջդիմութեան արդելք հանդիսացողներուն միայն եւ իրաց դրութիւնը շարունակեց մնալ իր ճահճացած վիճակին մէջ:

Տեղաբաշտ սակայն դժոխհանք կը պատճառէր Գերազան ժողովի անդամներուն: Քանի մը փորձերը ցոյց տուած էին յառաջդիմութեան արդելքները, սակայն եւ այնպէս յանդուրժելին չկար մեծամասնութեան դէմ բացարձակ դիրքաւորում մը կատարելու, անհատական շահերէ կամ փառասիրութենէ մղուած:

Հակառակ ասոր, իրախնութիւնը կը մնար իրականութիւն եւ պէտք էր կերպ մը դանել առանց կողմերը գրգռելու կամ անհատներ վիրաւորելու, Թրքահայ կրթական մակարդակի բարձրացումին հող տանելու համար:

Դարձեալ Ուսումնական Խորհուրդի մը բնաբուծութիւնը խնդրոյ առարկայ կը դառնար, ինչ որ իրականացաւ 1863 Նոյ. 16-ին, որուն մաս կը կազմէին հետեւեալ ազգայինները. Յակոբի Մանուկեան (Բ. ատենադպիր), Փափաղեան Պ. Պոզ. Ստեփան (ատենադպետ), Մկրտիչ Աղաթոն, Յովհաննէս Ուրախանճեան, Տիգրան Եւստուֆեան:

Փոփոխակ մը հազիւ անցած, նորեմտիք Ուսումնական Խորհուրդի վերջին չորս հոգիները չենք գիտեր ինչ պատճառով կը հրատարին եւ իրենց տեղ ուրիշ չորս անդամներ կուգան, անոնց թուիք բացը գրեցիւ համար, անոնք են՝ Սիմոն Տառեան (ատենադպետ), Յովհաննէս Տէրբալէնց, Կոստանդ Կոստանդեան եւ Գարրիէլ Գրասէրեան:

Այս Ուսումնական Խորհուրդը բողոքումամբ ասպիկներուն քիչ չափ բեկմանուր գործունէութիւն ցոյց կուտայ երկու ասորայ իր շրջանին (1865 Մայիս 1): Այն ժողովը կ'ընդգրկէ Ստեփան Փափաղեանի (ատենադպիր) պատրաստած թուիք վարժարանաց բնականուր լարեկարգութեան ծրագրեցումով:

Այն կանոնադրութիւնը հինգ դիւտուր մասերու բաժանած էր.

- 1.- Աւսմանք, 2.- Հոգաբարձութիւն, 3.- Դասատուութիւն, 4.- Կառավարչութիւն, 5.- Քննութիւն:

Այս կանոնադրութիւնը կը լրացնէր «Յուցակ իրաքանչիւր ուսմանց պատրաստեալ յԱզգ. Ուսումն. Խորհրդոյ Կեդր. Վարչութիւն»ը: Ասոր հետ մէկտեղ այն Ուսումնական Խորհուրդը պատրաստած էր «Տնտեսութեան եւ Օրագրաց Ընկեր» ցոյց առնող պատճենները Աւելին. Խորհուրդին անդամները իրենք անձամբ հետաքրքրուած են զպրոցական ներքին խնդիրներով եւ դիտողութիւններ ներկայացուցած են հարկին, երբ իրաքանակներ կատարած են անոնց մէջ:

Նոյն Ուսումնական Խորհուրդն էր դարձեալ, որ ծրագրած էր կարգ մը թուցային վարժարաններու միացումը, սակայն թաղական Խորհուրդներու եւ ուսուցիչներու ինքնասիրութիւններու հետ բախելով, չկարողացաւ իր գործը լիովին ամբողջանել: Ասկէ զմաս, գտնուելով կղերա-աղայական հաստատածին դուտուր ազդեցութեան տակ, ինչպէս նախորդները, հարկողութեան տեղի տալ եւ զոճացուցել ազդելքներ չտալ: (Բայց տեղեկութիւնները բողոքած են Կ. Պոլսոյ մէջ յայտնող «Արեւիկ» թիւ «Ֆիւզիոն» թիւ մէջ հրատարակուած խմբագրականներէն եւ յոլուածներէն Յ.Տ.Պ.):

Քանի մը առիթներով տեսանք թէ որքան կը սուսէր կրթական մտարդակի բարձրացումի ծրագիրն ու անոր համար նուիրուող ազգայիններու ճիգը։ Անշուշտ հեշտ ալ չէր մեկուսացնել ազգայինները, որոնց ձևքն կը ազգային գործերը եւ անոնց նիրաբան օժանդակութեան կը կորոտէր։ Հետեւեալ տարի ազգասկարբը նեցուկ հանգիստանալով կղերականներուն, նոր պատմութենէն աէր կրիտասարգ մասնորոհումներ սնդոր մտացին հայկական գայրոցներու մէջ ներմուծել սրբիտիան մեթոտներու կերպրկումը։ Ահա այս պատճառաւ տարիներու ճիգերը գայրոցներու բարեկարգման եւ ուսումնական մտարդակի բարձրացման նկատմամբ մեծ արդիւնքներ շտտին։ Մտղիներ ալ պատրաստուեցան յաճարական Աւսումնական Խորհուրդներու կողմէ, սակայն անոնք մտացին թուղթի վրայ գրուած խոսքեր, քմահաճ հաշիւներու եւ յաճաւ ըմբռումներու հետեւանքով։ Այս պատմաններու տակ թրքահայ կրթական շարժումը չէր կրնար իր տարեկարգութեան մէջ յառաջիմումութիւն արձանագրել, իսկ գայրոցական բարեկարգութեան հարցը անյուշելի թնձուկի մը վերածուած ըլլալով, կարելի չէր գրական արդիւնքներ սկնկալել անկէ։

«Մասիս» իր 1 Մայիս 1865 թիւ 688-ին «Ազգային» սխնակին մէջ երկար յօդուածով «Ազգային» յառաջդիմութեան գործը» խորագրին տակ հետեւեալ տեսութիւններ կը յայտնէ գրելով հետեւեալը ի միջի ալլոց․

«Գիտութիւնը գօրութիւն է։ Ասոր կարծենք ոչ ոք կրնայ հակառակել՝ երբոր սկնյալտնի կը տեսնէ անկենդան նիրաբող վրայ մարդկային մտաց ըրած աղղեցութիւնը եւ գիտութեան գործած հազար տեսակ հրաշալիքը։ Մեր ազգին մէջ շատերն սասար աղէկ համոզուած են, եւ անոնց համար երկայն յօդուածներով գիտութեան օգուտները ցոյց առլու հարկ չկայ․ բայց գանազան կողմեր կը գտնուին սակաւին բողմաթիւ հայեր ալ, որ իրենց ծննդ երկիրներուն հօգիտ թէ յանի մը կողմերը տեսած ըլլալով, բորբոջին անտեղեկ են աշխարհիս շորս կողմը գտնուած բաներէն, եւ

անցիտյն պատմութեան անգէտ, ապագային մէջ ըլլալիքներն ալ որոշելու անկարող են։ Ասոնց համար ա մէկ գիտութիւն գրեթէ Մաղմանն է Նարեկն է, եւ ինչ հանցիտյն որ մէկը գիտուածով ըրէ մըն ալ Աստուծաշունչէն տեղեկութիւն ունենայ եւ իր տաճկանան խոսակցութիւնն ալ երբեմն մարդարեւից վիտայութիւնները գորդարէ, անկից մեծ գիտնական չըլլար աշխարհիս երեսը, աշխղա որ մեր իմաստունին խորին հմտութեան ըով առ ոչինչ են Նւստոնի սկգրութիւններ, բայց սակալաւակաւն է Ազգի մը յառաջդիմութեան համար։ Իրականութիւնը բարձրաճան կը ձանուցանէ մեզ թէ ոչ, եւ հարկադրենք սերիշ միջոցներու գիմելու։ . . . Երբ մեր ազգային դաստիարակութեան ներկայ վիճակն աչքի կհանցունենք, երեք կողմ գայրոցներ կը գտնենք, որոնց մէջ աւանդուած ուսումները մեծ բան մը չեն, թէ եւ երեք կողմն ալ իրարու հետ շփոթել չենք ուղեր, ինչու որ մեծ տարբերութիւն ունին իրարմէ։ Առաջին կարգի գայրոցներն են գիւղերուն եւ յաղարաց թաղերուն մէջ գտնուած մասնաւոր վարժոցները, որք գայրոց ըսուելու անպատարճանի չեն, եւ ուր սղալք ըբբական ու սողմոս միայն կը կը սովորին։ Երկրորդ կարգի գայրոցներն են . . . յաղարաց ամանց մէջ եղած գայրոցները, ուր թէ եւ հայկաբանութիւն եւ երբեմն ալ տաճկերէն գասի պրտի, բայց տեսնուած յառադիմութիւնն այնչափ դամալ, այնչափ ապարդիւն է, որ ինդն ուղղագրութիւն մը անգամ սովորող քիչ կը գտնուի։ Երրորդ կարգին ներքեւ կրճանք գտնել մարտարդարիս թագերուն մէջ եւ ուրիշ տեղեր գտնուած այն գայրոցներն, որ հայկաբանութեան հետ ըրիշ մըն ալ լեղուագիտութիւն եւ քիչ շատ գիտութեան սկգրութիւններ ալ կ'աւարդուին։ Արդ՝ այս երեք կարգի գայրոցաց վիճակն ալ գոհացուցիչ չէ, ուստի ազգային յառաջդիմութեան ի սրտէ ցանկացողները պետէ է որ ամէն բանէ առաջ իրենց ուշադրութիւնը դաստիարակութեան կանոնաւոր գայրութիւն մը հաստատուելու ըրլիրն, առանց որոյ անկեարդիւն է՝ չըսեմք յառադիմութիւն ընել՝ ալ ազգ մը քաղաքակրթիւն։

«Դաստիարակութիւնը տարածելու համար որչափ

գործարարութիւն ալ որ ընենք, գործակալ քիչ է, ըստ սրբում անհուն ասպարէզ մը կ'աչ առջնեմ, ուր ոչ մի-տ յն պէտք եղած նիւթերը կը պահեն, ԱՅԼ ԵՒ ԱՄԷՆ ԲԱՆ ԳՐԵԹԷՆՆՈՐՈՅ ՍՏԵՂԵՐԵԼՈՒ Է...»: Ապր խօսքը կեդրոնացնելով Ռուսմատեան Պորճուրդներու գերին վրայ, կը շարունակէ գրել ալ անոյ մը սրայէս. «... անուամբ միայն Ռուսմատեան Պորճուրդ մը կ'աղ մեղ, որ պահապանը կամ կրտսերակ ծրարիք մը չաբարդելէ զատ ուրիշ գործ չընէ, կարծենք թէ ուրբու-կաններն ալ անոր չափ գործ կ'ընեն անենք»:

Ապա կարգ մը առաջագրանքներ ընելով կը շարունակէ. «Ռուսմատեան Պորճուրդն կ'իջնար նաև քնդ-հանրայէս ազգային վարժարանաց վրայ հակել, վարժարանաց կարողութիւնը քննել, և դասադիրքերը սորոշել, մէկ խօսքով բոլոր աշն հոգերը անել՝ որոնց-մէ կը կատարէ դաստիարակութեան բարելաւութիւնը և հետեւաբար ազգային ապրող յառաջիմութիւնը, և գոր անհնար է հոս մի առ մի թելուք»:

Հիմնական բարեկարգութեան վերաբերմամբ վերջիչեալ տողերը անհրաժեշտ առաջագրանքներ են, զորս պատմանաբար գործած էին հայկական դպրոցներու բարեկարգութեան և կրթական մակարդակը կարենայ բարձրացնելու համար:

Որով և կ'ըսուէր այս բաները: Ես խաղաղարեւոյ մտքի տէր դասակարգը անդրուռելի մ'նայ, և սակեալ պատճառ գործաւ կարգ մը դժգոհներու, որոնք օտարութիւն իրենց դաւախները օտար վարժարաններ դնել: Եւ րանք որ այս տղեկ սրբորը ուրիշներու համար դէշ օբիմակ եղաւ ու հետզհետէ այնպիսիներու թիւը չառաջաւ, որովհետեւ նիւթայէս ի վիճակի էին սուրբներու և ոչ ոք կրնար այնպիսի գանձք, քանցի պատճառները որուն ծանօթ ենք բնականորէին: Բայց և այնպէս այս ընթացքը կրնար ի վերջոյ դէպի այնպիսի բուն առաջնորդելի ժողովուրդը:

Այս երեւոյթը սակայն չաճողորմօրէն կրկնապատկան դասակարգին կողմէ: Անոնք ամբողջապէս ցին օտար դպրոցները զիսկոյններու միջոցով ժողովուրդին ուղեղին ապրուղիներ: Եւ որով, թէ արդիական մեթոտներու մուտքը վստասօղն վատնուար

գործած էր, հետեւաբար պէտք չէր կ'արեւորութիւն ընծայել այնպիսիներուն, որոնք սոր հիմերու վրայ դնել կ'ուղէին դպրոցական ծրարիքները կրթական շարժումը յառաջիմութեան համար: Ժողովուրդին մեծամասնութիւնը չգիտնելով ո՞ր ուղին էր որ զինք պիտի առաջնորդէր դէպի յառաւորութիւն, կը ծարակցէր անոնց բարեմտօղն: Արդէն, ամէն անց զանգուածին անեղեկութիւնը կը չաճողորմօրէն ի հետեւի խմբակցութեան մը հետապնդած նպատակներուն:

Այս կացութեան մէջ, Գերագոյն Ժողովը չվճարեցաւ ու շառաւարտութեամբ հետաքրքրուեցաւ և ջանաց միջին ճամբայ մը դանել, շուտեւ իր արդիւնները ձեռք ձգելու համար կրթական շարժման յառաջիմութեան ի խնդիր: Ան անհնար չաղով կուրծք առաւ բոլոր դժուարութիւններուն:

Սակայն հերթին ան կարեւորութիւն տուաւ դպրոցներու կրթական մակարդակի բարձրացման ու այդ անհնարութեամբ անհրաժեշտութիւնը շեղուց իր հակողութեան ասի անկ դպրոցներու մէջ գործածուելիք դասադիրքերու պատրաստութեան հոգը, զանոնք ակի յոսկաւոր գործներու մտադրութեամբ:

Ռուսի Պատ. Քաղաքական Ժողովին կը յանձնէր դրացի կրթական անուշի պատճառներ յարմար անձ մը դանել, որպէսզի կարենար ըստ կարելւոյն կատարել այն անհրաժեշտ պատրաստութիւնները դպրոցական դասադիրքերուն համար:

Պատ. Քաղաքական Ժողովը ի վերջոյ կը դանէ այդ գործին յարմարագոյն անձը, որ դպրոցական կարգերու հմուտ և փորձաւոր էր:

Այդ անձը ուրիշ մէկը չէր եթէ ոչ Մարկոս Աղաբէկեանը, որ 1865 Մարտ 26-ին պատճառ կ'առանձնէր կատարելու իր առաքելութիւնը: Միայն, դժբախտաբար կրթական այս սեռուցն ալ մեր մտանշնած պատճառներով չի կրնար ունէ գրական քայլեր առնել իր պատճառաբարութեան ամբողջ անեղեկութեան:

Ռուսմատեան Պորճուրդներու ծախտութիւններու վերաբերմամբ, կարեւոր կը դանելք այստեղ մէջը բերում մը ընել Ա. Ալիօթմեհանի տուած այն պատ-

ճառները, որոնք չաճեկան են իրրեւ ժամանակակիցի
մը կողմէ յայտնուած վերջուեթիւններ:

«Այս կղերական ազդեցութեան, կը դէժ ան, մեր
կրթական գաղափարներու կազմումն ուրիշ միջոցներով
այ արեւելք Եւլլալուսն ապագայիցները շատ են, բայց մենք
անոնց վրայ չպիտի ծանրամտանք: Միայն դիտել ալ
կարժէ թէ մեր ուսումնականներէն շատերը, մտաւա-
նակց անոնք որ մտաւորաբար են մտաւոր գաղափարաց
լանդ անոնք որ մտաւորաբար են մտաւոր գաղափարաց
ուղղակի նպատակ աշխատած են, շատ անգամներ իբր
մտաւորաբար հերետիկոսներ եւ անհատներ ճարտարա-
ւած են մտաւորաբար: Մեր եկեղեցականներն ասով
լամ ան մտաւորաբար: Այս անգամներն այդ ուսումնական
անհատներն եւ մտաւորաբար մէջ եւ բնութեան յարա-
բերութիւններն անոնց միջեւ:

«Այս ազդեցութեան բով դրէք նաեւ մեր ժողո-
րդային դեմոկրատիան, բայց մտաւոր անձ-
նական արժանապատուութեան գաղափարներն շատ ստ-
որին աստիճաններու մէջ գոյնուելը, պիտի չառնենք
այն ասեմ թէ ինչո՞ւ մեր Աւստրալիան ինչպէս որ
նկեն ոչինչ կրցած են ընել իրականին մէջ:

«Մեր ժողովուրդին մէջ շատ գէշ ունակութիւն
մը կրած է այն ստորաբարը չափումը, որով ամէն
բան կ'ակնարկենք մեր վարժարաններէն, մեր եկեղե-
ցականներէն, մեր աստիճաններէն՝ անոնց անոնց ա-
ռաջին եւ անմիջական աստիճաններէն: Զարկը գրա-
մբ ասելու: «Դպրոցն որո՞ւ չամար չիմում է, գր-
ւակն պէտք է անպատճառը չափումը, որով ամէն
բան ծնողներն, որք ընէ շատ բարեկեցիկ դիրք մը
ուրիշ այնքան շատ են որ մարդ ամօթապարտ կը մնայ
եթէ անիմ ունենայ քննելու: Զարկը գրապատմ մըն է
զարկը չափումութեան նպատակով մտաւորաբար անոնց վար-
ժարանէ մը ինչ որ կրնայ որ ինչ մեր դասակը քն-
դաստիարակած Եւլլալուսն Զարկը կուրսն ունեցած Եւ-
լլալուսն Զարկը: Անոնք որ դպրոցներու հետ մտնեն
յարտարութիւն ունեցած են եւ թէ ընէ շատ արժանա-
պատուութեան գաղափար ունեն, դրուանք քիչ քիչ
այն բնութեան, դժուար են իրար պատրի մենք, զորս
մենք կ'անեն ծնողներն իրենց դասակներ քիչ քիչ
անգամ չամար սեւէ ազգային վարժարանի մէջ»:

(տես «Իրազմանք» թիւ 2162 27 Հոկտ. 1903 ընդդ.
մերն են Ե.Տ.Պ.):

Այսօր յայտնուած այս վերջուեթիւնը սակ է եւք, կը
պատմէ պատահար մը որուն ակնարկներս կրցած է ինք,
որ իր բաժանեցուն ակնի չիմք կրատայ:

Այս վեր կ'անէ կողմնակալ չափներ թողական
խորհուրդներու մէջ, որոնք վառ շարժուցած են կր-
թական գործունէութեան եւ կ'անցնէ. «Այս սկի-
զումը կը նային որ օր մըն ալ խորհուրդներէն ներս կը
մտնեն թողականներ որք մը մը ԿՐԻՍԻՒՅԵԱՆ ԵՒ ՌԶ
ԱՆ ԴՊՐՈՅ ՄԸ ՄՍՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ԱՄԷԼԷՆ ՏԱՐ-
ՐԱԿԱՆ ՍԿՉԻՆԻՆՔՆԵՐՈՒՆ ՏԵՂԵԱԿ ԵՆ: Եւ այս
սակով մը «Եւս դիպակ» գրութիւնն անոնց մարմնե-
ներու հետ է որ յարաբերութեան պէտք է մտնայ Ու-
սումնական խորհուրդը՝ իր վերին նախորդութեան ի-
րաւունքն ի գործ դնելու եւ ասով վարժարանները բա-
րեկարգելու: Բայց երբ վճարողներն ուղղակի վարժ-
արան խորհուրդներն են, Աւստրալիան ինչպէս որ
թիւնը բնական է թէ կը չէզոքանայ եւ անգործութեան
չանդամք կ'անէ»: (տես նոյն, ընդդ. մերն են Ե.
Տ.Պ.):

Հմուտ պատմաբանին մտանքն անոնց վերջուեթիւն-
ները շատ արդար ու անկոյն են, որովհետեւ այդ ողին
հայ վարժարաններու հանդէպ մինչեւ մեր օրերը կը
մնայ նոյնը եւ անկոյն օտար դպրոցներու նկատմամբ
նոյն ժամանակները չի կատարուել եւ չարկողորմար
կը վճարուին պահանջուած դասարանը:

Բայց հիմնական պատճառը ինչպէս ցոյց տուինք,
կղերական թողական մեխանիզմներն են, հետեւեքով էր
մեր վարժարաններու կրթական գործին սեղանաւոր-
մը:

Սակայն, Միլտոնի իր փոփոխ Պատմաբանութեան
ընթացին (1869-1873 թթ.) այդ կ'արեւելքները քիչ մը
փոփոխութիւն կրեց, շնորհիւ մեծանուն կղերական-
ներն ազատամիտ գաղափարներուն, որ ինչպէս դիտենք
նոր աւելն մտայնը թրքահայ կեանքին մէջ:

Վասպուրականէն եկած աշուշտութեան այս երկր-
քը ամէն դեռ վարժարանը ջանաց թրքահայ ազգային
կեանքը, սկսելով սրբազոյնութեամբ Արգային Սահմա-

նադրութիւնէն մինչև միտ թիւնական ծրարութիւն, սամ-
կալարական սկզբունքներու վերջն հիմնուելով:

Համաձայն Ա. Ալալովսկիին, «1870-ին կրթու-
կան խորհուրդին մէկ ծրարութիւն... բաւարար մը
ձեռք բերելու համար մտածուած էր: Այն է՝ ուղղակի
Ռուսական խորհուրդներէ կարգեալ Հողաբարձու-
թեանց հաստատութիւնն որ ստոր տարի փորձուեցաւ,
բայց անուշադի, վասնզի Հողաբարձութիւնն կրք Ռու-
սական խորհուրդին կը կրթուէր, թողական աղա-
ները դրամը կը գումարէին: Անուշադ, Հողաբարձու-
ները մտնանալով չէ որ պիտի կերակրեն գաղտնունե-
րը, ուստի կը ստեղծուին կ'մ' գիջողութիւն ընել եւ
գործիք գումար թողարկողներն քառահասնայներու,
կամ բախում մը ունենալ անոնց հետ եւ վէճերու
ճնունդ տալ, որոնց անուշադութեանը՝ աւստողը գործ-
եալ վարձարանն եւ կրթական գործն էր»: (տես «Բիւ-
զանդիւն» թիւ 2162 27 Հոկտ. 1903):

Անուշադ այս փոփոխութիւնները դիւրաւ չկա-
տարուեցան եւ հանդիպեցան շատ մը դժուարութիւն-
ներու: Թողարկողներ կրք թողներու մէջ բոլոր եկեղ-
ցական եւ գաղտնայական մատակարարութիւնը իրենց
ձեռքին մէջ առած էին, բնական է թէ դա չի դիւրաւ
ուրիշներու չէին թողուր:

1871 Հոկտ. ին Քաղաք. Ժողովը վստահարար
նկատի ունենալով Ռուսական խորհուրդի եւ Թա-
ղարկողներու միջև գոյութիւն ունեցող վէճերը, ա-
նոնց վերջ մը դնելու համար, կ'որոշէ չկազմել նոր
Ռուսական խորհուրդ մը: Սակայն ասիկա գոտորոշու-
թիւն բերելով կը հրաժարի եւ ի վերջոյ նոր Քաղաք.
Ժողովը 1872 Սեպտ. ին կը կազմէ ուրիշ Ռուսական
խորհուրդ մը:

Նորիտիք Ռուսական խորհուրդի անդամները
ամէն ֆանք ի գործ կը դնեն թողարկան խորհուրդնե-
րու հետ լույս յարբերութիւն պահել: Ասոր հետ մէկ-
տեղ կը ծրարեն հիմնել վարձարկուանոց մը: Ապա
կրթական գործին մօտէն ծանօթանալու համար հաւա-
քարար այցելութիւններ կը կատարեն գաղտնայներու
մէջ: Կը մտածեն նաեւ Ակադեմիայի կազմութեան
մասին: Սակայն փորձը ցոյց կուտայ, թէ ժողովուր-

գը այդ բարձրութեան հասած չէր, կորենայ ցնահա-
տելու համար նմալ բարձրորակ մարմիններ եւ անունդ
ամբ «վարձարկուանոց»ին եւ «Ակադեմիայ»ի գաղա-
վարին:

Նկատի ունենալով ժամանակի անյարմարութիւն-
ները, 1871 Յունիսին նորիտիք Ռուսական խոր-
հուրդը կ'առկալէ «Ակադեմիայ»ի ծրարութիւն, սակայն
անկեղտ չանէր վարձարկուանոցին խնդիրը, անոր
կարեւորութիւնը գործնական ըլլալուն համար:

Ինչպէս իր տեղին անդադարձանք, 1860ական
թուականին գաղափար յղացուած էր «Ռուսաց Աղ-
նութեան Մնտուկ»ի հաստատման եւ ուսուցիչներ
պատրաստելու ծրարութիւն, որուն գործադրութեան
պաշտօնը ստանձնած էր Ռուսական խորհուրդը:
Սակայն իրար յաջորդող Ռուսական խորհուրդները
գաղափար ոչինչ կրցան կատարել այդ ուղղութեամբ,
մինչև 1885 թուականը:

1886-ին է որ օրուան Ռուսական խորհուրդը
ուրիշ գործնական ու մտածական քայլեր կ'անէ ասին
գաղափարին մարմին տալու համար եւ օժանդակ յանձ-
նախումբ մը կը կազմէ, որուն անդամ կը նշանակուին
Տ. Յովհ. Ա. Քհնյ. Հիւրբարդէյնտեան, Յակոբ Ռու-
կան, Յար. Թիւրեան, Միշրան Արիկեան, Սրբապետ
Թոգեան, (տես «Ժամանակ», 24 Դեկտ. 1965 - Վ.
Ջէրեանի յօդուածը):

Հակառակ կատարուած անքան ձեղերուն, չենք
զետեղ ինչ պատճառներ կային որ այս յանձնախումբն
այ (որ այնքան հեղինակութիւն ունեցած կը կարծու-
էր եւ որ մտած էր անյապաղ գործադրել այս ծրար-
ութիւնը) կը ձախողի իր առաքելութեան մէջ:

1892-ին Ռէթէոս Պէրպէրեանի ատենապետած
Ռուսական խորհուրդը, Սորէն Պատրիարքի նա-
խաձեռնութեամբ հետապնդեց միջին ճամբով թրքա-
հայ կրթական շարժումին դարձ տալ, համարելով եւ
ուսումնասիրելով նախորդ Ռուսական խորհուրդ-
ներու ծրարութիւնները:

Այնքան նոր ծրարութիւնը, գաղափարներու պէս-
պիտութիւն, օրէնքներու աւճանում, սակայն գործ-
նական ոչ մէկ յառաջդիմութիւն կ'արձանագրուէր

Թրքսաշայ կրթական շարժման նկատմամբ: Լճացած էր
ան և անվերջ գիտողութիւններու անդի կը տրուէր
այս պարտզան: Մենք սեղ չեմք կընտր տալ այդ բո-
լոր գիտազութիւններուն: Մտկայն և քննադատութիւններուն,
որոնք առնչութիւն ունին կրթական ծրարներնրու
թեքութեանց հետ, որոնք բաւարարութիւն չէին տար
օրուան պահանջներուն: Մտկայն և արձայնս, պիտի
բաւարանանք մէջ բերելով Գալիանէ Մատակեանի
ստորագրած յօդուածէն վերք հաստատած մը: «Վիտու-
թեանց մեծ սեղ չէ արուած նախակրթարաններու
մէջ, մինչդեռ անոնք են որ անուրաճութի, վայրկեան-
կան, ճամբիս օգուտ կը բերեն, մասնաւոր կ'օգնեն
գաստգութեան ճշգրտութեանը, փորձի և գիտողու-
թեանց միայ չխմուած բլլալով այդ ուսումները»: (տես «Հայրենիք» օրաթերթի Կ. Պոլիս, 23 Յուլիս
1894):

Ռէթէոս Պէրպէրեան թրքսաշայ կրթական շարժ-
ման գործին մէջ կարեւոր դեր կատարած է և յայտնի
դէմքերէն մին կը հանդիսանայ: Ան իրբև ճնուս
դաստիարակ մը, իր շրջանի գայրցական կեանքին մէջ
կարգ մը նորութիւններ կրցու մտայնել, ինչ որ սերել-
ներ ձախողեցան, որովհետև ան ճիւղութիւն ցոյց
տուա իր գործերակերպին մէջ և իր առաջադրանք-
ները ի գործ դրու սնայիտի մեթոտիկ եղանակով մը,
որ գժգոհութիւններու առիթ շատու:

1895-ին ընտրուած Ռուսմտական Պորճուրդը
նկատի ունենալով կատարուող գիտողութիւններն ու
քննադատութիւնները, նախող Ռուսմտական Պոր-
ճուրդին 1891 Մայիս 31-ի սրբուածները վերաանու-
թեան կ'ենթարկէ և կը խմբողրէ «Կազմական կանո-
նագիր Ազգ. նախնական կրթութեան» ու վերջապէս
վաւերացնել կուտայ Բաղրաբական ժողովին:

1891-1895 տարիներու իրբը յաջողող Ռուսմ-
տական Պորճուրդներու տարած աշխատանքները բաւ
այն օրերու հաղորդագրութիւններուն, աւելի արդիւ-
նաբեր եղած են նախորդներէն և գայրցական տարե-
կան արձակուրդին, ուսուցիչները համախորհելով
խորհրդակցութիւններ կատարած են:

Այդ խորհրդածողութիւններն կրթական շարժու-

մը աւելի արդիւնաւոր դարձնելու միտումով, մեծն
առթիւ օրակարգի նիւթ բրած են հետեւեալ շարս կա-
րեւոր խնդիրները:

Ա.— Մանկավարժական ուսմանց կամ ուսուցչի
պատրաստութեան կարեւորութիւնը:

Բ.— Դաստիարակէն ինչ բարբախտ հանդամանք-
ներ կը պահանջուի:

Գ.— Կու գաստանդարթեան մը ընդհանուր պոյ-
մանները:

Դ.— Ուսուցչաց նիւթական վիճակին բարբախտն
և ապագայի ապահովութեան միջոցները: (տես
«Երեզնէդիտ» թիւ 2229 15 Յունուար 1904 — Ա. Ալ-
պոյճահանի յօդուածը):

Թէ և բեղմնաւոր շրջան մըն էր, ճիշդ էր թէ
ճիւղեր ալ կ'ըլլային աւելի լաւ արդիւնքներու հասնե-
լու համար, առկայն կարելի չէ նկատողութեան շու-
նել ախրող կաշկանդող վիճակը, զեղծումներն ու ու-
նալոյտը թիւնները կրթական շրջանակէն ներս, ս-
րունք գժբխաաբար իրենց հակադեցութիւնը ունե-
ցան ու դանդաղեցուցին յաւաջլիտութիւնը:

Ուսուցիչներ պաշտօնի կոչելու կամ պաշտօնա-
գրելու խնդիրներ միշտ անպահաւ եղած են և կողմ-
նակարթեանց պատճառաւ անարժան ու անկարող ու-
սուցիչներ մուտք գործած են գայրցներու մէջ և
կրթմն ալ, արժանաւոր ուսուցիչներու դէմ հայա-
ձանքներ կամ անբաւարար վճարումներ ստրլած են
որ անոնք հեռանան գայրցէն:

1895 Յուլիս 17-ին թղթակցութիւն մը լաւ տե-
սած է «Արեւելք»ի մէջ երեսուրդ ստորագրութեամբ,
որ վերադիչալ խնդրին կապակցութեամբ կարեւոր կը
համարենք մէջբերել հաստատմանը, լուստրանելու և
պարզարանելու իրաց գոյալիճակը:

«Կը պատահի շատ անգամ թաղային վուճումուճ
պոյթրներ, կուտակցական հակասակութիւններ, ս-
րունք միշտ կը գառնան գայրցի կամ այլ հաստատու-
թիւններու շուրջ, կը պարտաւորեն անօրէն մը կամ
գաստու մը որ հրժարի կամ հրժարեցուի անիրա-
ւարար, և կրթական գործը որ մեծապէս պիտի օգ-
տուէր, այսու ծանր անկումի մը կը գաստարտուի:

վարժարաններու հոգարարձութիւնները, զորս ելքէն մնացող կ'ընտրեն, փոխանակ մտածելու, ծանր բանականներու կը բռնուին կամ իբրև մէջ կամ ուսուցիչներու հետ, եւ որովհետեւ շոգաբարձութիւնն ու քննիչը - մտաւանդ տիւրներու կողմէ - մեծ տեղ կը բռնեն մեր կիսփակուսի բարձրում մէջ, ու վեհերտա Խոզիները միշտ նախանձ գրգռելու արարողիք են, առաջիններն են որ միշտ կը շահին ու, առնուամիջի հետեւանք, դպրոցներն են որ կը տուժնան: (տես «Արեւիք» թիւ 3427 17 Յուլիս 1895 - բնոյց՝ մերն են Յ.Տ.Պ.):

Կողմնակալութիւններն ու զձուձ հաշիւները դժբախտաբար աւերիչ գեր կատարած են դպրոցներու աշխատանքներուն եւ կարելի չէ եղած այդ շահախնդիր անձերը մեկուսացնել կամ հեռացնել Թագակոն Խորհուրդներէ, հոգարարձութիւններէ եւ կամ Աստուծական Խորհուրդներէ:

Այս պէզուի իրականութեան ասրնքեր կար սակայն գտնելի փութեամբանութիւնը ուսուցիչներու կեանքին սարհոյթեան անսակէտն եւ թէ անոնց մտաւար գործարարն նկատմամբ: Մտկայն ասոր մէջ եւս կողմնակալ հաշիւներու հետեւանքով արուր բեռնայինը պարզուած են:

Տարիէ ասորի Աստուծական պահանջը կ'աւելանար, սակայն հայ դպրոցներու Աստուծական մտկարգակը կը մնար միջակ, եւս կը մնար եւրոպական վարժարաններէն:

Աստուծական Խորհուրդի եւ Թագակոն Խորհուրդներու միջեւ յարաբերող անհասկացողութեան ոգին ու անհասկան փութաբանութիւնը սպրտեց թէ ժամանակը եւ թէ ազգային խանդավառութիւնը եւ որ պատճառ եղաւ հայ դպրոցները այնքան չ'առաջանան: Ժամանակակից եւ անհասկացողութեամբ, Այգոյս յաճեան ուսումնասիրած ըլլալով այդ շրջանը, ինքու կարեւոր տեսութիւններ քրտած է եւ միտքը հանդիսացած է այդ շրջանի կրթական խոչընդի կապակցութեամբ լուրջ յօդուածներ գրող, որմէ վեր կ'անենք կարեւոր հատուածներ. «... էթէ կրթական գործէն հասկցող չէգոք եւ նիւթական սեւէ չ'ահ շտկնկարող

անձերէ բողոքեցաւ ըլլալին մեր Աստուծական Խորհուրդները - ինչ որ բարեխախտաբար մէկ կ'երկու անգամ պատահած է - այն ասեմ անոնց մտածելու, խնդիրներն քննելու, եւ որովհետեւ արուր երեսուցի թիւ մէջն այլ բարեբոյնի արարքեր ձեւ մը պիտի մտնար եւ փորձը ցոյց տաւած է թէ այդ ձեւը շատ անկի արգիւնաւոր եւ օգտակար պիտի ըլլար»: (տես «Բիւզանդիան» թիւ 2230 16 Յունուար 1904):

Արդարապէս Աստուծական ծրագրիներու մասին կ'աւելցնէ ան գրելով հետեւեալը. «... էթէ ուշագրութեամբ քննուի, պիտի տեսնուի թէ այդ ծրագրիներն եւ հրահանգներն ասոր անոր փութաբանութիւնը գոհացնելէ գաւ» որիչ օգուտ մը չ'են անցած եւ շատ անգամ նոյն խի անկի արգիւնաւոր աշխատութիւններ խափանելու պատճառ եղած են: Երբ մեր թագայի վարժարանները Աստուծական Խորհուրդներու բովէն երած ծրագրիներէ գուրի էին, նուազ արգիւնաւոր եղած չէին, կամ ընդհակառակը, Աստուծական Խորհուրդներու խմբագրած կանոնագրիներով վարժարանի աւելի բան մը չեղան ուսուցանելն պիտի չըլլան: Ինչո՞ւ գիտէ՞ք - վառնդի անոնք թէ նիւթապէս եւ թէ յարաբար մեկեւն ձեւերն մէջ կեդրոնացեալ չեն: Աստուծ. Խորհուրդը՝ իր բարձրական ներգործութեամբ եւ Թագ. Խորհուրդն իր նիւթական ազդեցութեամբ՝ յախտեալու կար հակառակելու բնոյթ ունեցող կրկու մարթիներն են որք վարելու կոչուած են մեր վարժարանները: Ասոր համար մեր վարժարանները խաղաղի կողմն անհասկացող եւ սատարող հոգեւորներու որք իւրաքանչիւր Թագակոնի փոփոխութեան հետ անպատճառ երեսան կ'էրին»: (տես նոյն):

Վերջիւսով գիտողութիւնները շատ կրկար ըլլալուն, մենք բուսականացնք արքանով, որունը կը պարզեն իրականութիւնը:

Միտքեակ ուսումնական ծրագրիներէ քննարկ է տարակի արգիւններ կարելի է աստուծ: Միւս կողմէ, բարձրական քիւր քրտնք կը մարմնաւորէին ընդհանուր աստմար Աստուծական Խորհուրդները, կը գտնուէին նիւթական սեւին, այն էր Թագային Խորհուրդներու

ննքակի դիրքու արտմին գէտ, իբր իր չաճեկելով կամ սպանտելով կը կոչկանդէին ուսումնական յառաջդիմութիւնը եւ այդ պատճառ կ'ըլլար տխուր պատահարներու կամ երեւոյթներու:

Իր բաձայ մամուլը անդէրջ կ'արժարձէր կրթական խնդիրը, սրովհետեւ գոհունակութիւն չգտնելով Հայկական վարժարաններու ուսումէն, ծնողքներու ստուար թիւ մը իրենց զուակները կը զրկէին օտար վարժարանէր: Մամուլը Հայալահայանման տեսակէտէն առաջնորդուելով անկերջ խնդրոյ աւարկոյ խնդրին կ'ուզէր լուծում ստալ:

«Արեւելեան մամուլ» ի խմբագրութիւնը հո 15 Յունուար 1898 թիւին մէջ կը գրէր հետևեալ տողերը, որմէ կ'արտագրենք հասուածները. «Այս պատրաստութեան կայանները պիտի լինին մեր ստեճային զպայցներն, որ զժրատաւայէն այդ պատճառն արդիւնապէս կատարելու կացութեան մէջ չեն գտնուիր, որ ամէն մի բժրոստ կը գտնուի պատճառական ծրարներու, կամ իրբեւ անյարմար, կամ իրբեւ անբաւական եւ կամ տեղական վարչութեան իրաւանց իրբեւ բռնաբարում նկատելով, եւ սեղ սեղ աւելի պատշաճ դատելով ազգին մանկտին օտար վարժարաններու խնամուց յանձնելի բան տտիմային դատարարաւորութեամբ գանձել կրթել: Այս առարկութիւնները կրնան իրենց հիմնարար կամ անհրաժեշտ պատճառներն ունենայ, բայց երբեք չեն կրնար արդարանայ երբ ազգային դատարարականութեան միտքինակ, այդ խնամար եւ գործնական ուղղութիւն մը տարու անեղծ եւ բանաւոր վարձեր խանդարելու եւ ի գերեւ հանելու կը ձգտին:

«Շատ տարիներէ ի վեր՝ քանի թանի Սորսուրդներ, քանի՛ քանի՛ ծրարիրներ, կեդրոնացման յառաքաղներ, իրարու յաջորդեալ, եւ քանի՛ քանի՛ դպրոցական կանոնագրեր յորինուելով գործարարութիւնն ի պատճառն պահանջուած, բայց իրական արդիւնք մը չեն արտագրած, հակառակ այնքան դրամական գրահետութեանց: Այս ամբողջական պատճառները մի առ մի հետազոտելու աւելորդ է: Անոնց մէջ գլխաւորը կրնայ Համարուել տեղական գծուած ուղիւն եւ անջախ յաւակնութիւններ, որով մէն մի վարժարանու ձեւարմնի հովեր

առնելու կը բաղանայ, մէն մի հողարարութիւն՝ ներքին դրամական անցուկի վիճակին անուշադիր կը փափաքի տիրարար վարել իր ուսումնարանը:

«Եւ ուստի կը ծագին այն շփոթութիւններն, այն իրաւաստական խնդիրներն ու վէճերն, որ ստեղծ կը իրական խորհուրդներու անդին ժամանակը գրուած են, թայլ չտալով աւելի կեղտակաւ խնդիրներու անօրէնութեամբ գրողելու»:

Այս, ուրիշ սեղ մը կ'ըզրականացնէ. «Մեր կարծեօք՝ ստեճային ապագայ բարբորութեան եւ յառաջդիմութեան գլխաւոր գոպանակն ազգային հիմնարար, գործնական եւ արդիւնարբ դատարարականութիւն մը լինելով՝ հարկ է բնականէ մեր թաղային եւ գաւառային վարժարաններու կանոնաւոր գործացման համար մեր թուրք նիւթական, բարոյական եւ իմացական ուժերն, այնպէս որ արդեալ նպատակին ծառայեն եւ ընդունան չապառին, ցուցածուրութեան եւ օտարաժողութեան գոհանելով: Եւ այդ նպատակին հասնելու համար միջոցն է պարբել եւ սեղական պիտոյցն, որ կ'առական արդի պահանջներուն յարմարցնել, արդի խոսն ու շփոթ տարբարած ուսմանց յարապրերն, ցնջել ինչ որ կիմ գրու քիմ: մնացած անօրուտ նշխարներ կան, եւ պարտաւորելով թաղային դպրոցներն Համակերպելու այդ գործնական դրութեան, գլխաւոր կեդրոններու մի մի բարձր ուսումնարաններ հիմնել ուր կ'ազդող են՝ նախակրթարանի ընթացաւորներ, եթէ կամեն, կատարելապէս իրենց ուսմանքն եւ միմիկն անգամ գիտութեան վստմար մի փնդր մշակել, յատարակ ասպարէզի մը պատրաստութեան համար»: (տես էջ 41-43 - ինչոյց մերն են Յ.Տ.Պ.):

Դպրոցական մակարդակը բարձրացնելու ստեղծարարութեւր պայմանն էր որակաւոր ուսուցիչներ պատրաստել եւ անոնց վարձատրութիւնը նիւթապէս բարբորակել, ինչ որ նկատի աւած էին 1891-1895 ասարիներու Ուսումնական խորհուրդները, սակայն տիրող իրարանհասկացողութիւններուն, կողմնակցական ոգիին, եւ չահաճութեանց, անոնք ռեւէ դրական արդիւնք ցոյց չկրցան ստալ:

Այս խնաւ կարեւոր խնդիրը յարգարկուն ապարէզ

էջած են տեսակէաներու փոխանակումներ տեղի ունեցած են եւ ասպարեղումս են յայտարարած «վարժապետ-ստեղծ» չիմնել, ուր պիտի պատրաստուէին ուսուցիչներ:

Վարժապետանոցի խնդրին կ'արկայնաբէլամք Յ. Թ. Հինգլեան «Բիւզանդիան»ի 16 Փետր. 1898 թիւին մէջ իր կարծիքները լայնօրով կը գրէ հետեւեալով. «Միտիթարեան, բարեղուշիկ երեսոյթ մըն է առ: Որովհետեւ այս հարցին նուիրումս յորումներուն մէջ կան այնպիսիներ որ՝ մանաւանդ վերջին ժամանակներս, շատ չքննող դարձած հանգամանքի մը - անկեղծութեան - գրումը կը կրեն: Կ'արժէ իւրհարարածութեան անարկայ ընել յայտնուած գաղափարները: Խնդրոյն հողուն, այն է վարժապետ հասցնելու պէտքերն իբրև միջնու հիմն կարծեաց անխորանքութեան չկայ: Ծատ շատ մէկը կ'ուզէ աւելի կ'ախօլը վարժարաններէն դուրս վճարել սոցէտ վարժապետները. ուրիշ մը կը վարժարի գորդարածան միջոցները բնականութեամբ տեսնել նոյն այլ վարժապետներուն համար (հարպարակային դաստիարակութեանը մասնկալարժակեան, մանկավարժարան թերթ, մանկավարժակեան մատենարան, մանկավարժարան մրցանք, մանկավարժարան եւ ուսուցչական ժողովներ): Ծառակի խնդիր, մէկ մըն ալ գնահատութեան խնդիր: Աւելի քան աստիկ դեղերու անհրաժեշտ սէտք ունին մեր հիւանդ վարժարանները, հարցա կիթ այլ դեղեր ստատիստիկեան չդիտարանին, ինչ խղճի իսթ աշտ ատեն: Կարծեաց երկրորդ ասորերութիւնը կը վերադարձի վարժապետներն հաս, ի Պոլիս, կամ հոն, ի Գերմանիա կամ ուրիշ յարմար տեղ մը, հասցնելու խնդրոյն. - Ուրիշ ասորերութիւն: Չկայ, եւ Աստուած չընէ որ բլրա»:

Չերկարելու համար եւ տեսակէաներու պահպանութիւններով շինողերու նպատակաւ, մենք գոնց կ'ընենք մէջբերումներ ընել թերթերէն, լայնուած բոլոր կարծիքներուն վարժապետանոցին կ'արկայնութեամբ:

Նման ձեռնարկութեան մը համար կային խորհուրդներ, թէ որակաւ ուսուցիչներու չդոյութեան պատ-

հասու, աւելի լաւ պիտի բլրար ընարուած պատանիներ եւ երիտասարդներ զրկել ծերութեամբ կամ կեանք ասորումս մէջ պատրաստուելու համար վարժապետական ասպարեղին համար եւ կը կարծէին թէ այլ բնակող դրամական մտաւում չէր բլրար:

Ուրիշներ ալ կային որոնք հակառակը կը պնդէին եւ կ'առաջարկէին տեղական ուժերով գոյուս հանել նման ծրարիք մը, ու դիտել կուտային թէ՛ Կ. Պոլսոյ կեդրոնական վարժարանը արդէն իր ուսումնական ծրարին մէջ մանկավարժական դասընթացք մը հաստատուէր եւ կարիք չէին տեսներ ուսուցիչներ պատրաստելու համար մինչև Եւրոպա աշակերտներ գրկելու, աւելորդ տեղ մեծածախ գումարներ գումարելու: Ասպարեղումս կարծիքներու այս ընդհանուր ամփոփումը ընելէ ետք, կ'արժէ աչքի առջև ունենալ այն օրերուն գրուած Ռ. Յ. Պէրպէրեանի յորումած ժընէվէն, որ յայտնուած է «Բիւզանդիան»ի թիւ 407 համարին մէջ 25 Փետր. 1898-ին, որով պարեպու-թիւններ վեր առնել կարելուր կը գտնենք:

«Վարժապետանոց մը կ'արելի է բանալ անմիջապէս կամ մէկ քանի տարի եւս յետաձգել ըստուժը. բայց սա համարիտ է թէ ո՛չ թէ մէկ, ալ մէկ քանի կարելուր կեդրոններու մէջ՝ մէկէ աւելի վարժապետանոցի կամ մանկավարժական դասընթացքներու հաստատութեան սէտք ունինք, Պոլսոյ եւ դատանց հարեալուր նախակրթարանաց ուսուցիչներուն իրենց պաշտօնին նախապարտատիւն մը ապլ կարենալու համար: Մանկավարժական Մասիսին մէջ մտիք ունեցած ենք բացատրելու թէ ո՛րէ կրկի մը նախակրթարանաց ուսուցիչը չեն կարող յաւոյնս պարտատուի իրենց պաշտօնին քան տեղական եւ արդային վարժապետանոցաց մէջ, ուր արուած ուսումն ի հարկէ ուղղակի պատշաճուած ու համարպատասխան կ'ըլլայ իրենց սիմվոլայրի պահանջներուն: Հետեւաբար մայ կամ անդառն հարկ է մեղ լատուի վարժապետանոցներ ունենալ, ու ամէնէն առաջ դէթ մէկ հաս մը Պոլսոյ մէջ: Միւս կողմանէ թէ եւ ըստգաճակատէս չկարենանք ընդդիմախոս խորհուրդներ յոռետես կարծիք մեր ուսուցչական մարմնոյն իբրև, մինչև եւ ան-

կարելի համարել է չզոյժ ուսուցչի Պրոսյոյ մէջ ան-
գամ վարժապետական դպրոցի մը գէշ սկզբնաւորու-
թիւնը, մանկավարժութեան ուսման համար յեւրոպա-
նաւանդներ յղելու առաջարկը շատ օգտակար ու կա-
րեւոր կը գտնենք: Ո՛չ թէ կ'ընդունիմ, ինչպէս յայտ-
նեցի, որ պէտք ըլլայ մեր դաստիարակ ուսուցչիչներն
եւրոպայի մէջ պատրաստել: Կը կրկնեմ թէ այդ ոչ
պէտք է եւ ո՛չ ալ բանաւոր. եւ բաց աստի, ինչպէ՞ս
կարելի է հազարաւոր վարժապետներ արտասահմանի
մէջ պատրաստել, նիւթագէտ անհարուստներն պիտի
բողոքենք. բայց կարող մը ընտրելով պատանիներ ու
պատանուհիներ կրնան միշտ եւրոպա բերուիլ, որ-
պէսզէ յարմար վարելու մէջ ընդհանուր ու մանկա-
վարժական ուսիւր ուսումնասիրութիւններ կատարեն,
ժողովուրդեան կրթութեան ծառայող եւրոպական ալլ
եւ ալլ կարգի հաստատութիւնները մտէն տեսնել ու
անոնց կարող ու սարքին անձուր վերահասու ըլլան,
գործադրութեան մէջ տեսնել գանդակ դրութիւններն
ու գիտնան դասել գանդակ իրենց արգիւնքէն, եւ վեր-
ջագէտ արուեստին գործնական վարժութիւններն
ինքնին կատարեն ու անձնական փորձ ստանան, եւ
յետոյ դասնալով, մանկավարժանոցի կամ մանկավար-
ժական դասնալեցանքու դասառու, կրթական շրջա-
նակներու տեսուչ եւ վերջագէտ դպրոցներու սնօրէն-
ներ ըլլան, իրենց սովորածն իրենց ուղիմութեամբ
պատշաճեցնելով անդական ու տոհմային պահանջնե-
րու եւ մեր կրթական միջավայրը ասկաւ բարեփոխե-
լով: Կարելի է նաեւ մէկ քանիներ ալ պատրաստել
իրեն գիտական ճիւղերու եւ եւրոպեան լեզուաց ու
դպրութեանց մասնագէտ ուսուցիչ մեր բարձրագոյն
նախակրթարանաց ու երկրորդական դպրոցաց համար:
Մինչեւ այն ատեն, մեր պատրաստ միջոցներով կրնանք
անուշտ սկզբնաւորութիւն մը առլ վարժապետանոցի
գործին: Կիանանք որ շատ մեծ գործերու սկզբնաւ-
որութիւնը խոնարհ կերպով եղած է: . . . Եթէ հիմա
սոճենն ամբողջով գործի սկսուի, եւ միւս կողմէ
եւրոպայի մէջ նոր ամբողջ պատրաստութիւն գործին
ալ ժամ առաջ ձեռնարկուի, կը յուսամ թէ գործնա-

կան շուրջ ամէնէն մեծ աղայայցը սուսած կ'ըլլանք:
Թ. Յ. Պէրպէրեանի սոյն շահեկան տեսութիւն-
ներն այնքան պարզ, այնքան յստակ ու արթարանա-
կան են որ, անբարդ պիտի ըլլար մեր կողմէ յաւել-
եալ լսողաբարութիւններ առլ, քանզի իր կրթիքները
հիմնուած են առողջ դատողութեան մը վրայ որ գործ
նական ալ են:

Յամենայն դէպս այս ձեւերակը իր դժուարին
կողմերը ունէր, մանաւանդ անոր համար որ թրքահայ
ժողովուրդին մեծ մասը մատուրակաւ զարգացումի
տեսակէտով գեւ հասունութեան չէր հասած եւ ի վի-
ճակի չէր իր ծայր արժէքներու, ազդեցութիւն
ունենալու կրթութեամբ զարգող պատասխանատու-
ներու վրայ ու պահանջել այն ինչ որ անհրաժեշտ էր
հասարակութեան մտքի զարգացման համար:

Ներ կը թղթատենք թրքահայ մամուլի էջերը,
միշտ կը հանդիպենք կրթական հարցի շուրջ յուշում-
ներու, հոգ չէ թէ անոնք ընդհանրապէս միօրեակի,
կրկնութիւններով, սակայն մեղի օրուան կացութեան
իրազեկ կը պահեն: Մամուլը իր դիւր կատարած է,
ժողովուրդին միտքը զարգացցած է ու հետզհետէ
կարողացած է օրոշ շօտով հասունցնել անոր մէջ կրթա-
կան շարժումին գաղափարը:

ժողովուրդին ինքնազիտակցութեան այդ զար-
թօնքին, յետադիմական ամբողջ, որոնք իրենց սե-
փական կալուածը դարձուցած էին ազգային գահազան
մարտիները, ստիպուած եղան տակաւ առ ասկաւ տե-
ղի առլ նոր գաղափարներուն:

Մինչեւ 1900 թուականը երկարող թրքահայ կր-
թական շարժումին կապակցութեամբ արուած աշխա-
տանքները, ինչպէս ցոյց տուինք, թէ նա մեծ յոռա-
ջացումներ շարձանագրեցին, սակայն յուշուող խնդիր
ները որոնց մասին ակնարկեցինք իրենց տեղին, բա-
րեբար դեր կատարած են եւ օգուտ ունեցած են թրքա-
հայ ժողովուրդին համար:

Անուշտ թէ մենք ընթացա ուսումնասիրութեան
շատ մը յուշումներու հանդիպեցանք, գրուած հե-
ղինակուր անձնաւորութիւններու եւ մատուրակա-

ներու կողմէ, սակայն անոնց մէջ արծարծուած խընդիրները չօգտուած էին շատ մտաբարձանօրէն, այն-բան սր, բանավէճերը տեղի սուած են երկարձիգ գրութիւններու, որոնք բնականաբար չեն հետաքրքրել հասարակ ընթերցողին: Հետեւաբար, մենք ընդհանրապէս կեդրոնացուցինք մեր ուշադրութիւնը էական խնդիրներու վրայ, որոնք աւելի նպատակա-յարժար էին:

ԴՊՐՈՑԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ Վ. ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Ասկէ առաջ մեր ուշադրութեան առարկան եղած էր հանրային դպրոցներ բանալու ճիգերը, որոնք մինչև 1830ական թուականները քիչ շատ դոհացուցել արդիւնքներ սուտին այն օրերու համեմատ կրթու-կան պահանջին:

Անշուշտ ասանք դպրոց կոչուելու արժանի կը-թարաններ չէին, այլ ինչպէս ցոյց տուինք իր տեղին, մասնաւոր խուցեր կամ մեծ սեկտորներ էին եկեղեցիներու: Դրանքնու կից կամ այլու, ուր կը հաս-քուէին աղաք եւ աղջիկներ նախնական կրթութիւն ստանալու, շատ համեմատ ծրագրերով:

Սակայն դպրոցայինութիւնը աւելի մեծ թափ կ'սկսէր առնել 1836 թուականէն վերջ, աւելի կանոնաւոր շէնքերու մէջ շարունակելու դաստիարակութիւն-ները հայ դպրոցականներուն:

Ինչպէս գրած էինք նախօրօք, Մկրտիչ ամիր՝ Միքիմիանան առաջինը եղած էր թագաւորին վարձարան-ներ հաստատելու գաղափարը յղացող Կ. Պոլսոյ մէջ եւ ասոր համար 1790-ին Գում-Գարու թաղին մէջ իր հիմնած դպրոցը կոչած է Մայր-Վարժարան:

Կրկնել աւելորդ է այստեղ յիշել այդ վարժարանին մէջ իրրեւ ուսուցիչ պաշտօնավարողներու անուն-ները, որովհետեւ յիշած ենք իր տեղին:

1826 Օգոստոս 18-ին Հօճա վալայ թաղին մէջ

հրդեհ պատճառ կ'ըլլայ սոյն վարժարանին հրկեղ-ման, ինչպէս նաեւ անոր կից եղող եկեղեցին հոյճաբակ կ'ըլլայ:

Սակայն ճիգեր կ'ըլլան 1826-1828 տարիներու տեւողութեան վարժարանին եւ եկեղեցիին վերակա-ռուցման ձեռնարկութեան: Այս կը ծրագրուի վար-ժարանին չորջ հիմնել երեք կրթական ուրիշ հաստա-տութիւններ 1) Բնծայարան-ուսումնարան, 2) Գայրա-տուն աղբատ մանկանց եւ 3) Գայրատուն ծայնար երգոց, որոնք սակայն այնքան մեծածախ կ'ըլլան սր, նեղ կացութեան կը մտնուին եւ չկրնարձ պարաքեր-նին վճարել, պահանջատէրները զիրենք նեղ դրու-թեան մէջ կը դնեն:

Այս ճշմամային պահուն էր սր Պէդճեան ար-միրա օգնութեան կը հասնի եւ ներթափանցումը ցուցեմամբ թաղեցիկները ստորադասի հարցէ մը կ'ա-գտէ ու շքանկանանալով ասով, գրոմագրուի մըն կը յակարցէ դպրոցի, եկեղեցիին եւ միւս ու-սումնարաններու ապագան ապահովելու համար:

Այսպէսով, Գում-Գարուի Մայր-Վարժարանը կը կոչուի Պէդճեան - Լուսուարճեան վարժարան: (տես «Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21 - 3 Հոկտ. 1898):

Բնծայարան-ուսումնարան երկրորդական վար-ժարան մըն էր, որ թաղային վարժարանէն բարձր էր եւ կը հանդիսանար անոր շարունակութիւնը: Այս ու-սումնարանը շարունակեց դրծել մինչև Փէշտիմալճե-անի մահը, 1837 թուականը:

Բնծայարանին առաջին ընթացակարգները կ'ըլլան Գրիգոր Բէէքսթէճեան, ապագայ պատրիարք եւ կո-թողիկոս (Գէորդ Դ.), Յիզիքոս Պօղոս պատուելի, հայերաբն եւ զիտուն Յովսէփ Վարդան վալայ, Նիկողոս Զօրեան (որ ինքնուշխատութեամբ եւրոպա-կան լիզուներ սորվելէ յետոյ փարսիկ համալսարանը կը յաճախէ, մանկավարժութեան հետեւելու) եւ սոճուր իրաւասուր Միսթեան, որ ուսումը շարունակած է փարսիկ, հեղինակ կարգ մը զերբերու եւ ուսուցիչ, (տես Լեւոն Զորմիսեանի «Համապատկեր Արեւմտա-հայ մէկ դարու պատմութեան» էջ 444):

Դժբախտաբար Լինձայրան-Ուսումնարանը 1837-
էն ետք չկրցաւ շարունակել գործել: 1858-ին Պէդճ-
եան-Լուսւորըհան վարժարանին մէջ կը հաստատուի
կրկնօրեայ դպրոց, ուր Լուսարանիան դաստիարակ-
ութիւններ կը կատարուին:

1879-80 տարեշրջանին Պէդճեան-Լուսւորըհան
վարժարանին աշակերտութեան թիւը եղած է 106, ու-
րուն 13ը մանչեր էին, ինչ որ տարօրինակ կը թուի
մեզի:

1880-81 տարեշրջանին սկիզբը, Ուսումնարան
կորսուողի վարժարաններու միացման ծրագրին շուրջ
երկարատեւ խորհրդակցութիւններէ ետք է որ Աղղ-
կեղք. վարչութիւնը կը կողմէ Գուս-Գորուի, Կէ-
սիկ վաշայի եւ Եէնի-Վարուի միացումը թողնու հա-
մաթագական խորհուրդ մը, որ կը ստանձնէ չինգ
երկուս վարժարաններու մատակարարութեան հարցը:
Իսկ կրթական հսկողութիւնը կը յանձնէ շուր անձերէ
կազմուած հոգաբարձութեան մը:

1894 Յուլիս 10-ին տեղի ունեցած Կ. Պոլսոյ մեծ
երկրաշարժը պատճառ կ'ըլլայ Հիմնադատակ կործա-
նելու Պէդճեան-Լուսւորըհան վարժարանը: Այնու-
հետեւ աշակերտները կը համախմբուին Մայր-Եկեղե-
ցիի Ս. Խաչ տաճարին մէջ, ուր կը շարունակուին դա-
ստանդութիւնները:

Գուս-Գորուի դուրսի մէջ Յարութիւն ամիրա
Պէդճեան 1832-ին կը հիմնէ աղջկանց վառվառեան նոր
դպրոցարհեստանոցը, ուր հայ աղջիկներ տնտեսիկ
և ուրիշ տեղեկագործութիւններ կը սորվէին: Պէդճեան
ամիրա այդ արհեստանոցին մէջ պարտասուել տուած
է կեղեցական ծանրագին զգեստներ ու նուիրած է-
միածնայ, Երուսղէմի, Սիւրի, Աղթամարայ, Վենե-
տիկի, Ս. Ղալբուս վանքին եւ Կ. Պոլսոյ եկեղեցի-
ներուն: (տես «Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21 (3
Հոկտ. 1898):

«Արքունական հրատարակչոց եւ դաստասանական
վճարոց եւ այլ եւս կարեւոր գրութեանց երկուց նորա-
շէն դպրոցացն Ս. Պողոսի եւ Ս. Վառվառեացն, ք
պէսս կրթութեան աղբատ մանկանց եւ որք աղջկանց

Աղղին Հայոց արտաքոյ Գուսգալուի շինեալ: Ի պատ-
րիարքութիւն Կոստանդնուպոլսոյ Տ. Տ. Ստեփանո-
սի Ամենապատիւ Արքեպիսկոպոսի հաստնութեամբ
սկրագումար Ժողովոյ Աղղանոսմ վսեմապատ իշխա-
նապետաց ՌՄԶԲ 1832ի Կ. Պոլսոյ: («Մարտար»
օրաթերթ 8 Մայիս 1968):

Այս թուղթին ետեւի կողմը ստպէս դրուած է.
«Այս կերպ յիշատակներէ» կը սեպուի այն երկու
դպրոցը որ Գուսգալուի Գուսը Իւան Գըրգար, Օտա-
ւորը բաւած թաղը Ս. Վառվառեայ եւ Ս. Պողոսի ա-
նունով նոր ի նորոյ հաստատուեցաւ վսեմապատ Պէդճ
եան Յարութիւն Ամիրայի ջանացադութեամբ, Չարբ-
հանէի գործաւոր հայազգի բարեպաշտն եղբայրնե-
րէն շափաւոր հասոյթ կապուելով անոնց պիտոյիցը
տարեկան ծախսոց համար եւ միշտ հաստատ ու շէն
մնալու մտքով, Հայոց աղղին աղբատ մանկանց
«վախճ» ըլլուեցաւ վաշայուչ կանոնադրութիւնով»: (տես նոյն):

Այս հիմամբ ուրեմն Պէդճեան շինած կ'ըլլայ եր-
կու աղջկանց վարժարաններ 1832-ին եւ նախապէս
1820-ին շինուած աղջկանց դպրոցարհեստանոցը կը
տեղափոխէ, Վառվառեանին կը միացնէ:

Պէդճեանի մահէն ետք (1834) ամիրաները եւ էա-
նաֆններու գլխաւորները կը հաւաքուին Աղղ. Պատ-
րիարքարանին մէջ եւ Միքայէլ Փիւմիլեանէ, Ճանիկ
Փախպեանէ, Յարութիւն Երկանեանէ, Յովհաննէս
Աղնաւորեանէ, Պետրոս Յովհաննէսեանէ, Մարտիրոս
Պաղասապեանէ, Մազուա Սարիմեանէ, Պողոսա-
սար Գոսպարեանէ, Յարութիւն Կէլէլեանէ
եւ Յովհաննէս Բէնիկեանեանէ բաղկացաւ ասոր ամ-
միրաներու կը յանձնեն կրթական հաստատութեանց
հսկողութիւնը:

1851-ին այս զոյգ վարժարանները բուական ծաղ-
կեալ վիճակ մը ունէին եւ կ'ընդգրկէին Ուսումնա-
կանի ծրագրերնր, ունեալով մասնապէս դաստիար-
ներ, ինչպէս թուրքերէնի անուանի ու հեղինակաւոր
ուսուցիչ Ռեթէոս Գրեքորեանը (Չերթիկ Հօճա),
հայկարան՝ Մովսէսեան պատուելին, գիտութեանց

Համբար, աւար սևաուցիչ Աւետիս պատուելի Պէրպէր-
եանը, ինչպէս նաև յաջորդաբար Յարութիւն Թեւը-
եանը, Մկրտիչ Մեղպուրեանը, Տարթ. Ներսէս Մեղ-
պուրեանը, Միշրան Տէօբմէճեանը, Սահակ Փափաղ-
եանը, Նազարէթ Եագմահեանը, Յովհան Փալազաչ-
եանը, Պողոս Պէրպէրեանը, Գէորգ Սիմօնեանը, Մկր-
տիչ Կարապետեանը, Սամուէլ Քէօնեանը, Հայկ
Պատմահեանը (Տ. Աբրամ կաշակիր Ա. Քհչյ. Պատմահե-
ան) եւ այլք: (տես նոյն):

Պողոսեան մանչերու դպրոցը կ'ունենայ Համա-
ձայն Տօբթ. Բարունակ պէյ Ֆէրուհիանի 1859-ին
պարտասամ դպրոցական վիճակագրութեան 187 ա-
շակերտներ, իսկ վարժապետն էր կ'ունենայ 70 աշակեր-
տուհիներ: (տես Բիւրաղ Բէշեանի «Պատմութիւն
Ս. Փ. Հիւանդանոցին Հայոց ի Կ. Պոլսէ» էջ 126):

Միջնակէլ կերպով աւելցնենք թէ Պողոսեան
մանչերու վարժարանը ունեցած էր Կիրակոսեան վար-
ժարան մը նոյն թուականներուն:

Գործարար 1865-ին այս դպրոցը Կ. Պոլսոյ
մէջ ծագած մեծ հրդեհին զոհ կ'երթայ եւ թաղեցի
հայեր կը դատապարտուին որոշ ժամանակ մը աւանց
դպրոցի մտայու: Բայց եւ այնպէս կարճ ժամանակ
ետք թաղեցիները Պատրիարքարանին օժանդակութեա-
մբ կը յաջողին ի վերջոյ վերաշինել դպրոցը:

Համաձայն դպրոցական վիճակագրի մը (Ա. Ալ-
պոլսեանի արխիւին մէջ գտնուած թերթերէ մկրատա-
ւած) 1876-ին Պողոսեան-վարժապետն վարժարաննե-
րու մէջ 225 (140 մանչ եւ 85 աղջիկ) աշակերտներ,
1883ին 195 (120 մանչ եւ 75 աղջիկ), իսկ 1885-ին 175
աշակերտներ (100 մանչ եւ 75 աղջիկ) ունեցած են:

Ասոր վրայ աւելցնենք 1900-ի «Ընդարձակ Օրա-
ցոյց Ազգ. Հիւանդանոցի» մէջ լոյս տեսած թաղական
վարժարաններու ցանկը, որուն մէջ ցոյց տրուած երկ-
սեռ աշակերտութեան թիւը եղած է 167, ուսուցիչ է-
ներու կարգը 6 (տես էջ 206):

1870-ական թուականներուն երբ դուռնի աղջ-
կանց կրթական հարցը նիւթ կը դասնայ ու կը պահանջ-
ուի բարձր ուսում տալ անոնց, այդ նպատակէն ա-

ստնորդուելով, պոսեցիներ ընկերութիւններ կը
կազմակերպեն, ինչպէս Հայաստանց եւ Գործարար
Տիկնանց անուններով: Այս գործարար կը յաջուի
նաև Հասարակ դպրոց մը վարժուհիներ պատրաստե-
լու Համար եւ 1879-ին կը հաստատուի Գործարարներ
վարժուհիներու, որ սակայն հազու թէ կը սկսէր աբ-
ղինք տալ, 1896-ի ղէպերուն իր գործունէութիւնը
կը խնդարուի ու կը դադրի: (տես «Հայրենիք» օր-
թիւրթ, թիւ 118 20 Յունուար 1892):

Սամաթիոյ վարժարան շինուած է Ս. Գէորգ Ե-
կեղեցիին կողքին, որուն ծագին 1795 թուականին
Մատթոս Գպիր յիշատակութիւն մը ըրած է Մայր-
պարտան հետ:

1821-ին ալ ծանիկ ամերայի քոյրը կը հաստատէ
աղջկանց դպրոց մը:

Ս. Գէորգ եկեղեցիին կից շինուած վերսիշեալ
դպրոցը 1830 Օրատուսին ղինեաննէ մը ծագած հր-
դեհէ մը գրեթէ ամբողջ թաղին հետ հրոյ ճարակ
կ'ըլլայ:

Համաձայն Հր. Յակոբ Տաշեանի «Յուցակ Հայե-
րէն Պետագրացի» մէջ գրուած Յիշատակագրութեան
(տես էջ 631-622), «Դպրատուն Սամաթիոյ» շին-
ուած է Տիրացու Առաքել Տէր Մատթէոսեանի կողմէ
1815-ին:

1830-ին կը հիմնուի Սահակեան երկսեռ վարժա-
րանը եւ անոր շինութիւնը կ'ըլլայ իման թաղի հայ
բնակչութեան գործի մտու կրթական գործին եւ այս
սաթիւ կը կողմեն Սահակեան Սնուց Միութիւնը,
որուն նպատակը կ'ըլլայ դպրոցին հոգածութիւնը իր
վրայ առնել:

Սոյն դպրոցին մէջ ուսուցչութեան պաշտօն կը
վարեն Սահակ Քհչյ. Պէշեթաշեան, 1843-ին գլուխ
Օրթագիւղէն իրբու հայերէն լեզուի եւ կրօնքի ու-
սուցիչ: Այս ստոր կը գործակցի կաշատուր Մամբրե-
եան (յետոյ Տ. Արիտակէս Քհչյ.) եւ Յովհաննէս
Աճէմեան (յետոյ Տ. Գրիգոր Քհչյ.), Տ. Յակոբ
Քհչյ., որ կը դասախօսէ Փրանսերէն լեզուն:

Սակայն չոր բոխտէն, 1895 Ապրիլ 18-ին ահաւոր

հրդեհի մը պատճառով թողարկին շէնքերու հետ կը հրկիզուի: Մտա երկու հարիւր ազգաւ ընտանիքներ անպատուօր կը մնան այս տխուր պատահարին հետեւանքով:

Բայց հայ ժողովուրդը չի յուսահատիր, հակառակ կրթման փեմ վնասին, որ մեծ յուզում կը պատճառէ, սակայն, ինչպէս ծիծեռնակը երգելով իր աւերւած բոյնը կը վերաշինէ, Սամաթիոյ հայերն ալ թախիճ կրծքին բայց վառ յոյսերով կը շարունակեն վերակառուցել մոխրացած իրենց տուներն ու դպրոցը:

Գարոցին շէնքը կը վերականգնին ու կը վերադառնէ իր կանանուոր կրթական գործունէութիւնը եւ նոյնօրին Կ. Պոլսոյ մէջ կը դրաւ նշանակելի տեղ մը: Իսկ ազգիանց Ս. Նունեան վարժարանը, որ մինչեւ 1857 շատ նախնական կրթարան մըն էր, սոյն թուականէն ետք կը դառնայ նախակրթարան մը եւ մասնաւոր վաղ կը ստանայ, երբ այնտեղ կը հաստատուի արհեստական ծագիւն շինութեան ճիւղ մը 1897-ին:

Համաձայն Տոքթ. Յ. Տաղաւարեանի, Սամաթիոյ Եջնի Մահալլէ կամ Ալիթը Մէրմէր թողին մէջ շինւած է Ներսէսեան վարժարանը (տես «Արեւիք» թիւ 3814 Սեպտ. 21 3 Հոկտ. 1898) որ իր գոյութիւնը պահած է մինչեւ 1900 թուականը, միանալով Նունեան ազգիանց վարժարանին:

Նոյնպէս 1869-ի Յունուոր 19-ին Կարապետ Փանտեան ազգիանց վարժարան մը հաստատած է Ալապուեան անունով: Ասիկա առաջին անհասակարն վարժարանը եղած է, որ արդիւնաբեր գործունէութիւն ցոյց տուած է (տես «Արեւիք» թիւ 3815 Սեպտ. 22 4 Հոկտ. 1898):

1873 Մարտ 21 - 2 Ապրիլին Ալապուեան վարժարանի ուսանողուհիներու կողմէ կը կազմակերպուի գոնակը մը, հասարակաց կրթութեան նախարար՝ Բէժմալ վաշայի համապատասխանութեամբ: (տես «Մանգումէ Էփ-թիւր» թիւ 2151 28 Մարտ 1873):

Փանտեան մանչերու վարժարանը 1873 Մարտին Սկիւսարէն Բերա (Անգլիական դեսպանատան կոնս-

կը) կը փոխադրէ: Ալապուեան վարժարանը իր գոյութիւնը պահած է մինչեւ 1876 Մայիս 24 թուականը (տես «Փունջ» շարժաթերթ թիւ 874 13 Ապրիլ 1874):

Այս յաջողութիւնէն խրախուսուած Կարապետ Փանտեան կը հիմնէ նաև Փանտեան մանչերու ուրիշ վարժարան մը, որ կ'ունենայ 50 աշակերտներ, սակայն 1871-ին կը փակուի: Իսկ ինչ կը վերաբերի ազգիանց վարժարանին, ահա 1875-ին նոյն վարժարանին կը հասնի: (տես նոյն):

Եջնի Մահալլէի մէջ եւս Հայրապետ Ալանեան (որ 1878-ին Սամաթիոյ Մահալեան վարժարանին ուսուցիչներէն եղած էր) կը բանայ մասնաւոր դպրոց մը 1881-ին, որ կը զոյստեւէ մինչեւ 1885 թուականը:

Օրթադիւղի մէջ, դարձեալ Պէզգեան ամերայի կողմէ 1790-ին հաստատուած է թողարկին վարժարան մը, որ մինչեւ 1820 թուականը ունեցած է իր ժամանակին համեմատ բնական բնույնը գործունէութիւն:

1820 թուականին հոն կը դաստիարակէր համալսարան Գրիգոր պատուելի Փէշարմալճեան, 1825-ին հիմնովին նոր դպրոց մը կը շինուի, իսկ դիւղին հիւսիսկողմը բլուրին վրայ, ճանիկ ամերայ Փափագեան ազգաբնիկ ազնիւներու համար դպրոց մը շինել կուտայ Նեքսարեան անունով 1832 թուականին, համաձայն Արիկ Մուպահեանեանի գրութեան: (տես «Նոր Լուր» 1925 Յուլիս):

Վաւերագրի մը մէջ գրուած է հետեւեալը. «Ղալթա Գուրչունը Մարազան Եր Ալիթը ճամբին ետքը, Փափագեան Սիմէն ամերայի որդի ճանիկ ամերային բնակիլի միւլի մաղագան ինարէի վախտէով վաբեֆ եղել, այս պայմանաւ որ այժէն տարի ետքը եղած ֆիրայի կէսն Ելայի Գուլէ հիւսուղանոցին եւ կէսն Օրթադիւղ սիւնիներու դպրատունը կարգացող ազգաւ ախճիկներուն հանդերձի ղին լինելոց է: ...» (տես Բ. Բէշեանի «Պատմ. Ս. Փրկչի Հիւսուղանոցին Հայոց Ի. Կ. Պոլիս» էջ 53):

Վերջիւ շալ տողերուն մէջ նշուած «սիւնիներու դպրատունը» ապահովարար գիւղին հիւսիսային կող-

մի բլուրին վրայ շինուած Եկեղեցիքս վարժարանն էր, որ 1834 թուականէն առաջ գործութիւն ունէր:

1845-ին նոր հող մը գնուելով, անոր վրայ նոր դպրոց մը կը շինուի իբրև թաղային վարժարան եւ կը կոչուի Ս. Թարգմանչաց, որուն հոգաարը ընկերութիւն մըն ալ կը կազմուի 1846-ին:

Այն վարժարանը մանչերու յատուկ էր: Ե՛կեղեցի ունէր երկու ընդարձակ սրահներ, մէկը Ուսումնարանն եւ միւսը իբրև Ծաղկոց կը ծառայէր: Իսկ 1859-ին աղջիկներու նոր դպրոց մը կը բացուի ուսումնարանի մակարդակով խնամակալուհի տիկիններու կողմէ, որ կը գտնուէր եկեղեցիին կից հին փայտաշէն շէնքի մը մէջ, որ կը կոչուէր Հռիփսիմեանց: Այս վարժարանին առաջին հանդէսին կ'առեւարանէ Տիկին Եղիշ վահանեան, որ կ. Պոլսոյ մէջ աստեղարտող առաջին հայ կինը կը հանդիսանայ: (տես «Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21 - 3 Հոկտ. 1898):

1859-ին Ս. Թարգմանչաց վարժարանը ունէր 190 աշակերտ եւ 11 ուսուցիչներ, որուն տարեկան ծախսը մօտ 90000 զրշ. կը հաշուուէր: Իսկ Հռիփսիմեանցը 50 աշակերտուհի ունէր եւ 5 ուսուցիչ, որուն տարեկան ծախսը 25000 զրշ. էր:

Այն թուականին թարգմանչաց վարժարանին մէջ կը հաստատուի կիրակնօրեայ դպրոց մը:

1880ական թուականներուն Հռիփսիմեանցի շէնքը սկսած էր խորխորէ: Համաձայն Ս. Տաճարեանի, այդ ուսումնարանը «գրասեղան իսկ չունէր եւ խեղճ մանկուիք դեռ չուէր կը նստէին»: (տես «Եղիպատհայ Տարեցոյց» 1926 էջ 57. Ս. Տաճարեանի յօդուածը):

Աւետիս Պէրպէրեան պատուելին շատ երկար ժամանակ պաշտօնավարած է Օրթոդոքս թարգմանչաց վարժարանին մէջ իբրև անօրէն եւ ուսուցիչ եւ 1860 թուականին հանդատեան կոչուած է ու իրեն ի պատիւ տարիներու ծառայութեան անուանած են խնամակալ: Հակոբակ ասոր սովորին, ան ստէպ ուսուցիչներու կուսար դպրոցը եւ իրեն յատկացուած տեղը ունէր նստելու: (տես «Եղիպատհայ Տարեցոյց» 1926, էջ 57):

1868-ին Օրթոդոքս Ս. Թարգմանչաց եւ Հռիփսիմեանց վարժարանները բաւական փայլուն կրթական վիճակ մը ունեցած են, հակառակ դասարանական խեղճ կառուցուածքին: Պէրպէրեան պատուելին զատ չուն դասաւանդած են Յակոբ Ոսկան, Օդէն Շահանեան, Եսայի Եսայեան, Տիգրան Երուսթեան (պատուակալ ուսուցիչ տամբակալութեան եւ անտեսպիտութեան):

Ինչպէս ւսինք վերը, դպրոցներու շէնքը փայտաշէն ըլլալուն երկար ժամանակ շտակային եւ խաբխեցան 1880 թուականին: Ասոր համար այն թուականին նոր շէնք մը շինելու պահանջ կը դրուի:

Աւետի անդիջպան կը ձեռնարկուի աղջկանց քարակերտ վարժարան մը շինել, եկեղեցիին շրջափակէն դուրս: 1884-ին դպրոցին մէջ իբր ուսում կ'առնուէր հետեւեալ նիւթերը: Պարզ Ենթեբոյճ, քերական, հեղերէն, Սաղմոս, Գործոց եւ Երեմի:

1877-ին Եկեղեցիական վարժարանն ալ շինցած ըլլալուն կը միացուի Հռիփսիմեանց վարժարանին: (տես «Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21 - 3 Հոկտ. 1898):

Մինչ այդ, Գորպէն էֆ. ի կը հիմնէ հայկական կրթարան մը 1874ին, որ արդեւաբեր կ'ըլլայ իբր գործունէութիւնը, սակայն 1888-ին կը փակուի: (տես «Արեւելք» թիւ 3815 Սեպտ. 22 - 4 Հոկտ. 1898):

Ասոր հետ յիշենք նաեւ Տ. Վրթմանէս Քհնյ. Պալիւսեանի հիմնած մասնաւոր դպրոցը 1880ական թուականներու սկզբնաւորութեան, որ գործարարաբար երկար չի գոյատևել:

Համաձայն դպրոցական վիճակագրութեան մը, 1888-1889 թուականին Ս. Թարգմանչացի աշակերտութեան թիւը 65 եղած է, իսկ Հռիփսիմեանց վարժարանինը 80, մինչ 1900 թուականին մտնէրու թիւը 65 էն բարձրացած է 70ի, իսկ աղջիկներունը աւելցած է ութը հարիւրով:

Պալիւսեանը կ. Պոլսոյ հարիւրակ թաղերուն հիններէն էր, ինչպէս յիշած էինք իր անդին, ունեցած էր դպրոց մը Ս. Յակոբ անունով (տես «Արեւելք» թիւ

1816-ին նոյն թաղին մէջ կը բացուի ուրիշ վարժարան մը Սորէնեան անունով, որ կը գտնուէր եկեղեցիին արեւելեան կողմը: Սակայն հազիւ քսուսուն ասորի անցած, զպրոցին չէնքը 1856-ին հինցած բլլարան կը կարօտի նորագոյնութեան:

Հակառակ կատարուած ծախքերուն, չէնքը դասապարտուած էր փլուզումի: Հետեւաբար պահանջը հրամարտական բլլարու աստիճան կ'ըլլայ, որպէսզի հին չէնքին սեղ շինուի նոր մը:

Այդ նպատակով անմիջապէս ժողովրդային հանգանակութիւն մը կը ձեռնարկուի եւ ապա Սուլթանահան հրամանագիրը ստանալէ ետք, կուսցման աշխատանքները թափ կ'ունեն 1862-ին եւ կ'աւարտի 1866-ին (տես Մելքոն - Ասատուրի «Երեքարեան Պատմութիւն Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ Պաշտօն (1627-1931)» էջ 193-194):

Այստեղ աւելցնենք թէ 1828-ին Շամասնեան մտիրան իր Պար Օղլու փողոցի քարձակ առնը սերտաժտար կը նուիրէ Ազդին ու քիչ մը փոփոխութեան ենթարկելով կը վերածէ ազդին վարժարանի, անուններով դասն՝ Ս. Հոսիփոսիանց վարժարան: (տես նոյն, էջ 145):

1859-ին Սորէնեան վարժարանը ունեցած է 218 մանչ եւ 5 աղջիկ աշակերտներ, 11 դասատուներով, սրուն ասրեկան ծախքը 53,800 դր. կը դնահասուէր: Կը գործանանք աշակերտուհիներու պահպանի:

Իսկ ուրիշ զպրոցական միճակագրութենէ մը քաղելով (թերթի կտրոն՝ գտնուած Ա. Ալպոյրձեանի արխիւին մէջ) միտոյնչեալ վարժարանին մէջ 1889-ին մանչ աշակերտներու թիւը եղած է 250, աղջիկներունը 80: Ուսուցիչներու թիւը 6, իսկ ուսուցչուհիներունը 2: Գպրոցի ամսական ծախքը 2400 դր.: Դեմբարտարար 1896 թուականի արխիւը պատահաբարուն հետեւանքով աշակերտութեան թիւը՝ մանաւանդ աղոցը, 250էն 89ի կ'ընթէ: Համեմատարար աղոց, աղջիկներու թիւը 9 հոգիով կը պահուի, 80ի սեղ 71-ով: Գպրոցական ամսական ծախքերն ալ կ'ունենան

յաւելում մը, կը բարձրանայ մինչեւ 2800 դր. է:

Իսկ տնօրէնութիւնը այս վարժարանին մէջ վարած են յաջորդաբար Ամբրոսիոս Վրդ. Ռուբինեան (1886-1887), Արեստակէս Պոյաճեան (1895-1896), Ենովբ թէյեան (1896-1898), Գէորդ Սիմօնեան (1900-1903):

Յիշենք նաև այստեղ Պաշտօնի Պետրոս Գրիգորեանի մասնաւոր վարժարանը, որ հիմնուած է 1887-ին, ուր կը յաճախէին 8-10 ասրեկան փոքրիկներ: Տեսակ մը մագղոց, ուր կ'ուսուցուէր հասարակ ընթերցանութիւն, արտասանութիւն (մանկական) եւ աղօթքներ: (տես Մելքոն - Ասատուրի «Երեքարեան Պատմութիւն Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ Պաշտօն (1627-1931)» էջ 237): Այս զպրոցը սակայն երկար չի գոյատևեր:

Ղալաթիոյ թաղային վարժարաններու մասին երբ կը գրէինք, առջին հերթին յիշեցինք Ս. Լուսաւորիչ զպրոցին անունը, որովհետեւ Թէոդէիկ «Տիպ ու սոր» գիրքին մէջ տեսանք 1795-ին ապագրուած Մաթէոս (Իպիբի «Ժամագիրք»ի յիշատակարանը, որուն մէջ գրուած է թէ այդ գիրքը տպուած է «Օդնութեամբ Սուրբ Լուսաւորիչ Եկեղեցւոյ զպրոցան մանկավարժ առաքելական Առաքել Գպիբի» (էջ 64), ինչ որ կ'ապացուցանէ թէ, այդ թուականէն առաջ, հաւանական է 1790-ին ատենները արդէն գոյութիւն ունէր զպրոցը, որ հետզհետէ յառաջիմելով գործած է Մայր-Վարժարան, որմէ ծագում առած են Բերայի վարժարանները:

Ցաւալիօրէն չկրցանք ունէ տեղեկութիւն գտնել այդ զպրոցի ապագայ գործունէութեան մասին: 1858-ին է որ կը գտնենք Ս. Փրկչի վարժարանին հիմնարկութիւնը, որ 1860ական թուականներուն Ստեփան Փոփոզեանի անչութեան ասիկ, կարելուր կեդրոն մը կը դառնայ դաստիարակ ուսանողութեան, ուրան կը պատրաստուին ապագայ հմուտ վարժապետներ գաւառի հայ ազգայնակիցութեան համար:

Փոփոզեան ճիղերը բրած է աւելի բեղմնաւորելու համար վարժարանին գործունէութիւնը, սակայն զգա-

լի փոփոխութիւններ չէ կարողացած ժայնել:

1886 Սեպտ. 1-ին կը հիմնուի Կեղբոնական վարժարանը: Վարժարանը կը բացուի քրտագրուած հինգ կարգերով, եւ առանձին տարին կ'ունենայ 64 աշակերտներ:

Չորս տարի ետք, 1891-ին, վարժարանին հինգ կարգերն ալ կը լեցունին աշակերտութեամբ, որոնց թիւը կը բարձրանայ 148ի:

Կեղբոնական վարժարանին առանձին շրջանի անօրէնները եղած են Միսս Չերայ: Ասոր յաջորդած է անգլիական բարձր դաստիարակութեամբ օժտուած միտք մը՝ Օրփորտի Համալսարանէն վկայուած Յարութիւն Մաստիշեան, իրեն չուրջ ունենալով ժամանակի ամէնէն ընտիր եւ իրենց մասնագիտութեամբ համարուուր ուսուցիչներու հոյլ մը, ինչպիսիքն են Գարեղըս Եպ. Սրբանձառանց, Մասաթիա Գարսազաշեան, Յակոբ Գարեղէն, թուրքերէնի մասնագէտ Միքէլան Արիկեան ու Ռաշիա եւ Ասամ պէյեր: Իրենց զբոյրան փառքին հասած թոյլմատ թէքրեան, Եղիա Տէմիրճիպաւեան, պայծառամտն Ռեթէոս Պէրպէլեան, Մաղաքիա Օրմանեան, Յովսէփ Եւստոփեան, Յակոբ Պօյաճեան, Եշան Դուկասեան, Յակոբ Յակորոսի, Յովհաննէս Շահնազար եւ Յակոբ Պարանեան: Իսկ Ծրաններէն լիցուի ուսուցիչները եղած են Սառէ, Կոստէ, Բիւն Բիբար, Շառլ Լահամպէզ, Նէոման, Մարս Մակինա, Պրանչոն եւ Շարպէլ:

Կեղբոնականի առանձին շրջանը կը վերջանայ զբժարախ թուականի մը՝ 1896-ին: Այդ ամսուս պալի օրբուն կը ցրուին աշակերտները ինչպէս նաեւ ուսուցչական կազմը եւ վարժարանը ինքնաբերաբար կը դադարաւորուի փակուելու:

Կեղբոնական վարժարանը տարի մը փակ մնալէ ետք, Մաղաքիա Օրմանեան Արքեպոս. ի ջանքերով կը վերաբացուի 1897-ին, նոր աշակերտներով եւ մասամբ նախորդ ուսուցիչներով:

Այս շրջանը ընդհանրապէս խնամակալութեան տրուածով կը դառնար ամէն իրան որովհետեւ զպրոցին անմիջական հսկողութիւնը կը կատարէր Ռնամակա-

լութիւնը ամէնօրեայ աջակութիւններով, ներքին կարգապահութեան գործը յանձնելով ընդհ. հսկիչ Կաննիկ Բարունակահանի: Կրթական նախարարութեան աշխին տակ սահմանէ կ'արի պայտուած է: (տես «Պայք» շարժաթիւթի թիւ 30 21 Դեկտ. 1967):

Պէտք է նշել Մասեղ, թէ այդ թուականներուն Կրթական գործը մըն ալ կը հասասուուի այնուպէ:

1887-ին, Ս. Փրկչի վարժարանը Կեղբոնական վարժարանին բացումէն ետք, անոր խնամակալութեան կը յանձնուի ու կ'ենթարկուի Կեղբոնական վարժարանի ստօբէնութեան:

1859-ին Ս. Փրկչեան վարժարանին մէջ միայն 47 մանչ աշակերտներ գտնուած են, 6 ուսուցիչներու հարգութեան տակ: Սակայն 1889-ին նոյն վարժարանը կ'ունենայ 125 մանչ եւ 45 աղջիկ աշակերտուհիներ, 9 աչք եւ 2 կին ուսուցչական կազմով, որուն ամսական ծախքը եղած է 3300 գրշ.:

Եսկ 1900-ին ուսանողութեան թիւը քիչ մը նուազած է. մանչերը 122, իսկ աղջիկները 38 կը հաշուէին, իսկ ուսուցիչներ թիւով 7 էին եւ ուսուցչուհիները 2 հոգի մնացած էին, նոյն ամսական ծախքով:

Սկիսաւորի մէջ եւս 1797-ին հիմնուած էր եկեղեցիին կազմին զպրոց մը, որուն մասին սակէ առջ հարսնիկ ակաբութիւն մը ըրինք: Չարքիս պատրիարքին կոնդակով եկեղեցիին լուսարար Տիրացու Մարտիրոս ակաբեազ կը զբաղի զպրոցի կրթական գործունէութեամբ եւ կ'ուսուցանէ այնուպի աշակերտներուն իր ներած կարողութեամբ ու կ'աշխատի զպրոցին մակարդակը նախնական միջնակէն բարձրացնել աւելի պատուաբեր տեղ մը:

Ինչպէս գրած էինք, Սիւտարի Ս. Կարապետ եկեղեցիին կազմին Կոյսա պատրիարք հաստատած էր նոյն անունով զպրոց մը 1749 - 20 թուականին, որուն մասին մենք ակնարկութիւն ըրինք նախօրօք: Նախնական պատրիարք զայն փոխողրեց Գուժ-Գարու թաղը, սակայն Ս. Կարապետ վարժարանին չէնք մնաց անգործածելի վիճակի մէջ:

1824-ին Կարապետ Պալթիցի պատրիարքին մէկի

ծառնի չբնակարարական կենդանիներ մէջ կը գտնենք այն վարժարաններն յիշատակութիւնը: Այս կ'ապացուցած է թէ կլիական գործունէութիւնն ունեցած է այնտեղ մինչև այդ թուականը:

Համաձայն Մայգրիւս Օրմանեան պատրիարքին (անս «Աղգարարան» էջ 3894), 1859-ին այս վարժարանը շատ փոքրին միձայլ մը ունեցած է: Այն վարժարանին գալուստիան դէմ բնագրասած են «այդ գոյին յոռաջդիմանքներ» կ'ըսէ Օրմանեան:

Այս վարժարանը մանկերու յատուկ էր, որ 1825-ին գո՛ւ գրացած է թողին մէջ ծագած մեծ հրդեհի մը:

Մակոյն ուսումնասէր ու գիտակից անձեր ապրւայ մը բնթացքին քով քովի գալով, աշխատած են վերակառուցանել այրած այդ դպրոցը եւ ի վերջոյ կը յաջողին գրուել հանել այդ նպատակը 1825-ին: Բայց գործածուելն այն է, որ Տիրացու Մարտիրոս սոբրևուպի տեղ կը գտնենք Յովհաննէս վարժարան մը, որուն միձակասած էր դպրոցի աշակերտութեան ուսուցումը:

1830-ին Յովհաննէս վարժարանի տեղ նոյն պահածոն կը կոչուի աւելի ուսումնական եկեղեցական մը, յանձնու Տ. Բարեխոյիմէան վարժարան քահանայ, որուն գործակից ուրիշ քահանայ մը՝ Տ. Հմայեակ երեքճեան, որ բարոյական օժանդակութեան հետ, ներթափան օգնութիւններ ալ կ'ընէ դպրոցին (անս Հմայեակ քհնյ. Էքեքճեանի «Յիշատակարան Հնդեակ Յորեյեանի Ս. Խոջ եկեղեցւոյ Սկիւսարու 1676-1926 էջ 66):

1849 թուականին, շնորհիւ Տ. Յովհաննէս քհնյ. Փափազեանի ֆաներուն, դպրոցը կ'ունենայ յատկան բեզու՛ գործունէութիւն: Անոր գործակից ուսուցիչներն էին Պօղոս վարժարան, եւ Մանուկ Աբրապեան, (հայերէն լեզուի), Ֆրանսերէն լեզուի՝ Անտօն Սօֆիարեան, գեղարարութեան՝ Աւետիս (մականունը անձանօթ կը մնայ մեղի) եւ Պարոն Ալէքսան:

Դժբախտաբար, 1850-ին հրդեհի պատճառաւ դպրոցը մոխիրի կը վերածուի, ինչ որ պատճառ կ'ըլլայ դասընթացքներու յապաղման: Մակոյն հնարաւորու-

թիւն կ'ստեղծուի գասաւանդութիւնները շարունակելու համար եկեղեցիին դուրսիցն եւ վերնասանդիկ մէջ:

1859-ին, երբ դպրոցը դեռ չէր կառուցուած, Տոքթ. Բարանակ պէյ Ֆերուհիան ալցեյած ըլլալով Սկիւսար, այդ դպրոցին մասին դրած է թէ՛ նախկին դպրոցը ունեցած է 4 դասարան եւ 185 մանչ աշակերտներ:

Յոժեանս դէպս, ճիգեր կը կատարուին նոր դպրոց մը շինելու համար եւ այդ գործին կը լծուի Յակոբս պարտիրաք Սեբոբեան, երբ 1856-ին, պատրիարքութենէ հրժարած ըլլալով եկած էր հաստատելու Սկիւսարի Ս. Խոջ եկեղեցիին մէջ:

Այդ միջոցին կը կազմուի Աբրարտեան Մ'գուսց Ընկերութիւնը, որ նախապէս կը կոչուէր «Ս. Խոջ Ընկերութիւն»:

Ի վերջոյ Յակոբ Սեբոբեան (նախկին պարտիրաք) եւ Աբրարտեան Մ'գուսց Ընկերութեան միացնալ ճիգով ու զոհողութիւններով, կարելի կ'ըլլայ 1859-ին դպրոցին հիմեր դնել ու շէնքին կառուցման սկսիլ:

Ի վերջոյ շէնքին շինութիւնը կ'աւարտի: Դպրոցը քարակերտ էր այն անգամ երկու բաժնիներով, մանչեբու եւ աջջիկներու յատուկ:

Սկիւսարի թողը այսպէսով կը բախատուորուէր ունեւարու երկուս վարժարան մը, որուն հանդիսաւոր բացումը կը կատարուի 1860 ամբոյս վերջերս:

1870-71 դպրացական տարեշրջանին, Յակոբ Աբրահիլ ասեւակաւորութեան ասիկ, դպրոցին հոգարար ձութիւնը կը ձեւակարգէ հիմնովին բարեկարգել վարժարանը, բերելով բարձրորակ ուսուցիչներ:

Այդ մասնակներուն աջքատու եւ արժէքաւոր ուսուցիչներ կը հաղիստան Յովսէփ պատուէլի Մալեղեան, Եղիազար Մաբրտեան, Մկրտիչ Մելիքեան, Պօղոս Դեղիան, Յակոբ Զարբեան եւ ուրիշներ:

Հագու թէ յաջնգած էր Յակոբ Աբրահիլ այս վերաբնակ ուսուցիչները Սկիւսարի դպրոցին մէջ պահածոն կոչել, 1871-ին իր սկսած գործը կը ծախուի յատուկիմական արբերու ձեզմտութեան պատճառով,

որովհետև անոնք անկրան նկատելով եղբայրը Մուրադեանը (այդ մասին մենք ավելորդիցներ իր անդին հրատարակելու կուսան զմյ) :

Պէտք ենք այստեղ ակնյնել թէ՛ թողալին վարձարաններու մէջ ստանձին անգամ այս զգրոցն է որ մանրադրուէկ կը բանայ 1889-ին, Տիկին Գոսյանի Մատակետի հակոյոթեան ասկի : Այդս մանրադրուէկը կ'ունենայ իր յոտուկ շէնքը :

Եղբայրը Մուրադեան զանազամ կը թողու իր պաշտօնը եւ Սէլւմիէի վարել կողմերը կը բանայ մասնաւոր զգրոց մը 1873-ին, ասկոյն այդ զգրոցը երկար կեանք չունենոր : (տես Թէոդիկի «Ամենուն Տարեցոյցը» 1927, էջ 364) : Իսկ Սիկուսը Բճառիկ թողին մէջ 1872-ին Ֆէլէկեան մասնաւոր զգրոցը կը հիմնուի, Սիմոն Ֆէլէկեանի կողմէ (տես «Արեւելք» թիւ 3815 Սեպտ. 22-4 Հոկտ. 1898) : Աւելցնենք նաեւ թէ 1875-ին Սրբայրն Արարիկանի անօրինակ թեան ասկի հիմնուած է Սիկուսը Բճառիկ կրկեսն վարձարանը : (տես «Արեւելք» թիւ 3815 Սեպտ. 22-4 Հոկտ. 1898) :

Համաձայն զգրոցական վիճակագրութեան մը (քաղուած Ա. Արոյոյանեանի արխիւէն, թերթերէ մկրատուած, որուն թեանակնոր եւ թերթին անունը անյայտ է) 1889-ին Սիկուսը Ս. Խոջ վարձարանին զգրոցը աննկցած է 143 մանչ եւ 126 աղջիկ աշակերտներ, 11 այր եւ 9 կին ուսուցիչներով, ամսական 5300 դրչ. ծախքով :

Մինչ 1900-ին զգրոյի բաւելում կը գտնենք աշակերտութեան թիւին վրայ : Մանչերու թիւը կը բարձրանայ 164-ի, իսկ աղջիկներունը 193-ին, 14 այր եւ 9 կին ուսուցիչներով ու ամսական 6200 դրչ. ծախքով : Սիկուսը աշակերտութեան թիւին յաւելումը եւ նախորդի յիշումը զգրուելու ուսանողութեան չուսուցումը անբացատրելի կը գտնենք :

Կրթական սէքը օրէ օր կ'աճէր հայ հասարակութեան մէջ, ասկոյն զգրոցական մակարդակը միշտ կը մնար նախակրթարանի աստիճանին վրայ : միեւնոյն ատար վարձարաններ իրենց կրթական աստիճան-

թեամբ, հրապուրել սկսած էին դառնալ հայ ուսուցողութեան, մանաւանդ անկար դասակարգին կողմէ :

Ասիկա խթան կը հանդիսանայ, որ կրթական գործով զբաղողներ մասնին բարձրագոյն կրթարաններ հաստատելու մասին, կարենալու համար մրցել օտարներու հետ եւ թայլ շտով որ հայ տղան կամ աղջիկը օտարներու զիջել նետուի, եւրոպական բարձր կրթութիւն աննկու եւ հարաւորութիւն աննկու համար ապագային մասնագիտութեան մը հետեւելու եւրոպայի մէջ :

1836 Օգոստոս 25-ին Ալլանի պապերուրք եւ ամիրաներ ժողով կը գումարեն ուսումնասիրելու համար այս հարցը եւ Կ'օրջուէի Սիկուսըի մէջ «ձեռնարկ» վարձարանը հիմնուի : Սիկուսըի Երեսուցէականը (Եւրթող) նոր հիմնաւելք վարձարանին վայր նշանակուելով, Յովհաննէս ամիրա Սերգիբեանի եւ կարապետ Պալեանի քանքելով աշխատանքը յաւաք կը ապուրի եւ ի վերջոյ 1838-ին Կեկա. Գին բացումը կը կատարուի Սիկուսըի ձեռնարան անունով, իրր գլխաւոր թիկի եւ բարձրագոյն ուսումնարան, որ իր անսովին մէջ ստանձին կ'ըլլայ : (տես ակելի մանրամասն «Արարչատու» էջ 3720) :

Այս ուսումնարանին ընդհանուր ծախքին մէկ մասը, այսինքն 120,000 դրչ.ը Երեսուցէի վանքին կողմէ կը վճարուի, աղքատիկ տներ պահելու համար : Իսկ հարուստներուն գումարները պետի վճարելին աւելան 3000 դրչ. (տես «Արեւելք» Սեպտ. 21-3 Հոկտ. 1898) :

Յովհաննէս ամիրա Սերգիբեան միւթեղէւի կ'ուսուանուի Սիկուսը ձեռնարանին, իսկ Կիբրակոս Եպս. Մնացականեան՝ պաշտպան : Յակոբիկ Մանուէլեան (Սերգիբեանին զինան) անօրէն կը կարգուի, Յովհաննէս Տերոյինց ուսումնարան, Խոջաուսը Միսաքեան հայերէն լեզուի ուսուցիչ, Խոջաուսը Պարտիզպանեան համարդարութեան ուսուցիչ եւ ուրիշներ պաշտանի կը կազմեն, վարձարանին կրթական ծախքին ուժ տալու համար :

1839-ին ուսանողութեան թիւը բոս Մոլդաբիտ

Օրմանեան պատրիարքին եղած է 50: (տես «Աղբյուր-պատում» էջ 3720):

Ասիկա կրեւոր պատուար մը կը հանդիսանայ օտար վարժարաններու գէժ մրցելու համար, եւ հայ աշակերտութեան ալու նոր միեկնում ունում, ինչ որ սակայն կը գծագրուէր միեկնութեան հասերուն, որոնք, ինչպէս բացատրեցինք իր ակզին, կրօնականներու ազդեցութեան ենթարկուած ըլլալով, հնաւանդ գրութեան պաշտպան կը հանդիսանային ու կը քննադատէին վարժարանին գործունէութիւնը:

Հարձանքը հետզհետէ կը խառնուէր միեկնութեան կողմէ «ձեմարան»ին գէժ եւ ժամանակ մը ետք յետագիմական քայլեր կ'առնէ խախտելու համար վարժարանը, զապրեցնելով նաև իրենց նպատար եւ ձեռնուած կը բանեցնէ երուսղէժի միարանութեան վերայ, որպէսզի կրճատեն կառարկելիք հասուցումը:

Բայց ինչու համար այս հակառակութիւնը կը կատարուէր այս կրթարանին գէժ, նրբ լաջնորութեան ցախուն ապացոյցը կուտար ան իր առաջին տարիէն իսկ, կրթական ձօն ու կանոնաւոր ծրագրով:

Ժողովուրդին դիտակից ամբողջ սակայն շօշափելի արդիւնքներ տեսնելով կը պայտարի խախտարարներուն գէժ:

Սերպիբեան Յովհաննէս, որ վարժարանին սնօրէն էր, է գին ամէն գոհնորութեան կը նուիրուի Սկիւտարի ձեմարանը կողմուն պահելու եւ ամէն հնարաւոր նիւթական միջոց կը դանձ վարժարանին ծախքերը հոգարու համար: Սակայն գծախառնար ձեռնուած իր գէժ շատ գորաւոր կ'ըլլայ եւ շրջան մը կը հարկազրուի վարժարանին բոլոր ծախքերը առանձին վճարել:

Սերպիբեանի ղեկավարութեամբ, լոճոտաններու խումբը 1841 Ապրիլ 13-ին կը կողմէ Մխիթար Ընկերութիւնը, ձեմարանը ամբողջութեամբ լոճահաճ որսաւորութեան գոհ չգարձնելու նպատակաւ, սակայն ջանքերը անբաւարար կ'ըլլան կանգուն պահելու համար վարժարանը եւ ի վերջոյ կը դառնաւարտուի միակուսելու Հոկտ. 3-ին: Իսկ չէնքը կը վերածուի ղեկուար-

կան հիւանդանոցի: (տես «Աղբյուրպատում» էջ 3810):

«Սկիւտարի ձեմարան» վարկուելով, ժողովրդային բնոյզում մը յառաջ եկաւ ամերկաներու գէժ եւ այդ իր հակազդեցութիւնը ունեցաւ: Աղբյուրի վարչաութեանց մէջ ամերկաներ վառահալեան ընկէ կրթութեան եւ հարկազրուեցան ղեկուսներ ընկէ, կանոնաւորուն սեպ սարով, անոնց հետ ժողովի նստելով, բայց մը որ մինչև այլ ատեն անբեականակցելի էր:

1845-ին Մասիէնու պատրիարք ջանքեր կը կատարէ ղեկուարական հիւանդանոցի վերածուած Սկիւտարի ձեմարանին շէնքը վերածել զարձեւ կրթարանի եւ կրթուէս շատ մը նախատնքերէ կար կը լայնուի իր նպատակին հասնելու անմիջապէս նորագոյնեան կը ձեռնարկէ գոյն եւ ի վերջոյ 1846 Հոկտ. 1-ին կը վերաբացուի Սկիւտարի ձեմարանը բնորոնելով 50 աշակերտներ, որոնց 10-ը թուրքաւոր եւ 10-ը արիւմ վարժ:

Վերականուէր կը կրթուի սոյն վարժարանին Պօղոս ապ Օսեան, որ խորհրդականն էր ու գործակալը կարապետ ամերկային:

Դարձեալ, Մասիէնու պատրիարքի խորհուրդով է որ կը կողմուն «ձեմարան Սկիւտարու» բնկերութիւնը, որ պիտի ըլլար հոգաւոր մամբինը այս ուսումնարանին:

ձեմարանին վերաբացումը կը խոնգաւթառէ հասարակութիւնը: 1850 Դեկտ. ամսուն Գերբագոյն ժողովը կը ծրագրէ ուսեալ եկեղեցականներ հասցնել, նկատի ունենալով օրուան պահանջը, որպէսզի կրթելի ըլլար օտար միեկնութեան հետ մրցել:

Աստի այս նպատակով կազմուած լոճահաճութեամբ (խան եկեղեցականներէ եւ աշխարհականներէ) պատշաճ կը տեսնէ վարդապետներու ուսման համար վանական միարանութիւն մը հաստատել Սկիւտարի սոյն ձեմարան վարժարանին մէջ: Բայց ամիսներ յետոյ 1851 Ապրիլին, սոյն հարցը լու մը քննել վերջ, գծախառնութիւններ գտնելով (նիւթական կողմէ մասնաւորաբար), Գերբագոյն ժողովը լուսագոյն լուծումը կը գտնէ ձեմարան վարդապետանոց իր 16 նպահաւոր

ապիկրաներով Սկիւսարէն փոխադրել Ս. Փրկիչ Հիւանդանոց: (տես «Արդարադատութիւն» էջ 3898):

1854-ին Ուսումնական խորհուրդը պաշտօնապէս կը յայտնայ ձեռնարան վարժարանը երկրորդ օրձականի բաժնիով օժտել: Գերագոյն ժողովը կը հաւանի անոր եւ Յակոբ Ազմուսեանի գլխաւորութեամբ Ս. Փ. Հիւանդանոցին կից շէնքի մը մէջ, կը բացուի երկրորդ օժական վարժարանը:

Բ. Բէչեան մեզի հետեւեայ մանրամասնութիւններ կուսոյ ձեռնարանին եւ Երկրորդ օժական վարժարանին մասին գրելով հետեւեալը.

«ձեռնարանն երկու մասի բաժնուած էր, ստորին եւ վերին, կամ նախնական եւ բարձրագոյն: Նախնական մասին մէջ կային (1854 թ.) 80 ուսանողք, որք առաջ քերական, Մաթեմա եւ Նարեկ կը կարգային եւ նոր անօրէնութեան օրով հասարակ ընթերցանութիւնէն զատ կուսանին նաեւ հայկարանութիւն, Սքրազան պատմութիւն, Թուարանութիւն եւ աշխարհագրութիւն: Աշակերտք խմբերու բաժնուելով յառաջադէմներէն իւրաքանչիւր խմբին մէջ մէկ «ազգարար» սրտուած էր, որոյ առաջնութեամբ անձն իւր խումբը որոշեայ ժամանակներու եւ անանձին դասարաններու մէջ երկրամբար եղանակա կ'ըզդէր անունած դասերուն սերտուողութեան: Նախնական մասին դասատուութիւնք յանձնուած էին Սամաթիոյ Ս. Սահակեան վարժարանի վարձակի յառաջադէմ աշակերտ Քոստա Նազարեանի, որ ապա համբաւաւոր եղաւ իրբեւ դասատու հայկարանութեան:

«Բարձրագոյն մասը կը պարունակէր 40 ուսանողքներ, որք կը սորվէին բնագիտութիւն, դաստիարակութեամբ Յակոբ Էփէնյանի Ամասեանի, որ վարժարանին ընդհանուր անօրէն էր, Թուարանութիւն, աշխարհագրութիւն եւ Ծրարանքէն, դաստուարութեամբ Յարութիւն Էփ. ի Թիւրեանի (վարձակ աշակերտ Ս. Սահակեան վարժարանի), սրբազան պատմութիւն եւ հայկարանութիւն Տ. Արիտասկէս շահանայ Մամբրէեանի, Թուրքերէն եւ եւրոպական ձայնագրութեամբ երթմատութիւն, Է ձեռն Գարբիէլի Երանեան:

«Այս բարձրագոյն դասը կը պարուպէր հողագործութեան սկզբունքները սովորու, զորս կ'աւանդէր Ամասեան Էփ.: Աշակերտք պարտէզներուն մէջ նախնական վարձեր կ'ընէին, կը հերկէին, կը ցանէին, հողիւ վրայ գործնական ծանօթութիւններ արնելով»: (տես Բ. Բէչեանի «Պատմ. Ս. Փ. Հիւանդանոցին Հայոց Կ. Պ.» էջ 108-109):

Սակայն նոյն տակնէրու պատերազմական, այլ պայմաններու եւ սղութեան պատճառաւ, վարժարանին բարձրագոյն բաժնիւր, հազիւ տարի մը կը ստեղծ ծախքներուն եւ կը դատարարուի փոխուելու: (տես «Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21-3 Նոյա. 1898):

1858-ին հոգարարձութիւնը կը յաջողի վերաբանալ վարժարանը չորսէր Բրիտանացի Ղազարեանեանի փոխընթաց եւ այս անգամ կը դարձէ Հիւանդանոցի մասակարարութեան ստի «ժաւանդաւորաց վարժարան» անունով:

Հազիւ թէ «ձեռնարան» Ս. Փրկիչեան Հիւանդանոցին կից վարժարանը վաղուս շրջան մը կ'անցնէր, զժամկետաբար այլ յաջողութիւնը երկար չի տեսեր եւ բաւական ուսումնական պատանիներ հասցնելէ անք կ'անշարձայ: (տես «Արդարադատութիւն» էջ 3894):

1887-ին, Օդոսա. 2ի մեծ հրդեհին հրոյ ճարակէ կ'ըլլայ Սկիւսարի սոյն ձեռնարանը, սակայն թաղ. Խորհուրդի անդամներու եւ Տիրքան Էփ. Էղեկէլեանի ջանքերով, թաղի տղաքը կը հաւաքուին տան մը մէջ (որ նուիրուած էր Սամուէլեան եղբայրներու կողմէ), ուր կը շարունակուին դասաւանդութիւնները, համաձայն ձեռնարանի հոգարարձութեան պաշտօնական յայտարարութեան: (տես «Արեւելք» թիւ 3747 10 Օդոսա. 1896):

Սակայն 1900-ական թուականներուն այս ալ հրդեհի մը զոհ կ'երթայ: (տես «Մարտար» 29 Հոկտ. 1965): Այնուհետեւ, դպրոցականները կը հաւաքուին Զեֆթիկէկէն գէպի Փաղար պաշտ. հանրակրթի դժին վրայ թիւ 174 տան մէջ:

Հոգարարձութիւնը 1861-ին որք ազջիկներուն համար գոյրոց մը բանալու ճիղեր կ'ընէ: Կարողեա

Փանոսեան (Վանդուսէ և Էֆրեմյօ՞ր խմբագիրը) և Տոքթ. Կարապետ Գարուսեան յանդուգն և արժանակիր միջոցներ ձեռք կ'առնեն Հիւանդանոցին և «Ճեմարան»ին բարեօրոշան համար 1867-ին:

Այս երկու տնօրէիք ուժերը և վերջոյ կը յաղթահարեն ամէն դժուարութիւն ու կը յաջողին իրենց նպատակներուն մէջ և Եւպատամատոյց Ընկերութիւն Փրկչեան վարժարանի անունով ընկերութիւն մըն ալ կը կազմեն Տոքթ. Կարապետ Գարուսեանի նախաձեռնութեամբ, որ նպատակ կ'ունենայ նաև Ս. Փրկչի Հիւանդանոցին կից ձեմարան վարժարանին սոցց գրեւեակն պիտուր հասկնալի:

Ասիկ պատ ընկերութեան և երկու Կարապետեանքու ջանքերով, Ս. Փ. Հիւանդանոցին մէջ առժամաբար յարկ մը կը արժագործի սոցց ուսման համար, մինչև որ կարելի կ'ըլլայ անոց բարակերտ նոր դպրոց մը կառուցանել «Պէղծանոց» անունով, որուն տնօրէն կը կարգուի Սիմոն Էֆ. Ֆէլէկեան (տես Բ. Քէչեանի «Պատմ. Ս. Փ. Հիւանդանոցին հայոց Ի Կ. Պ.» էջ 209), ուր հասկնէն, թրքերէն, ֆրանսերէն և գիտական նախագիտելիքներ կ'աւանդուին:

1872 Ապրիլին սոյն վարժարանին մէջ կային 50 ուսանողներ: «Չլատարանին» մէջ ալ 66 տղաներ կային, որոնք կը սորվէին լոկ հասարակ ընթերցանութիւն, գիր, հաշիւ և երաժշտութիւն: (տես նոյն էջ 209):

1875-1878 տարիներու ընթացքին 602 տարբ մտած ու ելած են յայ դպրոցէն, որոնք յարաւանողներ չեն եղած և վարժարանին անհաստատ երեւոյթ մը ստանձ են: Այդ պատճառաւ Սենեքերիմ Մանուկեան, որ Այդ. Հիւանդանոցի մասնակցարութիւնը ստանձնած էր, 1878 տարույ վերջին կիսուն, իր տեղեկագրին մէջ կը գրէ թէ ձանկարելի է կանոնաւոր վարժարան ունենայ, երբ միջոց չկայ ամէն ճէկ տղան գէթ 5-6 տարի շարունակ Հիւանդանոցի մէջ պահելու, զի Հիւանդանոցի վարժարանն որքանոց մէկ լոկ, ուր պատանդարութեան համար կը պիտուին որքեր մայրաքաղաքին ամէն կողմերէն ու գիւտաներէն: ... բայց

որովհետև ներքի չէ որքեր ծոյլ և անգործ պահել, նախկերթարան մը պէտք է կենայ հուն, և այդքան բաւ կարի հրահանգուն նախնական ուսմանց և բարի վարուց մէջ»: (տես նոյն, էջ 235):

Փանոսեան երբ 1882-ին Ս. Փ. Հիւանդանոցի հարաւորութեան մէջ էր, նոր դպրոցի մը շինութեան համար կ'աշխատի, ներսէս պատրք. Վարժապետեանի միջնորդութեամբ և Մասեհեան ժառանգեան խնդրել կը կապէ դպրոցին հետ, քանզի որքանոց ի վիճակի չէր կանոնաւոր դպրոց մը բլլալու, գժուար պատաններու բերումով:

Սոյն դպրոցը կ'ունենայ 4 դասարան, ընտելարան, ծաղկոց, թանգարան և հիւրանոց: Այս դպրոցը այդ թուականին ունէր 188 աշակերտ (տես նոյն, էջ 247):

Իսկ ինչ կը վերաբերի ուսումնական խնդրին, նախորդ կրթական ծրագրին վրայ կ'աւելան անգլերէն լեզու ուսուցում, կրօնագիտութիւն, ճանաչութիւն, ատմաբանկալութիւն, բնագիտութիւն և մարմամբոց: (տես նոյն, էջ 247):

Հիւանդանոցին որքանոցը 1898-ին կ'ունենայ իր յատուկ խնամակալութիւնը, զոր կը վարէր որքանոցին ուսումնական և արհեստական վարչութիւնը:

Որքանոցը կ'ունենայ տարրական նախկերթարան մը, տարրական դասընթացքի Ա. և Բ. Միջին դասընթացքի Ա. և Բ. ու Բարձրագոյն դասընթացքի Ա. կարգերով: Հոն կը կիրառուի գաւարանական դրութիւնը մեջ մնալուն ուսուցիչներով և մէկ տեսուչով և 3 տղելու ուսուցիչներով:

Արհեստանոցին մէջ կ'աւանդուի կոշիկակալութեան գիտելիքներ:

Որքանոցը 1899-ին կ'ունենայ 185 աշակերտներ: Այկիւտար Իճուտիյէի մէջ 1872-ին կը բացուի Երեսեան - Երժժեան երկուս վարժարանը: (տես «Արեւելք» թիւ 3815 Սեպտ. 22-4 Հոկտ. 1898), և 1876-ին կ'ունենայ բաւական լաւ կրթական դրժուտելութիւն: Աշակերտութեան թիւը, համաձայն դպրոցական կարգ մը միճակագրութիւններուն եղած է

մաս 250, իսկ 1900-ին աշակերտութիւնը կը պակսի, իջնելով 186ի, 14 ուսուցչական կազմով: (տես «Ընդհանրական Օրացոյց Ս. Փ. Ազգ. Հիանդանոցի» 1900, էջ 206):

Իսկ 1878-ին Պէրպէրեան վարժարանը Օրթոդոքսիէն կը փոխադրուի Սեւրմաք Ս. Պապի մաս Նիգոսմեաններու բնակարանը, ուր փոխուեց չըջան մը կը բարձրէ:

Մասնաւոր վարժարան մըն ալ կը բացուի Հաճի կարպետ Ասլանեանի կողմէ Սկիւտար Տաղհամամի մէջ 1880-ական թուականներուն:

Ասոր հետ մէկտեղ յիշատակութեան արժանի է Մկրտիչ Բագրատեանի մասնաւոր դպրոցը, որ հիմնուած է 1880-ական թուականներուն, ինչպէս նաև Գալուստեան մանկապարտէզը:

Սիմոն Գարամատեան եւս Սկիւտար Պապար-Պապի հայոց գերեզմանատան դիմաց անհասական վարժարան մը բացած է 1885-ին Նոր դպրոց անունով, սակայն հաջիւ տարուայ մը կեանք կ'ունենայ եւ կը պաշտօնէ: (տես «Գրպանի Տարեցոյց», 1934 էջ 128-139 - Հր. Եփրեմ Թ. Վրդ. Ապրտեանի յօդուածը): Դոյն թուականներուն Սկիւտարի Ս. Պապի եկեղեցիին մօտեւորը Միհրան Ազատեան կը հիմնէ Հայկեղեան վարժարանը:

Գուգիւննուր դիւղին մէջ Պետրոս Եղիշեանի նախաձեռնութեամբ եւ Սերպիերեաններու ֆինանսով, 1870-ին կը հիմնուի Ս. Լուսաւորչեան երկսեռ վարժարանը, երբ դիւղին հայ բնակչութիւնը կը սկսի շատնալ: Այս դպրոցը ինչպէս կը ստանենք, դժբախտաբար կանոնաւոր բնթացք չէ ունեցած, սրով հետեւեանք մասին չենք գտած սեւէ սեղեկագրութիւն օրթոթերթերու մէջ: Իսկ համաձայն դպրոցական միժմակագրութեանց, շատ համեաութեամբ աշակերտութիւն ունեցած է ան: 1900 թուականին, այս դպրոցին աշակերտութեան թիւը եղած է 18, որ շատ աննշան բան մըն է: (տես «Ընդհանրական Օրացոյց Ս. Փ. Ազգ. Հիանդանոցի» 1900 էջ 206):

Կ. Պոլսոյ հայտնակ թուղերուն մէջ հիանքէն էր

նաև Գուրու Չէլմէն, որ, ինչպէս յիշեցինք էր անդին, Չաքարիս պարտիւրը Ս. Պապի եկեղեցիին կից հաստատած էր դպրոց մը 1798-ին, որ բնակչութեան կը կրէր եկեղեցւոյ անունը:

Դժբախտաբար սեղեկութիւններ կը պակսին այս վարժարանին գործունէութեան մասին: 1842-ին թողին մէջ կը շինուի Թարգմանչաց վարժարանին բացումը (տես «Արեւիք» թիւ 3814), ինչ որ մեղ մասնէ կուտայ, որպէսզ մինչև այդ թուականը Թաղին մէջ դպրոց գոյութիւն չէր ունեցած, որ նորի մը ձեռնարկութիւնը եղած է: Բաց աստի, նկատուածեան կ'ուսնեք սա պարագան թէ՛ երբ եկեղեցիին մը նորոգութիւնը կ'ըլլար, առ հասարակ անոր կողքին գոյութիւն ունեցող դպրոցին ալ նորոգութիւնը կը կատարուէր: Այդ նշմարեցինք մասնաւոր հիմնարկներ:

Թէևս սեւէ յիշատակութիւն չէ եղած, սակայն մենք 1833-ին Գուրու - Չէլմէ Ս. Պապի եկեղեցիի նորոգութիւնը կը գտնենք երկու ազգութեան մէջ (տես Բ. Բէշեանի «Պատմութիւն Ս. Փ. Հիանդանոցի հայոց ի Կ. Պ.» էջ 3 եւ «Ընդհանրական Օրացոյց Ազգ. Հիանդանոցի» էջ 167), որոնք մեզի կարծել կուտան, թէ Ս. Պապի դպրոցի գոյութեամբ հաստատար երկարած ըլլայ մինչև 1835 կամ 1836 թուականները:

Եթէ մեր կարծիքը ճիշդ ըլլայ, ուրեմն հաստատուան է, որ թաղեցի հայեր 5-6 տարեկէն նոր դպրոցի մը հաստատման ձեռնարկութիւն ըլլած ըլլան 1842 թուականին:

Յամեան զէպս, մեր աչքին առջև ունենալով Գուրու Չէլմէի Ս. Թարգմանչաց վարժարանի միժմակագրութիւնը եւ աշակերտութեան թիւը, կը տեսնենք թէ հոն կրթական մեծ գործունէութիւն չէ կատարուած:

Համաձայն միժմակագրին, 1889 թուականին մասն աշակերտներու թիւը կը հասնուէր 10, իսկ ազգիւրներունը 13, մէկ այլ ուսուցչի մը սրտասխանատուութեան ամի, որուն անունը ալ անձնակ էր մնայ մեզի: Իսկ 1900-ին մտնչ աշակերտութեան թիւը բարձ

րացած է 17ի, իսկ աղջիկներունը 14ի: Այր ուսուցիչներու թիւը կ'աւելնայ Երկուքի ու անոնց վրայ ուսուցչուհի մը: Գաղտնիկան մասկան ծախքը 800 դր.: արձանագրուած է:

Ալէքս Տաղի հայրենակ դիւղը (Էրմէնի քէօյ, իսկ թըքարակը՝ Սուլթան Չիֆլիկ) համաձայն Տոքթ. Տաղաւարեանի, ունեցած է իր դպրոցը Ս. Նան անունով 1848-ին, սակայն ասոր մասին ես կը պահպնեմ անգեղութիւններ:

Տոքթ. Տաղաւարեանէն (տես «Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21-3 Հոկտ. 1898) ետք, Բ. Քէչեան (տես «Պատմ. Ս. Փ. հիւանդանոցին հայոց ի Կ.Պ. էջ 127), կը յիշեն այս դպրոցը ուրիշ կարգ մը դպրոցներու հետ, սակայն ասոնց վիճակը շատ անձանք չ'ըլլաւ, Տոքթ. Բարունակ պէյ Ֆէրուհիան չէ յիշած 1859-ե Կ. Պոլսոյ թաղային վարժարաններու շարքին մէջ: Բայց պէտք է գիտել ասոնք, որ այդ դպրոցը մինչև 1900 թուականը պահած է իր գոյութիւնը (տես «Ընդարձակ Օրացոյց Ս. Փ. Այդ. հիւանդանոցին» 1900 էջ 206):

Եէնի - գարու թաղն ալ Կ. Պոլսոյ հայերով բնակուած հին թաղերէն եղած է:

Երբ կը հետևինք «Արեւելք» թերթի մէջ Սկոտի Բանասէրի (Տոքթ. Տաղաւարեան) յօդուածաշարքին, կը տեղեկանանք, թէ այս թաղը 1850 թուականին ունեցած է իր վարժարանները Աւաքելոց եւ Հալ կանուշեան անուններով (տես «Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21-3 Հոկտ. 1898): Սակայն աչքի առջև կ'ուշենանք Կարապետ Պալթցի պատրիարքի 1824 Յունիս 10 թուականը շրջաբերական կոնդակը (տես «Բիւզանդիոն» թիւ 2160 24 Հոկտ. 1903- Ս. Ալպոյաճեանի յօդուածաշարքը) կը տեսնենք, որ այդ թուականէն առաջ արդէն դպրոց մը բացուած է, նախ քան Էկեղեցիին շինուիլը եւ ասիկա մեր միտքը կը ասնի զէպի աւելի կ'աւելու թուականներ:

Թէև Ա. Ալպոյաճեան շրջաբերական կոնդակին ամբողջ բովանդակութիւնը չէ ստուած, սակայն իր արթնիւն մէջ դասած ենք այդ կոնդակին ամբողջ բովանդակութիւնը եւ անկէ քաղած ենք ուշագրու հետևեալ տողերը, որոնք արդէս ունին վերոյիշեալ խնդրին հետ:

Այս հետաքրքրական շրջաբերական կոնդակին մէջ, որ «կանոնական պատուիրանք աւ վարժարանս եւ աւ վարժէլիս» խորագրեր կը կրէ, գրուած է անոր մէջ ի միջի այլոց հետևեալը. «Հոգևոր հովիւք եւ մեծարու իշխանք ազգիս մերոյ, հայրենասէր բարձրք ջանացեալ եւ հասարակ ՚ի տեղիս տեղիս գաղութիւն դպրոցս, կարգելով նոցա դուրս գումարթարս ՚ի պէտս ծախուց, ուր ձրի ուսանին աղջատաց մանկունծն, որպէս ի քաղաքիս յամիկ ի թաղն Եէնի - նարու, ի Պալթ, ի Սարակէօմբլուք, ի Թօփիարու, ի Մաժաթիա, ի Նաւր - Սարու, եւ ի Ղալթիա, ի Պէկօլլու, ի Սաւա Փաշա, ի Սաւ պիւղ, ի Պէշիկ-թաշ, ի յՕրթագիւղ, ի Սուրուչէճէկ, ի Հիսար, ի Եէնի դիւղ եւ Յատիխատք, ի Ալլամալը, ի Եէնի Մահալէ, ի Ղարի պիւղ, ի Սարթու եւ յայլ տեղիս, յորս վարժապետք հրահանգեն դասնկունս եւ ուսուցանել զհոգևոր երգս ձայնաւորաց, եւ զքերականութիւն, զճարասանութիւն եւ գործարանութիւն, ի լարումն պիտոյից եկեղեցւոյ սրբոյ»:

Այս տողերը կ'ապացուցանեն թէ կանուս թուականերէն Եէնի գարու թաղը ունեցած է իր դպրոցը, որուն անունը եւ հիմնարկութեան թուականը գտնուար է հաստատել, որուն վրայով որ, անոր ճշգրիտ թուականը, ոչ ալ անունը յիշատակուած են: Հակառակ ասոր սակայն, երբ խնդրեր արձանագրուողին անունը, պիտի ունենանք Յատիխատքի ամերս Պէգճեանի պարագան, որ այդ թուականներուն (1800 թ.) ուրիշ կարգ մը անունի ամբարաններու հետ Եէնի գարուի թաղը կը բնակէր: Այս հարաձայնօթ ամբարան իր շինարար գործունէութեամբ մեծ համար, շահած էր, հիմնելով դպրոցներ, եկեղեցիներ, հիւանդանոցներ եւ այլն, ուրիշ թաղերու մէջ, չէր կրնար ան իր թաղին մէջ դպրոց մը շինած չ'ըլլալ: Հետևաբար, երբ կարգու պատրիարք 1824-էն առաջ յիշեալ վարժարաններու մասին սկիզբուցութիւն կ'ընէ վերոյիշեալ շրջա-

ընթացում կոնգրակին մէջ, այլ դպրոցներու շարքին յիշուած են նի գարու դպրոցը անասարկոյս շինուած պէտք է ըլլայ Պէդճեան ամիրայի կողմէ եւ կամ ուրիշ անբնակներու գործակցութեամբ, շատ հասանական է 1800-էն 1803 թուականներու միջեւ, սգովհետեւ, Եարութիւն ամիրա Պէդճեան մինչեւ 1802 թուականը սպրած է այդ թաղին մէջ, սպս Տիւղիան Յովհաննէս Չէլէպիի միջնորդութեամբ կրք կրցած է Օսմ. կառավարութեան ելեւմտական նախարարութեան մեծաբախ մարտը վարձել, այնուհետեւ հաստատուած է Գոմ գարու թաղը (տես Վահան Չարդարեան «Յիշատակարան (1512-1933)» էջ 3-19) եւ հան եւս ձեռնարկած է շինարար գործունէութիւններու:

Արեւմտեայ հիմամբ մենք կրնանք ընդունել գոյութիւնը կրթարանի մը, որ հաստատուած է (տես «Արեւելք» մէջ յոյս տեսած Սիւննի Բանասէրի յորտածաշարքին) Առաքելոց եւ Հայկանուշեան վարձարաններէն առաջ:

Սակայն ուշագրաւ է 1859-ի Տոքթ. Բարունակ պէյ մէքուհիւնի (Քերթեկեան) 4. Պոլսոյ հայ վարձարաններուն վերաբերմամբ պատրաստած վիճակագրութեան մէջ (տես Բ. Քէշեանի «Պատմ. Ս. Փ. հիւանդանոցին հայոց ի 4. Պ.» էջ 126) յիշուած մանչուքու վարձարանի մը արձանագրութիւնը են նի գարու թաղին մէջ 165 աշակերտներով, 7 սուսցիներու կողմով եւ մօտ 38.000 դրշ. ամսական ծախքով:

Տոքթ. Բարունակ պէյի պատրաստած այս վիճակագրութեանը վաւերական է, սակայն կրք կրք կրք են նիստել Սիւննի Բանասէրի այն տեղեկութիւնը Հայ կանուշեան վարձարանի վերաբերմամբ, որ հիմնուած կը կործէ 1850-ին, մինչդեռ աւելի ուշ, 1863-ին կը յիշէ աղջկանց վարձարանի մը հիմնարկութիւնը, առանց յիշելու անոր անունը: (տես «Արեւելք» թիւ 3895 Սեպտ. 22-4 Հոկտ. 1898):

Համաձայն թերթէ միջատուած դպրոցական վիճակագրութեան (Ա. Ալոյոյ յանձնարարի արխիւին պատկառնող բայց անթուական) 1880-ին Առաքելոց վարձարանը ունեցած է 54 աշակերտներ, իսկ Հայկանուշեանը

87 աշակերտուհիներ:

Այստեղ յիշենք նաեւ Գէորգ Մէլատուանի հիմնած մանուկ վարձարանը 1884-ին, որ բուսական արգիւնք ստեղծ է իրրիւ կրքրոջական ուսում առող կրթարան, սակայն 1895-ի զէպերուն խանդարուած է անոր գործունէութիւնը ու խափանուած: Իսկ 1862 Փետր. 15-ին Ենիի գարու գոյուք բացուած է աղջկանց վարձարան մը Թ. Նազարեանի կողմէ (տես «Արեւելք» թիւ 3815 Սեպտ. 22-4 Հոկտ. 1898):

Դժբախտաբար ուրիշ տուեալներ կը պակսին այս վարձարաններուն վերաբերմամբ:

Թօփ գարու թաղը ուր հին թուականներէն հոյսը կայք հաստատուած են, ունեցած են իրենց եկեղեցին Ս. Նիկողոսյան անունով (տես Միւլըն - Աստուլքի «Ներքարեան պատմութիւն Ս. Հրէշակապետ եկեղեցւոյ Պալատի (1627-1931) էջ 144), որ իր գոյութիւնը պահած է Գարակիօսթիլի եկեղեցւոյ հետ:

Թէեւ ունէ յիշատակութիւն չէ եղած, սակայն ինչպէս միւս թաղերու եկեղեցիները, նոյնպէս այս թաղն ալ ունեցած է դպրոցներ: Եւ որովհետեւ կառուցուած Պալատի պատրիարքի շրջաբերական - կոնգրակին մէջ կը յիշուի այս թաղին մէջ կրթարանի մը գոյութիւնը, չենք կարծիք որ սխալած պիտի ըլլանք ըսելու թէ վերայիւրեւ եկեղեցիին կից դպրոց մը բացուած պէտք է ըլլայ 1804-5 թուականներուն:

Համաձայն Սիւննի Բանասէրի տեղեկագրութեան (տես «Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21-3 Հոկտ. 1898) 1825 թուականին Թօփ գարու մէջ կը հիմնուի Լեւոնեան վարձարանը, որ 1832 թուականին թիւղ պէնդճիներու էմնաֆի զառակարգը կ'ստանձնէ անոր հողը ամիրա-էմնաֆի զառակարգը միջեւ տեղի ունեցած պայքարին ժամանակ (տես Յ. Ճ. Սիւրունի «Պոլսու իր դերը» Բ. հատոր էջ 115):

Հետեւելով ժամանակագրութեան, շատ գարտաշարի կը գտնենք 1859 թուականին Տոքթ. Բարունակ պէյ մէքուհիւնի պատրաստած դպրոցական պատուանական վիճակագրութեան մէջ այս վարձարանին մասին ունէ յիշատակութիւն չընելը (տես Բ. Քէշեան

«Պատմ. Ս. Փ. Հիւանդանոցի Հայոց Ի Կ. Պ.» էջ 126) :

1865 թուականին ի՞նչի գաբուի մէջ կը բացուի ազգիանց վարժարան մը (տես «Արեւելք» թիւ 3895 Աւագ. 22-4 Հոկտ. 1898) վարդաւհեան անունով: Գծարարաբար ուրիշ անուանելը կը պահելն մեզի այս թաղին վարժարաններուն մասին:

Բերայի մէջ, ինչպէս գրած էինք իր անդին, սուսջին վարժատանը բացուած է Ղալաթիոյ Ս. Լուսուորիչ եկեղեցւոյ ծախքով Ս. Էջմիածին անունով 1807-ին (տես «Նոյեան Աղանի» թիւ 9 Ապրիլ 23 1852), որ յետոյ կայսերական հրովարտուելով կը վերածուի եկեղեցիի: (տես Մարտիրոս Հանգսեանի «Հարիւրբաննէ Հինգ ամեայ Յորեկան Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ» էջ 22-23) :

Այնուհետեւ 1810-ին Ս. Երրորդութիւն եկեղեցիին կից Գըրգոր ամիրա Չէրէղանի ջանքով կը բացուի դպրոց մը, որուն անունը մեզի անծանօթ կը մնայ (տես Յ. Ճ. Սիրունի «Պոլիս եւ իր դէպք» Բ. հատոր էջ 110), որ այս թաղային հրգեհի գոհ կ'ըլլաթայ եկեղեցիին հետ: Սակայն 1811-ին եկեղեցին եւ դպրոցը կը վերականուցուին:

Մանչերու յատուկ դպրոցէն դուրս, Յարութիւն ամիրա Պէղճեան, սակերիչ Տիրացու Սերովբէի խորհուրդով կ'աշխատի ազգիանց մէջ կըթուրթեան սէր արձարձել եւ այդ նպատակով կը հաստատէ սուղանգարծութեան դպրոց մը 1826-ին: (տես «Բիւզանդիոն» թիւ 2160 24 Հոկտ. 1903) :

Այս դպրոցները անբարձր կ'առատելով, 1830-ին «Ամիրաթ եւ արհեստագետք ժողով կողմէնով, Ղալաթիոյ եւ Բերայի վարժարանաց մասակարարութեան բուսական դրամագլուխ եւ եկամուտ կը հայտարարեն» (տես Բ. Քէչեան «Պատմ. Ս. Փ. Հիւանդանոցի Հայոց Ի Կ. Պ.» էջ 2) :

Ժողովրդային այս հանդանակութեան օժանդակութեան իր մեծ բաժինը կը բերէ ձանկի ամիրա Փափաղան: Ան Բերայի Գանձախոյս եւ Աքորտիս թանգարան մէջ ի վերջոյ կարելի կը գարձնէ հաստատու-

մը Ս. Հովիտիմեանց (որ անուած է մինչեւ 1866 թուականը) եւ Ս. Գալեանեանց ազգիանց վարժարաններուն (որ անուած է մինչեւ 1848 թուականը) - (տես «Ընդարձակ Օրացոյց Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի» 1901 էջ 193 Հրմուզ Առատուրի յօդուածը) :

Ս. Երրորդութիւն եկեղեցիին դպրոցը էջը բաւեր պոց համար եւ որդէպի կարելի ըլլալ մանչերու կըթութեան կարիքները լրացնել, կը ձեռնարկուի շինել Ս. Էջմիածին դպրոցը (որ անուած է մինչեւ 1866 թուականը), որուն դաստիարակ կ'ըլլայ Տիրացու Մազբէի Տ. Չաքարեան: (տես Մարտիրոս Հանգսեանի «Հարիւր քան է հինգամեայ Յորեկան Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ» էջ 27) :

Այսպէսով, Բերան կ'ունենար չորս դպրոցներ, երկու մանչերու եւ երկու ազգիակներու համար: Սակայն կարելի չեղաւ ստուգել թէ՛ արդեօք ազգիանց սահմանորոշութեանց դպրոցը իր գոյութիւնը պահած էր մինչեւ այդ թուականը:

Աշակերտութեան թիւը հետզհետէ կ'առատարանար եւ ստիկ պատճառ կ'ըլլար նոր դպրոցներ բանալու անհրաժեշտ պահանջին: Դպրոցներու շէնքեր նորոգելու խնդրին վերաբերմամբ, Բ. Քէչեան իր «Պատմ. Ս. Փ. Հիւանդանոցի Հայոց Ի Կ. Պ.» մէջ կը յիշէ Բերայի Չուզուր թողի մանչերու եւ ազգիակներու դպրոցը նորոգութիւնը 1832-ին (տես էջ 3), որոնց հիմնարկութեան եւ դործունէութեան մասին սեւէ սեղեկութիւն չգտանք յենթացու մեր պրպտումներուն:

Ա. Այգոյճեան Չուզուր թաղի սոյն դպրոցներու մասին հարց կուտայ թէ «արդեօք Տօլալ-Տէրէքն է. Տօլալ-Տէրէքի արդի վարժարանը 1857-ին շինուած է. թէ՛ եւ չկայ յիշատակութիւն մը սր ստիկ սառջ վարժարանի մը գոյութիւնը ցոյց տալ» (տես «Բիւզանդիոն» թիւ 2161 25 Հոկտ. 1903) :

Ենթադրութիւններ ընէլ չենք կրնաք, երբ կը պահելի պատմական տուեաններ: Մենք միայն կրնանք հաստատ ստ բանին, որ 1832 թուականէն սուսջ ուղ դպրոցները գոյութիւն պէտք են ունեցած ըլլալ, ինչ-

պէս որ Քէշեան կը լինէ անոնց նորոգութեան թուականը, որ վաւերական գրաստ մըն է:

Տօրադ-Տէրէի մէջ, Տօքթ. Տաղաւարեան (Սիւսի կ'անուանէր) կ'ըսէ, թէ 1857-ին կառուցուած է Արշակունիաց երկսես վարժարանը: (տես «Արեւիկ» թիւ 3814 Սեպտ. 21-3 Հոկտ. 1898):

Այս դպրոցին վերաբերմամբ միայն Կ. Պոլսոյ դպրոցական ցուցակներ ունին, որոնց մէջ 1876-էն մինչև 1900 թուականը մեզի ցոյց կուտան անոր աւելորաներու թիւը, զոր պիտի տանք այս գլուխին վերջաւորութեան մանրամասնութիւններով:

Պէօլիքաթէի մէջ ալ 1848-ին հիմնուած է Հոսիսիմեանց վարժ. (տես «Արեւիկ» թիւ 3814 Սեպտ. 21-3 Հոկտ. 1898):

Այս դպրոցը, համաձայն մեր ձեռք ունեցած Կ. Պոլսոյ վարժարաններու կարգ մը ցուցակներուն, ունեցած է ժողովն գործունէութիւն, սակայն արժանաւոր մտպին զբաւոր ոչինչ գտանք իբրև տեղեկութիւն:

Փէրի դիւղի մէջ յիշուած է թէ, 1849-ին կառուցուած է Ս. Մեսրոպեան երկսես դպրոցը (տես «Արեւիկ» թիւ 3814 Սեպտ. 21-3 Հոկտ. 1898 Տօքթ. Յ. Տաղաւարեանին յօդուածը):

Համաձայն մեր ձեռք ունեցած Կ. Պոլսոյ թաղային վարժարաններու ցանկին, այս վարժարանը թէև խեղճ փիճակ մը ունեցած է եւ շատ քիչ աշակերտութիւն, բայց իր գոյութիւնը պահած է մինչև 1900 թուականը:

Այս պարսիկ շէրումէն ետք, կը շարունակենք դրել Բերայի ազգային վարժարաններու շարքը:

1851-ին Բերայի վերոյիշեալ չորս վարժարաններուն վրայ կ'աւելնայ նաև Երեւեան վարժարանը: Հետզհետէ դպրոցները կը սկսին նեղ դալ հասնող սերունդներուն: Թաղական խորհուրդը ուսանողութեան գոհացում ապու հարկադիր բլլարով, 1860 թուականին նիստեր կը դումարէ յաճում ապու համար օրէ օր յարուցուող կրթական պահանջներուն:

Երկար խորհրդակցութիւններէ ետք, որչաւ

կը արուի նոր դպրոցներ շինելու, գոյութիւն ունեցող դպրոցներու մէջ զսարժաններ աւելցնելու եւ վարժարանները բնթարձակելու:

Սուրբէն գործի անցնելով, Հետզհետէ կը դարձան դրուին թաղային խորհուրդի որոշումներ եւ 1861-ին ալ Տիրացու Յովհաննէսին 100 դր. ամսական յատկացելով, անոր պաշտօն կը տրուի վարժարանութիւնը:

1865-ին մեծ գլուխային եւ 1870-ի Մախախ մեծ հրդեհէն ետք, թաղ. խորհուրդը Երեւեան, Ս. Էջմիածին եւ Ս. Հոսիսիմեանց վարժարանները այրած բլլարուն, անոնց աշակերտները կը համախմբուին Բան կաթիլի գերեզմանատան մէջ կառուցուած (1865-ի) խոր վերայ վարժարանի եկեղեցիին մէջ, ուր կը շարունակուին դաստիարակութիւնները:

1886-ին կը ձեռնարկուի ազնիւներու արհեստանոցի մը կառուցումին, նախկին Երեւեան դպրոցի շէնքին տեղը: Ժամանակ մը ետք անոր կը միանայ Ուսումնարանի մը ու սխուճատե կը վերածուի Ուսումնարանի - արհեստանոցի 1887 թուականին:

1900 Մարտ 12-ին, սոյն Ուսումնարանի - արհեստանոցին մէջ կ'սկսին կիրակնօրեայ մանկավարժական դաստիարակութիւններ, ուր կը դաստիարակէ Տօքթ. Վահրամ Թորոզմեան, Ռեթէոս Պէրպէրեան, Մինաս Թախան եւ ալ ծանօթ մանկավարժ գրաստարակներ: (տես «Արեւիկ» Փետր. 28-12 Մարտ 1900):

Այս Ուսումնարան-արհեստանոցը քանիցս նորագույնեան ենթարկուած է եւ իր գոյութիւնը պահած է մինչև 1906 թուականը:

1893 Սեպտ. 20-ին Յովհաննէս եւ Մկրտիչ Էսսեան եղբայրները, 1891-ին Պէյօղլուի թաղ. խորհուրդի որոշումին համաձայն, իրենց բարերար գերեզ կը կառուին հիմնելով իրենց ծախարով Էսսեան վարժարանը, որուն շինութիւնը կ'աւարտի 1895 Սեպտ. 13-ին:

Այս կրթական հաստատութեան շինութեան թուականէն մինչև 1900 թուականը, Յակոբ Երկոզասեան (1895-1897) եւ Մարկոս Եսսեան (1898-1900) կը

վարեն վարժարանին անօրէնի պաշտօնը: (տես «Էստ-
հան վարժարանի Զինամեայ պատմութիւն» Ա. յո-
ւելում էջ 14):

Էստհան վարժարանը ունէր մտնչերու եւ սղջկանց
առանձին բաժիններ: Այս հոյակերտ ժամանակն զպրոց-
ցը կը գտնուէր Բերայի հասցի կարեւոր կրթական օժա-
րը:

Նաալը-գարուի զպրոցչի նութեան վերաբեր-
մամբ գարձեալ ուղեկիժ կ'ունենանք Ա. Ալպոյաճ-
եանի «Բիւզանդիոն»-ի մէջ եւ Տոքթ. Յ. Տաղաւար-
եանի (Սկսնակ Բանասէր) «Արեւելք»-ի մէջ հրատա-
րակուած յօդուածաւարքերը, որոնց համաձայն, Նաա-
լը-գարուի մէջ առաջին անգամ 1847-1849 թուական-
ներուն զպրոցչի նուած ըլլալը կը հաստատեն:

Ա. Ալպոյաճեան չի յիշեր զպրոցչին անունը, մի-
այն անոր հիմնադրութեան թուական կը զնէ 1847: Ան
իրբու երկսեսն վարժարան կը յիշէ, շինուած Յովհաննէս
Տառեանի կողմէ (տես «Բիւզանդիոն» թիւ 2161
25 Հսկա. 1903), մինչդեռ Սկսնակ Բանասէր երկու
զպրոցչներուն անունները կը յիշէ, մին Պորէնեան իսկ
միւսը Վառլապեան, շինուած 1849 թուականին:

Այս երկու ազբիւրները թէ թուականով եւ թէ
տեղեկագրութեամբ իրարմէ կը խառտրին: Բայց գար-
ձեանիւն այն է որ, Ա. Ալպոյաճեանի ուշագրութեանէն
մերպսձ է 1824 Յուլիս 10 թուականի կարապետ Պա-
լաթցի պատրիարքին շրջաբերական կոնդակը, որմէ
նայն թնքն օգտուած է եւ որուն մէջ, Նաալը գարուի
մէջ 1824 թուականէն առաջ զպրոցչի մը յիշատակու-
թիւնը կ'ըլլայ: Հետեալորք, հիմնուելով այս շրջա-
բերական - կոնդակին մէջ յիշուած զպրոցչներու գո-
յութեան, կը կարծենք թէ Նաալը-գարուի զպրոցը
չինուած ըլլայ 1806-7 տարիներու ընթացքին:

Մեր այս կարծիքին անուամբ ստուղն է Ս. Յով-
հանէս Աւետարանիչ եկեղեցւոյ կառուցման թուա-
կանը, որ է 1807, որ կը գտնենք նաեւ Հիւանդանոցը
(տես «Ընդարձակ Օրացոյց Ս. Փ. Աղզ. Հիւանդա-
նոցի» 1900 էջ 59) եւ շատ հաւանական է որ յիշուալ
զպրոցն ալ շինուած ըլլայ այդ թուականներուն:

Ձեռք ունենալով 1859ի Տոքթ. Բարունակ պէյ
Ֆէրուհիանի զպրոցական վիճակագրութիւնը, անոր
մէջ Նաալը-գարուի մէջ երկսեսն վարժարան չենք
գտնել: Այդ եւ յաջորդ թուականներուն, մինչեւ
1875, Պորէնեան եւ թէ Վառլապեան անձատ զպրոց-
չներ էին, սակայն 1876էն ետք յաջորդական վիճակա-
գրութիւններու համաձայն Պորէնեան - Վառլապեան
զպրոցչները իրբու երկսեսն կը ներկայացուին մինչեւ
1900 թուականը:

Այս վարժարաններուն կրթական մակարդակը
նախակրթարանէն անդին չէ անցած: Աւելի բարձր ու-
սում առնել ուզողներ մտակալ բարձր մակարդակի
վարժարաններ կը յաճատէին, առաջին հերթին Սամա-
թիոյ վարժարանը:

Գարակէօմբիւքի թաղն ալ, ինչպէս գրած էինք,
ունեցած է իր զպրոցը հաստատելով 1808էն 1809 թուա-
կանին: Ասիկա կ'ընենք հիմնուելով կարապետ Պալաթ-
ցի պատրիարքի վերոյիշեալ շրջաբերական-կոն-
դակին վրայ, որմէ կը տեղեկանանք, թէ 1824 թուա-
կանէն առաջ արդէն գոյութիւն ունեցած է զպրոց մը,
սակայն սեւէ թուական չէ յիշուած:

Բայց, արուած ըլլալով որ Բերայի Ս. Երբրդու-
թիւն եկեղեցիի կից Գէորգ ամիրա Չէրէզեանի կող-
մէ շինուած զպրոցը 1810 Ապրիլին թաղային հոյե-
հին հրոյ ճարակ կ'ըլլայ եկեղեցիին հետ, զպրոցին
մէջ իրբու ուսուցիչ պաշտօնավարող մանկայարձ
Նաալը անգործ մնացած ըլլալով Գարակէօմբիւք
կ'երթար ուսուցչական պաշտօն ստանձնելու համար:
Այս կ'արարցուցանէ թէ պէտք է հոն գոյութիւն ու-
նեցած ըլլար զպրոց մը 1810 թուականէն առաջ: Իսկ
եթէ գոյութիւն չէ ունեցած, շատ որոշ է թէ այս
մանկավարժ ուսուցիչը Գարակէօմբիւք պացած էր
զպրոց մը հաստատելու համար:

Ահա թէ ինչոր համար 1809-ին կամ 1810-ին Գա-
րակէօմբիւքի մէջ կը կարծենք գոյութիւն ունեցած
ըլլայ զպրոց մը:

Համաձայն Մեկրոն-Աստուրի տեղեկագրու-
թեան «1828-ին, Շամտանձեան Ամիրայ, եռնդուե

Տէր Մելքոնեան Տ. Պալատարան միայն եկեղեցւոյ շինութեան նման դժուարին գործին թիւ ու թիկունք բլլալով չի բուսահանանար: Այնինչ եկեղեցին լրացած, Ամիրան, իբ Պալա օղլու փողոցի բնակարանի տունը սիրալոթար կը նուիրէ Ազգին, եւ փոքր ենչ փոփոխութիւնով, կը վերածէ ազգեանց վարժարանի, յոր ջորջեւով գրան «Ս. Հռիփսիմեանց վարժարան», մտնչերու Ս. Թաղէոս եւ Բարդղիմէոս զպրցը, եւ Սոյմթոմբուքի Ս. Ոսկեանց վարժարանը գոյութիւն ունէին արդէն» (տես «Երեքըսերեան պատմութիւն Պարթու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ 1627-1931» էջ 145 - բնագծ. մերն են Յ. Տ. Պ.):

Վերսիւնով ասոցերը կը հաստատեն Ս. Ոսկեանց վարժարանին գոյութիւնը այս թաղին մէջ 1828 թուականն առաջ, սակայն չենք գիտեր թէ նոյն զպրցն էր 1809-1810 թուականներուն հաստատուած թէ ուրիշ մը:

Ս. Ալպոյսճեան («Բիւզանդիան» թիւ 2160 24 Հոկտ. 1903) եւ Տոքթ. Տաղաւարեան («Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21-3 Հոկտ. 1898) նոյն անունով վարժարանի մը հիմնադրութիւնը կը գնեն 1825 թուականին:

Այս զպրցին համար գործարան նուիրատուութիւններ կատարուած են եւ հաւաքուած գումարը յատկացուած է վարժարանին պէտքերուն, սակայն հաւառակ այսքան ճիշդերուն, այս վարժարանը համեան վիճակի մէջ մնացած է եւ անչառ գործունէութիւն ցուցարբեած է թաղին մէջ:

1825 թուականն մինչեւ 1880 թուականը Գարսի կէտրիւքի մէջ զպրցական խնդիրներու վերաբերմամբ նիւթեր չկան:

Միայն 1846 թուականին է որ Սոյմթոմբուք թաղին մէջ, որ մտն է Գարսի կէտրիւքին, ունեցած է իբ զպրցը Թաղէոս Բարժողիմէոսեան անունով (տես «Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21-3 Հոկտ. 1898), բայց չենք գիտեր թէ մակարդակով ինչպիսի զպրց մը եղած է:

1880 թուականին այս երկու վարժարանները միա-

ցած են, որովհետեւ երկու թաղերը միացած են իրարու:

Այս միացեալ վարժարանը հրգեհի գահ կ'ընթաց 1900-ական թուականներուն եւ չենք գիտեր թէ այդ թուականէն ետք այս միացեալ թաղին մէջ զպրցական սեւէ ձեւնարկութիւն կատարուած է:

Տուեալները կը պակսին մեզի գիտնալու համար, որ վարժարանները որքան աշակերտներ ունէին եւ որքան ուսուցիչներ: Յամենայն զէպս, երեսոյթէն զատելով, մենք այնքան մեծ կրթական շարժում չենք տեսներ այդ թաղին մէջ:

էյուպի վարի թաղն ալ, ինչպէս գրեցինք իր ակդին, ունեցած է իբ զպրցը 1812-ին վարաւչէն մատուտն մտա, որ չինել տուած է Տ. Գանիէլ քահանայ (հաւելչիք Եղիայի որդին): Տիրացու Մարտիրոս ստանձնած է այդ զպրցին զպարպետութիւնը, Սակիւն աղայի Միւթէյէլ լրութեան ասկի: (տես «Նոր Լուր» 1931 Յունիս 25 - Յակոբ վարժապետանի յօդուածը):

Աշակերտութեան թիւը բազմաւորով, նոր զպրցի մը անհրժեշտութիւնը կ'զգացուի: Հետեւաբար, թաղեցիներ Պէզզեան ամիրայի հետ գործակցելով, ժամանակ մը ետք (1832-ին) կը յաջողին հիմնել վերի թաղի կամ Սէրվիլէր Մահալլէի մէջ Պէզզեան վարժարանը (տես «Բիւզանդիան» թիւ 2160 24 Հոկտ. 1903):

Համաձայն Տոքթ. Տաղաւարեանին, 1842-ին էյուպի վարի թաղին մէջ կը կ'ուսուցուի Առաքելեան վարժարանը (տես «Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21-3 Հոկտ. 1898):

Այս թաղին վարժարաններուն մասին սակայն սեւէ յիշատակութիւն չենք գտներ Տոքթ. Բարունակ պէչ Տէրուհեանի 1859 թուականին զպրցական վիճակագրութեան մէջ, ինչ որ գործանալի կը թուի մեզի: Եկատելու ենք որ վերջինիս զպրցական վիճակագրութիւնը պաշտօնական վաւերագիր մըն է:

Ս. Ալպոյսճեան եւ ծնօթ չէ այս զպրցին: Ան ուսուց յիշելու զպրցին անունը, ազգանց յատուկ

Վարժարանի մը յիշատակութիւնը կ'ընէ 1866-ին նոյն թաղին մէջ (տես «Բիւզանդիոն» թիւ 2206 18 Դեկտ. 1903) :

Առաքելեան նախակրթարան՝ վարժարանին վերաբնիմամբ, Յակոբ Վարժարանեան 1880ական թուականներուն 22 աշակերտներ ունեցած ըլլաւը կը վստահ (տես «Նոր Լուր» 1931 Յունիս 25) : Ասոր հետ մէկ տեղ կը յիշէ նոյն թուականին ազգականը վարժարան մը Արաքսեան անունով, որ ունեցած է ըստ իրեն 18 աշակերտուհիներ (տես նոյն) :

Այս երկու վարժարանները կը միանան Առաքելեան - Արաքսեան անունով 1889 թուականին : Համաձայն Յակոբ Վարժարանեանի, սոյն միացեալ վարժարանին ազոց թիւը եղած է 22 եւ ազգականը 8, այսինքն՝ բնագմէնը 30 աշակերտներ : Այս դպրոցները, ըլլալ Պէդգեան թէ Առաքելեան - Արաքսեան, իրենց դրսեւորութիւնը կրցած են պահել մինչեւ 1890ական թուականները :

Գարթալ թաղին մէջ, ըստ Կարապետ Պալաթցի պատրիարքի վերոյիշեալ շրջաբերական - կոնդուկին, 1824 թուականէն առաջ արդէն գոյութիւն ունեցած է դպրոց մը :

Ա. Ալոյոյաճեան մեղի կը տեղեկացնէ թէ՛ 1812-ին այս թաղին մէջ Յովհաննէս Չէլչպի Տիպի առաջարկով, Պէդգեան Յարութիւն մտերա դպրոց մը շինած է (տես «Բիւզանդիոն» թիւ 2160 24 Հոկտ. 1903) :

Բ. Բէշեան եւս կը հաստատէ 1832-ին Գարթալի մէջ դպրոցի մը գոյութիւնը, որ Տոքթ. Բարունակ Ֆէրուհիանի 1859 թուականին պտտրասած դպրոցական վիճակագրին մէջ յիշուած է, առանց նշուելու անոր աշակերտութեան թիւը եւ ծախքերը (տես «Պատմութիւն Ս. Փ. Հիանդանոցին հայոց ի Կ. Պ.» էջ 127) :

նշանակած է 500: (տես նոյն, էջ 16):

Ասիկա դատ ֆրանչիսկեաններ կու ունէին դպրոց-
ներ, որոնց մասին Սմբատ Դաւիթեան 400 աշակերտ-
ներ ունենալը կը նշէ:

Մարաշցիներ չեն բուսակոնացած Հայ սոցոց կը-
թութիւն ասլուլ միայն, այլ Հեռաժուռ եղած են ադ-
ջիկներու ալ դարգացումին:

Առաջին անգամ Մարաշ եկած է Կ. Պոլսէն Աս-
րատ Եղութեան քոյրերէն՝ թագուհի մայրապետը,
Պետրոս Արէլեան Կերթապոյձաւի առաջնորդութեան
օրով եւ ան իր շուրջ Հաւաքելով տեղացի օղնականներ,
կը ձեռնարկէ աղջկանց կրթական գործը:

Ասոր ժամանակէն ետք, Մարաշ կը Հասնին նաեւ
Կ. Պոլսէն Անարատ Եղութեան քոյրերէն ուրիշ մալ-
րապետներ, Երմանէ եւ Իսկուհի անուծով, որոնք ու-
րիշ օղնական ուժերու օժանդակութեամբ, աղջկանց
կը սորվեցնեն աշխարհագրութիւն, թուարանութիւն
եւ այլ գիտելիքներ, Հայերէն եւ թրքերէն լեզուե-
րէն դատ:

Մայրապետներու կատարած գործերուն աննշու-
թեամբ, ինչպէս ահաբակցիւնք վերք, կենսագրերնք
անբաւարար ծանօթութիւններ տալով, ինչպէս նաեւ
ստորոշ ու թեքի տեղեկագրութիւններ, չեն գտնացնել
ուսումնասիրողին Հաւաքբոլորութիւնը:

Աչքի առջև ունենալով մայրապետներու վերա-

բերող տեղեկագրութիւնները, յատկապէս Վարդապետ մը
չկրցանք կազմել անոնց կրթական գործունէութեան
մասին, չկրցանք ստուգել, թէ ախրնչ մայրապետը
սորապէս ե՞րբ գոյրոց բացած է եւ սովերը եղած են
անոր գործակիցները:

1897-ին դարձեալ Կ. Պոլսէն Մարաշ կուգայ
Անարատ Եղութեան քոյրերէն՝ Թոզա մայրապետը,
որ մալաշցի քոյր Երարիտի քէչէկեանի, կարնեցի
քոյր Թէրէզա Եովհաննէսեանի գործակցութեամբ
կանոնաւոր աղջկանց վարժարան մը կը բանայ: (տես
նոյն, էջ 38):

Այնթապի մէջ կաթուղի գործունէութիւնը 1880-
ական թուականներուն սկսած է: Այդ թուականներուն
Հալկաթուղիներու Հողեւոր Հովիւը եղած էր Հր-
Բերթոբէ Վրդ- Տէր Պետրոսեան, որ երկար ատեն
վարած է տեղւոյն Հալկաթուղիներու առաջնորդու-
թեան պաշտօնը: (տես Կեդրոյ Ա. Մարաշեանի «Պատ-
մութիւն Անթիպի Հայոց» Ա. Հատոր, էջ 569):

Հալկաթուղիներ թէեւ Առաջնորդական աթոռ
ունէին Այնթապի մէջ, սակայն դպրոց չունէին, այլ
Ֆրանչիսկեաններ փոքր դպրոց մը Հաստատած են
1883-ին, ուր Ֆրանչիսկեան կրօնաւորներ Ֆրանսերէն
կըթութիւն կուսալին տեղւոյն Հայ թէ ալլազգի
սոցոց:

Հալկաթուղիներ նախաձեռնող իր կ'ըլլան Հայե-
րէն լեզուի ուսուցման եւ սոյն դպրոցի տեսչութիւնը
իրենց ձեռք կ'առնեն, շորհուր Հր. Բերթոբէ Տէր
Պետրոսեանի եւ Ֆրանսերէնի ճեռ Հասերէն լեզուի
գաւառանդութիւնը պարտաւոր կը դարձնեն 1886էն
սկսեալ վարժարանին մէջ: Յաւալին այն է որ, տեղե-
կութիւններ կը պահուին այս վարժարանին գոյատե-
ման ու գործունէութեան մասին:

Մարաթիոյ մէջ Հալկաթուղիներու գործունէու-
թիւնը ահար եղած է: Անոնք Ս. Երբրդութիւն Թա-
ղին մէջ փոքրիկ դպրոց մը պահած են, ուր Հարիւրա-
ւոր աղտ կըթութիւն կուսալին 1880ական թուական-
ներուն: Այս դպրոցին մէջ ուսուցչական պաշտօնին
կուսած էին Եարութիւն Ճրճրեան եւ Լոյկիկ:

Կոտայեցիներն:

Ասանք ուսումնական ծրագիրը չեն ունեցած, այլ՝ պատահական դասախոսութիւններով աշակերտութեան կը սորվեցնէին Հայերէն, թրքերէն եւ ֆրանսերէն լեզուները: (տես Արեւելեան Մամուլը-Կիւսամասէյ - թիւ 9, 1 Մայիս 1898, էջ 354):

Աղջիկներու կրթութեան նկատմամբ, թէ՛ Հայ կաթողիկոսներ եւ թէ՛ ֆրանսիականներ անջատ վարժարաններ ունեցած են:

Համաձայն տեղեկագրութեան մը, միերոյիւհալ դպրոցներէն՝ զատ, Հայկաթողիկոսներու եկեղեցիէն դիմաց (որուն անունը չէ տրուած) աղջկանց Համար դպրոց մը կը գտնուէր, գեանալարի տեղ մը, ուր 1898-ին 50 աշակերտուհիներ կը դաստիարակուէին Մարտիրոս Սաչալեանի կողմէ, Հայերէն, թրքերէն եւ այլ գիտելիքներ: (տես նոյն):

Հաճրի Հայկաթողիկոսներ 1892-ին կը հիմեն 2 չէնքեր, շնորհիւ Ատանայի առաջնորդ (յետոյ կաթողիկոս) Թէրզեան Գեորգիոսի քանքարով:

Այս չէնքերուն ճարտարապետը եղած էր Հաճրցի Թորոս վարդապետ Պապաշէքեան: (տես Յ. Պ. Պօղոսեանի «Հաճրի Բնդհանուր Պատմութիւնը եւ շրջակայ Գօգան-Տաղի Հայ գիւղերը» էջ 471):

Այս չէնքերը երբ յարկանի էին, որուն մէկը կը յատկացուի Հայրապետանոցին եւ մանչերու դպրոցին, որ կ'անուանուի Աղարեան վարժարան, իսկ երկրորդը կը տրամադրուի Մարտիրոսեանոցին եւ Առաքատ Յղութեան քոյրերու աղջկանց վարժարանին:

Աղարեան վարժարանը ունէր երեք դասարաններ եւ մօտ 25-30 աշակերտներ: Այս վարժարանին մէջ իրելու ուսուցիչ կը պատճառավորէին Նաղարէթ Թէրզեան, Արխանդոմ Կաճեան եւ երկու Հաճրցի օգնական ուսուցիչներ, որոնց անունները մեկի անձամօք կը ծանօն:

Իսկ ինչ կը մերարբերի Առաքատ Յղութեան քոյրերու աղջկանց վարժարանին, ան կը բողոքաբան մանկապարտէզէ, տարբարաններ, քարճագոյն դասարաններէ:

Բարձրագոյն կարգերու բաժինը բաժնուած էր երկու մասերու եւ իւրաքանչիւր բաժին ունէր երեք դասարաններ:

Հոս յաճախող աշակերտուհիներուն թիւը 100-150 հոգի կը հաշուուէր, սակայն եւ այնպէս աւելցնենք որ, աշակերտութիւնը բոլորովին Հայկաթողիկոսներու գաւակներ չէին, այլ կային Հայ-առաքելականներու գաւակներ, թուրքեր եւ այլազգիներ: (տես նոյն, էջ 16):

Զէյթուն որ Հայկական կարևոր շրջան մըն էր, չենք կարծեր թէ հոն եւս Հայկաթողիկոսներ գործունէութիւն չեն ունեցած: Բայց յընթաց մեր սրբատուներուն, չհանցիակցանք անոնց կրթական սեւէ յարկի մը գոյութիւնը նոյն տեղեկագրութեան մը:

Ատանայի մէջ առաջին անգամ ժէզուիդ կրօնաւորներ են, որոնք Հիմը դբած են կաթողիկ դպրոցի մը 1883 թուականին Անի Փայ անուամբ, որ մասնաւոր յատուկ էր:

Այս դպրոցը կարճ ժամանակամիջոցի մը մէջ, իր կրթական վարչուն գործունէութեամբ կ'ունենայ բազմաթիւ աշակերտներ եւ այդ պատճառաւ դպրոցը նեղ զարով, ժէզուիդներ կ'ընդարձակեն վարժարանին չէնքը եւ շրջակայ բողոքներէն եկող աշակերտներուն Համար կը չինեն նաեւ գիշերօթիկի բաժին մը: (տես Բեռլինի Եղիսեանի «Ատանայի Պատմութիւնը» էջ 664):

1896-թուականին, ֆրանսացի սէօրեր, Հեանե-րով ժէզուիդներու գործելակերպին, իրենց եւս նախաձեռնարկ կ'ըլլան Ատանայի մէջ դպրոց մը բանալու, տեղւոյն աղջկանց կրթութիւն ապուլու Համար:

Համաձայն Բ. Եղիսեանի, այս լատին վարժարաններու առնթեր հայկաթողիկոսներ ունեցած են իրենց վարժարանները մասնաւոր եւ աղջիկներու Համար, որոնց անունը չէ տրուած ու ոչ այ հիմնարկութեան թուականը:

Պատմական տուեալներ կը պակսին ստուգելու Համար թէ՛ այդ Հայկաթողիկ վարժարանները ո՞ր թուականին եւ որքա՞ն կողմէ Հիմնուած են:

Մեր պրպատմներուն բնթացքին փառնակ Իսկէն-
տէրեան ստորագրութեամբ («Բիւզանդիոն» թիւ 5252
1914 Յունուար 17-30) տեղեկագրութեան մէջ կը կար-
դանք, թէ հարկաւորութիւններ տուց համար ձերեւակա-
զարաց ունեցած են Ս. Լուսուորիչ անունով, սակայն
չենք գտներ անոր ոչ հիմարկութեան թուականը եւ ոչ
ալ աշակերտութեան թիւը:

Աւերթայի մէջ հարկաւորութիւն առաջին գարացը
բացուած է 1861 թուականին Հր. Միքայէլ Վրդ. Ար-
բաշատեանի փոքրբաւ: Բայց անկէ առաջ հոն եկած
են անհասարակէս կրթական շարժման իրենց նպաստը
բերելու 1758-ին Հր. Գուկաս Վրդ., Վենետիկեան
Միտիթերեան Միքայէլեաններն, 1841-ին Հր. Գրիգոր
Վրդ. Զարեֆեան, 1849-ին Հր. Յովհ. Վրդ. Քիւ-
փէլեան, 1854-ին Հր. Նարեկ Վրդ. Պաղայեան:

Հր. Միքայէլ Վրդ. Արբաշատեանի հիմնած դար-
ացին կուսան իրենց կրթական նպատար բերելու 1865-
ին Հր. Պողոս Վրդ. Մապրազեան, 1868-ին Հր. Բար-
սեղ Վրդ. Աղաճեան, իսկ 1873-ին Հր. Վասիլ Վրդ.,
որուն գործունէութիւնը կը տեսէ մինչեւ 1895 թուա-
կանը, տեսուր ղէպերու հետեւանքով: (տես Արամ
Մահալեանի «Դիւցազնական Աւերթայ եւ իր հարցը-
նեք» էջ 310):

1899 թուականին գարացական միճակագրութեան
մը համաձայն, հարկաւորութիւններու տուց աղ գարացը
ունեցած է 38 աշակերտներ: (տես «Արեւիք» թիւ
3998 13-25 Ապրիլ 1899):

Անորաւ Յուսեփեան բոյբերն ալ իրենց բնզուն
գործունէութեամբ վարչուն եղած են Աւերթայի մէջ,
կոր 1865-ին Հր. Աղաճեան վրդ. ի օժանդակութեամբ
կը հիմնեն գիշերօթիկ մարժարանը:

Ըստ Արամ Մահալեանի, Աւերթայ եկող վերոյիշ-
եալ մարդապետներու մեծագոյն մասը եկած են Զմեմ-
սի հարկաւորութիւն Անտանեան միտարանութեան մասնէն:
(տես նոյն, էջ 311):

Ըստ լաւ պիտի բլլար եթէ աւելի մանրամասնու-
թիւններ ունենայինք, լրիւ փիլոսոփ աղ կարենալու
համար հարկաւորութիւն գարացներու գործունէութիւնը:

Կարենը որ կաթնօրիկ փրփականաին օրբորը Էրած
է հին թուականներէն եւ հարկաւորութիւնը կարպեր ու-
նեցած են այդ քաղաքին իրենց դասանակիցներուն
հետ, չենք գտներ դպրոցական սեւէ տեղեկագրու-
թիւն բացի հետեւեալէն (տես «Բազմալէզ» 1902,
էջ 174-180) որուն մէջ գրուած տեղեկագրութեան
կը գտնանք թէ՛ Տ. Ստեփան Եպ. Միլլիթեղեան բա-
ցած է երկուս վարժարան մը, որուն ոչ անունը եւ ոչ
ալ հիմարկութեան թուականը կուտայ: Եւ այս պա-
րագան քանի մը առիթներով շեշտեցինք, ինչ որ ցա-
րայի է եւ հիմարու սխալն է, որ ընդունած են հրատա-
րայիլ պակաս կամ կիսակատար նման տեղեկագրու-
թիւններ, որոնք նպատակի չեն ծառայեր:

Վանի մէջ 1896-ին Անտոն Յուսեփեան բոյբերու
միտարանութիւնը տեսուր ղէպերէն աղէտալ հար-
կու օրնութեան համար, կը մտածեն հարկաւորութիւն
ընկերուն համար գարաց մը բանալ, իսկ Վենետիկի
Միտիթերեան վարդապետներ՝ Հր. Անտոն Վրդ. ձմա-
տանի բաջալերութեամբ, կուսան Վան իրենց գարացը
հիմնելու համար, սակայն տեղույն պայմաններ
անպատաւ ըլլալուն ու հարատաք լսողներու հակադի-
րնթացքը իրենց հանգէպ, արդէք կը հանդիսանան
իրենց գործին:

Նոյնիսկ Հր. Անտոն ձմառեան, որ եկած էր հար-
կաւորութիւն փոքրաթիւ համայնքին առաջնորդական փո-
խանորդի պաշտօնով, այս պայմաններու տակ, մի
քանի տարի հաջի մտալ ետք, առանց իր սեղ ուրբի
մը նոյն պաշտօնի կոչելու, կը հեռանայ Վանէն:
(տես Համբարձում Երամեանի «Վան-Վասպուրական»
Ա. հատոր, էջ 448):

Այս ընդհանուր ուրուագիծը տայլ ետք, մենք,
եթէ ոչ լրիւ, սակայն ըստ բաւականին կարողացանք
մեծ գծուարութիւններ լաք, ներկայացնել հարկա-
ւորութիւններու կրթական գործունէութեան պատկերը,
Կ. Պոլսոյ եւ գաւառներու մէջ, որ կը կարգէ մէկ
մասը թրքահայ կրթական շարժումին:

ՀԱՅ-ՎԱԹՈՒԿ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Կ. ՊՈՒԼԻՍ քաղաք-Ղարթբլաթ թաղ. Ս. Փրկիչ
գալրոց 1833.

Մաղեղ Աղաճ փողոց (անուն չկայ) գալր. 1833.

Պէթոզլու թաղ (անուն չկայ) գալր. (թուական
անորոշ).

Բերաթ թաղ-Համադըւսիւն գրք. 1849.

Նոյն վայր-Անանիա գալրոց (թուական անորոշ).

Նոյն վայր-Պօղոս-Պեարոս Առաքելոց գրք.

Մէքիկայի փողոցի մէջ 1850 թ. (1856-ին Հրկիւղ
ուած. 1857-ին վերակառուցուած. 1870-ին դարձեալ
Հրկիւղուած).

Ղարթբլաթ թաղ. Հայկազնեան գալրոց 1860.

Բերաթ թաղ. Անարատ Յղութեան գրք. 1844.

Նոյն թաղ. (անուն չկայ) աղջկ. գրք. (Չէօփիկ
Չէլմէ փողոց 1843.

Նոյն վայր. (անուն չկայ) աղջկ. գրք. (Սապըզ
Աղաճ փողոց 1879.

Նոյն վայր. Ս. Աննա աղջկ. գալրոց 1897.

Ստաթբլաթ թաղ. Անարատ Յղութեան Քոյրերու
գրք. 1868.

Գաւրդիւց թաղ. Անարատ. Յղութեան Քոյրե-
րու գրք. 1868.

Իջմիմ քաղաք. (անուն չկայ) գալրոց 1845.

ԱՅՏԸ քաղաք. (անուն չկայ) գալրոց 1856.

ՊԱՐՏԻԶԱԿ քաղաք. (անուն չկայ) մանչերու
գալրոց 1882.

Նոյն վայր. Անարատ Յղութեան Քոյրերու
գրք. 1882.

Պիլէճիկ քաղաք. (անուն չկայ) գալրոց (թուա-
կան չկայ).

Էնկիթիթի քաղաք. Անարատ Յղութեան Քոյր
երու վարժարան (երեք Հաս.) մէկ մանչերու գրք.
(թուականեր անյայտ).

ԱՄԱՍԻԱ քաղաք. (անուն չկայ) գալրոց (թուա-
կան չկայ).

ԹՕԳԱՏ քաղաք. Մխիթարեան մանչերու գրք.

1838.
Նոյն վայր. Մխիթարեան մանչերու գրք. 1855-
ին. 50 աշակերտ.

Նոյն վայր. (անուն չկայ) երկսես գրք. 1875.

Նոյն վայր. Անարատ Յղութեան Քոյրերու գրք.
1887.

ՍԵՒԱՍՏԻԱ քաղաք-Քառասուն Մանկունք Գոլէճ
(լատիններու 1880-81 թթ).

ՏՐԱՊԻԶՈՆ քաղաք. (անուն չկայ) գալրոց

1817-ին կը փակուի 1819-ին.

Նոյն վայր. (անուն չկայ) գալրոց 1847-ին, 100
աշակերտ.

Նոյն վայր. (անուն չկայ) գալրոց 1886-ին 30
աշակերտ.

ԿԵՍԱՐԻԱ քաղաք. (անուն չկայ) գալրոց 1860:
1836-ին կը միաձուլուի ժէզուիզներու գալրոցին
Հեա.

Նոյն վայր. ժէզուիզներու գալրոց 1870.

Նոյն վայր. Սէն-Ժօզէֆ մայրապետ. աղջկ.
գրք. 1870.

Նոյն վայր. Էմմանուէլեան գալրոց (Պէօյիւք
Չէլմէ Էօնիւ թաղ) թուական չկայ.

ԱԿՆ (անուն չկայ) գալրոց (թուական չկայ).
Նոյն վայր. Վանք գիւղի երկսես գալրոց (թուա-
կան չկայ) 30-35 աշակերտ.

Նոյն վայր. Շրգու գիւղի գալրոց (թուական
չկայ).

ՏԻԱՊՈՒՅԻԻՐ քաղաք. (անուն չկայ) գրք. (թուա-
կան չկայ).
ՄԱՐԱՇ քաղաք. (անուն չկայ) գրք. 1860-70ին
500 աշակերտ.

Նոյն վայր. (անուն չկայ) աղջկ. գրք. 1892-ին.

ԱՅՆԻՍՊ քաղաք. Ֆրանչիսկեան գալրոց 1883-ին.

ՄԱՆԱԹԻԱ քաղաք. Ս. Երրորդութիւն թաղի
գալրոց 1880.

Նոյն վայր. (անուն չկայ) աղջկ. գրք. (թուա-
կան չկայ).

Նոյն վայր. Յրան չխեղեան վրժ. (թուական չկայ).
ՀԱՃԼՆ քաղաք. Աղաբեան մանչ. վրժ. 1892ին
25-30 աշակերտ.

Նոյն վայր. Անարատ Եղուիկեան Քոյրերու վրժ.
1892-ին 100-150 աշակերտ.

ԱՏԱԵԱ քաղաք. Սէն Փոյ մանչ. վրժ. 1883.

Նոյն վայր. Սէօրերու վրժ. 1896.

Ս. Լուսաւորչեան դպրոց (թուական չկայ).

ՈՒՐՅԱ քաղաք (անուն չկայ) դպրոց 1861.

Նոյն դպրոցը 1899-ին 38 աշակերտ.

Նոյն վայր. Անարատ Եղուիկեան Քոյրերու վրժ.
1865.

ԿԱՐԻՆ քաղաք. (անուն չկայ) երկսու վրժ.
(թուական չկայ):

ՀԱՅ-ԲՈՂՈՔԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ

ԳՍԱՒԱՐՆԵՐՈՒ ՄԷՋ

Կաթսուիկ բարոյղներ երբ Արեւելքի մէջ իրենց
փրփուկանար կ'ընէին և կը թափան գործունէս-
թեան պիտակի տակ կը ջանային լատինական սր-
ժառանք խորացնել աշխարհի այդ հողամասին վրայ
ու քաղաքականապէս ալ ազդեցութիւն գործել ընդ
ազգայնակէտիկեան վրայ: Անշուշտ թէ Ամերիկայի
Միացեալ Նահանգներու կառավարութիւնն ալ հրա-
պուրուելով կաթսուիկ կղերին դասձ յաջողութիւն-
ներէն, կը միտէր իր կարգին մրցակից գաւառ
անոնց, գործելակերպի նոյն եղանակով, իրենք ևս
կը ձգտին քաղաքականապէս իրենց ազդեցութիւնը
տարածել աշխարհի բերրի այդ գաւառին վրայ: Ուրի-
մն, սուսմ տարածելու պատրուակով առաջին ամ-
երիկացին որ Արեւելք կուգար կը կոչուէր Լ.
Բարբըն, որ իր նախարայէրը սկսաւ առնել ջրիտ-
տանեաներու դիւանար ուխտատեղին՝ Երուսաղէմի
մէջ 1821-ին, ուր մինչև 1824 թուականը իր քար-
ղուիկեամբ կարողացաւ որսալ իրեն հետեւորդներ,
զանազան ազգութիւններ:

Լ. Բարբընի Երուսաղէմի մէջ գասձ յաջողու-
թեան իրախտատուած, Ամերիկայի Միացեալ Նա-
հանգներու կառավարութիւնը անհրաժեշտ միջո-
ցառումներ ձեռք կ'առնէ, որպէսզի բողոքական
միախոնարութեան փրփուկանար զարգանար Երու-
սաղէմէն անդին, ծաւալել Արեւելեան երկիրներու
ժողովուրդներու մէջ ալ, ուր աղքատութիւնը չեղա-
ւած էր, ինչ որ լատագոյն առաղձը կը հանդիսանար
և որմէ կարելի էր օգտուիլ օղնութիւն մասուցա-
նելով ու ձրի կըթութիւն տալով անոնց:

Այս նպատակով, Ամերիկայի Միացեալ Նա-
հանգներու կառավարութիւնը իր քաղաքական նկա-
տումներուն յաջուրդ տալու համար, հարկադրուած
էր նիւթական զոհողութիւններ ընել, հետեւորդնե-
րու զանգուած մը շահելու համար, ինչպէս որ կա-

Թուլի քարոզիչներ արդէն իսկ կը կատարէին:

Հետեւաբար 1810-ին Պորտ Լնդերութիւնը կը կազմուի եւ անոր Յոնա կը արամադրուի, որպէսզի առաջին հերթին կազմակերպուէր այս գործին համար պատրաստուած քարոզիչներ, որոնք զործիչներ պիտի ըլլային նորաարդէն դուրս հանելու համար բողոքականութեան տարածումը:

Այս կարգադրութիւններէն եւ պարաստութիւններէն ետք, 1829-ին Ամերիկայի Միացեալ Նահանգներու Բողոքական Միութեան արտօնութիւնը կ'որոշէ քարոզիչներ զրկել Քուրթիա, մրցելու համար հան գործող կաթոլիկ քարոզիչներու հետ:

Մայիսի մէջ գումարուած միսիոնարական մոզովի մը մէջ, կ'արշաւի թրքազա Վեր. Կուսէլը Քուրթիա զրկել, միանալու համար հայերէն լեզուն լաւ սորված Տուսյուի եւ Սմիթի կտարակելիք գործերուն:

1831-ի Յունիս 9-ին Վեր. Կուսէլ կը հասնի Կ. Պոլիս (տես «Վերջին Լուր» 13 Մարտ 1922- Յ. Գ. Մամբրեանի յօդուածը):

Իրարու միանալով Քուրթիոյ մէջ այս միսիոնարները, ակիւր կը դնեն իրենց գործունէութեան: 1831-ին Վեր. Հ. Տուսյու եւ Տոքթ. Սմիթ առաջին անգամ ըլլալով, ստամբուսիքուտ համար իրենց գործունէութեան դատը, կը շքին Քուրթիոյ քահանայն կողմերը, որպէսզի կարենային զձեռք իրենց աշխատանքին շատակաշինը: (տես Cyrus Hamlin - My life & times missionary in Turkey- էջ 146):

Միսիոնարներ երկու դիմաւոր կէտեր նկատի առած էին, գրաւել հայ կղերը եւ գրաւել հայ գաղթը: Յետագային տանոց վրայ պիտի աւելնար նաեւ երրորդ եւ զորուոր աղգակ մը Bible women առնունքն աակ' հայ քնտանիքը:

Լատին քարոզիչներու գործունէութիւնը շատ դժուարած էր, իսկ հայ-կաթոլիկներ նոյն տարիներուն կը կազմէին իրենց անջատ համայնքը: Բայց եւ յայնչևս բողոքական միսիոնարականներու Կ. Պոլիս մուտքը բնականաբար կը դրդուէր զիրենք, մրցակի-

ցութեան մը հանդիպած ըլլալուն համար:

Իր շրջագայութեան ընթացքին Վեր. Հ. Տուսյու եւ Տոքթ. Սմիթ կարողացան բաւական լաւ ուսումնասիրել Քուրթիոյ մէջ արդող քրիստոնէայ փոքրամասնութիւն կազմող աղտութիւններու համայնքային կեանքը, մտէն ծանօթանալ անոնց ներքին ինդիքներուն եւ ի վերջոյ 1832-ին կը հաստատուին Կ. Պոլիս, որում ըլլալով որ ան մարտնչաբար ըլլալով, շատ մը առանկուութիւններ ունէր երկրին միւս քաղաքներէն եւ ուրիշ իրենք պիտի կարենային հեշտօրէն աւատ ջուր մատակարարել բացուելիք աղտներէն ցամաք հողին մէջ ցանուելիք սերմերուն, որոնք առնելու մը ետք ծիլեր պիտի արձակէին, ծաղկէին եւ ի վերջոյ պաղարկէին:

Լատին կրօնաւարներու պարագային, ինչպէս որ հայ եկեղեցականներէն մի քանին գործիք գարծան ու ծառայեցին անոնց փրոյտականութիւն, նոյնպէս ու Տուսյուի կրօնական եւ կրթական նորոյթներէն հրապարակած, Յովհաննէս Տէր-Սահակեան, Սեյնէքերիմ Տէր-Մինասեան եւ Սարգիս Յովհաննէսեան ուղեկից կը դասնան անոր գործունէութեան: (տես Մարտիրոս Արքեպոս. Օրմանեանի «Աղգադատում» Գ. դրբը, էջ 3721-1960ի տպագր.):

Առաջին հերթին անոնք Կ. Պոլսոյ Բերա թաղին մէջ 1832 Հոկտ.ին կը բնան մանչերու Հայ Սրուլ եւ աղջիկներու դպրոց մը եւ ապա Վոսփօրի վրայ Պէպէք դիւլիսի մէջ ուրիշ դպրոց մըն ալ:

Համաձայն Յ. Գ. Մամբրեանի, Հայ-Աբուլը Կ. Պոլսոյ բողոքական հայոց առաջին դպրոցն էր, ուր արեւելեան եւ արեւմտեան լեզուներ, թուարանութիւն, տոմարակալութիւն, աշխարհադրութիւն, կենդանարանութիւն, բնագիտութիւն, ստղագիտութիւն եւ սաստանարանութիւն կը դասախօսուէին նոր սճով: Այս դպրոցին վերահսկիչ կը կարգուի Տէր-Սահակեան: (տես «Վերջին Լուր» 13 Մարտ 1922):

Բողոքական աղեղեցութիւնը զաւաններու վրայ տարածելու միտքով, Կ. Պոլսոյ մերձա-

կայ շահառան՝ Բզմիր քաղաք կը փոխադրե-
ն Մալթայի մէջ 1822-ին հիմնուած Ամերիկայի
միսիոնարներու տպարանը 1833 Դեկտ.ին, ուր, հա-
մաձայն ծրարքին, պիտի տպուէր զանազան լեզու-
ներով բողոքական փրօփականսին ի նպատա զիբ-
քեր, արեւելեան երկիրներու մէջ ցրուելու համար
գանտքը:

Բզմիր աշխարհադրական զիբքով կարելարա-
զոյն վայրը կը դրուէր, գաւառներու մէջ տարածե-
լու համար բողոքական փրօփականսը, նոյնիսկ
մինչև հետագոյն Անատոլի մէջ:

Եւ իրազէս կարճ ժամանակի ընթացքին, մեծ
արդիւնքներ ցոյց տուաւ տպարանին հրատարակչա-
կան գործունէութիւնը:

Այս տպարանին անօրէնութիւնը վատահուած
էր Վեր. Էնքրի, որ ունէր հայ գործակիցներ իրեն
հետ: Այս հայերը սրտացուած էին Թուրքիոյ մէջ
իրենց ազգակիցներուն մէջ բողոքական միսիոնա-
րութեան փրօփականսը ծաւալելու համար:

Այսքանով շրտահանանալով, Վեր. Էնքր Բզ-
միրի մէջ կը հաստատէ ժողովարան մը 1838-ին,
ուր իրեն գործակից կ'ունենայ հայ եկեղեցիէն հե-
տացոյ Դիսիմիսիոս եպո. Կարապետեան եւ Սարգիս
Յովհաննէսեան:

Մինչ այդ, Վեր. Հ. Տուսյոյ եւ Սենեքերիմ Տէր
Մինասեան Թուրքիոյ զանազան հայաշատ շրջաններ
չըջողայութեան կ'ելլեն, կարենալու համար իրենց
գործակիցներ զանկ զաւանթէն: Եւ իրազէս նի-
կամիդիոյ մէջ Վրթանէս եւ Յարութիւն Չըրթը-
եան քահանաներ, լքելով իրենց եկեղեցին, կը յա-
րին բողոքական միսիոնարներուն:

Հայիս վերջացած էին հայ-կաթոլիկ եւ հայ ա-
ռաբելական վճճերը, ահա այս անգամ կը խմորուէր
հայ-բողոքական եւ հայ-առաքելական խնդիրներ:
Իժգոհութեան հոսանքը օրէ օր կը ծաւալէր մի-
ստակի ազդեցիկ կը դառնար օրուան Պատրիարք
Ստեփաննոս Աղաանիի թոյլ ընթացքին, եւ այս վեր-
ջինը ստիպուած կ'ըլլար հրաժարիլ պատրիարքու-

թենէն, 1839 Մարտ 6-ին քաշուելով Արմաշի վան-
քը:

Ստեփաննոս Աղաանիի կը յաջորդէ Յակոբ Սե-
րբեան (տես «Ազգագրատու» Գ. զիբք, էջ 3722-
1960 ի տպագր.), եւ կառավարութեան մեղադրու-
թեամբ խիտ կերպով հալածանքի կ'ենթարկէ թէ
բողոքական միսիոնարները եւ թէ անոնց յարող հա-
յերը եւ նոյնիսկ անոնցմէ մի քանին կ'աջտորէ
Թուրքիոյ արեւելեան խորագոյն վայրերը:

Այս պայմաններու տակ, բողոքական միսիո-
նարներ կը հարկադրուին կասեցնել իրենց ամբողջ
գործունէութիւնը ու փակել իրենց հաստատած ին-
քայի եւ Պէպէքի վարժարանները, ինչպէս նաեւ
Վեր. Կուսէլի բնակարանին մէջ հաւաքել փրօփա-
կանի զիբքերը, մինչև կացութեան բարելաւումը:

1839 Յուլիս 1-ին, Սուլթան Մահմուտ Բ. կը
վախճանէր եւ իրեն կը յաջորդէր Ապտիւլ Մէճիտ:
Ճիշդ այդ ստեղծներուն կը ծագէր եգիպտական ըմ-
բոստութիւնը եւ Ապտիւլ Մէճիտը կ'ըրազդէր:
Անգլիացիներ այդ ստիթէն օգտուելով, ճըն-
չում կը բանեցնեն Սուլթանին վրայ, ազդարարելով
որ երկու երկիրներու մէջև բարեկամական յարա-
բերութիւններ պահել շարունակելու համար, պէտք
էր եւ կենար բողոքական միսիոնարները հալածե-
լին: (տես Cyrus Hamlin - My life & times missionary in
Turkey- էջ 184):

Միջանկեալ կերպով այստեղ աւելցնենք թէ՛
Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Օսմանեան
Թուրքիոյ միջև այն ժամանակ պիւսանալիտական
յարաբերութիւն չկար եւ այդ էր պատճառը, որ
Թուրքիոյ մէջ Անգլիոյ զեսպանը կը միջամտէր այս
խնդիրին:

Այնուհետեւ կացութիւնը կը բարուքի ի նպատա
բողոքական միսիոնարներուն եւ Սուլթան Մէճիտ
կը հարկադրուի չհալածել զանոնք եւ 1839-ին հրա-
ժամուարով մը թոյլտուութիւն կուտայ անոնց ա-
գասօրէն գործելու Թուրքիոյ մէջ:

Այս պայմաններու տակ Յակոբ Պատրիարքին

յաջորդող Մատթէոս Չուխանեան պատրիարք չէր կրնար իր նախորդին պէս խիստ բնթացք բունել բողոքականներուն դէմ եւ կը հարկադրուէր մեղմացնել միաբնակներու դէմ իր հակառակութիւնը:

Գժուար էր ստեղծել Պատրիարքի մը համար բնդունելի այս կացութիւնը եւ շրջվիլը, երբ իր կաշկանդուած վիճակէն օգտուելով բողոքականներ, կը շարունակէին հայ-առաքելական եկեղեցիէն անդամներ խելի, նպաստներ բաշխելով աղքատներուն եւ կամ ձրի ուսում տալով անոնց:

Մատթէոս պատրիարք բողոքականներու դէմ պայքարել կարենայու համար, կը հարկադրուի իր չքաւոր անդամներուն նպաստ տալ, պէտք եղածէն աւելի նիւթական մեծ ծախքերու ենթարկելով Պատրիարքարանը, որպէսզի կարենար կասեցնել դատաւարութիւնը, որ օրէ օր կը շտանար ու կը համուէր անոնց թիւը մօտ ութը հարիւր: (տես Մաղաքիա Արքեպ. Օրմանեանի «Աղգոսպատում» Գ. գիրքը, էջ 3802-1960ի տպագր.):

Այս իրադարձութիւնները բնական է մեծապէս կը յուզէր հայ-առաքելական համայնքը, երբ կը ականէր որ, բողոքական միաբնակները ազգայնաբար Անգլիոյ դեպիանին պաշտօնութեան, սանձարձակօրէն կը գործէին, մինչդեռ իրենք անգոր կը մնային հակադրելու անոնց վրայ:

Տոքթ. Համլին, որ ունէր իր հայ ուղեկիցները, 1839-40 տարիներուն կ'աշխատի վերաբանայ խափանուած իրենց դպրոցները: Ան ստանալով Ամենրիկայի Պորտ Ընկերութեան նիւթական օժանդակութիւն, կը յաջողի Բերայի բողոքականներու դպրոցը բանալ 1840 Նոյ. 4-ին, ինչպէս նաեւ Պէպլէքի դիւղին մէջ անգլիացի ընտանիքի մը պատկանող բնակարանը վերածել Աստուածարանական վարժարանի մը, ու ստանձնել անոր անօրէնութիւնը: (տես Cyrus Hamlin - My life & times missionary in Turkey.

էջ 206-209): Իսկ 1852-ին կը հաստատէ Պէպլէքի մէջ աղջիկներու դիւղերովի մը եւ տնօրէնութիւնը կը յանձնէ Վեր. Էվրէթի եւ իր ակնոնը:

Այս դիւղերովի կը 1853-ին Սոսիւղ կը փոխադրուի, հոն շարունակելու համար կը թական դարձունէութիւնը: (տես «Սուրհանդակ» 1905 Նոյեմբեր 9):

Բաց աստի, Սկիւտարի մէջ կը բացուի Հօմ աղջկանց վարժարանը 1890 թուականին (տես նոյն) եւ որ կը բարձրանայ Գոյէճի մակարդակին:

Անուշա Մատթէոս պատրիարքի դայրոյթը արդար էր եւ իր անկարութիւնը կը դժգոհեցնէր զինք եւ ցատումէն մղուած, կը ջանար որեւէ կերպով հակադրել բողոքական միաբնակներու գործունէութեան: Ուստի կը մտադրէ կառավարութեան միջոցով վերստին ջանալ խափանել բողոքականներու վերաբացում վարժարանները, սակայն իր բոլոր ջիղերը ապարդիւն կը մնան:

Որքան որ ցաւալի էր երեւոյթը, սակայն իրականութիւնը անժխտելի կը մնար, որովհետեւ բողոքական միաբնակները մեթոտիք գործելակերպ ունէին եւ բարձրորակ կը թուութեան տէր մարդիկ էին, պատրաստուած մտաւարականներ, որոնց բնձայում նիւթական լայն միջոցները, ինչպէս նաեւ արդիական ուսուցման կերպը, գերազանցելի էին ուրիշ սեւէ կը թական մշակէ մը: Այս բոլոր աստիւթութիւնները բնականաբար կ'ազդէին մարդոց արամարանութեան վրայ ու կը մղէին զանոնք անձնատուր ըլլալու անոնց, ոչ թէ միայն ձրիօրէն օգտուելու համար, այլ նոյնիսկ ունեւորներ իրենց պատկանելուն լաւ կը թուութիւն տալու համար:

Տոքթ. Համլին իր հաստատած դպրոցներուն մէջ մեծ կարեւորութիւն տուած էր լեզուի եւ գիտական ուսուցումին արդիականացման: Ան իր Աւետիս եւ Թորոս հայ օժանդակ ուսուցիչներու միջոցաւ հող տարաւ նաեւ հայ լեզուի դաստիարակման ու զարգացման Ս. Գիրքի աշխարհաբար թարգմանութեամբ:

Բողոքական փրօփականտը օր ըստ օրէ նուաճումներ կ'արձանագրէր եւ հայ-առաքելականներ շունէին սեւէ միջոց անոր դէմ պայքարելու:

Ահա այդ պատճառաւ էր որ Մատթէոս պատրիարք իր եկեղեցւոյ ու ազգային շահերէն թելադրեալ, կ'ստիպուէր հաշտարար գիրքաւորում որդեգրել բողոքական միախոնարներու հանդէպ:

«Մատթէոսի ընթացքը, կը գրէ Օրմանեան Արքեպս. ոչ միայն հասնչի երաւ անդղիական զեպանատան եւ եպիսկոպոսարանին, այլ գովուեցաւ ալ Օսմանեան կառավարութեան, եւ վերիվերոյ բողոքականներէն շատ շատեր ետ կեցան իրենց թեթեւութենէն...» (տես «Ազգայատում» Գ. գիրք, էջ 3805-1960ի սպաղը.):

Հաշտարար այս մթնոլորտին մէջ էր որ 1846 Յունիո 1-ին կոնստանդնուպոլսոյ ԱՌԱՋԻՆ ԱԻՆՏՏՈՒՆԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ կը կազմուի եւ Արխուդոմ Իւթիւճեան Հայ-Աւետարանական համայնքին առաջին հովիւ կ'ընտրուի:

Արխուդոմ Իւթիւճեան երկար չ'ապրիւր եւ 1847 Փետր. 28-ին կը մեռնի եւ իրեն անդ իր եղբայրը՝ Սիմոն նոյն պաշտօնին կը կոչուի:

Այնուհետեւ Թուրքիոյ բողոքականներէն անջատ համայնք կը նկատուին Հայ-Աւետարանական եկեղեցւոյ անդամները: Բայց կը գտնուին հայեր, որոնք կը շարունակեն մնալ բողոքական միախոնարներու կողքին եւ 1850 Նոյեմբեր 27-ին անոնք այ ի վերջոյ համայնք կը կազմեն ու իրենց Ազգայեա կ'ընտրեն Ստեփան Սերոբեան:

Մեր նիւթին հետ առնչութիւն չունին այս խընդիրները, բայց կարեւոր նկատեցինք այս հակիրճ ստղերով բացատրութիւն ապա այս երկու համայնքներուն մասին, որոնք իրարու հետ շփոթելով, շատ անգամներ կը նոյնացուին անոնք, նոյնիսկ գրողներէն շատերու կողմէ:

Այս իսկ պատճառաւ մենք չենք կրնար գտնուանել բողոքական բուսած վարժարաններէն ո՞ր մէկը կը վերարեւէր Աւետարանականներուն, որովհետեւ չէ շեշտուած անոնց պատկանելիութիւնը:

Տոքթ. Համլին իր գործունէութեան թափք կը գործացնէ 1860ական թուականներուն, Կ. Պոլսոյ մէջ

մեծ ուսումնական հիմնարկներ հաստատելու մեանարկութեամբ:

Երբայի եւ Պէպէքի վարժարաններէն զատ ուրիշ վարժարաններու գոյութեան չենք հանդիպիր մինչեւ վերոյիշեալ թուականը:

1869 Յուլիս 4-ին էր Տոքթ. Համլին Ամերիկա եւ Անգլիա իր ճամբորդութենէն ետք Կ. Պոլսոյ կը վերադառնայ, Բուսնչի Հիսարի բարձունքին վրայ հիմնաքար կը դնէ Թուրքիոյ գոյէճին, որուն բացումը կը կատարուի 1871 Մայիս 15-ին, ի ներկայութեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու զեպանին, հայ եւ յոյն համայնքին ներկայացուցիչներուն եւ 250 աշակերաներու: (տես Լեւոն Չորմիսեանի «Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան» Ա. հատր էջ 510):

Թուրքիոյ գոյէճի աշակերտութեան մեծամասնութիւնը հայեր էին: Այս կրթարանը կարեւոր դեր կը կատարէ եւ Կ. Պոլսոյ եւ շրջակայքի հայ թէ օտար աշակերտներ մեծապէս կ'օգտուին ունկէ:

Այս գոյէճին մէջ Տոքթ. Համլին միայն երկու տարի անօրէնութիւն կը վարէ եւ Պորտ Լնկերութեան հետ կրթական հարցի շուրջ տարակարծութիւններ ունենալով, Ամերիկա կը կանչուի եւ Պորտ Լնկերութեան կողմէ կարգիւրուի իրեն Թուրքիոյ վերադառնալ:

Թուրքիոյ գոյէճի հիմնարկութեան տարինուն, Կ. Պոլսոյ կուղան Ամերիկայի Միացեալ Նահանգներէն երկու միախոնարութիւններ՝ Միս Հիփլէյ եւ բժշկուհի Ռասայլըթ:

Ասոնք կը հաստատուին Սկիւտարի մէջ 1876ին եւ հիմը կը դնեն Ամերիկեան Հօմ Սքուլ ազգկանց վարժարանին, ուր դարձեալ հայ աշակերտութիւնը թիւր գերազանց կ'ըլլայ:

Հայ-Աւետարանական (1846 թ.) եւ Հայ-Բողոքական (1850 թ.) համայնքներու կազմութենէն ետք, Կ. Պոլսոյ մէջ անոնց սեփական վարժարաններու չենք հանդիպիր: Մեզի այնպէս կը թուի թէ, անոնք միջոցներ չեն ունեցած այնպիսին բնկու եւ

Հարկադրարար օգտուած են Ամերիկացի Բոզորահան միսիոնարական վարժարաններէն:

Ինչպէս ակնարկեցինք իր տեղին, բողոքական միսիոնարներ իրենց փրօփականօր կարեւոր կեդրոնը ըրած էին Բոզորի քաղաքը եւ ուր 1833 Գեկահին հաստատուած էին սպարան մը:

Այդ նկատաւնութիւնով է որ, բողոքական միսիոնարներ այնտեղ կը հիմնեն Միջազգային դպէճ մը, ուր դարձեալ հայ աշակերտներու թիւը մեծամասնութիւն կը կազմէր: Ասոր հետ մէկտեղ անոնք կը հիմնեն ազգիանց դպէճ մըն այլ եւ հայ աշակերտութիւններու թիւը ինչպէս միշտ ամենաշատը կ'ըլլայ:

Բողոքականութեան կեդրոնին՝ Կ. Պոլսոյ եւ սպա Բոզորի մէջ կատարուած այս ձեռնարկները օրինակուեցան գաւառի հայ-Աւետարանական եւ հայ-բողոքական հասարակութեան կողմէ եւ իրենք եւս ձեռնարկու եղան նման վարժարաններ հաստատուելու:

Դժբախտարար մեր ձեռք անցած բոլոր տեղեկութիւնները յատկօրէն չեն յայտնուած մէջ հաստատուած վարժարանները որոնց կը պատկանէին: Բոլոր տեղեկագրութիւնները ստիպարար «Բողոքական վարժարան» բաւրով անցած են, առանց յիշելու պատկանելիութիւնը: Այս տեսակէտով մեր գործը որ արդէն գժուարին ու խրթին էր, աւելի բարդացաւ:

Եւ որպէսզի կարենայինք աւելի մանրամասնութիւններ ապա այս խնդրին կարգակցութեամբ, մեր դադուրիին հայ-Աւետարանականներուն զիմեցինք, սակայն ստիպուած, անոնք ոչինչ ունէին իրենց տրամադրութեան տակ, օգնել կարենալու համար մեր աշխատանքին, ու թելադրեցին մեզի զիմել Պէջրութի իրենց եղբայրներուն:

Սակայն նկատի ունենալով Պէջրութի ներկայ խոռովեայ վիճակը, մենք չհամարձակեցանք նման խնդրով իրենց զլրուել սաղտուկ ըլլալ եւ ստիպեցանք գոհանալ մեր ունեցած տուեալներով եւ իւրաքանչիւր դաւատի մասին առանձին անդրա-

դասնալ եւ յիշել ամերիկացի միսիոնարներու վարժարաններու հետ նաեւ «հայ-բողոքական» վարժարաններն ալ:

Տօքթ. Համլին կարճ ժամանակուայ համար քննանօք արձակուողի զացած է Պրուսա եւ հասարար միեւնոյն ատեն հոն գալոց մը բանալու ծրագրով: Բայց կ'երեւի թէ կարելիութիւններ չէ դատել իր նպատակը իրագործելու համար, որովհետեւ Պրուսայի մէջ բողոքական վարժարաններու դասութեան մասին սեւէ յիշատակութիւն չգտանք:

Պարտիզակի մէջ սակայն բողոքական միսիոնարներ նախ՝ Վեր. Տուայթ եւ սպա Բարսըն 1848-50 թուականներուն հաստատուած են այնտեղ կրօնական եւ կրթական գործընդուրթեան համար:

Անոնք Մլրիներու թաղին մէջ (Պաթախին Պաղչային չըջանակին մէջ) կը հաստատեն Ժողովարան մը եւ անոր գեւորայրկին մէջ հինգ սենեակներով դպրոց մը, ուր մասն է ազգիկ աշակիպաներ 3-5 տարի կը սորվին թուարտութիւն, աշխարհագրութիւն, Սրբ. Գրոց դաս, անգլերէն լեզուի նախասարերքը: (տես Գրիգոր Յ. Մխալեանի «Պարտիզակն ու պարտիզակցին» էջ 299-309):

Այն աշակերտները որոնք կը վերջացնեն վերոյիշեալ դպրոցին հինգամեայ կրթութիւնը, կը մանկեւ Ամերիկեան մասնաբաժնու եւ ազգիկներու յատուկ վարժարանները: Այս դպրոցները յաճախող աշակերտութեան մեծ մասը անտարակոյս հայեր եղած պէտք են ըլլալ, ինչպէս տեսանք Կ. Պոլսոյ եւ Բոզորի մէջ:

Դժբախտարար, Գրիգոր Մխալեանի վերոյիշեալ դիւրքին մէջ այս կցկուար տեղեկութիւններէն զատ ուրիշ մանրամասնութիւններ չենք գտներ, նոյնիսկ Կ. Պոլսոյ գնահարան օրաթերթիներու մէջ:

Ատափաղարի մէջ, նախ՝ Վեր. Տուայթ եւ սպա Տօքթ. Համլին եկած են քարոզելու եւ բողոքական փրօփականար ընելու:

Այստեղ հայ-առաքելականներ խիստ հալածանքի կ'ենթարկեն բողոքական միսիոնարներն ու

անոնց ուղեկից հայերը: Ստեփան 1848-ին եաք, կրթ Օսմանեան Թուրքիոյ կուսափարութիւնը պաշտօնապէս ճանչցաւ Հայ-Աւետարանական համայնքի հաստատմը, 1849-ին իրրեւ հովիւ Ատափազար կուգայ Յովհ. Տէր-Սահակեան:

Ինչպէս վերը յիշեցինք, բողոքական միաբնակները ազջիկանց վարժարան մը չինամ էին Պարտիզակի մէջ: Ստեփան Աստուածարանական բարձրագոյն ուսման ծրագրով, սոյն վարժարանը 1885-ին Ատափազար կը փոխադրուի եւ կը գործէ Հայուհեաց Բարձրագոյն վարժարան անունով: (տես Արտաք Պիպէրեան եւ վարդան Եղիշէեան «Պատմագրութիւն Ատափազար-Աստուածարան-բարձրակի» էջ 172):

Այս վարժարանը վարողներ եղած են ընդի հայ-Աւետարանականներ:

Այս դպրոցը իր գործունէութեան առաջին տարիները կը բոլորէ ժողովարանին ընդարձակ շրջափակէն ներս փոքր շէնքի մը մէջ: Եւստով կը շինուի երեք յարկանի ընդարձակ շէնք մը, նոյն հողին վրայ:

Դպրոցը կ'ունենայ նախակրթարան ու բարձրագոյն դասարաններ, ինչպէս նաեւ գիշերօթիկի բաժին մը:

Վարժարանը Պորտ Ընկերութեան հոգածութեան տակ կ'անցնի եւ տեսուչ կը կարգուի Միւս Լուրս Զարնըմ, որուն օժանդակ ուժերը կ'սլշան Միւս Էկլա Փարսըն եւ Միւս Եէլարըն: Իրրեւ հայ ուսուցիչներ հոն կը պաշտօնավարեն օրք: Նոյնմի ինչձեան, իսկ միւսին անունը անյայտ է:

Իրրեւ ուսուցիչները, այս վարժարանին մէջ կը դասուանդեն ՊՊ. Յակոբ Պաղտաղեան եւ Յովհաննէս Ալիքսանեան, Վեր. Ա. Ծէճիրեան եւ Տօքթ. Ս. Գամպլեան: Այս երկու վերջինները կամուրք դասախօսներ էին:

Հայ ուսուցիչներն ու ուսուցչուհիները իրենց ամսաթուղակները կ'ստանային վարժարանին հայ խնամակար մարմինէն: (տես նոյն, էջ 173):

Հայուհեաց բարձր վարժարանը առաջին տարին ունեցած է 100 աշակերտուհիներ:

Ամերիկեան հաստատութեան եկեղեցւոյ բլլաւան, այս վարժարանին մէջ անդիւրէն յեղուին հետ կ'աւանդուէին թուաբնութիւն, աշխարհաւարութիւն, հայոց, Օսմանեան եւ Ընդհանուր պատմութիւններ, երկրաչափութիւն, քնադիտութիւն, քնախօսութիւն, քիմիարանութիւն, բուսաբանութիւն, բարոյական գիտութիւն, սասղարաշխութիւն, երկրաբանութիւն, պատմ. հայ գրականութեան, իմացական փիլիսոփայութիւն, մարմնամարզ, հրատալութիւն եւ ձեռագործ: (տես նոյն, էջ 173):

Մոստութօյլ հայ-բողոքականներ Հայկեան անունով նախակրթարան մը ունեցած են, որուն հիմնադրութեան թուականը անյայտ է, ինչպէս նաեւ անոր գործունէութեան մասին տեղեկութիւններ կը պակասին:

Բայուի մէջ, համաձայն Յարութիւն Քհնյ. Սարգիսեանի, հայ-կաթոլիկական շարժում տեղի չէ ունեցած, սակայն բողոքական միաբնակները յաջողած են շատ փոքր թիւով հայեր որոսյ, որանք համայնք մը կազմելու ի վիճակի չեն եղած ու բնականաբար դպրոց ալ չեն կրցած բանալ: (տես «Տեսլու» էջ 266-67):

Այն հայերը որոնք յարած էին բողոքական միաբնակներուն, իրենց կրթութիւնը հայ-ասափական ազգային վարժարաններու մէջ կ'ստանային, որովհետեւ օտար վարժարան չէին բացած բողոքական միաբնակները, նկատի ունենալով անոնց ասկատութիւնը:

Նօղկատի մէջ հայ-բողոքականներ 1872-ին ունէին դպրոց մը, որուն անունը չէ յիշուած: Այս վարժարանը ունէր հոգաարար մարմին մը, որ Վահանեան Ընկերութիւն կը կոչուէր: Կ'ենթադրենք թէ սոյն ընկերութեան անունը կրած ըլլայ նաեւ վարժարանը: (Թերթէ կարուած Ա. Ալեքոյանեանի արխիւէն քաղուած, որուն վրայ չէ գրուած թերթին անունը եւ թէ թուականը):

Գոնիայի (Էնկիւրի) մէջ գոյութիւն ունեցած է հայ-բողոքականներու ցերեկեայ եւ գիշերօթիկ վարժարան մը, որուն մասին մեր ձեռք ունեցած տեղեկագիրքը չէ առած անհրաժեշտ ծանօթութիւններ եւ նոյնիսկ յիշած չէ ի՛նչ ինչ անուն կը կրէր այդ կրթական հաստատութիւնը: (տես «Արեւելք» թիւ 4219 12-24 Յունուար 1900):

Լ. Չորմիսեանի տուած տեղեկութեան համաձայն, գործունեայ բողոքիչ եւ կրթական մշակ. Զարութիւն ձէնանեան, 1888-ին Տարսոնի Գոյէճիկ հիմնարկութիւնը ապահովելէ եւ անոր անօրէնութիւնը 6 տարի վարելէ ետք, Գոնիայի մէջ վերոյիշեալ վարժարանը 1892-ին Գոյէճի վերածած է, ապահովելով անոր նութական ծախքերը, որոշ թիւով ամերիկացի նախարատներէ եւ այնուհետեւ այդ կրթական հիմնարկը ճանչցուած է ձէնանեան Գոյէճ անունով եւ 1893-ին ունեցած է 80 աշակերտներ, որոնց 30-ը գիշերօթիկի բաժինին աշակերտներ էին:

1895-ին այս գոյէճին աշակերտութեան թիւը կը բարձրանայ 110ի (50ը գիշերօթիկի բաժինին մէջ): Այդ տարիներուն այն գոյէճին անօրէն կարգուած է Տօքթ. Արմենակ Հայկազեան, որ կը պաշտօնավարէ մինչեւ 1915 թուականը, գործակցութեամբ հոյլ մը հայ ուսուցիչներու: (տես նոյն, էջ 517 - տես նաեւ «Սուրհանդակ» 9 Նոյ. 1905):

Ամասիոյ մէջ հայ-բողոքականներ, փոքր գոյք մը ունեցած են, ինչպէս նաեւ ժողովարան մը: Իրեն ջարդոյիչ եւ ուսուցիչ ունեցած են 1898-ին Տոպայեան պատուելին: (տես «Արեւելք» թիւ 4303 Ապրիլ 20-3 Մայիս 1900):

Ամերիկեան Պորտ Ընկերութիւնը հոս եւս հիմնած է գիշերօթիկ եւ ցերեկեայ երկսեռ դղէճ մը, բայց չէ յիշուած որ թուականին: Համաձայն ճամբարդի մը տեղեկագրութեան, «Գոյէճի ուսուցչական պաշտօնէութիւնը թէև կարող անձերէ կը բաղկանայ, սակայն դժբախտաբար՝ ակնկալուածք չի արտայրեր: Աշակերտները՝ որոնց հետ բարե-

բողոքութիւն ունեցանք տեսնուիլ ընդ երկար, դժգոհ են գարոցին այժմեան ուսումնական դիճակէն: Հայերէն լեզուն գրեթէ անկարելի էր դատուածի պէս րան մըն է: Աշակերտ մը որ անգլիերէնին կամ ասորութեան մէջ տկար է, անաշտութեան աջօճն ու ինկած կը համարուի: Մէկ խօսքով, բողոքականութիւն կ'ուզուի քիչ ազայոց»: (տես Արեւելք - թիւ 3861 14-26 Նոյ. 1898):

Այս գիշերօթիկ-ցերեկեայ երկսեռ դղէճը 1898-ին ունեցած է 300ի շափ աշակերտներ:

Մարզումնի մէջ եւս Ամերիկեան Պորտ Ընկերութեան կողմէ հաստատուած է Անասիոյի անունով գոյէճ մը 1886-ին, որուն մասին դժբախտաբար քիչ տեղեկութիւններ ունինք: Այս գոյէճը, ըստ Լ. Չորմիսեանի, ունեցած է մօտ 550 աշակերտներ:

Անասիոյի կոչուած է այս գոյէճը, որովհետեւ այդ շրջանին ջարդոյիչներու գլխաւոր կեդրոնը եղած էր Մարզումն: (տես Լ. Չորմիսեանի «Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան» Ա. հատր, էջ 516-տես նաեւ «Սուրհանդակ» 9 Նոյ. 1905):

Այս գոյէճը, ըստ Չորմիսեանի տուած բացատրութեան, ամերիկեան համանման հաստատութիւններուն մակարդակով կրթական տիրաբ օրժարան մը եղած է եւ այլապէս չէնքերով, վարչական կարգապահութեամբ ու կանոնաւորութեամբ, առողջապահական պայմաններով, կրթական ծրագրով, ուսուցիչներու կարողութեամբ եւ արդիւնաւոր գործունէութեամբ այնտեղի հասարակութեան մէջ, անանաորաբար հայերու մէջ ուսումնական սէրը հրահրած է:

Այս գոյէճին կրթական գործին ծառայած են փրօֆէսէօրներ՝ Թումայեան եւ Գարսեան, որոնք իրրեւ յեղափոխական կ'ամբաստանուին, սակայն զրպարտութիւնը ստուգելէ ետք, կայսերական կառավարութիւնը ազատ կ'արձակէ դանձաք: (տես նոյն, էջ 516):

Մարզումնի մէջ գոյութիւն ունեցած է նաեւ

Ամերիկեան աղջկանց բարձրագոյն վարժարան, խուլերու դպրոց, Աստուածարանական ձեմարան որբանոց եւ բազմաթիւ արհեստանոցներ:

Ինչպէս վերը յիշեցինք, Տարսոնի մէջ ձեռնաձեռնի 1888 Նոյ.ին հոկտեմբ. գոյէճը Շէփրըտի նիւթական կարեւոր օժանդակութեամբ կտաարուած է: Նախապէս ունեցած է 16 աշակերտներ նախակրթարանի եւ գոյէճի բաժիններով, ապա աշակերտութեան թիւը բարձրացած է 94ի:

1894-ին Պորտ Ընկերութեան կը փոխանցուի այս գոյէճը, որուն տնօրէն կը կարգուի Տոքթ. Քրիտթին: Այս գոյէճին աշակերտութեան մեծագոյն մասը հայերէ ըսողիցացած էր: Աւսուցիչներէն կարեւոր մասը հայեր եղած են, որոնցմէ մի քանիին անունները յիշատակութեան արժանի են, ինչպէս Պէհէնիւնեան, Չաքրեան, Պօհճարեան, Հայկաջեան Մինասեան եւ Քիւրէլեան: (տես Լ. Չորժիսեանի «Համադարակեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան» Ա. հատոր, էջ 517):

Թողաքի մէջ հայ-բողոքականներ 1870ական թուականներուն իրենց հաստատած ժողովարաններուն կից սենեակներ հաստատելով իրբեւ. դպրոց գործածած են, մանչ. եւ աղջկի աշակերտներու կրթութիւն տալու համար:

Այս դասարանները բնական է պետութեան կողմէ ճանչցուած դպրոցներ չէին, այլ համայնքային համեստ կրթարաններ, ուր սրտուելիներ կամ ուսուցիչներ հայերէն լեզուն սորվեցնելէ զտա, ալբանոց յաճախող աշակերտներուն ուրիշ դասեր ալ կուտային:

Այս տեսակ դասարաններու մէջ աղոց դասատուութիւն կտաարած են Պ. Նազարէթ, Յովհաննէս Սմբատեան, Մարտիրոս Թէֆէճեան, Տիգրան Պէշկէօթիսեան, Յակոբ Աղեքսանդրեան, Աւետիս Տարաղճեան եւ Գալուստ Քէօշէճեան: Իսկ աղջկանց դաստիարակութեամբ զբաղած են Օր. Գոհար, Օր. Լուսիա, Թագուհի Կէօփպաշեան, Մարիամ Կաթօշեան, Սոսա Գրլըճեան, Թագուհի Թիւֆէնիճեան,

Հայկուհի Կաօշեան եւ Օր. Էթմա Պետիկեան: (տես Ա. Ալլոյոյաճեանի «Պատմ. Երզնկայի հայոց» էջ 900):

1890-98 թուականներուն է որ Պատուելի Կասպար Թիւրառեանի հովուութեան շրջանին, կտաարութեան կողմէ արտօնուեցան հայ-բողոքականներ թօզաքի մէջ պաշտօնական դպրոցներ բանալու:

Այդ տեսները թօզաք կուզայ Անաթօլիս գոյէճի շրջանաւարտ աշակերտներէն Սամուէլ Սամուէլեան եւ մանչերուն դաստանդութիւններ կը կտաարէ:

Երեւ. Քրիտ. Ընկերակցութիւնը որ իր դործունէութեամբ շատ զօրացած էր թուրքիոյ մէջ, դպրոցաշինութիւնը յանձն կ'առնէ եւ մանչերու եւ աղջկիներու յատուկ դպրոցներ կը հաստատուի:

Մանչերու դպրոցին մէջ Սամուէլ Սամուէլեան ուսուցչական պաշտօնին կը կուչուի, իսկ աղջկանց դպրոցին համար ալ Օր. Թերէզա Ազաւէրեան: (տես նոյն, էջ 901):

1898 Նոյ.ին մանչերու վարժարանին մէջ ուսուցչութեան պաշտօնին կը հրաւիրուի Հայկաջուն Ս. Յանգամօրը (Կիւրիցի) եւ ապա անօրէն կը կարգուի նոյն վարժարանին:

Հայկաջուն Ս. Յանգամօրը հազիւ քանի մը ամիսներ կը մնայ թօզաքի մանչերու վարժարանին մէջ, չենք գիտեր ինչ պատճառներ կը ստիպեն զինք թողուլ իր պաշտօնը ու հետանայ Ամասիա, հօն եւս ուսուցչութիւն կտաարելու համար:

Համաձայն Ա. Ալլոյոյաճեանի, 1900 թուականին թօզաքի դպրոցներու երկսես աշակերտութեան թիւը 130-150ի կը հասնէր: (տես նոյն, էջ 901):

Թօզաքի մէջ բողոքական միոնիստները հայ-բողոքական դպրոցներու ստեղծման զարկ կուտային կրթական շարժումին 1854 Նոյ.ին սիսեայ, երբ Տոքթ. Վան Լէննէփ ամերիկացի միոնիստըրը Պէպէրի Աստուածարանական վարժարանը թողուլով կուզար հաստատուելու նոյն անըր:

Ան, եօթը տարիներ մնացած է Թօզատի մէջ ևւ այդ տարիներու ընթացքին ետան գործունէութիւն ցոյց տուած է, աւարածելու համար բողոքականութիւնը Թօզատի հայ հասարակութեան մէջ:

Անոր առաջին գործը կ'ըլլայ Աստուածարանական վարժարան մը հաստատել, սակայն ստիպահնոց տարի կը պոստակէ, որովհետեւ կը հրկրելուի 1859-ին Լէննէփի դէմ անձնական հակառակութիւն ունեցող հայ-կաթոլիկ մարդու մը կողմէ:

Սերաստիոյ մէջ հայ-բողոքականներ սեփական գաղտնիքներ չեն կրցած ունենալ ևւ օգտուած են ամերիկեան բողոքականներու վարժարաններէն:

Այս կը գրենք, որովհետեւ մեր պրպատմներու ժամանակ սեւէ տեղեկութիւն չգտանք, որ մեզի փաստէր հայ-բողոքական սեփական գաղտնիքներու պոյութիւն ունենալը Սերաստիոյ մէջ:

Համաձայն Առաքել Ն. Պատրիկի, ամերիկացի միսիոնարներ 1882-ին Ետք սկսած են գործել Սերաստիոյ մէջ ևւ հաստատած են իրենց մանչերու ևւ աղջիկներու գաղտնիքները: (սեւ «Պատմագիրք Յուշամատեն Սերաստիոյ ևւ պատմի հայութեան» Ա. հատոր, էջ 541):

Թէև սկիզբները ամերիկացի միսիոնարներ գժուարութիւններու հանդիպած են ևւ հայ-առաքելականներէ հաղածուած, սակայն հետզհետէ իրենց քարոզչութիւնը կրցած են տարածել Սերաստիոյ մէջ ևւ հայ հետևորդներ ունեցած:

Այդ հայ հետևորդները ի վերջոյ շատնալով կը կազմեն հայ-բողոքական համայնք մը: Թէև իրենց գաղտնիքները չեն կրնար ունենալ, սակայն իրենց գաւաակները կ'արձանագրեն ամերիկացի միսիոնարներու գաղտնիքներուն մէջ:

Սերաստիոյ մէջ գործող ամերիկացի առաջին միսիոնարները կ'ըլլան Այպլբք Հրպրտ ևւ Հէնրի Փէրի: Վեր. Հրպրտ կանուխէն մեաւ բլլալով, գլխաւոր քարոզիչ կը մնայ Վեր. Հէնրի Փէրի:

Վեր. Հէնրի Փէրի իր հայ գործակիցները ունեցած է ևւ անոնց օգնութեամբ է որ, կրցած է եր-

կար տարիներ գործել ևւ աշակերտներ հասցնել: Կ'արժէ յիշել այստեղ անոնց անունները: Տիգրան Կապազճեան, Պալեոյեան, Ռարէն Բաղուպեան, Համարձում Պլէճեան ևւ 1900-ին ետք կկած է անոնց միանալու կարապետ Փայլէան: (սեւ նոյն, էջ 541):

Վերոյիշեալ օւսուցիչները բուրն ալ գոլէճականներ կկած են ու պատրաստուած քարոզիչներ ալ էին:

Ամերիկեան միսիոնարական վարժարաններու աշակերտութեան կարեւոր տեղորը կը կազմէին հայ աշակերտները ևւ ալ իսկ պատճառաւ, հայ-բողոքականներ սեփական գաղտնիքներ չեն ունեցած ևւ կամ թէ պէտք չեն գտացած՝ քանզի այդ գաղտնիքներուն մէջ հայերէն լեզու ալ կը գտատանուէր հայ աշակերտներու, սակայն ոչ գոհացուցիչ կանոնաւորութեամբ:

Տիգրիկի մէջ հայ-բողոքականներ ունեցած են ժողովարան մը ևւ վարժարան մը, լայց ցաւալին այն է որ, աւելի մանրամասնութիւններ չեն արուած ուղեղութեանց մէջ: (սեւ «Արեւելք» թիւ 4780 Նոյա. 31-13 Նոյ. 1901):

Տրապիզոնի մէջ, համաձայն Լ. Չորճիսեանի, բացուած է ամերիկեան գաղտնիքներ ու հոն միսիոնարներ քարոզած են բողոքականութիւնը (սեւ «Համապատկեր Արեւմտահայց մէջ գարն պատմութեան» Ա. հատոր, էջ 519): Սակայն մեզի կը պակսին տեղեկութիւններ այս քաղաքին մէջ կատարուած ամերիկացի միսիոնարներու ևւ թէ հայ-բողոքական վարժարաններու գործունէութիւնը:

Կեստրիոյ մէջ 1860ական թուականներուն հայ-բողոքականներ Բիշի-գափու թաղին մէջ հոյ մը գնելով, հոն եկեղեցի ևւ մանչերու գաղտնիք մը կը շինեն:

1876-78-ին Վեր. Բերտրէ Եագուպեանի կողմէ Սկովտիոյ մէջ հանդանակուած գոմարով, էյպագափու թաղին մէջ հոյ մը կը գնուի, ուր կը կաուուցուի ժողովարան մը ևւ Բիշի-գափուի մանչերու

վարժարանը հան շինուած դպրոցին մէջ կը տեղափոխուի:

Մանչերու այս դպրոցին մէջ ուսուցչութեան պաշտօն վարած են Կարապետ Գուրաճեան, Հայկազուն Եագուպեան, Կարապետ Գունուպեան, Տիգրան Էլբիլէթեան եւ Սեդրակ Ատուրեան: (տես Ա. Ալպոյաճեանի «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» Ա. հատոր, էջ 1130):

Մանչերու դպրոցէն զտու Կեսարիոյ Հայ-բողոքականները ունեցած են նաև աղջկանց վարժարան մը Պէօյի ք Զէչմէ Էօնի թաղին մէջ, որ շինուած է 1886-էն առաջ, որովհետև այցելու մը իր տեղեկագրութեան մէջ այս դպրոցին աշակերտութեան թիւը 60 կը գտնէ 1886-ին, որոք վարժուհիի մը եւ օգնական ուսուցչուհիի մը կողմէ կը գտատրարակուէին:

Բացի վերոյիշեալ նախակրթարան վարժարաններէն, Կեսարիոյ Հայ-բողոքականներ 1883-էն բախեալ ունեցած են Արդէնոս անունով բարձրագոյն վարժարան մը, բայց շենք պիտեք թէ առիկա երկուսն աշակերտներ կը պահէր, թէ ոչ մանչերու յատուկ էր: Յամենայնդպս համաձայն Ա. Ալպոյաճեանի, այդ բարձրագոյն վարժարանը կառուցուած էր Կեսարիոյ բարեկեցիկ տղայաններու եւ յատկապէս Կարապետ Թէրթիէանի մեծապատմար նուիրատուութեամբ:

Արդէնոս Բարձրագոյն վարժարանին պիտաւոր կազմակերպիչը եւ ուսուցչապետը եղած էր Հայկազուն Եագուպեան: Ապա 1887-ին ասոր զործը կը շարունակէ Լեւոն Մարաշեան, որ ութը տարիներ իրրեւ ուսուցչապետ կը պաշտօնավարէ:

Այս բարձրագոյն վարժարանին մէջ գտատանդուած են այճէպրտ, երկրաչափութիւն, եռանկիւնաչափութիւն, տասնդնաչափութիւն, անդլիքըն եւ այլ գիտելիքներ: (տես Ա. Ալպոյաճեանի «Պատմ. Հայ Կեսարիոյ Ա. հատոր, էջ 1130):

Սեդեւորի մը տեղեկագրութեան համաձայն, 1886-ին Արդէնոս Բարձրագոյն վարժարանին կ'աշա-

Կերտէին 40 հոգի:

Այն բաղաւթին մէջ Հայ-բողոքականներ ունեցած են դպրոց մը (տես Մկրտիչ Պարտաճեանի «Այն եւ անցիք» էջ 191), իսկ շրջակայ գիւղերուն մէջ սեւէ դպրոցի յիշատակութիւն չէ եղած:

Հայ-բողոքական այս դպրոցին մասին ոչ մէկ տեղեկութիւն գտած ենք, նոյնիսկ Մկրտիչ Պարտաճեան չի գիտեր թէ ե՞րբ հիմնուած է ան եւ որքան աշակերտութիւն ունեցած է:

Արարկիբի մէջ ամերիկացի միսիոնարներ սկսած են բարոզել սկսեալ 1840ական թուականներէն: Սակայն անոնք մեծ դժուարութիւններու հանդիպած են, Հայ-առաքելականներու կողմէ յարուցուած զրգոտութիւններէն երբ ընդհանուր լարուածութիւն մը գոյացած էր:

Այդ է պատճառը հաւանաբար, որ Արարկիբի մէջ բողոքական բարոզութեան, ինչպէս նաև բողոքական գործունէութեան մասին տեղեկութիւններ չկան Կ. Պոլսոյ մէջ հրատարակուած օրաթերթերու մէջ:

Միակ ազրիբը որ կրցանք ի վերջոյ ձեռք ձգել, այն էր Անդրանիկ Լ. Փոլառանի «Պատմութիւն Հայոց Արարկիբի» ստուարածաւալ ու ինամամ հատորը, որուն մէջ ակնարկութիւն եղած է մանչերու եւ աղջկաներու յատուկ երկու դպրոցներու գոյութեան մասին, որոնց հիմնադրութեան թուականները չեն յիշուած:

Ասոր հետ մէկտեղ յիշուած է 1895 թուականէն ետք միսիոնարներու կողմէ հաստատուած սրբանոց մը, որ տիրուր դէպքերու զոճ գացած ընտանիքներու 4-5000 երկուս որրեր պատասխարուած են եւ կրթութիւն տուած: (տես նոյն էջ 527):

Պարբերդ առաջին անգամ մուտք կը գործէ Մր. ճորճ Ռաշիկիբին Տընձօր միսիոնարը, զայով Տիգրանակերտէն 1852 թուականին: Ան բնակութիւն կը հաստատէ Մարտիոս Գուսպարեան անուն Հայու մը տանը եւ հանկէ կ'սկսի իր բարոզութիւնները ու բողոքական փրօթականութիւնը:

Անշուշտ առաջին ամիսներուն տեղւոյն հայ-տաքելականներ անոր դէմ հայածանք կը չզթա-յազերձեն: Հակառակ ասոր սակայն, Մր. Տրմօր բաւական ժամանակ ետք կը յաջողի իրեն հետևորդ ներ ունենալ եւ Ամերիկայի Պորտ Բնկերութեան նիւթական յատկացումով, Քէլչի Օլլուս Խօնախը-Մէթարիտի լեանայանջերուն վրայ որչ տարածու-թեամբ հող մը կը գնէ, որուն վրայ գպրոց մը շինել կը ծրագրէ:

Մր. Տրմօր Խարբերդի մէջ հայ մանուկներու համար 1857 թուականին հաստատած է նախակր-թարան մը, անոնց դրել կարգայ սորվեցնելու միտ-քով: (տես Մանուկ Գ. Ճիզմէճեանի Ճարբերդ եւ իր գաւազները» էջ 106):

Հինգ ասրի Խարբերդի մէջ գործելէ ետք, Մր. Տրմօր կը հեռանայ քաղաքէն եւ իրեն տեղ կուգան նոյն պաշտօնով Մր. Քրօսդի Հուրիլլըր եւ Մր. Ալէն եւ ասոյ Մր. Հ. Պարնմ:

Մր. Հուրիլլըր, որ հայախօս էր, մօտաուորայէս յիսուն ասրի Խարբերդի մէջ ետուն գործունէութիւն ցոյց տուած է եւ շինել տուած է Աւետարանա-կան եկեղեցիներ ու գպրոցներ կողք կողքի: (տես նոյն էջ 107):

1859-ին կը մտածուի վերալիշեալ հողին վրայ շինել Աստուածարանական ճեմարան մը, երեք ասրուան գարնեթացքով, ուր կը սկսի աշակերտու-թեան թիւը շատնալ:

Մանչերու համար շինուած այս ճեմարանը յա-ջողութիւն կը գտնէ եւ ասկէ քաջալերուելով միտ-խնարներ, աղջկանց համար կը շինեն ուրիշ ճեմա-րան մը: (տես «Աւետարներ» 1905 թիւ 1, էջ 23): 1878-ին այդ ճեմարանը կը կոչուի Արմենիա վարժարան (տես Լ. Չորմիսեանի «Համապատկեր Ա-րեւմտահայոց մէկ դարու պատմութեան» Ա. հա-տոր, էջ 512), սակայն ինչ ինչ պայմաններու տակ, գպրոցին անունը կը փոխուի Եփրատ Գոյճի:

Խարբերդի շրջակայ արուարձաններէն եւ գիւ-ղերէն աշակերտներ, աշակերտուհիներ, այդ ճեմա-

րաններուն մէջ զարգանալով, բողոքական աղլե-ցութիւնը կը զօրացնեն քաղաքին եւ շրջակայ հայ աղաբանակութեան մէջ: Հետզհետէ Խարբերդ կը պանծայ Ամերիկացի միախոնարներու կարեւոր կեդ-րոններէն մէկը:

Այս յաջողութիւններէն ետք Մր. Հուրիլլըր Ա-մերիկա կը ճամբորդէ, Խարբերդի Աստուածարա-նական Եփրատ Գոյճի կրթական մակարդակը բարձրացնելու համար, հանգանակութեամբ գրած հաւաքելու եւ վերադառնալու Խարբերդ:

Մեծ յաջողութիւն կը գտնէ Մր. Հուրիլլըր իր նպատակին մէջ եւ Խարբերդ վերադառնալով 1880 թուականին, փր ծրագրերը գործադրութեան կը դնէ: Ան կը բանայ նաև մանկապարտէզ մը:

Համաձայն տեղեկագրութեան մը, Եփրատ գո-լէճը երկու բաժանում անեցած է, մանչերու եւ սջկանց յատուկ: Աւսուցիչներէն մէկը քանին երկու կողմերն ալ կը գտասխտէին, բայց գասարանական աշխատութիւնները բոլորովին գաւ էին: Վեց ա-մերիկացի եւ Լրեսուսըճարու հայ ասուցիչներ կը պաշտօնավարէին, որոնք կը կազմէին ուսուցչական մարմինը:

Պատուելի Ֆրանք Կէյց գոլէճին նախագահը եղած էր եւ Միս Մէրի Տէնիւրդ աղջկանց բաժնին տեսչուհին: 1898-99 ասրեւրջնանին բողոքական միախոնարներու գպրոցներու աշակերտութեան թիւն էր հետեւեալը:

Եփրատ գոլէճ	մանչ	աղջիկ	գումար
Բարձրագոյն վարժարան	72	37	109
Միջին վարժարան	120	9	209
Նախակրթարան	132	120	252
Մանկապարտէզ	191	220	411

(տես «Նոր Կիանք» 15 Յունուար 1900, էջ 22-23):

Այս կրթական մեծ յարկէն կ'ելլեն հայ ծանօթ հրապարակադիրներ, փրօֆէսօրներ եւ մասնաւորաբար վերապատուելիներ, որոնք հաստատած են ժողովարաններ եւ հայ-բողոքական գպրոցներ,

մինչև 1878 թուականը:

Հայ վերադատուելիներէն աչքառու գէճքեր եղած են Գաթիճ Ապրահամեանն եւ Մարգրիտ Թորոսեան: (տես Մանուկ Գ. Ճիգմէճեանի «Խարբերք եւ իր դասկաները» էջ 129):

Այդ վարժարաններուն մէջ հայ աշակերտներ կ'ուսանէին թուարանութիւն, աշխարհագրութիւն, գրաբար քերականութիւն, մաթղակագծութիւն, նոր կոտակարան, հաւաքումն փխայութեանց եւ ներածութիւն Ս. Գրոց, Ընդհ. Պատմ. թուրքերէն եւ անգլերէն լեզուներու հետ նաեւ հայերէն:

Էրզրումի մէջ եւս ամերիկացի միսիոնարներ քարոզչութիւն կառարած են եւ կրթական գործը կազմակերպած:

Մր. Չէլճուզըր հոն կը հաստատէ երկսեռ դպրոց մը, որուն հսկիչ կը կարգէ Տիկին Նազելի Տամիանեան: (տես «Արեւիկ» թիւ 3837 17-29 Հոկտ. 1898):

Երզնկայի մէջ նոյնպէս ամերիկացի միսիոնարներ գործունէութիւն ունեցած են եւ բնականաբար իրենց քարոզչութեան սեւողութեան հաստատած են ժողովարաններ եւ դպրոցներ, որոնց մասին տեղեկութիւններ կը պակսին:

Տիարալէքիքի մէջ ամերիկացի միսիոնարներ ծառայուն գործունէութիւն ունեցած են: Անոնք ոչ միայն ժողովարաններ հիմնած են, այլևս դպրոցներ ու որբանոցներ:

Այդ դպրոցներու մասին տեղեկութիւններ չկան, սակայն 1895ին այցելուի մը տեղեկագրութեան կը գիտնանք թէ, ունեցած են մէկ ժողովարան եւ երկու երկսեռ դպրոցներ, ուր 180-ի մօտ աշակերտներ կը յաճախէին: (տես «Արեւիկ» թիւ 3283 17 Յունուար 1895):

Տիարալէքիքի հիւսիսակողմը՝ Լճէ եւ Ակլ աւաններու միջև փոքր լեռնաշղթայի մը վրայ գըտնուող Հայնէ կամ Հէնի աւանին մէջ եւս, հայ-թուրքականներ ժողովարան մը ունեցած են, ինչպէս նաև անոր կից սենեակ մը, որ իբրևս դպրոց կը գործածուէր, ուր 10էն 15 աշակերտներ կրթութիւն

կ'ուսնէին: (տես «Արեւիկ» թիւ 3834 14-20 Հոկտ. 1898):

Իսկ ինչ կը վերաբերի Տիարալէքիքի մէջ բացւած ամերիկեան որբանոցներու մասին, ոչինչ գտած ենք, բացի քննադատական յօդուածէ մը (տես «Արեւիկ» թիւ 4263 3-16 Մարտ 1900), որմէ կը տեղեկանանք որբանոցներու մէջ հայ-թուրքական ընտանիքներու դասկաներու խեղճ փիճակը:

Տարսնի մէջ էլիբթ Շէփրտ կը հաստատէ Ալեթ Փօլզ գոլէճը 1888-ին, իրեն գործակից ունենալով Վեր. Տօթթ. Յարութիւն Ս. Ճենանեան: Գարնթայքները կը սկսին 18 հայ աշակերտներով: 1893ին այս գոլէճին աշակերտութիւնը կը շանայ, սակայն էլիբթ Շէփրտ կը մեանի 1893 Մարտին եւ անոր հաստատած գոլէճը կը փոխանցուի Պօրտ Ընկերութեան, բայց նախագահութիւնը կ'ստանան Վեր. Տօթթ. Թամա Գրիսթի, որ իր տէլիսը հետ կը նուիրուի գոլէճի կրթական աշխատանքներուն: (տես «Պայքար» օրաթերթի, 19 Ապրիլ 1963):

Մարաշ մուսը գործած են ամերիկացի միսիոնարներ 1850ական թուականներուն եւ քարոզչական բնորոշակ գործունէութիւն ցոյց առած են եւ ունեցած բաւական թիւով հայ հետևորդներ:

Հայ Աւետարանական համայնքին պաշտօնապէս ճանչցուելէ ետք, անոնք կը բանան իրենց ժողովարաններու հետ տարրական դպրոցներ, որոնց առաջինը կը հիմնուի 1853-ին, սը կ'ուսնենայ 15 աշակերտներ: 1855-ին այն դպրոցին աշակերտութիւնը մինչև 52ի կը հասնի:

Այջկանց ուսման վերաբերմամբ Հայ-Աւետարանականներ մասնչերու դպրոցին կից կը բանան աղջկանց բաժինը, առաջին անգամ 1856-ին:

Սոյն թուականին դպրոցին երկսեռ աշակերտութիւնը կը կազմէր 70 հոգի, որոնցմէ 28ը աղջիկ եւ 42ը մանչ: Այջկանց բաժինին ուսուցչուհին էր Մարինտա Ամբրուսիան, որուն ջանքերուն շնորհիւ աղջիկ աշակերտութեան թիւը կը բարձրանայ 35ի 1858 թուականին: (տես Գր. Հ. Գալուստեանի «Մա-

բուշ կամ չեքոս Ձէյթուն» էջ 468) :

Արբիշ կենսապիլի մը կողմէ տրուած տեղեկութիւններուն համաձայն, հայ-աւետարանականներու ունեցած են Մտոյլ Աբույ տիպար վարժարանը եւ իրրեւ աղջկանց վարժարան՝ Վիւսթա անունով զպրոցը, ուր աղջիկներ դպէճ մանկուր համար կը պատրաստուէին: Անշուշտ այս վարժարանները չիմանուած են նախապէս ամերիկացի միսիոնարներու կողմէ:

1861-ին Միսիս Կուտէլ եւ Միսիս Հուայթ կը հաստատեն աղջկանց յատուկ կանոնաւոր զպրոց մը, ուր սկիզբի տարիներուն հայ-աւետարանականներու աշակերտութիւնը հոն կը հաւաքուի եւ չեւոյճեակ էր շատնայ անոնց թիւը ու կը հասնի 125ի 1865 թուականին:

Աշակերտութեան բազմաւոր եւ զպրոցին նեղ չէնքը պատճառ կ'ըլլան, որ այս նախակրթարանէն 45 յաջող աշակերտութիւնը վերցնելով, կազմեն անոնցմով աղջկանց բարձրագոյն վարժարան մը, Միսիս Քամփիլիի հսկողութեան տակ:

Համեմատելով վերոյիշեալ տուեալները, կը տեսնենք թէ՛ հայ-աւետարանական զպրոցներ միւշեւ 1858 թուականը տարրական ուսումնարաններ կըզած են: Այդ թուականէն ետք ամերիկացի վերայիշեալ միսիոնարութիւնը աշակերտութեամբ, հայ-աւետարանական տարրական զպրոցները կանոնաւոր վարժարաններ սկսած են դասնալ:

Այդ վարժարաններուն մէջ կ'աւանդուէր թուարանութիւն, աշխարհագրութիւն, աշխարհարար քերականութիւն, Ս. Գիրք, եւ այլն:

1882-ին կը հաստատուի աղջկանց համար դոլէճ մը, նուիրատուութեամբ Կարապետ աղա Ռոփայեանի, Սարգիս աղա Բուպեանի եւ Աւետարանական հայերու հանդանակութեամբ: (տես Գր. Հ. Գայրատեանի «Մարաշ կամ չեքոս Ձէյթուն» էջ 468) :

Իսկ 1891-ի աշնան կը բացուի Մարաշի Ակադեմիա Բարձրագոյն վարժարանը, ամերիկացի

միսիոնար՝ Մը. Պիպլիլի իրրեւ բնակարան շինուած շէնքին մէջ: Նոյն տարին արբիշ ամերիկացի միսիոնար Մը. Փէքլիսի համար շինուած բնակարանն ալ կը յոտակացուի Վիւսթա կոչուած վարժարանին աշակերտութիւնը: (տես նոյն, էջ 465) :

Այս Ակադեմիայի հիմնադիրը Մը. Ռոմաս Տէյր-Վիսարն Քրիսթիան կըզած է: Վարժարանին նպատակն էր Անյթապի Կեդը. Ռոնքիոյ Գուլէճին Յրէշմէն կարգին ուսանողներ պատրաստել: Նախապէս գոյութիւն ունեցող խաւաթիյէ կոչուած զպրոցներու մէջ դաստիարակուած աղաքը չէին կրնար դոլէճ մանկ պահանջուած պատրաստութիւնը շունենալնուն համար:

Այս Ակադեմիա վարժարանին առաջին ուսուցիչները կ'ըլլան Վեր. Աւետիս Պաշուրեճեան, Վեր. Ա. Ա. Շիրաճեան, Սիմոն Քրիսթիան, Տոքթ. Նշան Ամիրաշեան, Յակոբ Գուլէճեան (Գուլէճարեան) : Իսկ վարժարանին տեսութիւնը կը վարէր Մը. Քրիսթի: Այդ շրջանի աշակերտութեան թիւն էր 75:

1895ին սոյն վարժարանին մէջ ուսուցչական պաշտան վարած են Լեւոն Ալճեան, Սարգիս Սամուէլեան, Սփիլիսոն Մարաշլեան, Յակոբ Չիլինկերեան, Միպար Մըշեքեան եւ Կարապետ Յարութիւնեան: Իսկ վերաուսուցչը կըզած է Տոքթ. Լ. Օ. Լի: (տես նոյն, էջ 43) :

1896-էն ետք վերայիշեալ ուսուցիչներուն վերայ կ'աւելնայ Եղիա Պէճեանեան (Վեր. Եղիա Քասուեի) :

1900ական թուականներուն, Ակադեմիա վարժարանի աշակերտութիւնը 125 հոգի կըզած է: Անոնց աւանդուած են հայերէն, թրքերէն, անգլերէն լեզուները, ինչպէս նաեւ ընդհանուր եւ աղգային պատմութիւն, աշխարհագրութիւն, այժէպը, զեւտական ուսմանց նախատարբերը, Ս. Գիրք, չարագրութիւն, կրկ եւ երաժշտութիւն:

Ըստ Սմբատ Գալիթեանի 1898 թուականի կրթական վիճակագրութեան, հայ-աւետարանական

ներ 1898-ին ունեցած են հետևեալ կրթական հաստատութիւնները Մարաշի մէջ:

Նախակրթարան	3 հաս
Բարձրագոյն վարժարան	1 հաս
Աստուածարանական վարժարան	1 հաս

(եւամեայ շրջանով)

Աղջկանց դպէճ	1 հաս
Մանկապարտէզ	3 հաս

Այնթապ հայ-աւետարանականներու գլխաւոր օրրանը հանդիսացած է, ըստ Եղիա Բատունիի փաստարկութեան (տես Գէորգ Ա. Սարաֆեան «Պատմութիւն Անթէպի հայոց» Ա. հատոր, էջ 493):

Նախ քան ամերիկացի միսիոնարներու Այնթապ մտնալը, Հայէպէն Այնթապ եկած է Նիկոմիսիացի Աբրահամ անունով վարժապետ մը, որ բողոքական քարոզչութիւն սկսած է ընել եւ զպրոց մըն ալ բացած:

Անչուշտ, ինչպէս շատ մը առիթներով տեսնեք, այդ պաշտօնական զպրոց չէր սեպուեր, այլ պարզապէս փոքր սենեակ մը, որ որտէ թիւով աղոց կրթութիւն տալու հետ, Ս. Գիրքէն հաստատներ կը սորվեցնէին:

Ասոր մահէն ետք, իր սրբին Մուրաա կը շարունակէ հօր հաստատած զպրոցին վարժապետութիւնը, մտաւորապէս մինչեւ 1832 թուականը եւ իր ճիգերուն շնորհիւ մի քանի կարող աշակերտներ պատրաստուած են, որոնք աւելի զարգացած ստանալէ ետք, Այնթապի մէջ բողոքական քարոզիչներ դարձած են:

1845-էն ետք Այնթապի մէջ բողոքական գլխաւոր քարոզիչ կը հանդիսանայ պոլսեցի Պետրոս Վրդ. ձիգմէճեան, որ Կ. Պոլսոյ պատրիարքին կողմէ արտօրուած էր Երուսաղէմ, բողոքականութեան հակումներ ցոյց տուած ըլլալուն համար:

Պետրոս Վրդ. ձիգմէճեան Հայէպ կ'ապաստանի եւ կը հրատարի հայ-ասորերական եկեղեցւոյ ծառայելէ եւ կը յարի ամերիկացի միսիոնարներուն:

Հայէպի մէջ կը ծանօթանայ Վեր. Սմբէթի եւ անոր գործակիցը կը գտնայ եւ ապա կուգայ Այնթապ, որ կը լծուի բողոքական քարոզչական գործունէութեան:

1846-ին Կ. Պոլսէն Այնթապ կուգայ Նշան անունով հայ աւետարանական մը, բնկերակցութեամբ Մր. Վանլէնրի ամերիկացի միսիոնարին: Ասոնք կը ծանօթանան Պետրոս ձիգմէճեանին հետ եւ կարճ ժամանակ ետք, Պետրոս ձիգմէճեան եւ Վեր. Սմբէթ կը հեռանան Այնթապէն Հայէպ, որ Պետրոս ձիգմէճեան կը վախճանի 1848 Նոյ. 13-ին:

1849-ին Այնթապի հայ-աւետարանական համայնքին թիւը կը բարձրանայ 200ի, իսկ 1850-ին արդէն թիւը կը կրկնապատկուի եւ պահանջք կը գտնուի հանդանակութեամբ յարժար բնակարան մը գնել, որ գործածուէր իբրեւ ժողովարան եւ զպրոց:

Հազիւ իրականացած էր այս ժողովարանին եւ զպրոցին հաստատումը, գնելով Գասթէլյաշը թաղին մէջ գտնուող Նազուզ Կարապետի բնակարանը 1849-ին, տարի մը ետք համայնքին ստուարութիւն թիւնը անհրաժեշտութիւն կը դարձնէ հաստանել կրկնորդ ժողովարան մը եւ զպրոց մը Գույսճըզ թաղին մէջ: (տես Գէորգ Ա. Սարաֆեանի «Պատմութիւն Անթէպի հայոց» Ա. հատոր, էջ 497):

Ճիշդ այդ թուականներուն, ամերիկացի միսիոնարներ Այնթապի մէջ կը շինեն Համլինեան (Կ. Պոլսոյ Պէպէք զիզի վարժարանին մակարդակով) վարժարան մը, որ ուսուցչութեան պաշտօնին կը կոչուի պրուսացի Չեռնր Բարսէլեան, որ աշակերտած էր Համլինի հաստատած Պէպէքի վարժարանին: Սակայն ասոր պաշտօնավարութիւնը կարճ կ'ըլլայ 1854-ին երկուստորդ տարիքին վախճանելով: Ասոր տեղ 1856-ին կուգայ նոյն պաշտօնը վարելու Ալեքսան Պէպէճեան, որ նոյնպէս Պէպէքի Համլինեան Աստուածարանական վարժարանի շրջանաւարաներէն էր:

Այնթապի սոյն կէս աստուածարանական կէս

տեղաբնական ուսումնարանը, որ կը գտնուի Երևանի Երկու Տղաքի միջին դպրոցի և Երկու Տղաքի միջին դպրոցի միջև, որ կը գտնուի Երևանի Երկու Տղաքի միջին դպրոցի և Երկու Տղաքի միջին դպրոցի միջև:

Այս ուսումնարանը Այնթապի մէջ էր գոյութիւնը կը պահէ մինչև 1860 թուականը և 1865-ին աւելի կազմակերպուած ձեւով կը փոխադրուի Մասիս:

Ամերիկացի միտիոնար՝ Մր. Քրէյն, որ Այնթապի մէջ կրթական գործը ձեռնարկած էր, անոր կուգայ միանալու Մր. Նրթինի և Տոքթ. Փրաթի:

Աստուք նկատի ունենալով Այնթապի մէջ դարգացող բողոքական շարժումը, 1854-ին կը ձեռնարկեն Աստուածաբանական ձեռնարանի մը հիմնարկութեան: (տես նոյն, էջ 500):

1857-ին ամերիկացի ուրիշ միտիոնար մըն ալ՝ Մր. Քաթինի, իր աշխատակիցի հետ Այնթապ կուգայ, միտիոնար գործակիցներուն միանալու և մասնաւոր աշխատանք տանելու, բողոքական քարոզչութեան զարգացումին համար, կիրակնօրեայ դպրոցներու կազմակերպութեամբ:

Մր. Քաթինի, իր կիրակնօրեայ դպրոցներու գործունէութեամբ կարեւոր դեր կը կատարէ Մ. Կիրքի ուսման և հինգ տարիներու պաշտօնավարութեան ընթացքին, աշխին՝ մինչև 1862 թուականը, 60 դաստառներու ընկերակիցութեամբ 1268 երկուսն պատանի թէ՛ տարեց աշակերտներ, կ'ուսնանայ, ինչ որ նախապէս 100-125 եղած էր անոնց թիւը: (տես նոյն, էջ 505):

Այս յաջողութիւններէն ետք, Մր. Քաթինի դպրոցի յարմար չէնք մը կատարանի կուտայ Գալաթի թաղի աւետարանական ժողովարանին կից: Այս չէնքը ատեն մը ետք օգտագործուած է Աստուածաբանական ձեռնարանի ուսանողութեան և ապա 1876 Հոկտ. 11-ին Թրէյմէն կարգին պատրաստուող ուսանողներուն կողմէ:

1878-ի սկիզբները, շնորհիւ Մր. Թորպրիճի և Փրոֆ. Ալեքանի Պէդեանի կատարած մեծ հանգանակութիւններուն, կը շինուի գոլէճին չէնքը և

վերոյիշեալ հին չէնքէն Թրէյմէնի աշակերտները (50-55 հոգի), մեծ խանդավառութեամբ կը մասնեն նոր չէնքը, որ կը կոչուի Կեդրոն, Թուրքիոյ Գոլէճ: (տես նոյն, էջ 812):

Այս գոլէճին նախագահ ընտրուած էր Մր. Թորպրիճ 1876 Նոյ. 2-ին:

Այստեղ ուսուցչական պաշտօն վարած են Յովհաննէս Գրիգորեան (1877 թ.) քիչ ետք Սարգիս Լեւնեան, Յովակիմ Սրբոյեան, Յովհաննէս Եւզղեան (Նաթըղ Սօճա), իրբեւ թրքերէն լեզուի դասատու, 1878-ին Յովակիմ Սրբոյեան Ուրֆա կը փոխադրուի:

1879-ին այս գոլէճին մէջ կը գտնուին Փրոֆ. Ա. Պէդեան, Տոքթ. Գարեգին Սիւնի, Մր. Գուրբ, Սմբատ Գարբէլեան: (տես նոյն էջ 816):

1880-ին Կեդրոն, Թուրքիոյ Գոլէճը իր ստալին Եօթը շրջանաւարանները կուտայ, որոնք էին՝ Սահփան Կիլիզեան (Մարաշի), Նազար Քիւրքեան, Չեհեր Պէդեան, Յովհաննէս (Հաննէ) Սրբոյեան, Գրիգոր Գոզուսեան, և Յովհաննէս Ճիմէլեան (այնթապցիներ), Թէոդոսոս Պիղիբրատիս (յոյն մը կ'եսարիոյ կողմէրէն):

1881-ին Կեդրոն, Թուրքիոյ Գոլէճին ուսումնական ծրագրին վրայ կ'աւելնայ Թրանսերէն լեզուն, որ կը գտնուի Նազար Քիւրքեանի (շրջանաւարտ Կ. Թ. Գոլէճի), Միշէլ Անթաքի և Տէլմիթ Փոլատեանի: Եւսն ասերէշմանի թրքերէն լեզուի ուսուցիչն էր Յակոբ Աստուրեան (պէրէճիկցի), իսկ 1885-1886-էն սկսեալ Սահփան Սօճա Եւզղեան (ալուստանցի), երկու տարիներ կ'աւանդէ նոյն լեզուն: (տես նոյն, էջ 817):

1887-ին գոլէճի շրջանաւարտներէն Չեհեր Պէդեան, Սրբոյեան օրէնսդէտական վարժարանէն վկայուած կը վերադառնայ Այնթապ և գոլէճին Թրանսերէն լեզուի ուսուցիչ կը կարգուի:

1883-ին Կեդրոն, Թուրքիոյ Գոլէճի նախագահը՝ Տոքթ. Թորպրիճ կը մեռնի և անոր տեղ պաշտօնի կը կոչուի Մր. Ա. Գուրբ, որ 1874-էն ի վեր

պղծելն հետ կապեր հաստատած էր: Ուսանողութեան թիւը այդ տարին 84 եղած է, որուն 40ը գիւշերօթիկի ուսանողներ էին:

Մանչեսթր կրթութեան տարններ, աղջկանց ուսման եւս կարեւորութիւն արուած է Այնթապի մէջ:

Միս Շնալարը արդէն 1852-ին իր ասն մէջ աղջկանց դպրոց մը բացած էր: 1859-ին աղջկանց բարձրագոյն ուսման համար կարեւոր կը նկատուի մասնաւոր շէնք մը շինել եւ Միսիս Մայրա Աֆրաքիւր 1860 Յուլիս 30-ին շէնքին հիմնադրութիւնը կը կատարէ:

Միսիս Մայրա միսիոնարուհի մըն էր եւ 18 տարի տեւող իր պաշտօնավարութեամբ իրական սեսի ուսման ծառայած է:

Այս աղջկանց վարժարանը ինչպէս նախապէս ցոյց տուինք դերը, Գայաճըզ թաղին մէջ համեմատ շէնքի մը մէջ հիմնուած էր, ուրանդ աշակերտուհիներ կը սորվէին բնագիտութիւն, Լերբարանութիւն, աստեղագիտութիւն, ընդհանուր պատմութիւն, հոգեբանութիւն, կրօնք, թրքերէն, հայերէն եւ անգլերէն լեզուները, մաթեմատիք, գիտութեանց տարերբը, աշխարհագրութիւն եւ զմայրութիւն:

Հոս ուսուցչութեան պաշտօն վարած են Պատ. Յարութիւն Պոյնուօղլունեան, Ներսէս վարժապետ Պէզճեան, Ներսէս վարժապետ Գաղանճեան, Պատ. կարապետ Մարգարեան:

1886ին նոր շէնք մը կը կառուցուի աղջկանց բարձրագոյն կրթութեան համար, միսիոնարներու նիւթական միջոցներով: Այս վարժարանը ունէր նաեւ գիւշերօթիկի բաժին մը:

1889 Գեկա-ին այս վարժարանը հրոյ ճարակ կ'ըլլայ: Այնուհետեւ վարժարանը կը փոխադրուի Մարաինի բլուրին շէնքին մէջ, մինչեւ վարժարանի շէնքին վերակառուցումը: (տես նոյն, էջ 872):

Մայրթիոյ հայ-բողոքականներ իրենց ժողովարանին կից ունեցած են դպրոց մը, ինչպէս նաեւ

անոր յարակից մանկարան մը: Գծարխարար չիք-չանք գիտնալ թէ ո՞ր թուականներուն շինուած էր այդ վարժարանը:

Համաձայն ուղեւորի մը տեղեկացրութեան, թէ՛ ժողովարանը եւ թէ՛ դպրոցը շէնքի մը գեանայարկին մէջ գոնուած են: 1898-ին այդ վարժարանին մէջ 50-60 աշակերտներ գոնուած են, իրենց ուսուցիչ ունենալով Գրիգոր Թաշճեան: Իսկ մանկարանին մէջ Գրիգոր Տ. Գրիգորեան, 120 մանուկներու գլխաւոր դասատուի պաշտօնը կը վարէր:

Այս վաւրը դպրոցին մէջ կ'աւանդուէին հայերէն, թրքերէն եւ անգլերէն լեզուները, ինչպէս նաեւ Ս. Գիրք, թուարանութիւն, աշխարհագրութիւն, հայոց եւ ընդհանուր պատմութիւն եւ այլ գիտելիքներ: (տես «Արեւելեան Մամուլ» - կիսամսեայ-1 Մայիս 1898):

Հաճընի հայ-աւետարանականներ ունեցած են երկու տարրական դպրոցներ, որոնցմէ մին հաստատուած էր առաջին ժողովական եկեղեցիին ներքեւ, իսկ միւսը՝ երկրորդ ժողովական եկեղեցիին ներքնայարկին մէջ, ուր կը կրթուէին օտաւորացեալ 200-250 երկսեռ աշակերտներ: (տես Յ.Պ. Պօղոսեանի «Հաճընի Ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօղան-Տալի գիւղերը» էջ 462):

Ասիէ գառ հայ-աւետարանականներ հիմնած են մանկապարտէզ մը, կրթարկնով Բէսթալոյցճիի մանկավարժական մեթոտները: Այս մանկապարտէզին առաջին ուսուցչուհին եղած է Սիմանուս վարժուհին (ապա Տիկին Աւետիկ Սօզնալեան):

Ամերիկացի բողոքական միսիոնարներ աղջկանց կրթութեան մակարդակը բարձրացնելու նպատակով, Միսիս Գաֆինկը 1880 թուականին Մարաշին Հաճըն կը զբոսնէ, ուր կը հիմնէ Աղջկանց Բարձրագոյն վարժարանը, օտարական միսիոնարներով: Այս վարժարանը կը կոչուէր Հաճըն Հօմ Սըուլ (տես նոյն էջ 457), որուն 200 աշակերտութեան մեծ մասը հայեր եղած են:

Միսիս Գաֆինկէն եւք Հաճըն եկած է դանա-
տացի Տոքթ. Ճան Մարթին: 1892-ին անոր առաջին
գործերէն մին եղած է, տղոց համար բարձրագոյն
վարժարան մը կառուցանել:

Այս պարոյցը ինչպէս վերը յիշեցինք, նախա-
պէս հայ-աւետարանականներու առաջին եկեղեց-
այն երջնայարկը կը գանուէր, բայց չենք գիտեր
թէ քանի աշակերտ ունեցած էր:

Հոս իրրեւ ուսուցիչ կը պաշտօնավարէին Մար-
տիրոս Օղոյլուզեան, Սահեման Յովհաննէսեան
(ալպիստանցի) եւ Տիգրան Րէճէպեան:

Ապա Բերդի կողմերը, Քէսթէնեաններու տու-
նը գնելով, հայ-աւետարանականներ անոր տեղը
կը կառուցեն հինգ յարկանի փառաւոր շէնք մը, զոր
կահաւորելով կ'օգտագործեն (տես նոյն, էջ 437):

Այս բարձրագոյն վարժարանը որ Ալյազեմիս
ալ կը կոչուէր, մօտ 100-150 աշակերտներ ունէր,
որոնք բաժնուած էին եօթը գասարաններու մէջ:
Հոն կ'ուսուցուէր հայերէն, թուրքերէն եւ անգլե-
րէն լեզուները:

Ասոնցմէ զատ կ'աւանդուէր նաեւ թուարանու-
թիւն, ալժէպրա, աշխարհագրութիւն, բնական աշ-
խարհագրութիւն, կրօնք, արդարյն պատմութիւն,
ընդհանուր արդպաց պատմութիւն, մարդակազմու-
թիւն, նամակագրութիւն, բնագիտութիւն, երաժշ-
տութիւն, ճաստիգօտութիւն, շարագրութիւն, եւ-
այլն: (տես նոյն: էջ 466):

Հաճընի վերայիւսոյ բարձրագոյն վարժարանին
կամ Ակադեմիային գասրնթացքը այնքան բարձր
եղած էր որ, անկէ շրջանաւարտ ելլող աշակերտնե-
րը կ'ընդունուէին Այնթապի Կեդրոն. Թուրքիոյ
Գոլէճին մէջ եւ թէ Տարսնի Մէյնթ Փօլց Գոլէճը,
առանց ըննութիւն անցնելու:

Ամերիկացի բողոքական միսիոնարներ Հաճընի
մէջ հիմնած են նաեւ ամերիկեան Մէլնոնայթ անու-
նով ճանչցուած ընկերութեան կողմէ որբանոցներ,
որ հաւարուած որբերուն արհեստ եւ կրթութիւն
կը արուէր: (տես Լ. Չորմիսեանի «Համապատկեր

Արեւմտահայոց մէկ դարու պատմութիւն» Ա. հա-
տար, էջ 517):

Այլ սրբանոցներուն մէջ 300 էն տելի սրբուհի-
ներ եւ սրբեր կը գտնուէին:

Առանայի մէջ աւետարանական գործունէութիւ-
նը հայերու մէջ սկսած է 1840 թուականէն, ինչպէս
կը հաստատուի Բիւզանդ եպիսոպոս իր «Առանայի
հայոց պատմութիւն» ընդարձակամաւալ հատորին
մէջ (էջ 47):

Այլ թուականին Կ. Պոլիսէն Նշան անունով հայ
զբալմաստ մը Առանա, կը հաստատուի եւ Ս.
Գիրք ծախելով կ'ըրադի:

Ասկէ ետք նոյն գործով կազան նաեւ Պրշոպք
Գէորգ Մկրտիչեան, Մարգիս Գարամանուկեան,
Ասատուր Տէր-Մեսրոպեան 1848-էն 1854 տարիներ
ու տեղուութեան: Այս վերջէնը հոլիւ կը ձեռնադ-
րուի 1856-ին, իր շուրջ հասարակած բողոքականու-
թեան յարող վարժարթիւ հայերուն:

Ասոր կը յաջորդէ 1862-ին Կարապետ Մարգար-
եան, որ մօտ 25 տարիներ հոլուութիւն կը կատարէ
հայ-աւետարանական համայնքին մէջ:

Նոյն պաշտօնով Առանա եկած են յաջորդաբար
Պատուէրի Աւետիս Տէր-Կարապետեան, Գէորգ Գա-
զանճեան, Յարութիւն ձեռնանան, Վեր. Պետրոս
Թովաթեան, Վեր. Համբարձում Ալճեան եւ ուրիշ-
ներ:

Վեր. Յարութիւն ձեռնանանի հովուութեան
չբջնին, հայ-աւետարանականներ կը կառուցանեն
ժողովարան մը 1886-ին:

Նոյն տարին ամերիկացի բողոքական միսի-
ոնարներ, Մր. Մանթիկոմբրիի առաջնորդութեամբ ի
րենց գործունէութիւնը կը ծաւալեն Առանայի մէջ:
Ասոնց հետ մէկտեղ ամերիկացի միսիոնարուհի-
ներ՝ Միս Փրոքթըր եւ Միս Եաթթը կրթական գոր-
ծունէութեան կը լծուին եւ 1886-ին իսկ կը հաստա-
տեն Թէփէ-Պալիի ամերիկեան աղջկանց Սեմինա-
րը, որուն անօրէնութիւնը կը յանձնուի Միս Էլիզա-
պէթ Ուէպի:

Այս աղջկանց վարժարանին մէջ Հայ աշակերտուհիներու թիւը մեծամասնութիւն ըլլալով, ամերիկացի միտիոնարուհիներ իրենց ուսումնական ծրագրին մէջ Հայերէն լեզուի դաստանդուժը կ'աւելցնեն:

1895-ին, վերոյիշեալ ժողովարանին շէնքին մէջ կը բացուի մանչերու Ակադեմիա անունով նախակրթարան վարժարանը, Ս. Աստուածածնի վերի անկիւնէն դէպի Թէրս - Կափու երկարող նեղ փողոցին վրայ: (տես նոյն, էջ 48):

Ատոնոյի Հայ-աւետարանականներու Համայնքը փոքրաթիւ ըլլալուն, չէ կրցած իր սեփական տարրական դպրոցները ունենալ ժողովարաններու կից: Ատոր ապացոյցը այն է թէ, երբ 1870-75 թուականներուն ամերիկացի միտիոնարներ Ատանա դալով, կը ծրագրէին հիմնել դպրոցներ, սակայն տեսնելով Հայ-բողոքականներու կարելիութեանց պահարար եւ անոնց սակաւաթիւ ըլլալը, կը ձգեն Ատանան ու կ'երթան Այնթապ, հոն հիմնելու Համար 1875-ին իրենց ծրագրած մանչերու բարձրագոյն վարժարանը:

Ուրֆա եւս ամերիկացի միտիոնարներու զործելու դաշտ եղած է 1845-48 թուականներէն ի վեր, հոն քարոզելով իրենց շուրջ հասարուած Հայերուն:

1851-ին Տոքթ. Լուպէլլ եւ 1853-57-ին յաջորդաբար Ուրֆայի մէջ կը քարոզեն Տոքթ. Կուտէլլ, Մր. Շնալսթըր, Տոքթ. Փրաթ, Մր. Նրթիսկ եւ Մր. Ուայթ միտիոնարները:

Ատոնք կ'որսան ընդունակ եւ կարօտեալ Հայ աղանք եւ իրենց միջոցներով կը դաստիարակեն ու բարձրագոյն կրթութիւն կուտան անոնց, իրենց փրօշականախին լծելու Համար զանոնք: Յիշատակութեան արժանի են Կիրակոս Ժամկոչեան, Գրիգոր Գապուշեան, Յովակիմ Յակոբեան, Պետրոս Ասատուբեան, որոնք Ուրֆայէն կամ անոր չրջակայքի զիւղերէն կը զրկուին Այնթապ, Մարաշ, Քիլիկ եւ այլ ամերիկեան միտիոնարներու զործելներ, ուրկէ չրջանաւարտ ըլլալով, կ'ոտանան սուիշի

բարձր կրթութիւն ու կը դառնան աւետարանական քարոզիչներ կամ Հովիւներ:

Հոս գտնուող հոյ-աւետարանականներու թիւը այնքան մեծ չէ եղած եւ անոնք եւս ասանացիներու նման չեն կրցած իրենց ժողովարաններու կից դպրոցներ բանալ: Պատուելի Յակոբ Աղուհայաթեանի հոյուութեան օրով է որ, Ուրֆայի մէջ Հայ-աւետարանական ժողովարաններ կը հաստատուին: Սակայն այդ ժողովարաններուն կից դպրոցներ բացուած ըլլալու մասին սեւէ տեղեկագրութիւն չգտանք դժբախտաբար, նոյնիսկ Արամ Սահակեանի «Գիւցագոյնական Ուրֆան եւ իր Հայորդիները» հաստատիր գիրքին մէջ:

Ուրֆայի մէջ, ըստ «Փունջ» շարաթաթեթիւն, 1895 Յունուար 14-ին Ուրֆայէն զրկուած տեղեկագրութեան մը, 1894 Դեկտ. 9-ին մանկապարտէզ մը հաստատուած է Միս Շաթրդի կողմէ, 30 փոքրիկ մանուկներու համար: Այդ մանկապարտէզին իրելու ուսուցչուհի կը պաշտօնավարէ օրիորդ Ս. Չէքիճեան:

Սակայն վրայ կը հասնի 1895-ի աղէտը եւ այդ պատճառ կ'ըլլայ որ կրթարանը իր գործունէութենէն դադրի ու ամալանայ:

Այնուհետեւ, 1897-էն սկսեալ ամերիկացի միտիոնարներ հետամուտ կ'ըլլան որբացած մանուկներու եւ դատանիներու համար որբանոցներ բանալ, ուր կարելի կ'ըլլայ խնամք եւ կրթութիւն տալ Հայ որբերու եւ որբուհիներուն:

Սոյն թուականին Միս Գ. Շաթրդի կողմէ կը հաստատուի որբանոց մը 169 որբերու եւ որբուհիներու համար: Այս որբանոցը կը մնայ միակ եւ տնայար կրթարանը երկուս աշակերտութեան համար: Ուսման անընդունակ որբերուն համար, Միս Շաթրդ կը բանալ զանազան արհեստանոցներ իր որբանոցին մէջ, ուր որբեր կը սորվին դերձակութիւն, կոշիկարութիւն, ատաղձագործութիւն, երկաթագործութիւն, Անդլիայէն յատկապէս բերուած Մր. Կրէյտի հսկողութեան տակ: (տես Արամ

Սահակեանի «Ուրֆա եւ իր հայրդիները» էջ 458) :

Միս Ծաթրցի ճիգերուն շնորհիւ 1900-ին Ուրֆայի մէջ կը հաստատուի նաեւ կրօնքու վարժարան մը, ուր Միս Չէյմպլըս եւ Մէլլի Եարութիւն-ճան կը ձեռնարկեն այդ դործին մեծ յաջողութեամբ : (տես նոյն, էջ 468) :

Համաձայն կենսագրի մը տեղեկագրութեան, (Պեարտ Տէր Պետրոսեան) 1895-ի դէպքերէն ետք Ուրֆայի մէջ դործող Միս Ծաթրց բնիկներու աջակցութեամբ կը ձեռնարկէ Միացեալ վարժարանի հիմնարկութեան, որուն անօրէն կը կարգուի Աբամ Թորոսեան, որ կը պաշտօնավարէ մինչեւ 1901 թուականը : (տես նոյն էջ, 535) :

Այս վարժարանը դերձ էր կրօնական հանգամանք ունենայէ : Հոն կը յաճախէին հայ-աւստրիական, աւետարանական բնաւնիկներու զաւակները :

Գործըական միակեղացութեան մը համաձայն, 1898-1899-ին Ուրֆայի հայ-բողոքական աշակերտութեան թիւը եղած է 284 (125 մանչ եւ 159 աղջիկ) (տես «Արեւելք» թիւ 3988 - 18 - 25 Ապրիլ 1899) :

Այդ վարժարանին առաջին շրջանաւարանըրը եղած են Տօքթ. Եսկիւր Պէլլեան, Տօքթ. Արմենակ Ապուհայթեան, Տօքթ. Միլլըա Քէթէնճեան, Փրոֆ. Արշակ Բուժեան, Պատուէրի Յոյհաննէս Էսիլեճեան, Պատ. Յովսէփ Պարտիզպանեան, Տէրատուր Տէքիճեան, Մկրտիչ Թաշճեան եւ ուրիշ շատեր : (տես նոյն, էջ 538) :

Անշուշտ վերոյիշեալ տեղեկութիւնները ամբողջական չեն եւ կը պակսին ուրիշ մանրամասնութիւններ Ուրֆայի հայ-աւետարանականներու կրթական դործունէութեան եւ ամերիկացի միսիոնարներու անոնց աջակցութեան վերաբերմամբ :

Վանի մէջ ամերիկացի միսիոնարները մուտք գործած են 1870ական թուականներուն, ուր հայ-աւստրիականներէն հարածուած են : Հակառակ սասոր սակայն, անոնք կարճ ժամանակ ետք կը յաջողին որսալ այդքան դասակարգէն հետեւորդներ :

Առաջին ամերիկացի միսիոնարը եղած է Մր-

Պարնթ, որմէ քիչ ետք եկած է նաեւ Տօքթ. Ռէյ-Յուլա : Ասոնք կը հաստատեն ժողովարան եւ գլխոց մը աղքատ բնասնիքի տղայ կրթութիւն տալու համար :

Տօքթ. Ռէյնոլտ բժիշկ էր միւնեոյն ասեւ եւ շատ դորաւոր կամքի տէր զինուորական մը : Ան սորված է հայերէն լեզուն, դիւրաւ հաղորդուելու համար հայերու հետ, եւ մօտ 45 տարիներ գործած է Վանի մէջ իրրեւ բարոյիչ եւ մեծ դեր կատարած է բողոքականութիւնը Վանի եւ շրջակայ դաստնարու մէջ տարածելու համար : (տես Համարձուժ երամեսնի «Յուշարձան Վան-Վասպուրականի» Ա. հատոր, էջ 309) :

Անոր ճիգերուն շնորհիւ է որ ամերիկացի միսիոնարներ կը յաջողին հիմնել վարաշայ լեռներուն վրայ ժողովարան եւ դպրոց, նոյնիսկ արհեստանոց 1876 թուականին : Այս յաջողութիւնները Պօրտ բնակչութեան մօտ մտահոլութիւն կը ներշնչեն եւ աղ-դեցիկ անձնաւորութիւն մը կը դարձնէ անոր մէջ :

1880ական թուականներուն Միս Քէյմպլը ամերիկացի միսիոնարու շին Վան կը հասնի, ան ալ իր կարգին աղջկանց վարժարան հիմնելու եւ բողոքական բարոյչութեան տարածման ստատրելու համար :

Ան միւնեոյն ասեւ թշուոհի էր եւ օգնական կ'ըլլայ Տօքթ. Ռէյնոլտի : Հայերէն սորված ըլլալով, ան ալ Տօքթ. Ռէյնոլտի պէս կը յաջողի շուտով իր շուրջ հաւաքել հետեւորդներ :

Տօքթ. Ռէյնոլտ եւ Միս Քէյմպլը հայ ժողովուրդին հանդէպ սէր ունեցած են եւ ջանացած են իրենց ունեցած ամէն միջոցները ի ապաս դնել հայերու օգնութեան համար եւ այդ իսկ պատճառու իրենք սիրուած տարրեր գործած են Վանի հայութեան կողմէ :

Վերոյիշեալ միսիոնարներուն օգնութեան կուգար 1892-ին նաեւ շորճ Կրին անուն միսիոնարը, որ կ'ստանձնէ ամերիկեան վարժարաններու տեսչութեան պաշտօնը, իրեն աջակից ունենալով փո-

սեօսչ Եւան Գարաթէֆէրեան: (տես նոյն, էջ 232): Սահայն Տոքթ. Թէյնօյտի հետ խնդիրներ եւ անհա-
մաձայնութիւններ ունենալով, ձորճ Կրին կը հե-
ռացուի Վանէն եւ 1895-էն սկսեալ Նիւ-Եորքի մէջ
հայանպաստ կոմիտէի քարտուղարութիւնը կը
վարէ:

Ձորճ Կրինի տղ Վան կուգայ 1894-ին Էբր-
պըրթ Ալէն անունով միսիոնարը, որ թէ երիտա-
սարդ էր եւ թէ սահուն հայերէն խօսիլ գիտէր:
(տես նոյն, էջ 287): Սահայն 1895-ին կը վերադառ-
նայ Ամերիկա, մանկավարժութիւն սորվելու հա-
մար:

1898-ին Էբրպըրթ Ալէն կրկին Վան կուգայ,
սահայն Տոքթ. Թէյնօյտի հետ խնդիրներ ունենա-
լով, Կրինի ճակատագրին կ'արժանանայ 1900-ին:
Ամերիկա վերադառնալով, Էբրպըրթ Ալէն
«Հայաստանի Կոչնակ» սրբրեթերթերը կ'սկսի
հրատարակել 1900 թուականէն սկսեալ եւ հայա-
նպաստ գործունէութեան կը լծուի:

Այս կցկատուր տեղեկութիւններէն զատ ուրիշ
մանրամասնութիւններ չէ առւած Համբարձում Ե-
րամեան իր վերոյիշեալ գիրքին մէջ: Վանի հայ-
բողոքականներ միասնարար գործած են ամերիկա-
ցի միսիոնարներու հետ եւ քնականարար իրենց կը-
թական հաստատութիւնները չեն ունեցած, նոյն-
իսկ բողոքական գործունէութեան սկզբնական շը-
ջաններուն:

Վերջապէս, մեր հաւաքած բոլոր տեղեկու-
թիւնները ամփոփելով այս գլուխին մէջ, կը խոր-
հինք թէ, ըստ կարեւորցն կարողանք, եթէ ոչ
կատարեալ՝ գէթ ընդհանուր ծանօթագրութիւնը
տալ Կ. Պոլսոյ եւ դատաներու մէջ ծուարած հայ-
ուեստարանական եւ բողոքական միսիոնարներու կը-
թական գործունէութեան մասին, որոնք անժխտե-
լիօքէն մէկ մասը կը կազմեն Հայ գործըական սյուս-
մութեան, ի մասնաւորի թրքահայ կրթական շար-
ժումին մէջ, որոնք որոշ դեր կատարած են ուսում-
նական բարեկարգութեան նկատմամբ:

ՀԱՅ-ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆՆԵՐ

- Կ. ՊՈՒԽՍ քաղաք, Բերա թաղ, Հայ Սքուլ
աղջկ. վրթ. 1834.
- Վասիտը նեղուցի վրայ, Պէպէքի վրթ. 1834.
- Նոյն վայր, Պէպէքի աղջկ. գիւերօթիկ վրթ.
1852, որ կը փոխադրուի Խասղուղ.
- Նոյն քաղաք, Սկիւտար թաղ, Հօմ աղջկ. գոյէճ
1890.
- Նոյն վայր Հօմ Սքուլ աղջկ. 1876.
- Նոյն քաղաք, Բուժէյի Հիտար թաղ, Ռոպըրթ
գոյէճ 1871, 250 աշակերտ.
- ՌՈՏՈՍԹՕ քաղաք, Հայկեան վրթ. (թուականը
անյայտ).
- ԵԹՉԻԱՏ քաղաք-Վահանեան ? գաղտոց, 1872.
- ԷՆԿԻԻՐԻ քաղաք - (անուն չկայ) գիւերօթիկ
վրթ. (թուական անյայտ). 1892-ին գոյէճի կը
վերածուի ճէնանեան անունով: Ճէնանեան գոյէճ
1895-ին ունեցած է 110 աշակերտ.
- ԱՄԱՍԻԱ քաղաք, (անուն չկայ) գաղտոց, (թուա-
կան անյայտ).
- Նոյն վայր, Ամերիկ. Պորա Ընկ. երկսեռ գոյէճ
(թուական չկայ): 1898-ին ունեցած է 550 աշակերտ
ՄԱՐՉՈՒԱՆ քաղաք, Ամերիկ. միսիոն.
- Անաթօլ. գոյէճ (թուականը անյայտ).
- Նոյն վայր, Ամերիկ. աղջկ. բարձր. վրթ.
(թուականը անյայտ).
- ՏԱՐԱՍՈՆ քաղաք, Ճէնանեան վրթ. 1888, 14
աշակերտ.
- ԹՕԳԱՏ քաղաք, (անուն չկայ) երկսեռ վրթ.
(թուականը անյայտ).
- ՍԵՐԱՍՏԻԱ քաղաք, Ամերիկ. միսիոն. մանչ.
վրթ. 1882.
- Նոյն վայր, Ամերիկ. միսիոն. աղջկ. վրթ. 1882
ՏԻՎԻԻ քաղաք, (անուն չկայ) վրթ. (թուա-
կանը անյայտ).
- ՏՐԱՊԻՉՈՆ քաղաք, Ամերիկ. միսիոն. վրթ.
(թուական չկայ).

ԿԵՍԱՐԻԱ քաղաք, (անուն չկայ) մանչերու վրժ. 1876.

Նոյն վայր, (անուն չկայ) աղջկ. վրժ. 1886, աշակերտ. 60.

Նոյն վայր, Արդէնո Բարձր. վրժ. 1883, աշակերաներ 40.

Ահն քաղաք, (անուն չկայ) դպրոց, (թուականը անյայտ).

ԱՐԱԲԿԻՐ քաղաք, (անուն չկայ) մանչ. վրժ. (թուականը անյայտ).

Նոյն վայր, (անուն չկայ) աղջկ. վրժ. (թուականը անյայտ).

Նոյն վայր, (անուն չկայ) սրբանոց 1895, 4-5000 սրբեր.

ԽԱՐԲԵՐԴ քաղաք, Ամերիկ. Մանուկ. դպրոց 1857.

Նոյն վայր, Աստուածարանական ձեմարան մանչ. 1859.

Նոյն վայր, Աստուածարանական ձեմարան աղջկ. 1859. (Աստուածարան 1880-ին միանալով, կը կոչուին Եփրատ Գոլէճ. Եփրատ գոլէճ 1900-ին 70 աշակերտ.

Նոյն վայր, Բարձրագոյն երկսես վրժ. (թուականը անյայտ), 109 աշակերտ.

Նոյն վայր, Երկսես Նախակրթարան (թուականը անյայտ) 252 աշակերտ.

Նոյն վայր, Երկսես Մանկավարժէզ, 411 աշակերտ.

ԷՐԶՐՈՒՄ քաղաք, Ամերիկեան Միսիսիպի դպրոց (թուականը անյայտ).

ՏԻՍՏՊԷՖԻՐ քաղաք, Ամերիկ. Միսիսիպի երկսես վրժ. 1895, աշակերտ. 180.

Նոյն քաղաք, Հայնէթաղ. Հայ-Բողոքական Երկսես դպրոց (թուականը անյայտ) 10-15 աշակ.

SUPPIL քաղաք, Սէնթ Փոլղ գոլէճ, 1888, աշակերտ 18.

Նոյն վայր, Պորտ Ընկ. վրժ. 1893.

ՄԱՐԱՇ քաղաք, Հայ-Աւետարանակ. տարրական մանչ. դպրոց 1853. աշակերտ 15: Այս դպրոցը

1855-ին ունեցած է 52 աշակերտ: Սոյն դպրոցը կը վերածուի երկսես դպրոցի 1856-ին, 70 աշակերտ եւ 1858-ին 85 աշակերտ.

Նոյն վայր, Մօզըլ Սքուլ մանչ, (թուականը անյայտ).

Նոյն վայր, Վիւսթա աղջկ. վրժ. (թուականը անյայտ).

Նոյն վայր, Ամերիկ. Միսիսիպի. աղջկ. վրժ. 1865, աշակերտ. 125.

Նոյն վայր, Մարաշի Ակադեմիա Բարձր. վրժ. 1891: Սոյն վրժ.ը 1900-ին 125 աշակերտ.

1898-ին Մարաշ քաղաքին մէջ կը դործէին, 3 նախակրթարան, 1 Բարձր. վրժ., 1 Աստուածարանական վրժ. (Տիւմուկ Գլխանով), 1 Աղջկ. գոլէճ, 3 Մանկավարժէզ.

ԱՅՆԹՈՊ քաղաք, Մանչերու տարրիկ. դպրոց 1849.

Նոյն վայր, Ամերիկ. Միսիսիպի. կէս-աւելակեմական կէս-աստուածարանակ. վրժ. 1850: 1865-ին Մարաշ քաղաք կը միախառնուի.

Նոյն վայր, Ամերիկ. Միսիսիպի. Աստուածարան ձեմարան 1854.

Նոյն վայր, Կիրակնորեայ երկսես միսիսիպի. վրժ. 1837, աշակերտ. 125: 1862-ին 1268 աշակերտ.

Նոյն վայր, Կեդր. Թուրքիայ գոլէճ 1878, աշակերտ. 55.

Ամերիկ. Միսիսիպի. Աղջկ. տարրական դպրոց 1852.

Ամերիկ. Միսիսիպի. Աղջկ. Բարձր. վրժ. 1860.

ՄԱՆԹՈՒՄ քաղաք, (անուն չկայ) Մանկարան (թուականը անյայտ): Սոյն Մանկարանը 1898-ին 120 մանուկ.

ՀԱՃԸՆ քաղաք, 2 տարրական դպրոցներ (ասուններ չկան), 250 երկսես աշակերտ.

Նոյն վայր. Ամերիկ. Միսիսիպի. Բարձր. վրժ. (թուականը անյայտ).

Նոյն վայր, Հաճընի աղջկ. Հօմ Սքուլ (թուականը անյայտ): Սոյն ուսումն.ը 1880-ին 200 աշակերտ.

Նոյն վայր, Մանկապարտէզ, (Թուական չկայ)
Նոյն վայր, Ակադեմիական Մանչ. Բարձր.
Վրժ. 1892, աշակերտ. 100-150.

Նոյն վայր, Մխիթան. Ընկ. Որբանոց (Թուական չկայ).

ԱՏԱՆԱ. քաղաք, Մխիթան. Աղջկ. Սեմինար
1886.

Նոյն վայր, Մանչ. Ակադեմիա 1895.

ՈՒՐՅԱ. քաղաք, Մխիթան. Երկանո. Որբանոց
1897, որբուհիներ 169.

Նոյն վայր, Ամերիկ. Մխացեալ Երկեսո. վրժ.
1897.

Նոյն վայր, Մանկապարտէզ, 1894.

ՎԱՆ քաղաք, Ամերիկ. Մխիթան. Աղջկ. վրժ.
1880.



ՀԱՅ — ԱՌԱՔԵՆԼԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿՐԹԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

4. ՊՈԼՍՈՅ ԵՒ ԳՈՒԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ

Կրթական շարժման զարգացումին նկատմամբ, թրքահայեր անհրաժեշտութիւն կը գտնեն զպրոցներու հոգատար կամ հովանաւորող մարմիններ կազմակերպել, որոնց նպատակը պիտի ըլլար կրթական գործին ստարկել և հողածու ըլլալ զպրոցական գոնազան կարիքներուն:

Կպրոցներու խնամակալութեան խնդիրով հեռագհտէ կը կազմուին գոնազան Ընկերութիւններ, սարբեր անուններով: Անոնցմէ շատեր հիմնադրներ եղած են և կամ զպրոցներ շինած ու ճիւղեր թափելով նիւթական մատակարարութիւն կատարած՝ կրթական հաստատութիւններուն:

Ասկէ գատ, այս Ընկերութիւններէն մի քանին 4. Պոլսոյ և այլ հայաշատ շրջաններու մէջ հիմնած են իրենց մասնաճիւղերը ու նախանձախնդրութեամբ քանացած են իրենց ենթակայ զպրոցներու վիճակը բարեկարգել և կանոնաւորել, զպրոցական պիտանքները հօգտով, մանաւանդ գասալեքբերու հայթայթումին մեծ կարեւորութիւն տալով, աշակերտութեան ծնողքներուն գոհունակութիւն պատճառած են:

Կրթական գործին նպատող այս Ընկերութիւններէն մեծ մասը սակայն, չեն կրցած երկար տանն գոյատեւել, ընդհանրապէս պիտեմէ ի տկարացման ու երբեմն տլ անդամներու միջև գոյացած անհամաձայնութիւններու պատճառով:

Ինչպէս պիտի տեսնենք քիչ ետք, թրքահայեր զպրոցներու հոգատար ընկերութիւնները ընդհանրապէս կոչած են զպրոցներու պէս՝ կրօնական կամ բարեգործական անուններով: Պատճառը այն է որ, Օսմանեան Թուրքիոյ կառավարութիւնը կ'ստիպէր իր հպատակ քրիստոնէայ ազգերուն, իրենց գոնազան Միութիւններն ու Ընկերութիւնները կոչել քրիստոնէական անուններով, քանզի անոնք կը ներ-

կայացնէին կրօնական համայնքներ:

Այս Ընկերութիւնները կը կառավարուէին վարչական մարմնի մը կողմէ, որ ընդհանրապէս կը կազմուէր երեքէն մինչեւ եօթը հոգիներէ, որոնք պարտականութիւն կ'ստանձնէին նուիրուիլ իրենց հաստատած եւ կամ իրենց պատկանած գաղտցիկն պէտքերը հոգայտու նիւթապէս եւ բարոյապէս:

Չանայան ընկերութիւններու վարչութիւններ կ'աշխատէին իրենց գաղտցիկն վարկը բարձր պահել եւ նոյնիսկ զերպանցելու ճիշդը կ'ընէին միւս ընկերութիւններու հետ մրցակցելով, ու թաղեցիկները կը հրահրէին զոչնորութիւններ ընելու իրենց թաղին գաղտցիկն բարօրութեանը համար:

Պետականութենէ զուրկ թրքահայեր ստիպուած էին իրենց կրթական յարկերը պահպանել ու յատկապէս չհամայնքային ճիղերով եւ այդ նպատակու կրթական ընկերութիւններ իրենց ցուցաբերած գործունէութեամբ կարեւոր նպաստ բերած են թրքահայ կրթական շարժումին:

Մեր նպատակը այս գլուխին մէջ այդ Ընկերութիւններուն կատարած գործունէութիւնը ցոյց տալ է: Սակայն գծրախտաբար, անոնց շատ քիչերուն մասին մանրամասնութիւններ գտած ենք, որովհետեւ անոնց մեծ մասին միայն անունները յիշատած են, ինչ որ մեզի ցու կը պատճառէ:

Հակառակ այս իրականութեան, դարձեալ սրտի մեծ զոհունակութեամբ, անոնց յիշատակը պանծացնելու համար, կը յիշենք անոնց անունները: Արդէն դիտարկուած է թէ՛ այդ բոլոր Ընկերութիւններուն նպատակը մէկ եղած է: Հետեւաբար, եթէ կը պակսին որոշ պատմական տուեաններ, սակայն գաղտցիկն արարիներու տարիներու զոյատեւումը ինքնին ապացոյցն է անոնց արդասաւոր գործունէութեան:

Ներսէս Պատրիարք Վարժապետեան թրքահայ կրթական ընկերութիւններու վերաբերմամբ, յարուկ կանդակով մը, թրքահայ ժողովուրդը յորդորած է բարոյապէս թէ նիւթապէս քաջալերել զանոնք: (տես աւելի մանրամասն Մարտիրոս Հանէտ-

եան «Հարիւր քսունեւհինգամեայ Յորիւեան Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ» էջ 171):

Նոյն խնդրի կազակցութեամբ Լէօի հետեւեալ տողերն ալ յատկանշական են. «... այդ ընկերութիւնները մի մի նշաններ էին թէ հասարակութիւնը սրբան զեղեցիկ կերպով բարձուն է ընկերական սկզբունքը»: (տես «Հանգչւ Ամսօրեայ» 1951 թիւ 11-12 էջ 540):

Հարցն այն է թէ՛ ի՞նչ շարժառիթներ սկիզբ տուած են Ընկերութիւններու կազմութեան:

Անհրաժեշտ է ուրեմն յետադարձ ակնարկ մը նետել 1840ական թուականներուն վրայ, Սուլթան Ապաիւլ Մէճիտի դահապարտութեան տարիները, երբ պղտահայութիւնը փոթորիւած էր գոտակարգային խնդիրներով եւ էնտիպ գոտակարգը հաւասար իրաւունքներ կ'ուղէր ունենալ Պատրիարքարանի մէջ տեղ գրաւելու ամիրաներու հետ ազգային ժողովներուն:

Ինչպէս իր տեղին տնօրէնարձանը, 1839 թրականէն սկսեալ Սկիւտարի ձեմարանին շուրջ գար ձող ամիրա-էնաֆի խնդիրները, նիւթական անցուկ փնտակի մասնած էր ձեմարանի պիւտձէն եւ ամիրաներէն շատեր նիւթական իրենց օժանդակութիւնը գաղտցիկն անոր, փակելու վտանգին տակ գրած էին:

1841 Ապրիլ 6-ին ձեմարանի տնօրէն՝ Յակոբիկ Մանուէլեան, հանդէսի մը առիթով ծնողներուն կը յայտնէ ձեմարանին ունեցած գրամական ներդրութեան տակ գանուիլը եւ ամիրաներու բռնադրօնի արարքները, ու կը յորդորէ անոր պաշտպանութեան համար զոչնորութիւններ տեսլ:

Այդ հանդիսութեան օրն է որ կը մտածուի ժող էրեք Հարիւր հանդիսական ծնողներու կողմէ կազմել Միակամ Ընկերութիւնը, եւ միանաբար դրամ հանգանակելով կը ջանան պահպանել այս կրթական բարձրագոյն յարկը:

Սուրէն զործի անցնելով, ուրեմն 13 Ապրիլ 1841-ին (տես Բիւզանդ Գէշեանի «Պատմութիւն Ս.

Փրկչի Հիանդանոցին Հայոց Ի Կ. Պոլիս» էջ 74) այս պայմաններու բերումով կը կազմուի վերստին՝ հայ Ընկերութիւնը:

Այս միջոցառումը աւելի սրեց ամիրա - էսնաֆ զատակարգներու միջև հակամարտութիւնը, ինչ որ պատրիարքներ չկարողանալով հաշտեցնել կոզմեբը, յաջորդաբար հրամարականներ ներկայացուցին իրբեւ լողոքի նկատ:

Այս խռովեալ վիճակը շարունակեց մօտ վեց ամիսներ եւ Միակամ Ընկերութիւնը իր գերագոյն ճիգը թափեց պահպանելու համար ձեւարանին կանոնաւոր ընթացքը: Մակայն դժբախտաբար, արեւոյ անհետկացողութեան ոգին պտանաւ կ'ըլլայ փակելու ձեւարանը 3 Հոկտ. 1841-ին, իբր հետեւանք ազգային խռովութեան: (տես նոյն, էջ 75):

ձեւարանին շէնքը կառավարութիւնը կը յառնուցնէ ու սինաոքորական Հիանդանոցին եւ յնահանաբար Միակամ Ընկերութիւնը իր կարգին կը խափանուէր իր վեցամեայ գործունէութիւնէն ետք, գեղեցիկ օրինակը աւելի թրջահայութեան կըթանարստ նման ձեւարակի մը:

Սիխաորի ձեւարանի խնդիրով կազմուած Միակամ Ընկերութիւնը ուրեմն, առաջինը կը հանդիսանար հայ-առաքելական համայնքին մէջ իրբեւ կըթանայ ընկերութիւն, ինչ որ Մատթէոս Պատրիարք Զուհանեանի հրապարակեալ իր պատրիարքութեան պաշտօնաւարութեան սկիզբի տարիէն իսկ, ջանաց ընդհանրացնել այս գաղափարը համայն թրջահայութեան մէջ:

Մատթէոս պատրիարքի պաշտօնաւարութեան սկիզբը (1844 թ.) կը զուգարկուէր Թանգիմաթի (բարեկարգութիւն) հռչակումին, ինչ որ նպաստաւոր առիթ կ'ընծայէր համայն Թուրքիոյ բնակչութեան յառաջդիմութեան:

Այս բարեկարգութեան շրջանին Մատթէոս պատրիարքի գերը մեծ կ'ըլլայ կըթական ընկերութիւններու կազմութեան ախտանքին մէջ:

«Հայաստան» իր 1847 թիւ 68-ին մէջ վեր առ-

նելով Մատթէոս պատրիարքին ախտ՝ գործունէութիւնը, զնահատական հետեւեալ առդերը կը գրէր. «այժմու կոտանդնուպոլսոյ վեհափառ Պատրիարք Տ. Մատթէոս ազգասէր Արքեպիսկոպոսին ջանիքը պտուղն է, որ պատրիարքութեան տարիճանին հասած առեւ մինչեւ հիմա անխոնջ ախտանքով, յորդորելով եւ խրատակելով, եւ գրեթէ ամէնուն ալ ինքն արդեամբ ձեռննու եւ օգնական ըլլալով, կոտանդնուպոլսոյ մէջ ընկերութիւն ներ շատցուց եւ դուրսերն ալ (խօսքը կը վերաբերի զաւաններու մասին Յ.Տ.Պ.) անէն տեղ գրեւ գրելով եւ յորդորելով՝ այս փափարք ամէն տեղ արթնացուց: տես «Հանդէս Ամաթբեայ» 1951 թիւ 11-12, էջ 542, Հր. Եփրեմ Պողոսեանի յօդուածաւարքը):

Մատթէոս պատրիարքի յորդորներուն անստով, Օրթապիլդի հայեր 1844-ի վերջաւորութեան եւ 1845-ի սկիզբներուն կը ձեռնարկեն կազմել Ս. Թարգմանչաց ընկերութիւնը, իրբեւ հողատար մարմին իրենց հիմնած Ս. Թարգմանչաց մանկերութարանին:

Դժբախտաբար այս ընկերութեան մասին տեղեկութիւններ կը պահպանէ Ստեփին անգամ անոր յիշատակութիւնը կը գտնենք իզմբահայերու «Արշարոյն Արարատեան» թիւրթիւն մէջ (թիւ 224, 1845 թ. Յունուար 13), որուն մէջ գրուած է հետեւեալը ի միջի ալլոց, «Մեր բարեմիտ ընթերցողները զուցէ կարծեն թէ ալ արիւ նորահիմն Ընկերութիւն մը չունինք ծանուցանելու, բայց սխալ է, կը սխալին, ինչու որ ուսումնասիրական եւ ընկերական գոյնի եռանդ մըն ալ կոտանդնուպոլսոյ Օրթապիլդի յայտնուեցաւ, եւ այնտեղը ընտկող մեծապատիւ հայրենասէր Ամիրայից հաւանութեամբ եւ խորհրդով՝ Ս. Թարգմանչաց Ընկերութիւն անունով մխարանութիւն մը հաստատուեւ է, որուն նպատակը՝ նոյն գեղին վարարանը բարեկարգել է, եւ ինչպէս կը լսենք, հայկաբանութեան եւ զաղփական յեղուին համար արժանաւոր ուսուցիչներ հաստատուէն ի դատ, մէկ երկու օգտակար արհեստից

Համար ալ վարժապետներ կարգելու են, այսինքն՝ գերձակութեան եւ կօշկակարութեան. որպէսզի դպրոցական աղքատ ազաք օրը մէկ երկու ժամ յիշեալ արուեստից հետեւելով նոյն վարժարանին մէջ՝ անկէջ ելլելու տեսնը՝ կարող ըլլան իրենց պարուստ գիրքու շահելու ձեռքերնին ծառայական պատրաստ արհեստ մը ունենալով: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1953 թիւ 1-3 էջ 131, Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

Թէև պատմական տուեալներ կը սրկսին սոյն ընկերութեան գոյատևումը հաստատող, սակայն նկատի ունենալով դպրոցին տեսողութիւնը, որ կը նայ մինչև 1870 թուականը երկրամ ըլլալ. (ըստ Ս. Տամատեանի տեղեկագրութեան վարժարանի «Բառասէն երկու ընդարձակ արահներէ կը բազկա նար, Աստուծոյն եւ Յաղկոց 1865 թուականին խարխուլ գիճակի մէջ էր:» (տես Եղիպտասայ Տարեցոյց» 1926 էջ 57): Այս հիմամբ կրնանք ընդունիլ Ս. Թարգմանչաց ընկերութեան գործունէութիւնը շարունակուած ըլլալ մինչև վերսյիշեալ թուականները:

Մասթէնս պատրիարք մասհօդուած ըլլալով Սկիտարի ձեմարանի արտը երևոյթէն, 1845-ին կայսերական կոտալարութենէն կը խնդրէ հիանդանոցի վերածուած ձեմարանին չնքը վերագարձնել իրուտաէրերուն:

Երկար րանակցութիւններէ ետք, ի վերջոյ Պատրիարքը կը յաջողի ետ առնել չնքը, եւ նորոգել տալէ ետք 1846 Հոկտ. 1-ին, ձեմարանը վերաբացուելով վերաւեսուչ կը կարգուի Պօղոս ազոս Թեան (գործակալ եւ խորհրդական Գարապետ Թորայի) եւ աստուծոյն կը նշանակուի Տէրոյնց պատուելի Չամուսեան: (տես Բիւզանդ Քէշեանի «Պատմութիւն Ս. Փրկչի Հիանդանոցին Հայոց ի Կ. Պոլիս» էջ 75):

Ասոր հոգասար ընկերութիւն մը կը կազմուի Մասթէնս պատրիարքի քաջալերութեամբ, որուն անդամներուն թիւը կ'ըլլայ մօտ 80 հոգի: Սակայն

այս մասակարարութիւնը չի կրնար էր դերը կոտարել զժուարին սոյնմաններ ստեղծուած ըլլալուն համար: Հետեւաբար, Գերազոյն ժողովի սրշուամով ձեմարանը 1850-ին կը փոխադրուի Ետի-գուլէի հիւանդանոցը, ուր որբանոց մը կար, որ կը մըրցէ ձեմարանին հետ: (տես Նոյն, էջ 76):

1843-ին Խաղաղի մէջ կը կազմուի Ներսիսեան Ընկերութիւնը, թաղին Ս. Ներսիսեան վարժարանին հոգամութեան համար: Ընկերութեան հիմնադիրները եղած են Ներսիսեան վարժարանի նախկին աշակերտները, որոնց մէջ աչքաուու զէմքն էր Երկոցոս Հոյուեան: Բայց ժամանակ մը ետք կը փակուի ան: Ապա 1853-ին կը վերակազմուի, որ մինչև 1866 թուականը կը յիշուի անոր գոյութիւնը: (տես նոյն, էջ 439):

1843-ին Սամաթիայ մէջ կը կազմուի Սանուց Ընկերութիւնը, որ հոգամու կ'ըլլայ թաղին Սահակեան վարժարանին ձեմարանը: Այս ընկերութիւնը հրատարակած է նաև թերթ մը «Բուրաստան Ս. Սահակեան վարժարանի» վերատուրթեամբ, սակայն կարճատև եղած է անոր տեսողութիւնը: (տես Արեւելք» թիւ 3854 6 /18 Նոյ. 1898, Սկիանի Բանասէրի - Տոքթ. Տաղատարեան - յօդուածաշարքը): Ըստ Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի, այս Ընկերութիւնը գոյատևած է մինչև 1854 կամ 1855 թուականը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1956 թիւ - 7-8», էջ - 371-372):

Այս Ընկերութեան հիմնադիրները եղած են Պապ Ծերունի, Մինէճի Անդրանիկ Փափազեան, Բրիտանոսար Ղազարեան եւ Թօփթիփէլի Զարոթիւն: (տես նոյն, էջ 371-372):

1844 Սեպտ. 2-ին Մասթէնս Պատրիարքի կողմէ Յուլիս - Սոցոստոս սովորներուն կը կազմուի Լուսուարչեան Ընկերութիւնը, որուն խնամակալութեան ենթարկուած է Գում-գափուի եւ Ենի-գափուի միջև եղած Լուսուարչեան վարժարանին վարժութիւնը: (տես (Հանդէս Ամսօրեայ» 1957, թիւ 1-2, էջ 77 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուած

ծաշարքը) :

Հր. Եփրեմ Վրդ. Պողոսեանի մասնանշամ թաղին մանչերու դպրոցը որ Լուսաւորքեան կը կոչուէր Լանկա թաղի մէջ կը գտնուէր, որուն մասին մենք անդրադարձանք իր ակօղին: Յաւային այն է որ, այս ընկերութեան գործունէութեան մասին տեղեկութիւններ կը պակսին, ինչպէս նաեւ հիմնադիրներու անունները անյայտ մնացած են:

1844 Սեպտ. ին Պալատի մէջ կը կազմուի Արամեան Ընկերութիւնը Մատթէոս Պարբարք Զուխտեանի յորդորներուն վրայ, որուն նպատակը կ'ըլլայ թաղին Խորէնեան վարժարանին ծախքերուն նպաստել, որ կը գոյատեւէ ըստ Հր. Եփրեմ Վրդ. Պողոսեանի ցոյց տուած վկայութեան (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955, թիւ 10 - 12, էջ 599-600), մինչեւ 1871 թուականը: Մինչդեռ Մելքոն Ասատուր կը գրէ թէ 1846-ին այն վարժարանին հոգածու մանր ընկերութիւններ, որոնց կարգին նաեւ վերջիւնեալ Ընկերութիւնը, կը լուծուին ամէնէն հին ընկերութեան մէջ, որ կը կոչուէր Խորէնեան Ընկերութիւն: (տես «Երեքդարեան Պատմութիւն Ս. Հրեշտակապետ Եկեղեցոյ Պալատու - 1627-1931 -» էջ 274): Սակայն այս Ընկերութիւնը չի գոյատեւեր եւ կը դադրի 1853-ին:

1854 Յուլիս 29-ին կը վերակազմուի Խորէնեան Ընկերութեան վարչութիւնը հետեւեայ կազմով. վերատեսուչներ՝ Մանուկ Գարամաճեան, Միլնա Ռօպարթեան, իսկ զանձապետներ՝ Ստեփան Թուղլաճեան եւ Յօհաննէս Մուրճեանեան:

Հաղի թէ կրկու ասրի անցած է, Ընկերութիւնը դարձեալ կը գաղթի դորժեյէ, անհասկնայի պատճառով: Ապա կրկին կը վերակազմուի 1856-ին, Պետրոս Խորասանճեանի նախաձեռնութեամբ, պարզին նպատախու նպաստով: Ընկերութեան աստ նապետութիւնը կը ստանձնէ Պետրոս Խորասանճետը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955, թիւ 10-12, էջ 601-602, Հր. Եփրեմ Վրդ. Պողոսեանի յօդուածաշարքը):

Այս թուականէն ետք, նոյն Ընկերութիւնը յաջորդական փակման եւ վերաբացման շրջաններ կ'ունենայ, սակայն տունայնոր կը պակսին, ստուգելու համար փակման եւ վերակազմութեան թուականները, ինչպէս նաեւ տեղեկանալու համար վարչութեան անդամներու ինքուրթիւնը:

Մեր պրպտումներու տեսողութեան, այն Ընկերութեան վերակազմութեան թուական մը գտանք, որն է՝ 1880: Ընկերութեան աստեղայնոր կը հանդիսանայ Մարգար Մինասեան, իսկ աստեղայրք՝ Մ. Կ. Տէօբաճեճեան: Միս անդամներուն անունները յիշուած չեն ցուայթօրէն:

1880 թուականէն ետք, բաւական տարիներ Ընկերութիւնը անխափան կը գործէ, սակայն 1893 թուականին լուծուած կը գտնենք զայն վերջնականապէս:

Հիմնուելով պատմական տուեալներու վրայ, ճշգրտութիւնը կատարելի կը նկատենք Հր. Եփրեմ Պողոսեանի այն Ընկերութեան վերաբերմամբ նշանուած 1871 թուականը:

1844 Դեկտ. ին Կէտիկ-Փայալի մէջ կազմուած է Ս. Յովհաննու Աւետարանչի Ընկերութիւնը թաղին դպրոցը կարգի գնելու եւ հոգալու անոր ծախքերը: (տես Հր. Եփրեմ Վրդ. Պողոսեանի յօդուածաշարքը «Հանդէս Ամսօրեայ 1956 թիւ 9-12, էջ 535-536):

1845-ի սիպրեները Սիլուատրի մէջ կը կազմուի Ս. Յովհաննու Կարապետի Ընկերութիւնը Ե՛նիմա հարչէ թաղին՝ Ս. Կարապետ Եկեղեցիին կից կառուցուած նոյնանուն վարժարանին իրրիւ հոգաար մարմին, որ կը բաղկանար 40 անդամներէ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955, թիւ 7-9 էջ 407-Հր. Եփրեմ Վրդ. Պողոսեանի յօդուածաշարքը), Այս Ընկերութիւնը գոյատեւած է մինչեւ 1851 թուականը:

1844-45ին համաձայն Հր. Եփրեմ Վրդ. Պողոսեանի, կազմուած է Սրբուհոյ Աստուածածնի Ընկերութիւնը Կ. Պալատի թաղերու եւ գիւղերու դպ-

բացներու նպաստելու համար: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 9-10, էջ 441):

1841-1845ին Գանահիլլի մէջ կազմուած է Առաքելոց Ընկերութիւնը, Ս. Երկաստան Առաքելոց եկեղեցւոյ համանուն դպրոցին շինութեան համար: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954, թիւ 9-10 Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը):

1846-ին Սալմաթմարիւքի մէջ (ինչպէս իր տեղին ակնարկեցինք) գոյութիւն ունէր Թաղէսու Բարթողմէտեան վարժարանը (տես «Արեւելք» թիւ 3814 Սեպտ. 21-3 Հոկտ. 1898) եւ անոր հետ մէկտեղ կը յիշուի ուրիշ Արամեան Ընկերութիւն մը, որ 1866-ին Պալաթի Յորջնեան վարժարանին վերանորոգութեան համար եղած մեծ հանգանակութեան մասնակցած է 1210 դրուով: (տես Միկրոն-Ասատուրի «Ներքարեան Պատմ. Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ Պալաթու -1627- 1931 էջ 274):

1846 Մարտ 17-ին Բերայի մէջ գումարուած Ժողովին կը կազմուի Համազգեաց Ընկերութիւնը 76 անդամներով, որոնք զբարար յայտարարութիւն մը կը հրատարակեն, որուն էական սողերը կը մէջբերենք, «Մենաց արդարեւ գոյութեանց է արժանաւոր եւ ստիժ անչափ խնդութեան, տեսանել արծարծեալ ի ստեղտ յայտարարութեան ի սիրտ ամենայն սղոյանոց մերոց, վոյժ իմն եւանդեան ի կանգնուածն ուսումնարանաց, եւ ի զարգացումն ուսումնական ընկերութեանց... սղոյ մեր նախնազոյն յոգոս, իրբ անյիշատակ թաղեալ երբեմնի աղիտութեան խորս... արդ զլուխ ի վեր ամբարձեալ յաւեարակաց շիրմացն, թախիժ մեզ արկանէ որդոց իւրոց, մի՛ գանց առնել զիւրք ի կենդանացուցանել զնա յիմաստութիւն: Մի ազգ եմք եւ ի մի միաբանութիւն ժողովեալ երթեցուք ուր ձգիցէ զմեզ ճշմարիտ սղոյախերութիւն»: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952, թիւ 1-3, էջ 133-134- Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը):

Այս Ընկերութեան հիմնադիրները սպա կը ներկայացնեն իրենց ծրագրին ու գործունէութեան

նպատակին 10 կէտերը, որոնք են հետեւեալները, 1.- Միախրտ, միախում, խաղաղասէր շաղկապումն անձանց ի մի միաբանութիւն: 2.- Յօրինուած եւ թարգմանութիւն գրեանց օգտակարաց, եւ հրատարակումն այնոցիկ սպազբութեամբ: 3.- Կանգնուածն վարժարանաց եւ դպրոցաց ի քաղաքս եւ ի գիւղս՝ ի դաստիարակութիւն ուսանելու եւ դասերաց: 4.- Հմտութիւն եւ գործազբութիւն արուեստին երկրագործութեան: 5.- Հետախոյզ քննութիւն հայրենականացն հնութեանց եւ սովորութեանց: 6.- Հաւաքումն մատենից նախնեաց եւ գրամոց եւ այլոց նշխարաց հնութեանց: 7.- Հաւաքումն նրիթոց քնական պատմութեան կենդանեաց, բուսականաց եւ ընդերկրեայց: 8.- Ուսումն ամենազոյր արուեստից ծաղկելոցն ազանց: 9.- Բարգաւաճումն վաճառականութեան բաւ եւրոպական օրինի: 10.- Ուսումն անթերի գիտութեան վստատեանց ի մետադոս:» (տես նոյն, էջ 134):

Ընկերութեան պատասխանատուները համազգային գազախորարանութեամբ կը գործեն եւ պահելու համար Ընկերութեան քնոյթը, իրենց անակից կը գարձեն նաեւ հայ-կաթոլիկները, իրենց ծրագրումն ու կը դիմեն Հր. Պետար Վրդ. Մինասեանի, որպէսզի կազմէ Կանոնադիր մը:

Ա. Պէրդէբեան այս խնդրին նկատմամբ զբամ է հետեւեալը ի միջի սլոյց. «... սղոյախէր եւ ուսումնաւոր անձինք ի Հոյովմէական Հայոց՝ յորոց բազումք աշտիերեալք էին ի Մուրատեան եւ ի Ռափայէլեան վարժարանս եւ ի Վանան Վէնէակոյ եւ Վիէնայու, համամիտ եւ համակամ խորհրով եւ հասանութեամբ կրածիցան հաստատել զԸնկերութիւն իմն ընդ Լուսասորչեան հայոց: Նպատակ Ընկերութեան էր սղոյախերութիւն եւ յառաջադիմութիւն ի բարոյսական մասին, եւ քացէ ի քաց հերքումն սարապարտ վիճից... քացցեն նորոց դպրոցս ի հայրենակ քաղաքս Ասիոյ, յորս ոչ գոյ դպրոց, ոչ ընթերցանութիւն եւ ոչ ուսումն գնանպան արուեստից...: Զկանոն Ընկերութեան խմբադրեց

Հը. Պետրոս Վրդ. միաբան վենետիկյան վանից եւ գանուն նորա կոչեաց Համադղեաց Ընկերութիւն: (տես նոյն, էջ 135):

Այս Ընկերութիւնը կարճ ժամանակի մէջ համակրեցրու մեծ շրջանակ մը կ'ուսեանայ: 1848 Փետր.ին Ընկերութեան անդամներու թիւը 600-էն աւելի կը համբուէր: Սակայն դժբախտաբար դաւանական խնդիրներ ծագելով անդամներուն միջեւ, երկիւնդիւում առաջ կուգայ եւ 1852-ին կը խափանուի Ընկերութիւնը:

1860-ին սակայն, երբ կիրքերը կը հանդարտին, Համադղեաց Ընկերութիւնը վերակազմելու ճիգեր կ'ըլլան նախկին անդամներու կողմէ եւ կը բանան մտանադարան մը Պէյօղլու Սազըղ-Աղաճ թաղին մէջ Վալէ սազըղ փողոց թիւ 13 Ընկերութեան սեփական քարաշէն տան մէջ:

1861 Ապրիլի 21-ին դումարուած ժողովին կը պատրաստուի նոր կանոնադիր մը 2A յօդուածներէ բաղկացած, որ խմբադրուած էր նոյն ուղիով, առանց դաւանական խտրութիւն դնելու անդամներու միջեւ:

Թէեւ որոշ ժամանակ մը կը դոյստուէ Ընկերութիւնը, սակայն դարձեալ դաւանական խնդիրներ պատճառ կ'ըլլան անկարգութեանց եւ կը կտրուեն Ընկերութեան զործուենութիւնը եւ ի վերջոյ կը փակուի դարձեալ, հաւանաբար 1865-ին: Կը կարծուի թէ մտանութեան մը հետեւանջով կառավարութիւնը սրած ըլլայ Ընկերութեան անդամները: (տես նոյն, էջ 137):

1870-ին վերստին ճիգեր կ'ըլլան Համադղեաց Ընկերութեան մարմին աայլու: Այս անգամ Ընկերութիւնը տարրեր ձեւի տակ կը գործէ երկար տուն ու կը բանայ Բերայի մէջ աղջկանց վարժարան մը, որուն հողամտիւնը կը յանձնուի Յառաջդիմասէր Տիկնանց Ընկերութեան:

1846 Մայիս 1-ին, դարձեալ Բերայի մէջ, Մատթէոս պատրիարքի յորդորներուն վրայ, թաղեցի հայեր կը կազմեն Նարեկեան Ընկերութիւնը, որուն

ջանքերով 1853-ին կը շինուի Նարեկեան վարժարանը եւ անոր հասցիքը ապահովելու համար կը շինէ 6 քարաշէն տուներ: (տես Թ. Աղասեանի «Յարեկեանական Երեսօրագրան Բերայի Աղբարատանամին 1861-1927 եւ Դարձանատան - 1897-1927» էջ 14): Այս Ընկերութիւնը դոյստուած է մինչեւ 1861:

Ընկերութեան առաջին անդամներէն մին եղած է Տոքթ. Ստեփան փաշա Ասլանեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952, թիւ 1-3, էջ 138- Հը-Եփրեմ վրդ. Պօղոսեանի յօդուածաչաբքը):

1846 Դեկտ.ին Սկիտարի Ս. Սաշ թաղին մէջ կը կազմուի Սնամատար Ընկերութիւնը, որուն առանապեալ կ'ըլլայ Եշան Փիշիբեան: Այս Ընկերութիւնը հողատար մարմինը եղած է Ս. Սաշ վարժարանին, որ մինչև 1850 թուականը դեռ կը պահէր իր գոյութիւնը: Վարժարանը այսօրէ կտք, Ընկերութիւնն ալ կը գաղթի գործելէ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954, թիւ 9-10, էջ 446):

1847 Փետր. 1-ին Սապիւղի մէջ կազմուած է աղգասէր հայ կիներու կողմէ Բարեպաշտական Ընկերութիւնը թաղին աղջկանց դպրոցական պէտքերը հողալու համար, բայց շէնք դիտար թէ մինչեւ ո՞ր թուականը դոյստուած է ան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 10-12, էջ 572-573):

1847-ի ամառը Կ. Պոլսոյ մէջ գոնուող վանեցի պանդուխտներ կը հիմնեն Արժրունեաց Ընկերութիւնը Մատթէոս պատրիարքի քաջաբերութեամբ, որուն նպատակը կ'ըլլայ Վանի մէջ դպրոցներ բանալ եւ ուսուցիչներու թոշակները ապահովել: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1958 թիւ 1-4, էջ 119- Հը-Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաչաբքը): Ընկերութիւնը կը վերակազմակերպուի 1851 Փետր.ին եւ կը կազմուի 12 հողիներէ վարչութիւն մը, որունք են՝ Հայրապետ Սապրունեան (նախագահ), Յարութիւն Պոռնաղեան, Արքաճամ եղիազարեան, Յակոբ Թովմասեան, Յակոբ Դատպարեան, Աւետիս Բարսողյանեան, Մկրտիչ Իսքանդարեան, Կարա-

պետ Մանուկեան, Պօղոս Տէր Յովհաննէսեան, Կարապետ Ասատաճատուրեան, Սարգիս Վարդանեան, Արբաշաճ Սիրանեան: Ընկերութեան կեդրոնատեղին էր Եազճի Խանը: (տես նոյն, էջ 121):

1848-ին Սկիւտարի Եէնիթաճալլէի թաղին մէջ չիմնուած է Գոզոցասէր Ընկերութիւնը, որ նպատակ ունեցած էր թաղին մէջ չիմնել աղջկանց վարժարան մը: (տես Յ. Ճ. Սիրունիի «Պոլիս եւ իր դերը» Բ. հատոր, էջ 382):

1852-ին կազմուած է Ս. Խաչի Ընկերութիւնը (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 Նոյ. 1898): Ինչպէս իր անդին գրեցինք, թաղին դպրոցը այրած ըլլալով 1850 թուականին, դասընթացքները կը շարունակուէին եկեղեցւոյ դաւիթին եւ վերնատան մէջ: Հետեւաբար, այս Ընկերութիւնը կը մատուկարարէր դպրոցական բոլոր պէտքերը ու նիւթական օժանդակութիւնները:

1854 թուականին այս ընկերութեան անունը փոխուած կը գտնենք Արարատեան Մեղուաց Ընկերութիւն անունով: (տես Յ. Ճ. Սիրունիի «Պոլիս եւ իր դերը» Բ. հատոր, էջ 382): Մեզի անձանօթ մնացած է ընկերութեան անուանափոխութեան պատճառը: Սակայն եւ այնպէս ան կը շարունակէր ստատոր հանդիսանալ Ս. Խաչ եկեղեցւոյ թաղային վարժարանին:

1852 Մարա-Ապրիլ ամիսներուն Գուճ-գափուի Մայր Եկեղեցւոյ Ուսումնարանի եւ շրջակայ երեք դպրոցներու վարչութիւնը քանի մը ուսումնաճէր անձերու յանձնուած էր: Ուսումնարանին եկամտար հարկ եղած ծախքը չկարենալով գոցել, յիշեալ անձերը կը խորհին Ընկերութիւն մը կազմելով, ժողովուրդին կամուտը նպատակն դիմել: Գերազոյն ժողովի թուրաութեամբ կը չիմեն Օժանդակ Ընկերութիւնը, որուն նպատակը կ'ըլլար Մայր Եկեղեցւոյ Ուսումնարանին պայծաութեան պէտք եղած ծախքը հոգալ: (տես «Նոյնիան Աղունի» թիւ 13, 1952 եւ Հանդէս Ամսօրեայ» թիւ 1-2, 1957 էջ 79):

1853-ին, համաձայն Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանին ջոյց տաւած տուեալներուն, Գուզուճուքի մէջ կազմուած է Լուսաւորչեան Ընկերութիւն մը, որ նոյն թուականին Գեղա. ամսուն չիմնած է թաղին Լուսաւորչեան վարժարանը: Ընկերութիւնը իր գոյութիւնը պահած է մինչև 1871 թուականը: Ընկերութեան նախագահը եղած է Յօհաննէս աղա Ալվատեան (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 9-10, էջ 444):

1850-ին Յակոբս Սերսեան պատրիարքին հրամանով Գուճ-գափուի գրքի թաղին Ս. Վառժառեայ եւ Ս. Պօղոսի անունով վարժարաններու օժանդակութեան համար կը կազմուի 7 հոգիներէ բաղկացած Շողաբաճութիւն մը հետեւեալներով, Պէլլազ Եւան Թալուրեան, Թիւլլէնտճի Գրիգոր Մերկերեան, Եսիբիչ Մելքիսեղ եղիազարեան, Եսիբիչ Եղնա Գարբէշեան, Թիւլլէնտճի Մեսրոպ Անուխեան, դերձակ Մատ. Յովհաննէս, Պէլլազ Յովհաննէս Ասաղեան: (տես Յակոբ Վարժապետեանի «Յիշատակարան 75 ամեայ Յոբելեանի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Գուճ-գափուի գրքի - 1855-1930 - էջ 44):

1854-ին դարձեալ նաւը-գափու թաղին մէջ կը կազմուի Մոսէէս Պորենացի Ընկերութիւնը, նպատակ ունենալով թաղին վերոյիշեալ վարժարաններուն օժանդակել: (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 Նոյ. 1898 - Սկիւնակ Բանասէր Տուրթ. Տաղաւարեանի յօդուածաշարքը) եւ «Հանդէս Ամսօրեայ» 1956 թիւ 9-12, էջ 531):

1855-ին Սամաթիոյ մէջ կը կազմուի Սանուց Ընկերութիւնը, նպատակ ունենալով թաղին վարժարանին (որ Սահակեան կը կոչուէր), աղքատ տղոց եւ աղջկանց դպրոցական պիտանքները հոգալ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1956 թիւ 7-8 էջ 378 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1862-ին Ընկերութեան նախագահն էր Մ. Մաճիկոնեան: Սակայն նոյն տարին Ընկերութիւնը կը լուծուի եւ յաջորդ տարին ճիւղեր կը թափուին վերա-

կազմելու Ընկերութիւնը: Թէև Ընկերութիւնը կը կազմուի 12 գործադիր անդամական կազմով մը, սակայն 1866-ին Սամաթիոյ մէջ ծագած հրդեհին պատճառաւ Ընկերութիւնը անպարծութեան կը մատնուի:

1868-ին դարձեալ վերակազմուած է Ընկերութիւնը, բայց երկար տակն չի գոյատեւեր ու կը դադարի, չենք զիտեր թէ որ թուականին:

1874-ին վերստին գոյ է Ընկերութիւնը, սակայն այս անգամ կը կրէ Սահակեան Սանուց Թանգարանի Ընկերութիւն անունը, որուն նպատակը կ'ըլլայ բանալ Թանգարան մը: 1896-ին դարձեալ կը գաղբի ան:

1858-ին Սէլամբէի մէջ կը կազմուի Բաթանոր-գական Ընկերութիւն Հայոց Ընկերութիւնը, նախագահութեամբ Գրիգոր Ստեանի: Այս Ընկերութեան նպատակն էր հաստատուն եկամտու մը սպասուելը թաղին վարժարանին ծախքերը հոգալու եւ մինչեւ նոյն տակն բանալ զպրոց մը երկրորդական ուսմանց համար, նաև, ձրիարար գառախարակել աղջիկ եւ աղայ աղքատ աշակերտներ: (տես Յ. Ճ. Սիբունիի «Պոլիս եւ իր դերը» Բ. հատոր, էջ 382): Ընկերութիւնը կը գործէ մինչև 1860 թ.:

1857 Յունուար 14-ին Հիմնուած է Եգրայրա-սիրական Ընկերութիւնը, Գում-գալիտի կողմէր, Բապուճի Սանը, երկրորդ գաղափար, ուր Յունուար 21-էն սկսեալ հայերէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուները, ինչպէս նաև աշխարհագրութիւն, թուարանութիւն ալ կ'աւանդուէր ուսումնասէր անհասանքուն: (տես «Հանդէս Սիսորեայ» թիւ 1-2, 1957, էջ 79) - Հր. Եփրեմ Վրդ. Պողոսեանի յօդուածաշարքը):

1859 Հոկտ. ին Թօփ-գալիտի մէջ կը կազմուի Ուսումնասիրական Ընկերութիւնը, որուն Հիմնադիրները կ'ըլլան Յակոբ Հայրեան եւ Յովհաննէս Մ. Գարրիկեան: Այն Ընկերութեան նպատակը կ'ըլլայ թաղին զպրոցներուն օգնել: Այս Ընկերութեան ճիշդերով է որ կարելի կ'ըլլայ 1865-ին հիմ-

նել թաղին աղջիկներու համար վարպուհեան վարժարանը: Յարութիւն Սմիրա Պէղճեան այս ընկերութեան նիւթական օժանդակութիւններ կատարած է:

Այս ընկերութիւնը հոգացած է նաև թաղին մանկերու Լեւոնեան վարժարանին ծախքերը: (տես Յ. Ճ. Սիբունիի «Պոլիս եւ իր դերը» Բ. Հատոր էջ 382):

1859-ին Պէյքօղի մէջ կազմուած է Բարեխիւրական Ընկերութիւնը-ը թաղին Եփրոզեան նորակա-սոյց վարժարանին ծախքերը հոգալու համար (տես նոյն, էջ 382):

Տոբթ. Տաղաւարեան Ընկերութեան մը հիմնարկութիւնը կը յիշէ 1860-ին Եէնի-գալիտի մէջ (տես «Արեւելը» թիւ 3854 6-18 Նոյ. 1898) առանց անունը տալու: Մինչդեռ Կարապետ Փանոսեան այդ Ընկերութեան հիմնարկութեան ան թուական կը նշանակէ 1859. «Ջանիւք եւ գործակցութեամբ Ընկերութիւն մը կազմուէր է Գում-գալիտի եւ Եէնի-գալիտի մէջ նեղ աղջկանց վարժարան մը բանալու համար: (տես «Հանդէս Սիսորեայ» 1957 թիւ 1-2, էջ 80): Սակայն ան եւս չի յիշեր Ընկերութեան անունը:

Հր. Եփրեմ Վրդ. Պողոսեան յաջողած է գտնել Ընկերութեան անունը եւ իր փաստարկութիւններով կ'ապացուցանէ, թէ Ընկերութեան անունը եղած է Աշոտեան: Կարապետ Փանոսեան եղած է այս Ընկերութեան հիմնադիրը ու հետեւարար իր տուած թուականը ճիշդ կընանք նկատել, ինչ որ վստահեցուցած է Հր. Եփրեմ Վրդ.: (տես «Հանդէս Սիսորեայ» 1957, թիւ 3-5, էջ 245): Իսկ ինչ կը վերաբերի աղջկանց վարժարանին անունին, կը կարծենք թէ ան անուանուած ըլլայ Հայրանուշեան, որովհետեւ այն թուականներուն զոյութիւն ունէր այդ անուով վարժարան մը:

1860-ի Օդոստոս 1-ին կազմուած է Անձնուէր Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է Կ. Պոլիս գանուոյ գաւառէն պանդուխտ եկած հայերուն կար-

դալ եւ գրել սորվեցնել:

Այս Ընկերութեան հիմնադիրը եղած է գրափա-
ճառ Յարութիւն Մարգարեան: (տես «Հանդէս Ամս-
օրեայ» 1951 թիւ 11-12, էջ 551):

Անձնուէք Ընկերութիւնը Կ. Պոլսոյ Ղալաթիոյ
Ս. Փրկչի վարժարանին եւ այլ դպրոցներու մէջ
հաստատած է Կիրակնօրեայ դպրոցներ եւ ուր հա-
սարթած է Կ. Պոլիս գտնուող զաւառացի պանդուխտ
հայերու հետ նաեւ բնիկներ, որոնց թիւը մօտ 700
եղած է: Կարգ մը դպրոցներու մէջ մօտ 50, եւ այլ
վարժարաններու մէջ 100ի մօտ աշակերտներ գտնու-
ած են, որոնք կը զաստիարակուէին Ընկերութեան
կրթական ծրագրով:

Սակայն այս բոլոր վարժարաններուն մէջ, Ղա-
լաթիոյ Ս. Փրկչի վարժարանին Կիրակնօրեայ դպ-
րոցն էր որ ամենաարդիւնաբեր գործունէութիւնը
ցուց տուած է, ու ամենակրկնաբար եղած: Այս
վարժարանին մէջ 30 տարի դասախօսած է Քրիս-
տոստուր Ղազարոսեան: Ասոր անօրէնութեան օրով
հոն դասախօսած են նաեւ (1872 թ.) Յովհաննէս
Ա. Կէօճըրի յճեան, Սարգիս Յինճեանեան եւ Գրիգոր
ձէսահեան: (տես նոյն, էջ 552):

1857-ին, ըստ Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի,
Խաղիւղի մէջ կազմուած է Վարդանանց Ընկերու-
թիւնը առնենապետութեամբ Յովհ. թիւ յիշուեա-
նի, որուն նպատակը եղած է նիւթապէս օժանդակել
Թաղին կրթական յարկերուն: Այս Ընկերութիւնը
պահած է նաեւ Ընթերցարան մը Խաղիւղի մէջ,
ինչպէս նաեւ հաստատած է Թանգարան մը 50 անձ-
նուէք եւ բնիկեցաւոր անդամներու համադրած կ-
ցութեամբ:

Մինչև 1866 թուականը այս Ընկերութիւնը պա-
հած է իր գոյութիւնը, սակայն այնուհետեւ ունէ
յիշատակութիւն չկայ անոր մասին: (տես «Հանդէս
Ամսօրեայ» 1955 թիւ 10-12, էջ 574):

1860-ին Գարակէօճըրի թաղին մէջ կը կազ-
մուի Ասիական Ընկերացախրայ Ընկերութիւնը, որ
հաւանաբար նպատած ըլլայ Սայմաթմորուք թա-

ղին Ս. Ասիական վարժարանին: (տես «Հանդէս Ամս-
օրեայ» 1956 թիւ 3-6, էջ 274-275): Չենք գիտեր թէ
այս Ընկերութիւնը որքան տան գոյատեւած է:

1861-ին կը յիշուի Հայ Տիկնանց Ընկերութիւ-
նը (տես «Հայրենիք» թիւ 1300, 1883 թ.) կամ
Տիկնանց Ընկերութիւն Պէշիկթաշի (տես «Արեւելք»
թիւ 3854, 1898 թ.) անունով Պէշիկթաշ թաղին
մէջ, որ հիմնուած է Մաքրուհեան վարժարանին հո-
գատարութեան համար: Սակայն եւ այնպէս, անոր
գոյատեւման մասին տեղեկութիւններ կը պակսին:

1861 Փետր. ին Խաղիւղի մէջ Հայ տիկնաներու
կողմէ կը կազմուի Գթութեան Ընկերութիւնը թա-
ղին բարոյքէ, սպա Պատրիարք ներսէս Վարժա-
պետեանի խորհուրդով: Ընկերութեան նպատակը
կ'ըլլայ թաղին ներսիսեան աղջկանց վարժարանին
նիւթական մատակարարութիւն կատարել: Անաղին
տարին իսկ Ընկերութիւնը կ'ունենայ 70 անդամու-
հիներ: Չենք գիտեր թէ որքան տան գործած է ան:
(տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 10-12, էջ 575-
576):

1862-ին Թօփ-գափու թաղին մէջ բարեւէր ան-
ձերու կողմէ կը կազմուի Ընկերութիւն մը, որուն
անունը անյայտ կը մնայ (տես «Հանդէս Ամսօրեայ»
1956 թիւ 7-8 էջ 360 - Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդ-
ւածաւարքը): Այս Ընկերութիւնը հիմնած է պղ-
կանց դպրոց մը: Ուրիշ տեղեկութիւններ կը պակ-
սին Ընկերութեան գործունէութեան եւ գոյատեւ-
ման մասին: Իրրեւ գործօն անդամներ կը յիշուին
հետեւեալները. Քրիստ աղա Եաղուպեան (Գանձա-
պետ), Նիկողոս աղա Մէլքոնեան, Նշան աղա Մեղ-
քոնեան, Անտօն աղա Գրազիրեան, Ստեփան աղա
Խաչատուրեան, Սերովբէ աղա Գիւնեպանեան: (տես
նոյն, էջ 361):

1862 Օգոստոս-Սեպտ. ին կազմուած է Վարժա-
պետական Ընկերութիւնը, որուն նպատակը եղած
է կարօտ ուսուցիչներուն նիւթապէս օգնել, որոշ-
ւած կանոնադրութեան մը համաձայն, որուն Գիւս-
նը կազմուած է 1864-ին հետեւեալներով, Յակոբ

Ոսկան (ատենապետ), Աւետիս Տ. Սահակեան (փոխ ատենապետ), Թորոս Նաղարեան (ատենադպիր), Միսէն Ծէլէկեան փոխ ատենադպիր)։ Իսկ Տնօրէն ժողովը կազմուած է հետեւեալ անդամներով, Սիմէն Միքայէլեան, Յարութիւն Թիւրեան, Բրիտանոսուր Ղազարոսեան, Բրիտանոս Գալստիսեան, Ս. Պ. Պ. Փափազեանց։ (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957 թիւ 11-12, էջ 575-576- շր. եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը)։

Վարժապետական Ընկերութեան կանոնադրութեան համաձայն, հետեւեալ նպատակները գործադրելու հետամուտ եղած է 1.- Աղջկային վարժարաններու մէջ ուսման եղանակը բարեկարգելու և միօրինակ ընթացք մը տալ անոր։ 2.- Վարժապետութեան բարեօրոճ։ (տես «Հանդէս Ամսօրեայ» 1951 թիւ 11-12, էջ 554)։

Այս Ընկերութիւնը սակայն չէ կրցած երկար ատեն իր գոյութիւնը պահել։ 1866-ին վերստին կը վերակազմուի։ Դժբախտաբար երկրորդ բացումէն ետք, հաջիւ երկու տարի կը գոյատեւէ, եւ վերջնականապէս կը փակուի։

1862-ին Գում-գափուի մէջ կազմուած է Լուսնորչեան վարժարանին եւ այլ վարժարաններու հօգածու Ուսումնասիրաց Ընկերութիւնը, որուն առաջին ատենապետը եղած է Մարտիրոս Սալսիթյանեան։ (տես նոյն, էջ 81 1957 թիւ 1-2)։

1862-ին Օրթագիւղի մէջ անգլիացի Հոփսիսմեան վարժարանին համար կազմուած է Տիկիանց կնիամակալութիւն մը Թաղական Սորսուրդի Գանձերով։ 1867-ին այս Ընկերութեան գլուխ կանոնած է Տիկիանց Նազար Վահանեան, որ մեկէնսար եղած է Հոփսիսմեան անգլիացի վարժարանին։

Թէև մեզի ծանօթ չեն թէ ովքեր եղած են այս կնիամակալութեան առաջին կազմի անդամները, սակայն յետագայ տարիներու վերաբերմամբ (1886 թ.) «Արշա» շարաքննարկէն կը տեղեկանանք թէ 1886-ին նոյն կնիամակալութեան կազմը հետեւեալներէն կը կազմուէր. Տիկիանց Չապէլ Զնդկեան,

Տիկիանց Մաքրուհի Չապէան, Օր. Սափեանիկ Մալէգեան, Օր. Նունիկ Սիմոնեան։

Ասանք Հոփսիսմեան անգլիացի վարժարանին բարելոման համար աշխատանք տարած են, կազմակերպելով զանազան հանդէսներ եւ այլ ձև ներկիւնքն գոյացած հասոյթը յատկացուցած վարժարանին պէտքերուն։ (տես «Արշա» շարաքննարկ 1908, էջ 632-634)։

1862 Ապրիլ 22-ին Ծէլէկիւղի մէջ կազմուած է Տաճատեան Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է Լուսնորչեան գիշերօթիկ դպրոց մը հիմնել։ (տես Յ. Ծ. Սիւրենիի «Պայլս եւ իր գերբ» Բ. հատոր, էջ 383)։ Ընկերութիւնը հաջիւ տարի մը կեանք կ'ունենայ։ 1863 Մարտ 12-ին Գում-գափուի Դրոյ դպրոցին մէջ ժողով կը գումարուելով նախադասութեամբ Պետրոս Մ. Վրդ. Ի եւ ատենապետութեամբ Տիգրան Գաբրիւսեանի, Ընկերութեան կանոնադրութիւնը փոփոխութեան կենթարկուի եւ պետածէի հարցը կարգի կը գրուի։

Համաձայն «Մասիս» թերթին (տես թիւ 725 1866 թ.) սոյն Ընկերութիւնը 1866-ին դպրոց մը կառուցանելու նպատակով Փետր. 1-ին Արեւելեան Թաղայնին մէջ մասնաւոր ներկայացած մը կուտայ։ (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952 թիւ 7-9, էջ 443- շր. եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը)։

1871-ին սոյն Ընկերութեան գրամադպուտը (250 Օսմ. ոսկի) եղած է։ Իսկ 1873-ին Ընկերութեան ատենապետ կը գանձուր Կարապետ Գ. Ազարթեանեան եւ ատենադպիր՝ Եղիազար Մ. Մէլիբեան։ (տես նոյն, էջ 444)։

Մինչեւ 1875 թուականը այս Ընկերութեան գործունէութեան մասին տեղեկութիւններ կը գտնենք։ Համաձայն «Մասիս» թերթին (1875 թիւ 1689) Ընկերութիւնը ունեցած է 450-500 Օսմ. ոսկիի արժուողութեամբ պատրաստ զոյք։

1863-ին անգլիացի մէջ կազմուած է Ներսիսեան Սանուց Ընկերութիւնը Ներսիսեանի նախկին

աշակերտութեան կողմէ, որ ունեցած է կանոնադիր մը՝ կախում վարժարանին մէջ, բայց հրատարակում չէ: Սոյն Ընկերութեան նպատակը եղած է, կարելիութեան սահմաններու մէջ ուսման յոսանքի իմութեան նպատակ: Կը հաստատէ Թանգարան մը՝ աշակերտութեան ընթերցման եւ զարգացման համար: Այս Ընկերութեան խնամակարգ կարգում է վարժարանին տնօրէնը՝ Կարապետ Զուխանեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 10-12, էջ 576- շր. Եփրեմ Վրդ. Սարգիսեանի յօդուածաշարքը):

1863-ին կազմուած է Անճուէր Սանուց Ընկերութիւնը, նպատակ ունենալով դաւաններու մէջ վարժարաններ բանալ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1951 թիւ 11-12, էջ 554):

1863-ին Եէնի-գափուի մէջ Թորոս Նապարեանի կողմէ կազմուած է Աղջկանց Դաստիարակութեան Նպատաստանայ Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է իր կարողութեան ներքո՝ չափով աղքատ աղջկանց, օրինաւոր դպրոցի մէջ, բարի ընթացքով դաստիարակել տալ, անոնց զգրօցական պիտոյքներն ալ հոգայտլ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957 թիւ 3-5, էջ 246 - շր. Եփրեմ Վրդ. Պողոսեանի յօդուածաշարքը):

Թէ որքան ատեն գոյատեւած է այս բնկերութիւնը չենք դիտեր, սակայն շր. Եփրեմ Վրդ. կը կարծէ թէ կարճատեւ եղած է:

1863-64-ի տեսները հաւանաբար հիմնուած ըլլայ Սկիւտար Իճատէի մէջ Լուսաւորչեան Ընկերութիւնը, որովհետեւ 1866-ին վերակազմուած ըլլալ կը նշուի: Աւտի այդ թուականէն առաջ արդէն իսկ կազմուած էր ան, որ բոս շր. Եփրեմ Վրդ. Ի, հիմնած է թաղին մանչերու զգրօցը 1866-ի ամբան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 7-9, էջ 420) եւ Յ. Ճ. Սիբուսի «Պոլիս եւ իր գերբ» Բ. հատոր, էջ 383):

1863-ին Գուրուչէճէի մէջ հիմնուած է Թարգմանչաց Ընկերութիւնը, թաղին Թարգմանչաց վարժարանին իբր հոգատար մարմին: Սակայն 1866-ին սոյն Ընկերութիւնը մեկի անձնութիւնով պատճառներով անգամական ներքին խլրուածներու եւ հրատարակչաներու հետեւանքով, նիթական մասակարգութեան գործը չէ կրցած հասցնել վարժարանին, թէ եւ մի քանի ազգասէրներ, ինչպէս Գէորգ աղա, Գասպար աղա, Քերոյքէ աղա, Գարբէլէ աղա եւ որիչներ, ջանացած են Ընկերութեան ճիգերը ի սպաս դնել վարժարանին, սակայն այդ մի քանիներու կատարած գոհօղութիւնները անբաւարար կ'ըլլան եւ Ընկերութիւնը կ'ենթարկուի անկ կազմութեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1953 թիւ 10-12- էջ 629) - շր. Եփրեմ Վրդ. Պողոսեանի յօդուածաշարքը):

Ինչքան անձնութիւնը կը մնայ այս Ընկերութեան գոյատեւման ինչքերը, բայց կը կարծենք թէ անգամական այդ խոտովալ վիճակով Ընկերութիւնը չէր կրնայ երկար գոյատեւել:

1864-ին, համաձայն շր. Եփրեմ Վրդ. Ի Եէնի-գափուի մէջ կազմուած է Ընկերութիւն մը, որուն անունը անյայտ մնացած է եւ որուն նպատակը եղած է դիւղին Վարդանեան վարժարանը վակուելու վասնդէն փրկել: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 9-10, էջ 441):

1864-ին Սալմաթուրքի մէջ, կազմուած է Արամեան Ընկերութիւնը Պալաթի թաղին զգրօցին ազգասիկ աշակերաներուն հազուստ հայթայթելու համար: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1956 թիւ 3-6 էջ 277):

1864 Մարտ 24-ին Օրթադիւղի Ս. Թարգմանչաց վարժարանին տեսչութեան ջանքերով կը հաստատուի Սանուց Ընկերութիւն մը, որուն նպատակը կ'ըլլայ ձրի դաստաւուութիւն ընել ուսումնասէր պանդուխտ հայերուն:

Ընկերութեան առաջին կազմակերպիչը եղած է Կարապետ Ճիլդէճեան, զգրօցին հոգարարձուներէն՝ Միքայիլ Ճանեան, իսկ ուսուցիչներէն՝ Սիմոն Իլդիլըեան (յետայ Մատթէոս Կաթողիկոս):

Ընկերութեան 1864 Նոյ.ի ծանուցման Համաձայն, Կիրակի օրերը ձրի կ'առնուղուէր հեռեւեալ նիւթերը, ազդ. պատմութիւն, թուարանութիւն, քերականութիւն, քրիստոնէական վարդապետութիւն, երաժշտութիւն: Անկէ զատ մասնաւոր դասեր կը արուէր Ֆրանսերէն, իրբերէն ամէն Չորեքշաբթի օրերը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1953, թիւ 1-3, էջ 141-142):

1867 Փետր. 25-ին ի նպատակ Մանուց Ընկերութեան բազառիկ թատերական ներկայացում կը արուի: Մական 1871-ին Մանուց Ընկերութիւնը կը զարդի զործելէ:

1872-ին ճիգ կ'ըլլայ Ընկերութիւնը վերակազմելու: Կը ձեռնարկուի յատուկ թանկարանի մը (Փրագարան-Ընթերցարան) շինութեան, որուն համար Ընկերութիւնը բանի մը անդամ Ընդհ. Ժողով դուժարած է: Առենապետ Անդրէաս Կարապետեան, վերջին կարգադրութեան մը համար, 1872 Հոկտ. 9-ին բոլոր անդամները զարձեւալ Ընդհ. Ժողովի կը հրաւիրէ:

Հակասակ այս բոլոր ճիգերուն, Ընկերութիւնը 1875-ին կը լուծուի: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1953 թիւ 1-3, էջ 142, Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1864 Փետր.ին Ռուսէլի-Հիտարի մէջ կը կազմուի Մեքորայեան Ընկերութիւնը, որուն սկզբնական նպատակը կ'ըլլայ յափահասներու յատկապէս արձեւատարներու ձրի ուսում տալ: Ռուսէլի-Հիտարի մէջ յատուկ սենեակի մը վարձուելով, էրեկայեան դասընթացքներ կը հաստատուին 1864 Յուլիսին, ազգայն արհեստագործներու ուսում տալու համար: Հին յաճախողները կը սորվին հայերէն լեզու, թուարանութիւն, աշխարհագրութիւն եւ ֆրանսերէն:

Այդ շրջանին, թողլին մէջ կար Ս. Թողէտեան վարժարանը: Կը կարծենք թէ, այն Ընկերութիւնը նպատակ ըլլայ այդ վարժարանին ծախքերուն, թէեւ այդ ուղղութեամբ առեւայինք չկան:

1881-ին է որ միայն, կը յիշուի այն Ընկերութեան «Թաղին ազգայն վարժարանին օժանդակութիւնը» (տես «Մասնա» 1881 թիւ 2941) որ սուրի կ'ամբարպէտէ մեր վերալիշեալ կարծիքը: Գործ-ժողովի առեւապետը եղած է այդ թուականին Ս. Կ. Արսէնեան, իսկ առեւապէտը՝ Գ.Գ. Սիմօնեան:

Համաձայն Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի, Ռուսէլի-Հիտարի մէջ 1881-ին այն Ընկերութիւնը Ս. Թողէտեան վարժարանին հպարտորձութիւնը ըստանձնած է: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 7-8, էջ 336):

1864-ին Էյուպի թաղին մէջ կը թուական Ընկերութեան մը զոյտութիւնը կը յայտնուի (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 Նոյ. 1898-Մկնակ Բանասէր-Տնօթի. Տաղաւարեանի յօդուածաշարքը), առանց սակայն անունը յիշելու: Այս Ընկերութիւնը հասանական է որ կը հոգար թաղին Ատաբեկեան մասնաշրջան վարժարանին ծախքերը:

1864-ին Ելնիկիցի մէջ կազմուած է Մամիկոնեան Ընկերութիւնը, նոյնանուն վարժարանին իբր օժանդակող մարմին: (տես «Իրիզանդիան» թիւ 2209 20 Դեկտ. 1903):

1864-ին Լանկայի Մեղրոյեան վարժարանին (տես Յակոբ Վարժապետեանի «Յիշատակարան 75 ամեայ Յորեկեանի Ս. Յարութիւն եկեղեցւոյ Գում-գափուի Գրքի - 1855-1930 - էջ 47) հրկիզեալ թաղին համար Յանձնաժողով մը կազմուած է, որուն նպատակը եղած է կարօտեալներուն հոգալ: Հրդեհը որ պատահած է 1865 Օգոստոս 25-ին (տես նոյն, էջ 47), հաւանաբար Արշակ Արայոյաճեանի յիշած Տիկնանց Ընկերութիւնը, սոյն վարժարանին Ընկերութիւնը ըլլայ, ինչպէս մասնաւորէ կ'ընէ Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեան իր յօդուածաշարքին մէջ տարակուսելով: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957 թիւ 1-2, էջ 82):

1864-1865-ին Մամթիւն մէջ կը կազմուի Նունեան Ընկերութիւնը, որ նոյնանուն ազգական

վարժարանին նրաժապէս եւ բարոյապէս կը նպաստէ: Չենք գիտեր թէ որքան ասին զոյառեւած է ան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1956 թիւ 9-12, էջ 519-520 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1865 Յունիտին Բերայի մէջ կազմուած է Ազգասիրական Ընկերութիւնը, նպատակ ունենալով 1.- Հանդուցեալ Բզնաաբոս վարժարանի Պատշէճ անունով պանդոկին մէջ բացած պանդոկախներու գիւերային դպրոցին ուսուցիչի ամսականը, գործոցին վարժքը, լոյսի եւ գրեւական ծախքերը Վճարելու, 2.- Անտէրունչ եւ ազրաս աշակերտներու հիւանդութեան պարագային բժշկական ծախքը հոգալու, 3.- Կարօտ աշակերտներու տարեկան նսէք մը, օրինակ՝ զգեստ նսիրելու համար:

Ընկերութեան կեդրոնականին եղած էր Չախուր կամ Թաղապաշի ձառտէտի, թիւ 134: 1866 Հոկտ.ին Ընկերութիւնը կը դադարի գործելէ: Սակայն չորսհի Օդոն Ծահանեանի, Սահիան Փափազեանի, Նշան Օտեանի, Սարգիս Պօշնապեանի եւ Միքայիլ Էմէրեանի ղրաժական օչնութիւններուն, 1867 Յուլիս 1ին Ընկերութիւնը վերստին կը գործէ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952 թիւ 4-6, էջ 298-99 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1866-ին Սելւածիէ թաղին մէջ կազմուած է Անպատկալ Տիկնանց Ընկերութիւնը, նպատակու համար Ս. Պաշի աղջկանց վարժարանին: Այս Ընկերութիւնը զոյառեւած է մինչև 1908 թուականը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 11-12, էջ 590-Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1866-ի Ապրիլ-Մայիս ամիսներուն, Սկիւտարի Իճատիէի թաղին մէջ կազմուած է Տիկնանց Ընկերութիւնը, ի նպատակ թաղին աղջկանց դպրոցին, հոգածու ըլլալով դպրոցին յառաջգիւծութեան: (տես նոյն, 1955 թիւ 7-9, էջ 421):

1866 Հոկտ.ին Բերայի մէջ հիմնուած է Հայկական Ընկերութիւնը, նպատակ ունենալով թաղին

մէջ գիւերութիւ վարժարան մը բանալու: Ընկերութեան հիմնադիրները աստամեայ նախագահ կ'ընարէն Տոթթ. Սերգիէէն, իսկ գանձապահ՝ Գէորդ պէյ Երամեան: Սակայն Ընկերութիւնը իր բաժանելով անդամներէն չկրնալով դպրոցին յատկացուելիք գումարը գոյացնել, կը լուծուի նոյնմարտի սկիզբը: (տես նոյն, 1952 թիւ 4-6, էջ 299):

1867 Նոյ. 1-ին Գնայր կղզիի մէջ կազմուած է Ներսէսեան Ընկերութիւնը, որ նպատուած է Ներսէսեան վարժարանին: Արիչ տեղեկութիւններ կը պահանք այս ընկերութեան գործունէութեան ու զոյառման մասին: (տես նոյն, 1955 թիւ 7-9, էջ 435):

1867-ին Թօփ-գալուի մէջ կազմուած է Լեւոնեան Ընկերութիւնը, նպատակու համար թաղին Վարդուհեան աղջկանց վարժարանին եւ ազգայ Լեւոնեան վարժարանին: Հիմնադիրները եղած են Պետրոս Թափշանեան (անունայեան), Գ. Արծրունի (ասունաղպիր) եւ ուրիշներ: Համաձայն Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի, այս Ընկերութիւնը 1870ին հիմնուած է Վարդանայ վարժարանը, որուն մասին մենք սեւէ տեղեկութիւն գտած չենք: Չենք գիտեր թէ որքան ասին տեւած է այս ընկերութիւնը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1956 թիւ 7-8, էջ 361-362): Մինչդեռ, համաձայն «Մանրամէկ Էֆֆարթի», այն Ընկերութիւնը հիմնուած է 1870 թուականին: (տես թիւ 1225 30 Ապրիլ 1870):

1873-ին այս Ընկերութեան ասունապետութիւնը վարած է Գրիգոր Միկեան: Սոյն թուականին Տիկին Տիրուհեան 20 սակի կը նուիրէ Ընկերութեան եւ կը խոստանայ կտակ մըն ալ թողուլ: Այս կնոջ քաջաբի 1874-ին կ'որոշուի Ընկերութեան անունը կոչել Տիրուհեան, սակայն ընդդիմադիրներ չեն ընդունիր եւ քիչ ասեւն ետք կը փակուի Ընկերութիւնը:

1867-ին կը կազմուի Օրթոդոքս մէջ Բաջալեքոզ Ընկերութիւնը, որ կուզար շարունակելու Թարգմանչաց Ընկերութեան մատակարարման գոր-

ժը, որ 10 տարի տևած է:

Թարգմանաց Ընկերութիւնը ժողոված ըլլալով, Բաղաշերտ Ընկերութիւնը թաղին մասնաճիւղով Թարգմանաց վարժարանին հոգը կ'ստանձնէ, որ սոց. թուականին անհեալ վիճակ մը ունէր:

Այս Ընկերութիւնը կազմակերպած է Տիգրանիկ աղա Եռուստիան, Անգլիայէն Կ. Պոլսի գաղչէն ետք, որ շուտով իր Ընկերութեան անդամներուն թիւը կը բարձրացնէ 34-ի: Սակայն 1871-ին այս Ընկերութիւնն ալ կ'ունենայ նիւթական դժուարութիւններ եւ իր մասակարարութիւնը անկանոն կը կտատի: Չենք գիտեր թէ որքան ատեն պահած է այս Ընկերութիւնը իր գոյութիւնը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1953 թիւ 1-3, էջ 142-144):

1867-ին Գուս-գալուսի մէջ կը կազմուի Նպաստամասաց Ընկերութիւնը, նախաձեռնութեամբ Տոքթ. Կարապետ Գալուստեանի, որուն նպատակը կ'ըլլայ Ս. Փրկչի Հիւանդանոցի վարժարանին տղոց գրեւական պիտոյք հայթայթել:

Այս Ընկերութեան կեդրոնը գտնուած է Լանկա թաղին մէջ, Մուսալլա ճատակի թիւ 94: 1868-ին Տնօրէն ժողովի ատենապետը եղած է Մ. Զիւմրեան, իսկ ատենապօղբը Յ. Յ. Յովակիմեան: Չենք գիտեր թէ այս Ընկերութիւնը որքան ատեն գոյատևած է, ուրիշ տուեալներ չունենալով, ստուգել կարելի չէ եղած: (տես Բիւզանդ Քէշեանի «Պատմութիւն Ս. Փրկչի Հիւանդանոցին Հայոց Ի. Կ. Պոլսի» էջ 186-187 եւ էջ 208-209):

1868-ին Սելւաթի թաղին մէջ կը կազմուի Արարատեան Ընկերութիւնը, երբ կը հրատարին Խնամակալ Տիկնանց Ընկերութեան անդամները: Այս Ընկերութիւնը շարունակութիւնը կ'ըլլայ յիշեալ Ընկերութեան ու կը կազմուի Գործաշիր ժողով մը հետեւեալ անդամներով. — Քրիստոստուր Ղազարուսեան, Յակոբ Եգմէնճեան, Պօղոս Վ.Պ., Յարութիւն Խանտանճեան, Յովհաննէս Խանճեան, Արքայճաճ Յ. Ալիպեան, Միհրան Ե. Թուղլաճեան:

Ընկերութիւնը կ'ունենայ իր կանոնադրերը:

Եթէ յօդուածներէ բաղկացած, որուն մէջ կը գրուենք Ս. Պատի աղջկանց վարժարանին հոգատարութեան վերաբերմամբ պայմաններ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 - թիւ 11-12, էջ 592-593 - Հըր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1868-ին սկիզբները կը կազմուի Ռուսմասութեան Ընկերութիւնը, որուն հիմնադիրը կ'ըլլայ Ամբրոսիոս Վրդ., նպատակ ունենալով Կ. Պոլսի դանտոց պանդուխտ հայերուն ձրի կարգավիճակ սորվեցնել: (տես նոյն, 1955 թիւ 10-12, էջ 577):

1868 Գեղարին էջուպի Ս. Եղիա թաղին մէջ հիմնուած է Հոսիսթեան Խնամակալութեան Ընկերութիւնը, Պէդճեան արքային վարժարանին կից աղջկանց բաժնի հոգաճութեան համար: (տես նոյն, էջ 596):

1868-ին Սամթիւնյ մէջ ծաղած Հրեհէն պատճառով, թաղին բնակարաններու հետ այրած ըլլալով նունեան աղջկանց վարժարանը, առկերտութիւնը գրկուած կը միայն դատարարուի թիւնէ: Ասոր դարձան տալու համար, կը թառէր եւ ազգասէր անձեր, թիւսով եօթը, Սամթիւնյ մէջ Աղապեան անունով աղջկանց գիշերօթիկ վարժարան մը բանալ կը յաջողին 1869-ին, Կարապետ Փանոսեանի արձուցնութեան տակ, ինչպէս իր տեղին յիշեցին:

1868-ին Եգնի-գալուսի մէջ կը կազմուի Արամեան Ընկերութիւնը թաղին մէջ աղջկանց վարժարան մը բանալու նպատակով: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957 թիւ 3-5, էջ 246-247- Հըր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1868 Յունիս 2-ին Պէշիկթաշի մէջ կը հիմնուի Ս. Էջիստանեան Ընկերութիւնը (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 նոյ. 1898) թաղին Մարքուհեան երկեսու վարժարանին օջնելու եւ անոր նախնական մակարդակը բարձրագոյնի հասցնելու համար: Այս Ընկերութեան ատենապետը եղած է Պօղոս Աշնանեան, ժոխ-ատենապետ՝ Պօղոսիկ աղա Փաշապեան, կենդանահայ՝ Անտոն Էֆ. Պաշեան, դանձապետ՝ Արթին Էֆ. Մարտուտեան, համարակալ՝ Առաքել

աղա Տրիլիթեան, խորհրդականներ՝ Օրսարբիէլ աղա Բէճահանեան, Ղազարոս աղա Ալէքսանեան: Այս Ընկերութիւնը էջմիածնեան կոչուած է, որովհետեւ իր հիմնադրութեան թուականը կը գուրադրուէր Ս. էջմիածնայ կաթողիկէին անանիոսեանի:

Ընկերութեան կեդրոնատեղին եղած է Պէշիկ-թաշի Ս. Աստուածածին եկեղեցւոյ դուիթին մէջ սենեակ մը: Այս Ընկերութեան անդամներու թիւը եղած է 761: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952 թիւ 10-12, էջ 626-628 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաչափքը):

1869 Դեկտ. ին Գասթըմ ժաշա թաղին մէջ կազմուած է նուիրատիաց Ընկերութիւնը, թաղին զարդարող բարեկարգելոյ նպատակով: Աւրիշ տեղեկութիւններ կը պահուին ասոր մասին: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 7-9, էջ 438 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաչափքը):

1869-ին Խաղիւղի մէջ կազմուած է Ներսիսեան Օրիորդաց Ընկերութիւնը անդուսն վարժարանին համար, որուն նպատակը կ'ըլլայ ստանձնել ասոր հոգւածութիւնը:

Այս խնամակարութեան անդամները եղած են հետեւեալները:

Տրիլիթեան Մանան Նիզամեան, Նազիր Ճարակեան, Նարդիկ Քաթուբճեան օրիորդներ՝ Սրբուհի Մինասեան, Երանուհի Մինասեան, Նոյեմի Տ. Գէորդեան, Աննա Զարֆճեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 10-12, էջ 577-578 եւ «Արեւիկ» թիւ 3854 6-18 Նոյ. 1898):

1869-ին Սալամթումրու թաղին մէջ կը կազմուի Հոփոսիմեան Սանուհեաց Ընկերութիւնը, թաղին Ս. Հոփոսիմեան աղջկանց վարժարանին հոգաարութեան համար: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1956 թիւ 5-6, էջ 277-278 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաչափքը):

1869-ին Եէնի-դափու թաղին մէջ կը կազմուի Մեարապեան Ընկերութիւնը նպատակ ունենալով

թաղին կիրակնօրեայ վարժարանին օժանդակել: 1869 Ապրիլին սոյն Ընկերութեան Տնօրէն Ժողովի ատենապետը եղած է Բարսեղ Գ. Այազմարեան, իսկ ատենադպիրը՝ Կ. Եաթմանեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957 թիւ 3-5, էջ 247-348, Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաչափքը):

1869-ին Բերա թաղին մէջ հիմնուած է Ուսումնասիրաց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է թաղին մէջ մտաւարական զարգացումին օժանդակել եւ ազատ աշակերտներուն կոչիկ եւ զգեստայ: (տես նոյն, 1957 թիւ 11-12, էջ 578-):

1869 Ապրիլ - Մայիս ամիսներուն Ռումէլի-Հրասի մէջ կը կազմուի Օժանդակ Ընկերութիւնը, նպատակ ունենալով թաղին բնակարաններուն հետ հարեհին զոհ դացած Ս. Թադէոսեան վարժարանը վերաշինել եւ մտաւարի զարգացնել աշակերտութեան: Այս Ընկերութիւնը կը բաղկանար 25 խնամակալ անդամներէ, մեծ մասամբ սակերիչներէ: Ընկերութեան կազմանէ հետեւեալ շորս մեծ անձերը հոգարարած. Կընտրուին, Յարութիւն թանճեան, Պօղոս Էլմաստեան, Սիմոն Յովհաննէսեան, Յարութիւն Մրմբրեան: (տես նոյն, 1954 թիւ 7-8, էջ 336-338):

1869 Յուլիս-Օգոստոս ամիսներուն, Ռումէլի Հրասի Ս. Թադէոսեան վարժարանին աղջկանց օժնութեան համար կը կազմուի նոս. Սանդխտեան Ընկերութիւնը: (տես նոյն, էջ 338):

1869-ին էյուպի մէջ կը կազմուի Արտեմեան Տրիլիթեանց Ընկերութիւնը, Առաքելեան երկսեռ վարժարանին աղջկանց կրթութեան եւ յառաջիմութեան ստատրելու համար: Ապա 1870-ին Կարոզասիրաց եւ Արտեմեան Տրիլիթեանց միացեալ ճիւղերով, Ս. Աստուածածին թաղամասի Առաքելեան վարժարանի աղջկանց բաժնի համար ատանձին չէնք մը ձեռք կը բերեն եւ զայն կ'անուանեն Արտեմեան աղջկանց վարժարան: (տես նոյն 1955, թիւ 10-12, էջ 596-597):

1870 Յունուար 1-ին հիմնուած է Ընկերութիւն

Մամախալաց ներսիսան երկես վարժարանայ -
Ընկերութիւնը ներսիսան վարժարանին հօգածու
թեան համար: Համաձայն Հր. Եփրեմ Վրդ. Պօղոս-
եանի, այս Ընկերութեան Տնօրէն ժողովի ասենա-
պետը եղած է Յովակիմ Մերկերեան, իսկ գանձա-
պետը՝ Համբարձում Մանուկեան: (տես նոյն, էջ
578):

1870-ին Մասպիզի մէջ կը կազմուի Ս. Ներսի-
սան Սանուց Ընկերութիւնը, ներսիսան երկես
վարժարանին նախկին աշակերտներու կողմէ, նա-
խապահութեամբ ներսէս Վրդ. Վարժապետանի,
նպատակ ունենալով, նպաստել վարժարանին յա-
տազգիմութեան: Այս Ընկերութիւնը սակայն մի-
շանի տարի կեանք կ'ունենայ: 1878-ին կը վերա-
կազմուի Սիման Միքայէլեանի ասենապետա-
թեամբ, իսկ Տնօրէն ժողովի անդամ կ'ընտրուին
Պետրոս Փափազեան (գանձապետ), Պօղոս Գրլընճ-
եան, Միսա Միսեան, Ռէթէս Թողէոսեան եւ
Մաշատուր ժամկոչեան: Ձենք գիւտք թէ որքան
ատեն գոյատեւած է այս Ընկերութիւնը, բայց
գիտել ասնք որ 1880ական թուականներէն ետք
միայն անոր յիշատակութեան չենք հանդիպել:

1870-ին Մասպիզի մէջ հիմնուած է Ետպար
Շահնազարեան Սանուց Ընկերութիւնը, նոյնանուն
վարժարանին ծախքերը հոգալու համար: (տես
նոյն, էջ 578-580):

1870 Փետր.ին Սամաթիոյ մէջ կազմուած է
նպատասաւատոյց Ընկերութիւնը Ս. ՍաՀակեան
վարժարանին իրը հոգաաար մարմին: Այս Ընկե-
րութեան կ'ատենապետէ Ա. Մկրտիչեան: Մինչեւ
1880ական թուականները ասոր յիշատակութեան
հանդիպած ենք, բայց ճշգրիտ կերպով չենք գիտեր
թէ որքան ատեն պահած է իր գոյութիւնը: (տես
նոյն 1956 թիւ 9-12, էջ 521-522):

1870 Մայիս 1-ին Բերայի մէջ հաստատուած է
Գարդապարաց Ընկերութիւնը, կալաթա Սարգս
Կարաբաղեան Լիսէի հայ ուսանողներու կողմէ: Այս
Ընկերութեան կազմութեան նախաձեռնող եղած է

Կարապետ Սվաճեան, որուն նպատակը եղած է
«Հայաբնակ վայրերու մէջ վարժարաններ հաստա-
տել»: 1874-ին Բանկաթիի մէջ գումարուած Ընդհ-
ժողովին փոփոխութեան ենթարկուած է Ընկերու-
թեան Կանոնադիրը:

Այս Ընկերութիւնը ծրագրած էր «նրիխալէս
օգնել կարօտ դպրոցներուն եւ Կիրակնօրեայ գա-
սախօտութիւններ սարքել»: 1874-ին ընդարձակելով
իր ծրագիրը, կը նպատակադրէ գաւառներու մէջ
վարժարաններ հաստատել: 1878-ի Գարդապարաց
Ընկերութիւնը կը միանայ Արեւելեան Ընկերու-
թեան հետ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952 թիւ
4-6, էջ 301 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդու-
ածալարքը եւ «Փարձ» 2. Գիրք» 1879, էջ 184): Այս
Միաշեւոյ Ընկերութիւնը կ'ունենայ 510 անդամ:

1870-ին Պէշիկթաշի թաղեցիները Մաքրուհեան
աղջկանց վարժարանին մէջ Կիրակնօրեայ գաւա-
տախօտութեանց համար կը կազմեն Սանուց Անձուէր
Ընկերութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ բնիկ թէ
ցտնդախա անուս աղգայիններուն ուսում տալ:
(տես «Հանդէս Ամսօրեայ» 1952, թիւ 10-12, էջ
629):

1870-ին Պոյաճիգիլիին մէջ Անձուէր Ընկե-
րութեան մասնաճիւղը կը կազմուի, ինչպէս որ
կազմուած էր 1867 թուականէն առաջ (ստոյգ չենք
գիտեր թէ որ թուականին) Պէշիկթաշի մէջ, թա-
ղին անուս աղգայիններուն դասախարակութեան
համար: (տես նոյն, 1954, թիւ 7-8, էջ 342):

1871 Օգոստոս 2-ին Սամաթիոյ մէջ կազմուած
է Ա. Բ. Գ. ի Բարեկամ Ընկերութիւնը, որուն հա-
տոյթին երկու երրորդը Ազապեան վարժարանին եւ
մէկ երրորդը բնիքացարան մը բանալու համար:
(տես «Արեւելք» թիւ 3854 6-18 Նոյ. 1898 Սկսնակ
Բանասէր-Տոբթ. Տաղաւարան - յօդուածալար-
քը, եւ «Հանդէս Ամսօրեայ» 1956 թիւ 9-12, էջ
523):

1870-ին Բերայի մէջ հիմնուած է Ուսումնա-
տիրաց Ընկերութիւնը նախաձեռնութեամբ Միս-

րան Սվաճեանի, բայց հիմնովի ճշգրիտ թուականը յայտնի չէ եւ մանրամասնութիւններ կը պակասին անոր մասին: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952, թիւ 4-6, էջ 301):

1871 Մայիսին Պէտիկթաշի մէջ կը հիմնուի Հայրենասիրաց Ընկերութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ Կիլիկիոյ մէջ աղբային վարժարան մը հաստատել (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952 թիւ 10-12, էջ 629, Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաչարքը):

1871-ին Պէյքազի մէջ կը կազմուի Դպրոցատէր Ընկերութիւնը, նպատակ ունենալով աղջկանց վարժարան մը հաստատելու թաղին մէջ: Այս Ընկերութեան ղեկավարն էր Արբաճամ պէյ Երամեան, որուն ջանքերով Հոկտ. 31-ին կը բացուի վարժարանը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 9-10, էջ 443 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաչարքը):

1871 Յուլիս 17-ին Սիւրաբի Սեւածուրդ թաղին մէջ կը կազմուի Դաստիարակաց Ընկերութիւնը դպրոցներ բանալու նպատակաւ: Ընկերութեան ատենապետն էր Աւետիս Տէր Սահակեան եւ ատենադպրեր՝ Ս. Հ. Մ. Ֆէլէկեան, որոնք 1871 Յուլիսին յաջողած են բանալ վարժարան մը թաղին մէջ (համաձայն Եփրեմին, Սեւածուրդ թաղ Սեւածիէի փողոց թիւ 19): Այս վարժարանին անունը չէ արուած, սակայն դեռեւս որ երկուստ աշակերտներ ունեցած է: Համաձայն Հր. Եփրեմի տուեալներուն, վարժարանը կոչուած է Ընկերութեան անունով Դաստիարակաց Ա. վարժարան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 11-12, էջ 593-594):

1871 Սեպտ. 1-ին Սիւրաբի մէջ հիմնուած է վարդանեան Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է Հաճընի մէջ բանալ դպրոցներ: Վարչութեան անդամները հետեւեալները եղած են. Թուրէն Գրիգորեան (նախագահ եւ զանձապետ), Թուրէն Քէճիճեան (ատենադպր), Բիւզանդ Իւզարեան, Թերոն Գրիգորեան, Կարապետ Գարամաճեան, Մի-

քայէլ Իւզարեան, Յակոբ Աստուածատուեան, Յարութիւն Բարաղեան, Յովհաննէս Թէվէքէլեան, Յ.Յ. Յովակիմեան, Պետրոս Բարակէօղեան, Սիմոնի Դանիէլեան, Ստեփան Չպուքճեան, Տիգրան Չպուքճեան:

Այս Ընկերութեան նպատակն էր զուտներու մէջ կրթութեան յառաջիմութեան աստարել: Անոր ջանքերուն շնորհիւ կարելի կ'ըլլայ բանալ Ս. Վարդանեան եւ Ս. Վարդուհեան երկուստ վարժարանները: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955, թիւ 10-12, էջ 580-581 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաչարքը):

1871ին էյուպի Ս. Եղիա թաղամասի Պեղճեան վարժարանի աններուն կողմէ կը կազմուի Պեղճեան Սանոց Ընկերութիւնը գլխաւորութեամբ Համապատասխան Ռաֆայէլեանի, որուն կը դործակցին նաեւ Տիրան Տ. Մանուկեան, Արիստակէս Հ. Յակոբեան, եւ Պետրոս Մուրատեան: (տես նոյն, էջ 597):

1871-ին Գուդիսնձուրի մէջ եւս կը հիմնուի Հայրենասիրաց Ընկերութեան մէկ ճիւղը:

1871-ին Սամաթիոյ Եկնի Մահալէ կամ Ալթըր Մէմէրի մէջ Վարդան Մամիկոնեան Ընկերութիւնը, նպատակ կ'ունենայ օգնել թաղին Ներսէսեան վարժարանին ծախքերուն: (տես «Փունջ» 1872 թիւ 722):

1872 Հոկտ. 15-ին Սթեփանի մէջ Խորէն Քհնյ. Փէհրիմանեանի նախադաշութեամբ կը հիմնուի Տարօնեան Ընկերութիւնը Ս. Ղեւոնդեանց թաղին վարժարանին հողատարութեան համար: Այս Ընկերութեան անդամներուն մեծ մասը մշեցի պանդուխտ դործաւորներ եղած են: Գործադիր ժողովի անդամներ եղած են՝ Խորէն Քհնյ. Փէհրիմանեան (ատենապետ), Յովհաննէս Բարսեղեան (ատենադպր), Արիստակէս Քհնյ., Սարգիս Օնպաչի (մշեցի), Յարութիւն Օնպաչի (մշեցի), Համարձում (որուն մականունը չէ արուած): Ընկերութիւնը պահած է իր գոյութիւնը մինչեւ 1889 թուա-

կանը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 9-10, էջ 440 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1872 Փետր.ին Սիկեստրի նոր-թաղին մէջ կը կազմուի Ազգաստորաց Ընկերութիւնը քանի մը ուսումնասէր երիտասարդներու կողմէ, նպատակ ունենալով թաղի վարժարանին ազգատաշակերտաներուն ամէն տեսակի դրենտակն եւ զգեստի շինութեան հոգսն առնել: Ընկերութեան Տնօրէն ինքնա-հաւրդի ատենապետը եղած է Յարութիւն Ս. Դուրեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 7-9, էջ 413, Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1872 Փետր.ին Սալմաթմարուքի մէջ կը կազմուի Ուսումնասիրաց Ընկերութիւնը Արփածեթաղու փողոցի վրայ գնուող Ս. Թաղէտ եւ Բարթողիմէոս վարժարանին մէջ, հայերէն, թրքերէն լեզուներով դասախօսութիւններ կազմակերպելու համար, ինչպէս նաեւ թուարանութիւն եւ այլ գլխաւոր տեղեւոր սարքիցներու, կիրակի օրերը հոն յաճախող հասարակութեան: Այս Ընկերութեան Տնօրէն Ժողովի ատենապետը եղած է Պ. Միքայէլեան, իսկ ատենազարդը՝ Գ. Կ. Միխայէլեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1956 թիւ 3-6, էջ 279-280):

1872 Օգոստ.ին Թօփ-գափու թաղին մէջ կազմուած է Կրթասէր Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է թաղին ազգատա եւ որբ՝ բայց ուսման եւ կրթութեան ընդունակութիւն ունեցող տղաքը իր հոգատարութեան տակ առնել եւ բարեկարգ վարժարաններու մէջ զարգացնել զանոնք:

Ընկերութեան Գործադիր Ժողովի ատենապետը եղած է Պետրոս Պէյլիկեան եւ ատենազարդը՝ Ա. Կ. Վարդանեան, որոնք ամէն տեսակի գոհողութիւններ բրած են ոչ միայն իրենց թաղին, այլ նաեւ Կ. Պոլսոյ համայն կարօտեալ աշակերտներուն հոգալու: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1956 թիւ 7-8, էջ 364-365 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1872 Ապրիլին Տօյապօլէի մէջ եօթը ուսումնասէր անձեր Ռամասոյր Ընկերութիւնը հիմնած են թաղին մէջ, Հայկական երկսես վարժարանին նիւթագէտ ստասրելու համար: Այս Ընկերութիւնը բնական է կ'ունենայ իր Ատենապետը, Ատենազարդը եւ Գանձապահը: Մեզի ծանօթ է միայն ատենազարդին անունը՝ Յարութիւն Գարայեան, որ «Մասիս» թերթին յղած է Ընկերութեան կազմութեան մասին տեղեկութիւններ 1872 թուականին: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952, թիւ 7-9, էջ 452):

Նոյն թուականին Սեպտեմբեր ամսուն կը կազմուի Արշակունեան Ընկերութիւնը նոյն թաղին մէջ, որ ըստ Հր. Եփրեմ Վրդ. Հանէսեանի («Հարբարանհիգամեայ Յօրէյեան» ուսումնասիրութեան քաղած տեղեկութեան) նպատակ կ'ունենայ թաղին մէջ վարժարան մը եւ մտաուս մը կառուցանելու Թաղային Պորհաւրդի հովանաւորութեան տակ: Սակայն հարց կուտայ թէ՛ արդեօք Ընկերութիւնը յաջողած է կառուցանել վարժարանը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952, թիւ 7-9, էջ 452): 453):

Համաձայն Սիւնակ Բանասէրի, Արշակունեաց երկսես վարժարան մը գոյութիւն ունեցած է 1857 թուականէն ի վեր եւ որ գոյատեւած է մինչեւ 1900 ական թուականները: Մեզի կը թուի թէ այս Ընկերութիւնը յաջողած ըլլայ չինել նոր դպրոցի մը շինքը Արշակունեաց երկսես վարժարանին համար եւ հոգացած անոր ծախքերը: Ընկերութեան ատենապետը եղած է Ստեփան Ռուծ Օղլու, իսկ գանձապետ՝ Յակօր Աճառեան: Ատենապալիքին անունը մեզի անծանօթ կը մնայ:

1873-ին Սամաթիոյ մէջ, ըստ Ա. Ալոյոյաճեանի, կազմուած է Որախոյս Ընկերութիւնը Կարապետ Փանոսեանի կողմէ, Ազգայեան աղջկանց վարժարանին գոյատեւման համար: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952 թիւ 4-6 էջ 303):

1873-ի սկիզբները Ռասպիդի մէջ կը կազմուի Բաժանորդական Ընկերութիւնը, որուն գործունէ-

ութեան շրջանը կ'ըլլայ հինգ տարի, համաձայն Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի փաստաբերութեան: Այս Ընկերութիւնը զանազան ձևանարկներով կրցած է որոշ գումար գոյացնել և անոր երկու առ հարիւր տակտը յատկացնել Պատրիարքի Ս. Երբսիսեան վարժարանին ի նպաստ, իսկ ասիկ զառ Ընկերութիւնը հոգացած է որիչ զանազան նպատակներու: Վարչութեան կազմը հետեւյինները եղած են Սարգիս Արքաճամեան (նախագահ), Յարութիւն Կրմիրչեան, Պետրոս Յ. Բարազեան, Պօղոս Ոսկերէչեան (զանձապահներ), Նիկողոս Մ. Թիւրքլեանձեան (համարակալ): (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 10-12, էջ 583):

1874-ին Եկեղեցւոցայէրի մէջ հիմնուած է նպաստամատոյց Ընկերութիւնը: Օր. Չապէլլ Սանձեան զլիաւոր հիմնադիրը եղած է այս Ընկերութեան, նպատակ ունենալով ազրատ աղջիկ աշակերտուհիներու դպրոցական պիտոյքները մատակարարելու: Նպաստամատոյց Ընկերութեան անդամուհիները օրհարդներ՝ Չապէլլ Սանձեան, Արտեմիս Տուտեան, Ակիւրիկ Լուսիֆեան, Մատի Չպուքճեան, Սաթենիկ Հաճեան, Տիրուհի Գարֆայեան, Վերդին Սալամուրեան, Գարսիկ Պարսախեան, Վարդանոյշ Լուսիֆեան: 1876-ին Ընկերութիւնը կը դադրի գործել: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 7-9, էջ 414):

1874 Յուլիոն Եկեղեցւոյ մէջ կը հաստատուի Գղարցասիրաց Ընկերութիւնը, զլիաւորութեամբ Պ. Մ. Յ. Գալարճեանի: Այս Ընկերութիւնը Կօզնէ թաղին մանչերու Առաքելոյ վարժարանին ծախքերուն: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957, թիւ 3-5, էջ 249):

1874-ի սկիզբները կազմուած է Ս. Թարգմանչաց Ընկերութիւնը, նպատակ ունենալով Վանի Զուլամերիկ դատոսի Գուգա-Գուառ զիւղաբազաբի մէջ վարժարան մը բանալ: Ընկերութեան աստեղական էր Գեղրդ Արեւելեան և զանձապետը՝ Յովհաննէս Մաղաբեան: (տես «Հանդէս Ամսօրեայ»

1957 թիւ 8-10, էջ 486- Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը):

1874-ին Օրթադէրգի մէջ կազմուած է Ընթերցասիրաց Ընկերութիւնը թաղին Թարգմանչաց վարժարանին նպատակու համար, սակայն յուսով կը կազմաւորուի: (տես աւելի մանրամասն «Հանդէս Ամսօրեայ» 1958 թիւ 1-3, էջ 151-152- Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը):

Ասիկ անմիջապէս Լաբ կազմուած է 1874-ին Ուսումնասիրաց Ընկերութիւնը, որ նպաստած է թարգմանչաց վարժարանին և սպասուված է հաստատուն եկամուտ մը: (տես նոյն):

1874-75 տարիներուն Սամաթիոյ Եկեղեցւոյցայէրի մէջ կազմուած է Ուսումնասիրաց Ընկերութիւնը, օժանդակելու համար թաղին Երբսիսեան երկուսն վարժարանի ազրատ ազոյ, մատակարարելու համար անոնց անհրաժեշտ պիտոյքները: Այս Ընկերութեան աստեղականը եղած է Գ. Տ. Մ. փախաղեան և աստեղապիրը՝ Մ. Էթմէքճեան: Համաձայն Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի, Ընկերութիւնը շարունակած է գործել մինչև 1890ական թուականները: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1956 թիւ 9-12, էջ 534-535):

1875-ի սկիզբները Պալաթի մէջ կազմուած է Պորէնեան Սանոյց Ընկերութիւնը, թաղին Սորէնեան վարժարանին և ազրատ աշակերտներուն օգնելու համար: Ուրիշ մանրամասնութիւններ կը պակսին այս Ընկերութեան մասին: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1956, թիւ 3-6, էջ 269-270): Կր կարծուի թէ Ընկերութիւնը գոյատևած ըլլայ մինչև 1884 թուականը:

1875-ին Բումէլիկ Հրաբերի մէջ հիմնուած է Ս. Թաղէտեան Սանոյց Ընկերութիւնը, թաղին Ս. Թաղէտեան վարժարանին ծախքերը հոգալու համար: Այս Ընկերութեան աստեղականը եղած է Երանդ Չապուշեան, իսկ աստեղապիրը՝ Տիգրան Գազզեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 7-8, էջ 340-341- Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուած

ծաշարքը) :

1876 Յունուար 1-ին Կէտիկ փաշայի մէջ (Լանկա) կը հաստատուի Օժանդակ Ընկերութիւնը. թաղին Մկրտիչեան վարժարանին ձախերը հոգալու համար : Ընկերութեան վարչութիւնը Յանձնաժողով մը կազմած է հետեւեայ անձերով. Յովհաննէս Տ. Մկրտիչեան, Ստեփան Մարտիկեան, Յովհաննէս Ազաարեան, Տոքթ. Կ. Վարդանեան, Տոքթ. Մ. Տառեան, Յակոբ Մարթայեան : (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957, թիւ 11-12, էջ 574-75) :

1876 Ապրիլ 15-ին Օրթագիւղի մէջ հաստատուած է Արարատեան Ընկերութիւն շաշոյց ընկերութիւնը, որուն նպատակը եղած է դաւաններու մէջ ուսում տարածել ու զպրոցներ բանալ : (տես «Հանդէս Ամսօրեայ» 1953 թիւ 4-6, էջ 292) : Ընկերութեան հիմնադիրները եղած են Արքիար Արփիարեան, Զարեհ Շիշմանեան, Պետրոս Վասիլեան, Յովհաննէս Երլարզեան եւ Մկրտիչ Փարթուզալեան : (տես Ա. Ալպոյաճեան «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» Ա. Հատոր, էջ 1257) :

«Արարատեան Ընկերութիւն շաշոյց» վարչութեան առաջին ատենապետը կ'ըլլայ Մ. Փորթուզարեան : Ասիկա Ընկերութեան կողմէ իբրեւ քննիչ դաւաններ կը զրկուի, անոր ակց ատենապետ կ'ընտրուի Մինաս Զեբազ : (տես «Հանդէս Ամսօրեայ» 1953- թիւ 4-6, էջ 292-294- Հըր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը) :

1876-ին Օրթագիւղի մէջ կազմուած է Արեւելեան Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է հաստատուել զպրոցներ : 1879 Հոկտեմբեր 20ին Տարբերեան նահանգի Պուլանքք վիճակի Լիդ զիւզին մէջ նախակրթարան զպրոց մը բացած է Բարեգործական Ընկերութեան ծախքով : (տես «Հանդէս Ամսօրեայ» 1953 թիւ 10-12, էջ 603-604) :

1877 Մայիս-Յունիս ամիսներուն Սիլիւարի մէջ կազմուած է Ուսումնասարած Ընկերութիւնը, որուն ջանքերով Սիլիւարի Ս. Սաչ եկեղեցւոյ վարժարանին մէջ ձրխարար կ'աւանդուին հետեւեայ

նիւթերը. հայերէն, Գրանսերէն, իբրերէն, թուսրանութիւն, ատմարակալութիւն եւ աշխարհագրութիւն : Այս Ընկերութիւնը դաշտուած է մինչեւ 1878 թուականի աշնան վերջերը : (տես նոյն, 1954, թիւ 11-12, էջ 597-598) :

1878-ին էթ-Մէլյասանի մէջ կը կազմուի Վարժարանական Ընկերութիւնը, թաղին մէջ զպրոց մը բանալու համար, որ մինչեւ այն ատեն դուրսութիւն չունէր : 1879 թուականին Ընկերութիւնը կը յաջողի զպրոցը կառուցանել (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 7-9, էջ 437-), շնորհիւ Մաղաքիա Օրժանեան պատրիարքի քաջալերանքին եւ թաղեցիներու փափաքով վարժարանը կը կոչուի 1881-ին Պատրիարքին անունով :

1878 Հոկտ. 15-ին Ղալաթիոյ մէջ կազմուած է Վարժապետական Միութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ ուսուցչիներու եւ ուսուցչուհիներու նիւթական բարւոքման համար աշխատիլ : (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957, թիւ 11-12, էջ 576-577 - Հըր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը) :

Այս Ընկերութեան Կանոնադիրը ութը յօդուածներէ բաղկացած էր, որուն մէջ հետեւեայ հիմնական կէտերը կը մատնանչուին, 1.- Վարժապետներու նիւթական վիճակին բարւոքումն եւ բարոյական բարձրացում, 2.- Մանկավարժական ուսման մշակում, եւ 3.- Ազգ. դաստիարակութեան կանոնադրումն ու զարգացումը : Ընկերութիւնը պիտի ունենար անուիկ մը, հոգալու համար ձեր ու կարօտեայ ուսուցչիներուն :

1878 Փետր. 1ին Եէնիդափուի մէջ կը կազմուի Դպրոցական Միութիւնը (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957 թիւ 3-5, էջ 250- Հըր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը) :

1878 Յունուար 1-ին Դպրոցասիրաց եւ Արեւելեան Ընկերութիւնները իրարու կը միանան ու կը կազմեն միացեայ Դպրոցասիրաց-Արեւելեան Ընկերութիւնը, որ նպատակ կ'ունենայ Մշտյ մէջ կրթութիւն տարածել : 1880 Ապրիլ 19-ին կաշայած

1955 թիւ 3-6 էջ 256) :

1879 Յուլիս 1-ին Եկեղեցական Բնակչութիւնը, Բզմիրեան Եպիսկոպոսի յորդորներուն վրայ, ի նպաստ Սկիւտարի ձեւարանին ու Եկեղեցական Գրգրոցական աղքատ աշակերտութեան գրեական պիտոցն ու պլանները հազարու համար: Այս Բնակչութիւնը իր զործունէութիւնը կը շարունակէ մինչեւ 1887 թուականը:

1879 Փետր. 18-ին Պատգուիչի մէջ գոյութիւն կ'առնէ Կիլիկիան Բնակչութիւնը Երեսն պատարագ վարժապետանի յորդորներուն վրայ, աբրամ ըլլալով որ, Առաքելեան-Նուպար-Շահնապարեան միացեալ վարժարանին հոգաւոր Ս. Վարդանեան Բնակչութիւնը, որ կազմուած էր նախկին սաներու կողմէ, կազմաւորուած էր: Գարեգին Վրդ. Արուսեանեանցի նախապահութեան տակ կը զօրմարտի ժողով մը, վերոյիշեալ Կիլիկիան Բնակչութեան մարմին ապու համար:

Այս Բնակչութեան Գիւանին կ'առնուողէն Միւնաս Ձերտց: Առնուողներ կ'ըլլայ Կարապետ Կարբենեան, գեր-ատենապետ՝ Հրանտ Ասատուր, գեր-ատենապետը՝ Յակոբ Հազարեան: Գործադիր ժողովի անդամներ կ'ըլլան Յովհաննէս Արշակունի (ատենապետ), Տիգրան Առաքելեան (ատենադպիր), Եղուարդ Իսթիւճեան (գեր-ատենապետ), Պաշտատուր Մուրատեան (գեր-ատենապետ), Յովհաննէս Արծրունի (գանձապետ), Կարապետ Լաթիֆեան (համարակալ), Միտր Թաշճեան (կնքապահ) եւ Յակոբ Թաշճեան:

Կիլիկիան Բնակչութեան նպատակը կ'ըլլայ Կիլիկիոյ քաղաքներու մէջ գրգրոցներ բանալ: Առաջին հերթին Ջէյթունի ու Մարտի մէջ Կիրազործուի նպատակը, ինչպէս նաեւ կը նպաստէ Հոճընի մէջ գոյութիւն ունեցող վարժարանին: 1880ական թուականներուն Այնթապի մէջ ալ գրգրոցներ կը հիմնէ Բնակչութիւնը (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 10-12, էջ 587 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի

Համաձայնութեամբ, այս Բնակչութիւնը կը միանայ Արարատեան եւ Կիլիկիան Բնակչութիւններու հետ, կազմելու համար Միացեալ Բնակչութիւնը Հայոց բնակչութիւնը: Այս Բնակչութիւնը գործելի կը դադրի 1880 Յուլիս 1-ին: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952 թիւ 4-6 էջ 310 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը):

1879-ի առաջին ամիսներուն Սելւամարի մէջ կը կազմուի Կրթասիրաց Բնակչութիւնը, որ թաղին Ս. Պաշ վարժարանի թատրոնի սրահին մէջ Լուարան մը կը բանայ, ուր երկուս ունկնդիրներու դասախօսութիւններ կը կատարուին: Ասիկէ դառ Բնակչութիւնը վարժարանին աղքատ աշակերտութեան գրգրոցական պիտոցներուն կը հոգայ: Լուարանին մէջ դասախօսած են Հր. Մեսրոպ Վ. ձերմախան, Ս. Թղլեան, Մաղաբիա Վրդ. Օրմանեան, Մաթթէոս Եպ. Իզմիրեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 11-12, էջ 598 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը):

1879 Ապրիլ 11-ին Սիլիստրի Սելւամարի թաղին, Պանճեաններու տան մէջ կը հիմնուի Ազգասուէր Հայու հեալ Բնակչութիւնը, որուն հիմնադիրը կ'ըլլայ օր. Ջապէլ Պանճեան (այս օրիկ. Ջապէլ Ասատուր-Սիլիս): Բնակչութեան նպատակը կ'ըլլայ աղջկանց գրգրոցներ բանալ հայրենակ գոտաներու մէջ: Բնակչութեան առաջին անդամները կ'ըլլան հետեւեալները, Արտեմիա Տուտեան, Ակիլիինէ Լուսինեան, Մատի Չորաբճեան, Սաթեմիկ Հանճեան, Տիրուհի Գալիֆայեան, Վերդին Պաշտուրեան, Կարիտինէ Վարսալիբեան, Վարդանայ Լուսինեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 11-12 - էջ 599):

1879 Յունիսի 1-ին կը կազմուի Պէրպէրեան Սանոց Բնակչութիւնը Պէրպէրեան վարժարանի աշակերտներու կողմէ, ատենապետութեամբ Յովհաննէս Թ. Արամեանի եւ ատենադպրութեամբ Վահան Յ. Մամառեանի: Այս Բնակչութեան նպատակը կ'ըլլայ գրգրոց բանալ: (տես «Հանդէս Ամսօրեայ»

յօզուածաշարքը):

1879 Սեպտեմբերին Պէշիկթաշի մէջ կը կազմուի Ռուսմասիրաց Օժանդակ Ընկերութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ դաստաներու մէջ հաստատել դպրոցներ: Աւերի տեղեկութիւններ կը պահուին այս Ընկերութեան մասին: (տես նոյն, 1952 թիւ 10-12, էջ 630-631):

1879 Մայիս 1-ին Օրթադիզի մէջ կը հիմնուի Դպրոցատէր Հայուհեաց Ընկերութիւնը, Հռիփսիմ եան աղջկանց վարժարանի շրջանաւարտ քանի մը տիկիներու եւ օրիորդներու կողմէ: Ընկերութեան հիմնադիրները եղած են Տիկ. Նազլը Վահան, Տիկ. Սրբուհի Տրսար, Օր. Թադուհի Պալթազարեան, Օր. Նուրիկ Սիմոնեան եւ Տիկ. Զապէլ Ֆընտըրէ-եան:

Այս Ընկերութեան նպատակը եղած է անօգնական հայուհիներու դաստիարակութեան նպատակ եւ դաստի վարժարաններուն համար ուսուցչուհիներ պատրաստել: Ասկէ զատ Ընկերութիւնը նպատակ ունեցած է դասուներու մէջ դպրոցներ բանալու:

Ընկերութեան Դիւանի Ընդհ. Ժողովի կազմը եղած է հետեւեալներով Տիկ. Աննիկ Չալիան (ատենապետ), Տիկ. Բուբուլ Մեսցիլի (փոխ-ատենապետ), Օր. Լուսիկ Վասիլեան եւ Օր. Երանուհի Աշան (փոխ-ատենապետ):

Գործադիր Ժողովը կազմուած է հետեւեալներէն, Օր. Թադուհի Պալթազարեան (ատենապետ), Օր. Նուրիկ Սիմոնեան (ատենապետ), Տիկ. Յրատարանէ Ծաւին (գանձապետ), Օր. Եարլթ Թուշաճու (հաշուակալ), Տիկ. Տիբուհի Նասիան, Օր. Արուսեակ Երիմանեան, Օր. Բուբուլ Չալիան (խորհրդականներ):

Դպրոցատէր Հայուհեաց Ընկերութիւնը մէկ տարուան ընթացքին 380 անդամ ունեցած է:

Առաջին տարին իսկ կը բանայ Օրթադիզի մէջ վարժարան մը, որուն ուսուցչուհիները կ'ըլլան նոյն Ընկերութեան անդամներէն: 1880 Մայիսին

դպրոցը կ'ունենայ 35 աշակերտուհիներ:

Դպրոցատէր Հայուհեաց Ընկերութիւնը տասը տարիներ ետեւորէն գործունէութիւնը ջրոյց կուտայ: 1889-ին վարժարանը կը փոխադրէ Գումգափու թաղը: Կ'ունենայ գեղեցիկիկի բամբին մըն ալ: 1892-ին վարժարանին աշակերտութեան թիւը 110-ի կը բարձրանայ, որուն 60-ը ձրիավարժ եւ 12-ը գեղեցիկիկ: Ընկերութիւնը 12 տարուան մէջ հասցուցած է 22 ուսուցչուհիներ, որոնք կը գործեն դաստի գանազան շրջաններու դպրոցներու մէջ: 1896-ի տխուր դէպքերուն, ժամանակ մը դադրած է գործելէ, սակայն 1899-ին վերստին կեանքի կը կոչուի ու կը շարունակէ նոյն թափով գործել: 1900-ին դեռ այս Ընկերութիւնը կը պահէ իր գոյութիւնը: (տես «Գրպանի Տարեցոյց» 1922 Գ. Տարի էջ 175-180 եւ «Հանդէս Ամսօրեայ» 1953 թիւ 10-12, էջ 607-618 - Հր. Եփրեմ Վրդ. Պօլսեանի յօդուածաշարքը):

1879-ին Պօլսի Պիլիպի մէջ կը հիմնուի Ռուսմասիրաց Ընկերութիւնը, գիւղին դպրոցին թշուա վիճակը բարձրացնելու նպատակով: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 7-8, էջ 342): Ընկերութեան առաջին Դիւանին տեսնապետը եղած է կ'ընդ կիւմիւշեան եւ Միքեան Գալպագճեան, իսկ Գործադիր Ժողովի անդամները եղած են Փիլիպոս Կէլիէլ (ատենապետ), Պօլս Աւզէր (ատենապետ), Տիգրան Գալպագճեան (գանձապետ), Աւետիս Իտարլճեան (համարակալ), Յակոբ Գաղապաղեան (անդամ):

1880-ին, ինչպէս գրեցինք վերը, Մայիս ամսուն կազմուած է Միադեպ Ընկերութիւնը Հայոց Ընկերութիւնը, Արարտեան-Դպրոցատիրաց - Արեւելեան եւ Կիլիկիան Ընկերութիւններու միացումով: Այս միացեալ ընկերութեանց նպատակը կ'ըլլայ դաստաներու մէջ կրթութիւնը ծառայել: Յաջորդած է բանայ 24 դպրոցներ, որոնք մէջ պաշտօնավարած են 115 ուսուցիչներ եւ ուր կը յաճախէին 2822 աշակերտ-աշակերտուհիներ:

Այս Ընկերութիւնը կ' Պոլսոյ զանազան թաղերու եւ զաւանաներու մէջ ունեցած է աւելի քան 16 մասնաճիւղեր, սակայն 1895-ի տխուր դէպքերուն Ընկերութիւնը մեծապէս վնասուած է, բայց կը շարունակէ պահել իր գործունէութիւնը 1900ական թուականներէն ետքն իսկ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1951 թիւ 11-12, էջ 558-559):

1880-ի վերջաւորութեան, Ղալաթիոյ մէջ կազմուած է Աշխատասիրաց Ընկերութիւնը, թաղին վարժարանին պանդուխտ սաներու կողմէ, որոնց նպատակը եղած է կրթական գործունէութիւնը ծառայել: (տես նոյն, էջ 560):

1879-80 թուականին, Օրթոդոքս մէջ Հիմնուած է Հռիփսիմեան վարժարանի Օրթոդոքս Ընկերութիւնը, թաղին Հռիփսիմեան վարժարանին օժանդակելու համար: (տես նոյն, 1953, թիւ 10-12, էջ 625):

1880-ին կազմուած է Հայրենասիրաց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է կրթական զանազան հաստատութեանց մէջ ազդել որբ եւ ազգաս մանուկներուն կրթութիւն տալ: (տես նոյն, 1955 թիւ 10-12, էջ 591):

1880-ին Բերայի մէջ կազմուած է Անամատար Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է վարժարաններու ազգաս աշակերտներուն ձրի դասաւերջի եւ զպրօցական այլ պիտոյքներ մասակարարել (տես նոյն, 1956 թիւ 9-12- էջ 532):

1880 Յունուար 1-ին դարձեալ Բերայի մէջ հաստատուած է Հայ կրթական Միութիւնը, որուն նպատակը եղած է թաղին երկուս վարժարաններու չքաւոր աշակերտներուն եւ կիրակնօրեայ ու զիշերային զպրօցներուն օգնել: Միութիւնը 230 անդամ ունեցած է: Միութեան Տնօրէն Արճուրդի ասենապետը եղած է Տ. Մ. Էրօէրճեան, իսկ ատենադպրը՝ Մարտիրոս Տէօթճեան: (տես նոյն, 1952 թիւ 4-6, էջ 311):

1881-ին Գում-գատուի մէջ կազմուած է Օթանդակ Ընկերութիւն Ազգ. Հիւանդանոցի Ընկերու-

թիւնը, որ կրթական գործին օժանդակելէ զատ օգնած է նաեւ Հիւանդանոցին պէտքերուն: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957 թիւ 1-2, էջ 84 - Հրեփրեմ Վրդ. Պօզոսեանի յօդուածաշարքը):

1881 Յուլիս 1-ին Բերայի մէջ կազմուած է Թարգման Ընկերութիւնը կրթական գործին օգտակար ըլլալու համար: Ընկերութեան կեդրոնականին եղած է Նարեկեան վարժարանը, 1882-ին Ընկերութեան անդամներուն թիւը 200 կը հաշուուէր: Գործադիր Ժողովին ատենապետը եղած է Լեւոն Ս. Արամեան, իսկ ատենադպրը՝ Միհրան Տամատեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952 թիւ 4-6 - Հր. Եփրեմ Վրդ. Պօզոսեանի յօդուածաշարքը):

1881-ի սկիզբները Պէօլիբալէի մէջ կազմուած է Ազգայնամ Ընկերութիւնը-ի նպատակաւ թաղին զպրօցին եւ եկեղեցիին: (տես նոյն, 1954 թիւ 9-10, էջ 442):

1881 Ապրիլին Յերիքի մէջ կազմուած է Աւստմասիրաց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է պիտին Ս. Վարդանանց վարժարանի երկսեսու ազգաս մանուկներուն նիւթապէս եւ բարոյացէս օժանդակել: (տես նոյն, 1957 թիւ 11-12, էջ 568):

1881 Յուլիսին Պէօլիբալէի մէջ Հիմնուած է Բարեգործական Ընկերութիւնը, նպատակ ունեւարով զիւղին վարժարանին, եկեղեցիին եւ ազգասներուն նիւթապէս օգնել: Այդ թուականին Ընկերութեան Տնօրէն Արճուրդի անդամները եղած են հետեւեալները: Աղեքսանդր Փանտեան (ատենապետ), Գ. Պէղպեան (ատենադպր), Ստեփան Աւետիսեան (զանձապետ), Սահակ Անճեան (հաշուապետ): 1883-ին շէնք գիտեր ինչու կը լուծուի Ընկերութիւնը: 1888 Սեպտ. ին կը վերակազմուի ան ատենապետութեամբ Յովսէփ Ծ. Վրդ. Սարաճեանի եւ կը բանայ ազգական վարժարան մը 33 աշակերտներով, որուն ուսուցչուհի կը կարգուի Օրթագուհի Ազգան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957

թիւ 11-12, էջ 573 շր. եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1881 Ապրիլին Թէրթիդի մէջ կազմուած է Ս. Վարդանանց Ընկերութիւնը գիւղին վարժարանին աղքատ ազնոց կրթութեան նիւթապէս և բարոյաց պէս նպաստելու համար: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957 թիւ 11-12, շր. եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը, էջ 583):

1882 Մայիս 24-ին հիմնուած է, բայտ շր. Եփրեմ Վրդ. ի փաստարկութեան, Սանուց և Սանուհեայ Ընկերութիւնը, թաղին վարժարանի աղքատ աշակերտներուն զպրօցական պիտոյքները հոգալու համար: Սանուց և Սանուհեայ Ընկերութեան Գործադիր Ժողովի անդամները եղած են հետեւեալները: Մարտիրոս Կ. Արայճեան (ատենապետ), Համազասպ Ս. Խաբեան (ատենադպիր), Սահակ Ս. Թէօճեան (գանձապետ), Յարութիւն Աւետիս (հաւաքիչ), Արմենակ Ս. Սկիտոսեան (թանգարանապետ): (տես նոյն, 1955 թիւ 3-6, էջ 259):

1882 Ապրիլ 1-ին կազմուած է Բարեկործանական Ընկերութիւնը, ի նպաստ Ակիւսարի ձեմարան վարժարանին նիւթապէս օժանդակելու, ինչպէս նաև զպրօցական աղքատ աշակերտներուն պիտոյքները հոգալու համար: Ընկերութիւնը կը զազդի գործելէ 1888-ին: (տես նոյն 1955 թիւ 7-9 էջ 418):

1881-82-ին Սկիտարի մէջ, կազմուած է Հայկական Ուսումնասիրաց Ընկերութիւնը Իճատիէի զպրօցին հոգածութեան համար: (տես նոյն, էջ 421):

1882-ին Մաքրիդիդի մէջ, բայտ շր. Եփրեմ Վրդ. ի, կրթական Ընկերութիւն մը հիմնուած է թաղին վարժարանին իրը հոգատար մարմին: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957 թիւ 3-5, էջ 241):

1882-ի Օգոստոսին, Ռ. Պէրպլեանի նախաձեռնութեամբ հիմնուած է Ուսուցչական Միութիւնը, որուն մասին տեղեկութիւններ կը պակսին զժամանակաբար: (տես նոյն, 1952 թիւ 7-9, էջ 428):

1883-ին Թէրթիդի մէջ կազմուած է Ուսում-

նասիրաց Ընկերութիւնը թաղին Ս. Մեսրոպեան վարժարանին նպաստելու համար: (տես Մարտիրոս Հանէսեանի «Հարիւրքսանեհինգամեայ Յորդեան Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ» էջ 327):

1884-ին կը հիմնուի Մնամակայուհեայ Ընկերութիւնը, Ներսիսեան վարժարանի սանուհիներու բարոյական և նիւթական հոգատարութիւնը բաւանձնելու համար: Ընկերութեան վարչական կազմը կը բաղկանար տասը անդամներէ, նախապահութեամբ Տիկ. Աննա Էսայեանի: 1897-ին Ընկերութիւնը կը զազդի գործելէ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 10-12, էջ 592 շր. եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1885 Յունուար 1-ին Պարթի մէջ կը կազմուի Խորէնեան Ազգայնամ Ընկերութիւնը, նպատակ ունենալով Խորէնեան երկեսու վարժարանին նիւթական կացութիւնը բարելաւելու: Ընկերութեան վարչութեան ստեղծապետը եղած է Միտաք Յովհաննէսեան և: ատենադպիրը՝ Յարութիւն Գ. Քէրէստեան: (տես նոյն, 1956 թիւ 3-6, էջ 270):

1885-ին Թօփ-գափուի մէջ կը կազմուի նպատամատոյց Միութիւնը, նպատակ ունենալով թաղին երկեսու վարժարանի աղքատ աշակերտութեան զպրօցական պիտոյքները հոգալու իր կարողութեան չափով: Միութեան վարչութեան կազմը հետեւեալներէն կազմուած է, Երուանդ Իւթիճեան (ատենապետ), Մարտիրոս Պէլլէրեան (ատենադպիր), Լեւոն Կիրճեան (գանձապետ), Մկրտիչ Երէցեան, Ծածիրամ Յովնանեան, Երուանդ Թէոփիլեան (խորհրդականներ): 1887-ին Միութիւնը իր անունը կը փոխէ և կը կոչէ նպատամատոյց Ընկերութիւն: (տես նոյն, 1956 թիւ 7-8, էջ 365):

1884-ին Գում-գափուի մէջ Մէզգուրեան վարժարանի շրջանաւարտները կը կազմեն Սանուհեայ Ընկերութիւնը, որուն նպատակը կը լայլ գաւառներու մէջ ուսում տարածել և զպրօցներ բանալ: (տես նոյն, 1957 թիւ 1-2, էջ 84):

1884 Նոյ. 11-ին կը հիմնուի Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի Ընկերութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ հանգուցեալ պատրիարքին յիշատակին համար հիմնել Ուսումնարան մը անոր անունով Օրթոդոքսի մէջ: Գործադիր ժողովի անդամներ եղած են հետեւեալները: Աբրիկ Աւճեան, Աստուածատուր Զունդ, Կարապետ Սլովճեան, Միլնաս Զերազ (ատենադպիր), Մկրտիչ Էսայեան (ատենապետ), Յարութիւն Եղիաթուրեան, Յովհաննէս Թորոսեան, Սերովբէ Կիւլպէնեան (գանձապահ), Տիգրան Կիմիւշեան, Տիգրան Փեշտիմաճեան: (տես «Տարեցոյց Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի» 1926-27, էջ 392):

1886 Յունիս 15-ին Պէշիկիշի մէջ կը հիմնուի Մաքրուհեան Ուսումնասիրաց Ընկերութիւնը, որ ազգատարնամ, մշակութային եւ կրթական գործունէութեան կը նպատակէ: 1888-ին ունեցած է 15 երկսեռ աշակերտներ, որոնց բժշկական եւ գաղտցա կան պիտոյքը հոգացած է:

Գործադիր անդամներ եղած են Աբառաչս Կ. Քէօմիւրճեան (ատենադպիր), Մէլիք Պէլլիքեան (ատենապետ), Գրիգոր Քիւրճեան (համարակալ), Յր. Պ. Կիմիւշեան (գանձապետ), Վահան Թէրզեան (մատակարար): Վարչական խորհուրդը հետեւեալներէն կազմուած է, Վ. Յ. Մարգարեան (ատենապետ), եւ Ս. Յ. Բրալտապետեան (ատենադպիր): (տես «Հանդէս Ամսօրեայ, 1952 թիւ 10-12, էջ 631-632):

1887-ին Պալաթի մէջ կազմուած է Բարեգործական Ընկերութիւնը, նպատակ ունենալով ձրխա վարժ աշակերտներուն տալ հաղուստեղէն եւ գրեւորական պիտոյք: (տես Մեղրն-Ասատուրի - Երեքդարեան Պատմութիւն Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ Պալաթու - 1627-1931 - էջ 274):

Այս Ընկերութիւնը իր գոյութիւնը երկար ատեն պահել չկարենալով, 1890-ին անոր անդամները կը միանան Խորէնեան հնագոյն ընկերութեան: (տես նոյն, էջ 275):

1893 Թուականէն սկսեալ Խորէնեան Ընկերութիւնը աւելի զօրացած ու կազմակերպուած գիճակ մը կ'ունենայ:

Աչքի առջև ունենալով 1908 Սեպտ. 1-ին խորագրուած «Ներքին կանոնադիր»ը, կը տեսնենք որ, հիմնադիր ժողովը կը բազմանար 15 անդամներէ: Հիմնադիր ժողովէն զատ Ընկերութիւնը ունէր նաեւ Տնօրէն Խորհուրդ մը, որ կը կազմուէր Հիմնադիր ժողովի եօթը անդամներէն: Ունեցած է նաեւ Թախուց Տնօրէն (գանձապետ) մը որ բնկերութեան ծախքերը կը կատարէր Տնօրէն Խորհուրդի որոշումներուն համաձայն:

Դպրոցէն զատ, այս Ընկերութիւնը հոգածու կ'ըլլայ նաեւ կարօտեալ հիւանդներուն ապահովելով բժիշկի այցելութեան եւ դեղերու ծախքերը:

Բացի ասկէ, Խորէնեան Ընկերութիւնը օժտուած էր կանոնաւոր թանգարանով (գրադարան) մը, որ տրամադրելի էր սեւէ ընթերցասէրի մը:

Եւ ասկին, Ընկերութիւնը դրամական վնասուածութիւններ ալ կ'ընէր այն անձերուն, որոնք նիւթական մեծ ծախքեր ընելու անկարող էին, իրուցործելու համար իրենց նպատակները: Եւ այս բոլոր բարիքները որուն համար կոչուած էր կատարելու Ընկերութիւնը, իր անդամներէն իբրեւ անդամավճար երեք ամիսը անգամ մը 5 դր.: (բոտորդ արժաթ մէճիտ) շնչին դուժար մը կ'ստանար: (տես նոյն, էջ 277):

1887-ին Եէնի Մահալլէի մէջ Ընկերութիւն մը կազմուած է, որուն անունը չէ յիշուած: Այս Ընկերութիւնը նպատակ ունեցած է դպրոցներ բանալու: Ուրիշ մանրամասնութիւններ կը պակսին այս Ընկերութեան մասին: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1957 թիւ 6-7, էջ 330 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1889-ի սկիզբը կը կազմուի Ուսումնասիրաց Ընկերութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ պետական եւ բարձրագոյն վարժարան յաճախող ազգատ

ուսանողներուն նիւթապէս օգնել: (տես «Հանդէս Ամսօրեակ» 1957 թիւ 8-10, էջ 494 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1889-ի գարնան, Բանկայթիի մէջ է հիմնուած է Օժանդակ Խնամակալութեանց Ընկերութիւնը, նպատակ ունենալով թաղին Սաշինեան երկսեռ վարժարանին նիւթապէս նպաստել: Գործադիր Ժողովի անդամները հասեակալները կ'ըլլան, Տիկ. Նաշիսիկ Պ. Մարկոսեան, Տիկ. Վերդինէ Չ. Կարապետեան, Տիկ. Մարի Ա. Պաղասաւեան, Օր. Բարիս Կ. Գահրամանեան, Տիկ. Արմաւենի Տ. Գարբինեան, Տիկ. Վասիլուհի Պ. Համբարձումեան, Տիկ. Արուսեակ Ե. Գալֆայեան, Տիկ. Լուսեայ Ա. Անտոնեան, Տիկ. Վիտզինէ Եսայեան: (տես նոյն, 1957 թիւ 11-12, էջ 569-570):

1892-ին Սեւմբիէի մէջ կը հիմնուի Կարօս Ուսանողաց Խնամակալութիւնը, կարօս ուսանողներու գրեմական պիտոյքը հոգալու, ինչպէս նաեւ անոնց զգեստ տալու համար: Այս խնամակալ մարմինը մինչեւ 1900 թուականը կը գործէ: (տես նոյն, 1955 թիւ 3-6, էջ 262):

Կրթական ընկերութիւններ կազմելու գաղափարը կը թափանցէ նաեւ գաւառներու մէջ 1840-ական թուականներէն սկսեալ եւ առաջին հերթին Իգմիրի մէջ անդրանիկ ընկերութիւնը կը հանդիսանայ Սիւնեաց Ընկերութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ ուսում եւ գիտութիւն տարածել Իգմիրի մէջ:

Ըստ Մեարոյ Նուպարեանի, այս Ընկերութիւնը «խիստ դարձն ու աղքեցիկ ընկերութիւն մը կ'զած է», որ ո՛ր միայն Թուրքիոյ, այլև Եւրոպայ բնակող հայ վաճառականներու պաշտպանութիւնը վաշխած է: (տես «Հայաստանի Կոչակ» թիւ 34, 1929 Օգոստ. 24, էջ 1066-67): Բայց չենք գիտեր թէ այս ընկերութիւնը, ս'ըբան ասին պահած է իր գոյութիւնը: Տուեալներ կը պակսին այդ մասին:

1865 թուականին կազմուած է Ուսումնասէր Ընկերութիւնը, ի նպաստ Իգմիրի վարժարաննե-

րուն: (տես «Արեւիք» թիւ 3854 6-18 Նոյ. 1898) = Այս Ընկերութիւնը նոյնպէս «Իրիկունները չափահասներու ձրի զատ տալու նպատակ ունեցած է» (տես նոյն):

Տոքթ. Տաղուարեան - Սկսեակ Բանասէր - Ուսումնասէր Ընկերութիւնը յիշելէ ետք, ցոյց կուտայ 1870-ին Կրթասէր Ընկերութիւնը, որ դարձեալ վարժարաններու ստարակ մարմին մը եղած է, բայց անոր մասին մանրամասնութիւններ չէ տուած:

Մեզի կը թուի թէ այս Ընկերութիւնները կարճ կեանք ունեցած ըլլան, ինչպէս յաճախ պատահած է ուրիշ ընկերութիւններու պարագային: Բիշ Ժամանակ ետք, կարգ մը վաճառականներ իրար թով զարով կը վերակազմեն Ուսումնասէր Ընկերութիւնը: Այդ վաճառականներու գլուխ գտնուած է Ոսկանեան անունով ծանօթ վաճառական մը որ կը յաջողի 1873-ին կազմել Ընկերութիւնը, դարձեալ զպրօցներու յաւաքիմութեան ստարակ նպատակու (տես «Հայաստանի Կոչակ» թիւ 34 1929 Օգոստ. 24 էջ 1066-67): Ընկերութեան վարչականները աւանձին վայրի մը մէջ դասախօսութիւններ ալ կազմակերպած են, հայերէնի հետ Ֆրանսերէնի իթքերէն լեզուները սորվեցնելու համար հասարակութեան, առանց սեւէ վճարումի:

Այդ դասախօսութիւնները կը շարունակուին մինչև 1882 թուականը: Այդ Ընկերութեան անդամներու թիւը կը բարձրանայ 188ի:

Վեց տարի ետք կը կազմուի Տիկնանց Հոգատար Ընկերութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ Հոխիսիմեան եւ Մեարոյեան վարժարաններու աղքատ սաներուն զգեստ եւ գրեմական պիտոյք տալ: Օժանդակած է նաեւ սոյն վարժարաններուն կրթական գործին:

1893-ին այս Ընկերութիւնը կը միանայ Հուլիսիմեան վարժարանի բարձրագոյն կարգի սանուհիներէն կազմուած (1891-ին) Որբախնամ Ընկերութեան եւ միասնաբար կը կազմեն Հոգատար-Որ-

բանամ անունով Ընկերութիւն մը: Այս Ընկերութիւնը կը ձեռնարկէ որոշումներ մը հիմնարկութիւնը 1894-ին, որուն անունը մեղի անձանօթ կը մնայ դժբախտաբար: (տես Թէկոյիկի «Ամենուն Տարեցոյցը» 1913, էջ 174 Մ. Ամասեանի յօդուածը):

1881-ին նախաձեռնութեամբ Տ. Մելքիսեդեկ Արք. ի եւ ասեղապետութեամբ Մ. Մամուրեանի եւ Հոխիսիմեան վարժարանի շրջանաւարաններու կողմէ կը կազմուի Հոխիսիմեան կրթասէր Ընկերութիւնը: Ասոնք կը հաստատեն ընթերցասրահ մը, որ պիտի ծառայէր ուսուցչուհիներ պատրաստելու: Սակայն ան քիչ ատեն ետք կը զարքի, որովհետեւ այդ նպատակին համար օգնողներ քիչ կ'ըլլային: (տես «Արեւելեան Մամուլ»-կիսամետալ-թիւ 8, 5 Ապրիլ 1892, էջ 324):

1898-ին սոյն Ընկերութիւնը կը վերակազմուի եւ կը ծրարէ սեփական չէնք մը ունենայ որպէսզի կատարէ յաջողցնել վերսլէշեալ ծրարքը եւ առ այդ հանդանակութեան մը կը ձեռնարկէ: (տես Հր. Յ. Վրդ. Բօսնանի «Հայք ի Չմիւսնիս» Ա. հատոր էջ 238 եւ Թէկոյիկի «Ամենուն Տարեցոյցը» 1915, էջ 174):

1863-ին կազմուած է նաեւ Լուսաւորչական Ընկերութիւն Չմիւսնիոյ Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է ուսեալ եկեղեցականներ պատրաստել: (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 նոյ. 1898 Տոքթ. Տաղատարեանի-Սկանակ Բանասէր - յօդուածաշարքը):

Ռոտոսթոյի մէջ 1873-ին կազմուած է Արամեան Եղարբ Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է ժողովուրդին մէջ կրթութիւն եւ ընթերցասիրութիւն տարածել: (տես «Մասիս» օրաթերթ թիւ 1339 20 Յունուար 1873): Արիշ ընկերութեան յիշատակութեան չհանդիպեցանք յընթացս մեր պրպտումներուն:

Եստիւնէի կամ Աղբիանուպոլիսի մէջ 1871-ին կազմուած է Թորոզեան Ընկերութիւնը, որ կառուցած է Թորոզեան վարժարանը: (Ա. Ալլոյսաճ-

եանի արխիւին մէջ գտնուած թերթի մկըատուած կարօնէ մը քաղուած, որուն վրայ չկար թերթին անունը եւ ոչ ալ թուականը):

Նիկոմիտիոյ մէջ 1848-ին կազմուած է Լուսաւորչեան Ընկերութիւնը Ստեփան Չալեանի կողմէ, դպրոցներուն նիւթապէս նպատակով նպատակաւ: (տես «Հայաստան» 1848 թիւ 12):

1864-ին Նիկոմիտիոյ մէջ դարձեալ կազմուած է Աղզ. Բարեգործական Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է տեղւոյն Աղզ. երկես վարժարանին նպատակ, որը եւ ազբառ ազաքը խնամել եւ դաստիարակել, ինչպէս նաեւ ընթերցասիրութիւնը տարածել հայ հասարակութեան մէջ: Համաձայն այցելուի մը տեղեկազարկեան, զեւ 1878-ին սոյն Ընկերութիւնը կը գոյատեւէր: (տես «Փունջ» թիւ 3900, 6 նոյ. 1878):

Պրուսյի մէջ 1860-ին հիմնուած է Ռոտմիսապրայ Ընկերութիւնը (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 նոյ. 1898 - Տոքթ. Տաղատարեանի - Սկանակ Բանասէր - յօդուածաշարքը):

Հրանդ Ասատուր այս Ընկերութեան նկատմամբ կը դրէ հեռեկեալը, «Այս հաստատութիւնը մեծ պատի կը բերէ պրուսյիներուն դարձեալեան մտքին եւ յարատեւութեան: 1865-ին հաստատուած այդ Ընկերութիւնը ունեցած է զարդ 1800 բաժանողներ...: Առանց Ռոտմիսապրայ Ընկերութեան նպատին, այսօր Պրուսյի վարժարանները չպիտի կրնային բարեկարգ լիճակ ունենալ: (տես «Արեւելք» թիւ 3776 - 7/19 Օգոստ. 1898):

Պարսկապի մէջ կազմուած է Թորոզեան Ընկերութիւնը 1847-ին, ի նպատակ դպրոցներու եւ սակայն երկար ժամանակ չի տեսեր եւ կը իսկուի: Կը վերակազմուի այս ընկերութիւնը Ստեփան Չալեանի կողմէ (տես «Հայաստան» Բ. տարի, թիւ 13 1847): Կը յիշուի նաեւ Կրթասիրաց Միութիւնը, որ երկրորդական վարժարաններու ազբառ աշակերտներուն կրթամթոշակ կը յատկացնէր, բառ Լեւոն Չարմիսեանի (տես «Համապատկեր Արեւմտո-

Հայոց Մէկ Դարու Պատմութեան» Ա. Հասար, էջ 557): Ասիէ զատ կազմուած է Մանկագրութեան Միութիւնը, որուն հիմնարկութեան թուականը չէ յիշուած:

Բայուրի մէջ 1880 թուականին կազմուած է Հայոց Միացեալ Ընկերութիւնը, որուն հազարմութեան տակ կը մտնեն ոչ միայն Բայուրի զպրոցները, այլև անոր շրջակայ թոշմաթիւ եւ Հայաստանի գրգռողները: (տես Յարութիւն ՔՏՆյ. Սարգիսեանի «Բայուր» էջ 270): Գործարարարար այս Ընկերութեան գործունէութեան մասին մանրամասնութիւններ կը պահպան:

Առաջագործի մէջ 1858-ին գոյութիւն ունեցած է (Ճշգրիտ թուականը որոշ չէ) Հայրենասիրաց Ընկերութիւնը, որ 1859 Մայիսին Հայրենասիրաց վարժարանը հիմնած է (տես Արտաշէս Պրիպէրեան եւ Վարդան Եղիշէեանի «Պատմագիրք Առաջագործ Առումաւարեալ քաղաքին» էջ 240):

1878 Մայիս 18-ին Ս. Ստեփաննոս թագին մէջ կազմուած է Բազմաբանաց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է թագին երկեսն վարժարանը բարեկարգ պահել եւ ազգատ աշակերաններուն դպրոցական պիտոյքները հոգայլ: (տես նոյն, էջ 42):

1885-ին Առաջագործի մէջ իրական սեռի յարմարութիւններ գոյութիւն ունեցած են, Հսիկ-սիմեան, Գոյանեան, Հայուհեան-Յառաջդիմաւէր եւ Մանկութեան, որոնք պահած են ազգայնաց վարժարանը եւ ֆանայած են գիշերօթիկ դպրոց մըն ալ բնայ: (տես նոյն, էջ 243-44):

1883-ին կազմուած է նաեւ կրթասիրաց Ընկերութիւնը, ի նպատակը կեդրոնական վարժարանին:

Եօզկաթի մէջ 1851-ին կազմուած է Լուսաստանեան Ընկերութիւնը (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 նոյ. 1898) ի նպատակը վաճանեան-Ասիական երկեսն վարժարանին:

Ամասիոյ մէջ 1853-ին հիմնուած է Պարթեական Ընկերութիւն Ամասիոյ Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է Ամասիոյ մէջ ուսումնարան մը

բանայ (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 նոյ. 1898): Արիւ ընկերութեան մասին սեւէ տեղեկութիւն չկրցանք դանել, մեր պրպատմներու տեսողութեան:

Թոզատի մէջ 1858-ին կը յիշուի Քրիստոսեան Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է պարզ ապ ուսման եւ կրթութեան: (տես Ա. Այսոյաճեանի «Պատմ. Եւզոկիոյ Հայոց» էջ 995):

1860-ին Ռուբինեանց վարժարանի ուսուցիչներէն միայն եւ Յակոբ Վրդ. Ճգնաւորեանի նախագահութեամբ կազմուած է Ս. Ոսկեանց Ընկերութիւնը, որուն կառարած հանգանակութեան գումարով կառուցուած է Ս. Ոսկեանց վարժարանը: Չենք գիտեր թէ որքան տակն գոյատեւած է այս Ընկերութիւնը:

1867-68-ին Կ. Պոլսոյ Անճուէր Ընկերութեան մասնաճիւղը հիմնուած է Թոզատի մէջ (բաւ «Արեւելք» թիւ 3853 5-17 նոյ. 1898 հիմնուած է 1870-ին, որ ճիշդ չէ Յ.Տ.Պ.), որ հաստատուած է Կիրակնորեայ վարժարան մը: (տես Ա. Այսոյաճեանի «Պատմ. Եւզոկիոյ Հայոց» էջ 996):

1870ական թուականներուն կազմուած է Ռուսամասիրաց Ընկերութիւնը, որ նպատուած է տեղւոյն դպրոցներուն:

Յակոբոս Եպ. Ճգնաւորեան 1871-ին Թոզատի շրջակայ Չիլէի մէջ եւս, նմանօրինակ ընկերութիւն մը հիմնուած է նոյն նպատակով: (տես նոյն, էջ 997):

Նոյն ուղ թուականներուն հաստատուած է Վարդանանց Սանոց Ընկերութիւնը, որ բաւական օգտակար գործունէութիւն ունեցած է Թոզատի դպրոցներուն համար:

Թոզատի կրթական գործունէութեան վրայ ամենազգու ընկերութիւնը եղած է Տիրբան Ճգնաւորեանի նախաձեռնութեամբ կազմուած Հիմնադրական Ժողով Եւզոկիոյն հիմնուած 1883 թուականին, որ յաջողած է կառուցել ներքսեան վարժարանը: (տես նոյն, էջ 997):

Ընկերութեան հիմնադրող անդամներ եղած են

թիւով 12 հոգի, որոնց օժանդակ անդամներ կը միանան: Մինչև 1888 թուականը անոնց թիւը կը բարձրանայ 30-ի:

1884-ին, Ներէնէական վարժարանին մէջ կազմւած է Սանոց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է վարժարանին ակադա աշակերտներուն դպրոցական պիտոյքները հոգայլ: Այս Ընկերութիւնը սակայն կազմալուծուած է 1887-ին:

Սերաստիացի կամ Սվազի պանդոխտները 1846-ին Կ. Պոլսոյ մէջ հիմնած են Սենեքերիմեան Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է Սերաստեոյ մէջ կրթական գործին զարկ տալ եւ դպրոցներ բանալ: Այս դպրոցաբար յղացող անձերը եղած են Յովսէփ եւ Մահտեսի Գէորգ Օտապաշեան եղբայրները, որոնք ազգաբարբար մեծ նուիրատուութիւններ կատարած են այդ նպատակին համար: (տես «Արեւելք» թիւ 3854 6/18 Նոյ. 1898):

Ասոնց կը միանան ուրիշ հայրենասէր հայեր եւ իրենց օժանդակութիւնը կը բերեն արդանպաստ այս գործին ու կը կազմեն վարչական նոր կազմ մը Հետեւեալներով, Բարունակ Տէմիճեան (վերատեսուչ), Մանուկ Մեծժօրութեան (դանձապետ), Գէորգ եւ Առաքել Մեծժօրութեան (հոգաբարձուներ), Ղազարոս Պըլըլեան (օգնական):

Ասոնց իբր խորհրդականներ յիշուած են Գրիգոր եւ Կարապետ Զարբճեան, Պարիկ Տէրպապեան, Յօշան Պալըզեան, Յակոբ Բարունակեան, Խաչատուր Բրուտեան, Պետրոս Յօշանէսեան, Մելքոն Փօյաճեան: (տես առիթ մանրամասն Առաքել եւ Պատրիկի «Պատմագիրք Յուշամտեան Սերաստիոյ եւ գաւառի հայութեան» Ա. հատոր, էջ 310):

Այս Ընկերութիւնը սակայն կանոնաւոր ընթացք չունենար եւ կը խափանուի: Արդէն այն օրերու թերթերուն մէջ յիշատակութիւն չէ եղած անոր մասին: 1851-ի վերջերուն է որ նոյն Ընկերութիւնը կը վերակազմուի հիմնաւոր կանոններով, դարձեալ Կ. Պոլսոյ մէջ, եւ իր մասնաճիւղը կ'ու-

նենայ Սերաստիոյ մէջ 1852-ին (տես նոյն, էջ 312):

Հակառակ ասոր, մենք սեւէ տեղեկութիւն ենք գտած մեր պրոպագանդայի տեսչութեան Սերաստիոյ այս Ընկերութեան մասին: Բայց եւ այնպէս, ինչպէս կ'երևի Առաքել Ն. Պատրիկի ջոյց տուած փաստաթղթի ինննելէն, այս Ընկերութիւնը անդամ մը եւս ենթարկուած է վերակազմակերպութեան 1854-ին Սերաստիոյ ասպնարը կարապետ: Եւ. Գալաշեանի ջանքերով, քանզի մի քանի ասորի տալ սրբազան հօր տիրութեան պատճառով խափանման վիճակին մասնուած է:

1857-էն ետք, Սերաստիոյ Սենեքերիմեան Ընկերութեան վարչական կազմը կ'ըլլայ Հետեւեալներով. Պետրոս Վրդ. Առաք. Փոխանօրդ (նախագահ), Յարութիւն Պալշօղեան (փոխ-նախագահ), Խաչատուր Թաշճեան (դանձապետ), Յակոբ Կիրակոսեան (գրադիր): Անդամներ՝ Կարապետ Օտապաշեան, Ստեփան Մեծժօրութեան Մ. Նշան Պալշօղեան, Առաւածատուր Պարսամեան, Թորոս Տէրպապեան, Մ. Պօլոս Մարեան, Մ. Միքայէլ Մօզեան, Խաչատուր Աղապապեան եւ Մանուկ Պօլոսեան:

Իսկ ինչ կը վերաբերի Կ. Պոլսոյ մէջ Սերաստիացիներու նոյնատուն Ընկերութեան անդամներուն, վարչական կազմը Հետեւեալներէն կազմուած է. Յակոբ Գրպրզեան (նախագահ), Արրահամ Հապէճեան (դանձապետ), Ղազար Պըլըլեան (գրադիր): Անդամներ կ'ըլլան եւ Մինաս Օտապաշեան (գործակալ), Մանուկ Մեծժօրութեան, Պարիկ Տէրպապեան, Մ. Եփրեմ Մաղաթեան, Յովհան Պարեան, Յակոբ Բարունակեան, Մ. Խաչատուր Բրուտեան, Մելքոն Զոխապապեան, Մ. Պետրոս Յօշանէսեան, Գէորգ Կարապաշեան, Պապիկ Տումանեան, Խաչատուր Զաքէյեան: (տես նոյն, էջ 313):

1859-ին Սենեքերիմեան Ընկերութիւնը Սերաստիոյ դպրոցներու ծախքերուն նիւթական մեծ մատակարարութիւն կատարած է զանազան ձեռ-

նարկներով: Օտապալեան ընտանիքը մասնաւորապէս, Ս. Թարգմանչաց մանչերու վարժարանը իր հոգածութեան տակ առած է, իսկ 1865-ին նոյն գեր դաստանին ծախքերով կառուցուած է Գայանեանց աղջկանց վարժարանը:

1864-ին կազմուած է Անձուէր Տիկնանց Ընկերութեան Սերաստիոյ մասնաճիւղը, տեղւոյն կրթական գործին սատարելու համար:

Իսկ ինչ կը վերաբերի Սենեքերիմեան Ընկերութեան գործունէութեան, կ'երեւի թէ ան մի քանի տարի կը զոյառուէ եւ կը փակուի, որովհետեւ 1861-ին կազմուած է Սենեքերիմեան Օժանդակ Ընկերութիւնը, դարձեալ իրը զարդոյններու սատարող մարմին մը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1959 թիւ 1-4, էջ 148-149): Բայց եւ այնպէս այս Ընկերութիւնն ալ չուտով կը դադրի գործելէ:

1867 - Գեկու. ին դարձեալ Սերաստիոյ Սենեքերիմեան Ընկերութիւնը կը վերակազմակերպուի նորապէր անդամներով: 1868-ին նորակազմ վարչութիւնը Ս. Թարգմանչաց մանչերու վարժարանը աւելի ընդարձակելու ձեռնարկութիւնը կատարած է (տես նոյն, էջ 315): Աւելցնենք այստեղ թէ, Կ. Պոլսոյ մէջ սերտապայինեթ կազմուած Սենեքերիմեան Ընկերութիւնը 1863-էն ետք կը դադրի գործելէ:

1870-ին գարձեալ, ճիգեր կ'ըլլան Սերաստիոյ Առաջնորդ՝ Պեարոս Մ. Վրդ. ի քաջալերանքով Ընկերութիւնը վերակազմել: Ժողովներ տեղի կ'ունենան, սակայն այն օրերուն սեւէ արձագանք չըլլար, թէ ի՞նչ որոշման հանգամ են ժողովականները: Միայն 1875-ին է որ Կ. Պոլսոյ «Հայրենիք» թերթէն կը յայտնուի Սենեքերիմեան Ընկերութեան Կ. Պոլսոյ մէջ վերակազմուած ըլլալը 7 անձերէ բաղկացած վարչութեամբ մը, որն է հետեւեալները. Յակոբ Ահարոնեան (Ա. ատենապետ), Գալուստ Նարհասեան (Բ. ատենապետ), Գրիգոր Օտապալեան (Գ. ատենապետ), Մարգար Այիրսանեան (գանձապետ), Միհրան Տէմիրճեան (օգնական-

գանձապետ), Սեդրակ Ղազարեան (Ա. ատենապետ), Մ. Պեարոս Եազուպեան (Բ. ատենապետ), Յակոբ Թաշեան (համարակալ): Ասանց հետ կ'ը յիշուին անդամներու անուններ, Պեարոս Բրուտեան, Խաչիկ Բաեան, Սարգիս Պէլլիկեան, Գրիգոր Յորթալը, Մարտիրոս Տիմանեան, Թարոս Սեւփանեան, Գալուստ Գապարեան, Գրիգոր Սալարեան, Սան Ժամբուշեան, Տրդատ Ղալալճեան, Մ. Պօղոս Սափրիչ, Աստուր Խիլիկեան, Մ. Անանիա Քէօրօղանեան: (տես նոյն, էջ 317):

1870-ին Անձուէր Սանուց Ընկերութիւնը Սերաստիոյ մէջ իր մասնաճիւղը բացած է, կիրակնօրեայ դասախօսութիւններ կազմակերպելու համար, սակայն անոր գործունէութիւնը կարճ կ'ըլլայ և 1871-ին կը խափանուի: (տես «Մասիս» օրաթերթ թիւ 2560 10-27 Փետր. 1880):

Կ. Պոլսոյ Սենեքերիմեան Ընկերութիւնը վերակազմուելէ ետք կանոնադրապէս գործած է եւ Սերաստիոյ նոյնանուն ընկերութեան օժանդակած արդիւնաբեր ազգային եւ թէ կրթական աշխատանքներով: Մինչև 1900 թուականը Ընկերութեան երկու ճիւղերը իրենց գոյութիւնը պահած են:

Տիփրիկի մէջ դժբախտաբար միայն Անձուէր Ընկերութեան մը գոյութիւնը յիշատակուած է եւ անկէ զատ ուրիշ ընկերութիւն մը չգտանք յրմեաց սեր պրպտումներուն:

Այս Ընկերութեան կեդրոնը եղած է Կ. Պոլիս եւ անոր ջանքերով Տիփրիկի մէջ հաստատուած է այն Ընկերութեան մէկ ճիւղը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1951 թիւ 11-12, էջ 552 - շր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաչափքը):

Տիփրիկի Խնամալուրտ դիւղին վարժարանին ի նպաստ Կ. Պոլսոյ մէջ կազմուած է Լուսաւորեան Ընկերութիւնը: (տես «Փոնջ» թիւ 4063 19 Մայիս 1879):

Տրապիզոնի մէջ 1856-ին հիմնուած է Ուսումնասիրաց Ընկերութիւնը, քաղաքի հայ ազգայնակազմութեան մէջ ուսման սէր տարածելու եւ միեւնոյն

տանն զիրքեր ապելու նպատակով: (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 Նոյ. 1898 - Տոբթ. Տաղաւարեանի - Սկանկ Բանասէր - յօդուածաշարքը): Նոյն տարիներուն հիմնուած է Գոյանեան Ընկերութիւն Տրապիզոնի ընկերութիւնը, որուն նպատակը եղած է Գոյանեան աղջկանց վարժարանին օժանդակել: (տես նոյն):

«Մասիս»ի մէջ Ազգային սինակին մէջ լոյս տեսած յօդուածը սոյն Ընկերութեան թուականը կը դնէ 1852 եւ կը յաւելու. «Այս ընկերութիւնը... աշխարհի շինթութիւններուն պատճառաւ մինչեւ այս օրեր երեսի վրայ մնացեր էր (այսինքն 1856 թ.): Այս կ'ապացուցանէ թէ Տոբթ. Տաղաւարեանի արած թուականը սխալ է եւ սկսած է ընդունիլ 1852 թուականը, ինչպէս «Մասիս»ի յօդուածագիրը կը հաստատէ: 1856 թուականը վերակազմութեան թուականն է, ինչպէս վերի տողերը կը հաստատեն: (տես «Մասիս» - շարաթաթերթ - թիւ 236 1 Օգոստ. 1856):

Ասանցմէ զատ Տրապիզոնի մանչերու վարժարանին համար 1856-ին կազմուած է նաեւ քնկերութիւն մը, որուն անունը չէ տուած Տոբթ. Տաղաւարեան իր յօդուածաշարքին մէջ:

1888-1889-ին հիմնուած է Հայուհեաց Ընկերութիւնը, նպատակ ունենալով 1.- տեղւոյն վարժարաններու ազգատ ասներուն եւ անուհիներուն զգեստ մատակարարել եւ դպրոցական սկսեքերը հագալ, 2.- գիւղական ազգատ դպրոցներուն նպասակել եւ 3.- ընթերցասիրութիւնը տարածել հասարակութեան մէջ:

Ընկերութեան Գործադիր Ժողովը կը բանայ արհեստանոց մը, որ սակայն երկար ժամանակ չի կրնար գոյատևել ու կը փակուի: (տես «Արեւելք» թիւ 4622 Ապրիլ 30-13 Մայիս 1901):

Կեսարիոյ կրթական գործին օժանդակելու համար, Կ. Պոլիս գանուող կեսարացի պանդուխտներ, գլխաւորաբար Թալատ գիւղէն, կը կազմեն Մամիկոնեան Ընկերութիւնը 1848-ին, իրենց գիւղի վերք

Թաղի վարդ - Պատրիկեան վարժարանին իրբեւ նպատամատոյց ընկերութիւն, (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 Նոյ. 1898), որ մեծ դեր կատարած է մինչև 1877 թուականը կարեւոր դրամադրութիւնը զոյացնելով:

Թալատցիներու այս ղեղկցիկ օրինակը խմբին կը հանդիսանայ կեսարացիներուն, որոնք 1858-ին Կեսարիոյ մէջ կը կազմեն Հայկազնեան Ընկերութիւնը Տ. Մարտիրոս Բ. Նիկողոսեանի եւ Արաճաճ վարժապետի գլխաւորութեամբ, Հայկեան վարժարանին նիւթական օժանդակութիւն կատարելու համար: (տես Ա. Ալպոյաճեանի «Պատմ. Հայ կեսարիոյ» Ա. հատոր, էջ 1251):

Թալատ գիւղի վարի Թաղի բնակիչները նախանձախնդիր ըլլալով, իրենց Թաղի վարժարանին բարեկարգման եւ նիւթական օժանդակութիւն մատակարարելու համար 1859-ին կը հիմնեն Արշակունեան Ընկերութիւնը, որ կը գործէ մինչև 1877-78 թուականը: (տես նոյն, էջ 1252):

1860-ին կազմուած է Արամեան Ընկերութիւնը Կեսարիոյ մէջ, աղջկանց վարժարան մը հաստատելու համար: (տես «Մասիս» օրաթերթ թիւ 473 1 Մարտ 1861), որ կառուցուած է Պահլէ Պաշր Թաղին մէջ:

Կէրմիրի հայերն ալ օրինակ տանելով այս ղեղկցիկ գործէն, կը հիմնեն Պարթեւեան Ընկերութիւնը, որուն ջանքերով, կէրմիրցիներու հանգանակութեամբ 1862-ին Պարթեւեան վարժարանը կը կառուցանեն եւ 1869-ին ալ աղջկանց վարժարան մը:

Էլէէրէկցիներն ալ կէրմիրցիներէն եւ չեն մնար եւ 1864-ին կը կազմեն Դպրոցաւէն Ընկերութիւնը Հաւանարար Ս. Մեսրոպեան վարժարանին շինութեան համար: Դպրոցին շինութեան թուականը չենք կրցած ստուգել եւ այդ պատճառաւ կ'ենթադրենք թէ ընկերութիւնը հիմնուած ըլլալ այդ նպատակով:

1868-ին Պոլսարեան կեսարացիներ նախաձեռնարկ կ'ըլլան Կեսարիոյ Ա. Կարապետ վանուց Ու-

սումնասիրաց Ընկերութիւնը կազմելու, որուն նպատակը պիտի ըլլար գիշերօթիկ վարժարան մը բանալու Ս. Կարպետ վանքին մէջ: (տես Ա. Արցոյսճեանի «Պատմ. Հայ Կեանքի» Ա. հատը, էջ 1254):

1867-ին Կ. Պոլսոյ մէջ Կարապետ Փանոսեան լատինական դաստիարակներ կազմակերպած է, որուն արձուագանջը հասած է մինչև Կեսարիա: Տոքթ. Աեւտիս Երէցեան նախածննարկ կ'ըլլայ հետեւելու նման շարժումին, կազմակերպելով Լուսնորչեան Ընկերութիւնը 1870-ին: Այս Ընկերութիւնը յետոյ Աստուծոսիրական անունը կը կրէ:

Լատինական այս կազմակերպութիւնը կրօնական բնոյթ ունեցած է մաքառելու համար բողոքական քարոզչութեան դէմ: 1881-ին նման կազմակերպութիւն մը կը հիմնուի Կրթասիրական Ընկերութիւն անունով, որուն նպատակը կ'ըլլայ նաև Կեսարիոյ մէջ գիշերօթիկ վարժարան մը բանալու:

1882-ին այս Ընկերութիւնը կը յաջողի Կիրակնօրեայ վարժարան մը բանալ, ուր բարոյական գանձեր կուտայ Մուշատուր Պապուսեան: Մակայն երկար չի գործեր այս Կիրակնօրեայ վարժարանը եւ կը դադրի 1886-ին: (տես նոյն, էջ 1256):

1880-ին կազմուած է Հոգևորաց Ընկերութիւնը, գարնեայ Կիրակնօրեայ դաստիարակներ կազմակերպելու համար Կեսարիոյ մէջ: Այս Ընկերութեան լատիններն մէջ էր բրեմն քարոզած է Տ. Մարտիրոս Քչնյ. Նիկիոցոսեան:

1880ական թուականներուն էր որ կազմուած է կիներու Պարզասիրաց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է հասարակութեան միտքը դարգացնելու կրօնական գիւղերներով:

Այս Ընկերութիւնը պահած է նաև դպրաց մը 1886-ին, Բոչաներու թաղին մէջ, ուր ամէն կիրակի դաստիարակներէն եւ պաշտամունքէն էսք պնակ պատշենելով հասոյթ տալուովս մէջ կ'զարդին համար: (տես նոյն, էջ 1259):

Եվերէկի մէջ 1864-ին հիմնուած Դպրոցաճէն

Ընկերութիւնը թաղին դպրոցը շինելէ ետք երբ կը շայքայուէր, 1869-70 տարիներուն կը կազմուի Հայկեան Ընկերութիւն մը նոյն դպրոցին մասակարարութիւնը ստանձնելու համար: Մակայն այս Ընկերութեան ալ երկար ասան չի կրնար պահել իր գոյութիւնը: Ապա 1875-ին կը կազմուի Երէջ ընկերութիւն մը Դպրոցասէր Ընկերութիւն անունով, նոյն դպրոցին իրբև մասակարարոց մարտին:

1872-ին Պէլլէկէսի մէջ կը կազմուի Ազգասիրաց Ընկերութիւնը, օժանդակելու համար գիւղին Տաճառեան վարժարանին:

1880ական թուականներուն, պոլսական կեսաբացիներ իրենց դպրոցական մակարդակի բարձրասան համար, օրինակելով Կ. Պոլսոյ մէջ Հայոց Միացեալ Ընկերութեան նպատակները, նոյնանման ընկերութիւններ կը կազմեն: Եվէրէկցիք իրենց գիւղին մէջ Մեսրոպեան Ընկերութիւնը, Յէնէսէյք իրենց ծննդավայրին մէջ Ռուբինեան Ընկերութիւնը 1881ին, իսկ Էֆթէրէյներ ալ Մեսրոպեան Ընկերութիւնը 1863-ին Էֆթէրէի մէջ: Այս երեք Ընկերութիւնները մեծապէս կը նպաստեն անցուցնել վարժարաններուն բարձր ընթացքին: (տես նոյն, էջ 1262):

1881-ին Թալապի մէջ կը յիշատակուի Աստուծոսիրաց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է դպրոցներու օգնութիւն կատարել:

1885-ին Կեսարիոյ մէջ կազմուած է Կիւմչեան վարժարանի Սանոց Ընկերութիւնը, դպրոցներու նիւթական մասակարարութիւն կատարելու համար: Իսկ 1897-ին կազմուած է Մնայողական Միութիւնը ուսուցիչներու միճակին բարոյման համար: (տես նոյն, էջ 1267):

1898-ին Արամեան վարժարանին մէջ տալուով Տրդատ Այ. Պալեանի հովանաւորութեամբ վարժարանին մէջ ուսնալ երիտասարդներէ կազմուած է Ընթերցատան Ընկերութիւնը, մայրենի լեզուն արարեւելու համար գաւառին մէջ: Այլ ընկերութիւնը ուսումնասիր հասարակութիւնը կը հաստատէր

կիրակի օրերը եւ անոնց հայերէն գրել կարգալ կը սորվեցնէր:

Ակնի մէջ, ըստ Տօրթ. Տաղաւարեանի (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 նոյ. 1898): Ապուշեի գիւղին մէջ 1858 թուականին հիմնուած է նոյնանուն ընկերութիւն մը, գիւղին վարժարանին համար: Մինչդեռ, ըստ «Մէճմուսյի Հաւատիք» (1872 թիւ 2036-ին մէջ) ընկերութիւնը կը յիշուի Արշալոյս անունով, ինչ որ զարմանալի կը թուի մեզի, երկու աղբիւրներու հակասութիւնները: 1862 թուականին, ուրիշ ընկերութեան մը յիշատակութեան կը հանդիպինք, որուն անունը մեզի անծանօթ կը մնայ: (տես նոյն,):

1872 Մայիս 1-ին կազմուած է Ակնի մէջ Աղաւսիբեան ընկերութիւնը, նպատակ ունենալով հիմնել կեդրոնական վարժարանը, ուր պիտի համախմբուէր քաղաքին նարեկեան եւ Ներսէսեան վարժարաններէն եւ արուարձանի գիւղերու դպրոցներէն յաջողալոյն շրջանաւարտ աշակերտներուն բարձրագոյն ուսում տալու համար: (տես Առաքել Բէշեանի եւ Մկրտիչ Պարսամեանի «Ակն եւ Ակնցիք» էջ 161):

Աղաւսիբեան ընկերութեան գործունէութիւնը կը աւել միայն հինգ տարի եւ անոր հիմնած կեդրոնական վարժարանը կը գոյատեւէ չորս տարի: Այս ընկերութեան գոյութեան ընթացքին, 1872 Օգոստոսէն ի վեր կը զործէր Ուսումնասիրական ընկերութիւնը, կազմուած կեդրոնական վարժարանի ուսուցիչներու կողմէ: Այս ուսուցիչներուն մէջ կային Յակ. Գորեան, Չարեհ Քորոսեան, Յար. Բէյրեկեան, Ստ. Մարմանեան: Այս ընկերութիւնը հաստատուած է ըստան, գրադարան, թանգարան եւ ինչոյս ընծայած է «Մայիկ» անունով շաբաթաթիւթ մը: Ընկերութիւնը իր գոյութիւնը պահած է մօտ վեց տարի եւ ապա խափանուած է: (տես նոյն, էջ 161):

Վերոյիշեալ ընկերութիւններու կազմալուծումէն ետք, 1882-ին Կ. Պոլիս գանուող ակնցի պան-

զուխաներու կողմէ կազմուած է Կ. Պոլսոյ մէջ Կրթական Միութիւնը, որ սակայն հազիւ տարի մը կը զործէ ու տեղի կուտայ նոր շարժումի մը, նարեկեան ընկերութեան կազմութեամբ 1883-ին: Այս երկու միութիւնները Կ. Պոլսէն կը շնորհալի իրենց քաղաքացիներու կրթական շարժման նպատակ: (տես նոյն, էջ 162):

Արարկիբի կրթական շարժման զարգացումին համար 1866 Օգոստ. 25-ին Հալէպի մէջ գանուող արարկիբցիներ կը կազմեն Բերտոյ Բարեպարաց Ընկերութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ Արարկիբի հայ վարժարաններուն նպատակ: (տես Անդրանիկ Լ. Փոլատեանի «Պատմ. Հայոց Արարկիբի» էջ 610): Այս ընկերութիւնը երկար տարիներ կը գոյատեւէ: Սոյն ընկերութիւնը 1900 թուականին գետ կը գործէր:

1872-ին Արարկիբի կրթական գործունէութեան զարկ տալու համար եւ անոր դպրոցական մակարդակ բարձրացնելու նպատակով, Կ. Պոլիս գանուող արարկիբցի պանդուխտներու կողմէ կը կազմուի Օժանդակ ընկերութիւնը: Կարճ ժամանակի մէջ այս ընկերութիւնը նիւթական կարեւոր գործար կը հաւաքէ (տես «Հայրենիք» օրաթիւրթ 1872 թիւ 117), եւ շատ հաւանական է, այդ գործարը կը յատկացուի Արարկիբի մէջ գործող վարժարաններուն (տես նոյն, էջ 611):

1875 Յունիս 25-ին ինչպէս Կ. Պոլսոյ, նոյնպէս Արարկիբի մէջ Անճուէր ընկերութիւնը կը կազմուի, իրբեւ մասնաճիւղ Կ. Պոլսոյ ընկերութեան, որ դարձեալ կը նպատակը դպրոցներու գործունէութեան: Սոյն ընկերութեան հողարարձու մարմինը հասեւեալներէն կը բաղկանար. Յովհաննէս Տիւչեան, Մ. Չաքար, Տ. Աւետիսեան, Մ. Սարգիս Բրիչճեան, Գէորգ Յախրճեան եւ Յակոբ Հազարեան: (տես նոյն, էջ 611):

1877 Սեպտ. ին կազմուած է Սրբոց Թարգմանչաց կեդր. Ուսումնարանի սաներու կողմէ Սանուց Միութիւնը, որուն նպատակը եղած է աղքատ դպ-

բոցականներու գրեհական պիտոյքները հոգայ: Այս Միութեան հիմնադիրը եղած է Կարապետ Միրի-
ճանեան:

Այս Ընկերութեան 1881-ի վարչական կազմը
Հատեւեալներէն բաղկացած էր. Արշաիր Մասեան
(ատենապետ): Վաղինակ Երամեան (գանձապետ),
Մարտիրոս Ճիւղճեան (ատենադպիր): (տես նոյն,
էջ 612):

1878 Մեկուսին հիմնուած է նաեւ Ընթերցասի-
րաց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է
Արտրկիրի մէջ ձրիօրէն ուսումը ծաւալել: Ան պա-
հած է Կիրակնօրեայ Լսարան մը, ուր կը դասա-
խօսուէր զանազան ուսմանց չուրջ:

1887-ին կազմուած է նաեւ Ուսումնասիրաց Ըն-
կերութիւնը, որուն հիմնադիրներէնէն մին եղած
է Արթուրի Սարաֆեան: Այս Ընկերութեան նպատա-
կը եղած է աղջկանց կրթութեան աստարել:

Քարերգի մէջ 1865-ին կազմուած է Սմբատեան
Ընկերութիւնը, որ կը հիմնէ Սմբատեան աղջկանց
վարժարանը, կրթական նոր ծրագրով նախակրթա-
րան եւ Աղջկանց ձեռնարանը: Առաջին անգամ ըլ-
լալով կը կազմակերպէ թատերական ներկայացում-
ներ քաղաքին մէջ: (տես Լեւոն Չորժիսեանի «Հա-
մապատկեր Արեւմտահայոց Մէկ Գարու Պատմու-
թեան» Ա. հատոր, էջ 554): Այս Ընկերութիւնը
ունէր նաեւ Կիրակնօրեայ Լսարան մը: Սոյն Ընկե-
րութիւնը վարժարանին հետ կը փակուի 1880ին:

Հիւսէյնիկ գիւղին մէջ հիմնուած է Հայկեան
Ընկերութիւնը, որ երկար ատեն պահած է գիւղին
աղջկանց վարժարանը:

1879-ին, Մկրտիչ Փորթուգալեանի թեղադու-
թեամբ եւ Գրիգոր Թերզեանի նախադաշուիթեամբ
հիմնուած է Անճուէր Ընկերութեան մասնաճիւղը,
որ բացած է աղջկանց վարժարան մը: (տես «Հան-
դէս Ամօրեայ» 1959 թիւ 9-11, էջ 446, - Հր. Եփ-
րեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը:

1871-ին, Քարերգի Սմբատեան Ընկերութեան
մէջ ճիւղը կազմուած է Հագուստի գիւղին մէջ,

նպատակ ունենալով զարծեալ գիւղին կրթական
գործին նպաստել: (տես նոյն, էջ 447):

Ուսումնասիրաց Ընկերութիւնը կազմուած է
Քարերգի զանազան գիւղերու մէջ կրթական նպաս-
տին համար: Հիմնուած ըլլալ կը կարծուի 1879-ին,
բաւ Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի: (տես նոյն):

Հողէ գիւղին մէջ ալ, 1865-6-ին հիմնուած է
Սմբատեան Ընկերութիւնը: (տես նոյն):

Գամբ գիւղին մէջ ալ յիշատակուած է 1865-
1866-ին Սմբատեան Ընկերութեան մասնաճիւղը,
որ զարծեալ կրթական գործունէութիւն ցոյց ար-
ած է: (տես նոյն, էջ 450):

Մեղրէի մէջ բացուած է Անճուէր Ընկերու-
թիւնը 1879-ին, որ յետոյ իր անունը փոխած է
Արարատեան Ընկերութեան, որ գիւղին աղջկանց
վարժարանին հոգածու եղած է: (տես նոյն, էջ
443):

Արարատեան Ընկերութեան վարիչները եղած
են Նշան Յ. Արիխարեան (ատենապետ) եւ Շիրիթ
Մ. Գուրումեան (ատենադպիր): Նոյն գիւղին մէջ,
բաւ Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի, 1884-ին կազմ-
ուած է Ուսումնասիրաց Ընկերութիւն մը, իսկ 1884-
1885-ին հիմնուած ըլլալ կը կարծուի Աղգասիրաց
Ընկերութիւնը, որ բացած է Կեղրճեանի մասնա-
բաւ վարժարանը 1887-ին: 1885-86-ին Սանդխտեան
Ընկերութիւնը բացած է աղջկանց վարժարանը:

1891 Օգոստոսին, Ուսարի (Ա.Մ.Ն.) մէջ կը
կազմուի Քարերգի կրթասիրաց Ընկերութիւնը,
ի նպատակով Քարերգի մէջ Ս. Յակոբ Թաղի Աղգալին
Կեղրճեանի վարժարանին, ինչպէս նաեւ միւս
չորս թաղերու ձեռնարկ գոյրոցներու նրբապետ
օժանդակութիւն կատարելու համար:

Այս Ընկերութիւնը կազմուած էր 12 հոգիոց
Յանձնախումբի մը: Անուններն են Հատեւեալները.
Գեօրգ Կիրակնեան, Կարապետ Հոփէյեան, Մինաս
Գ. Արշալեան, Պաղասար Մ. Թաշճեան, Կարապետ
Մ. Թաշճեան, Սալատուր Մանուկեան, Յակոբ Սո-
ղիկեան, Մկրտիչ Թէրզիզեան, Յարութիւն Գ.

Տինճեան, Կարապետ Պոպոյեան, ՄՅ. Կարապետ Տէր Մկրտիչեան եւ Խաչեր Տիրլիզեան: (տես Մանուկ Գ. Ճիզմէճեանի «Ամարբերդ եւ իր զուակները» էջ 259):

Այս յանձնախումբին զատ Ընկերութիւնը ունէր Գործադիր Մարմին մը Հեռուեւայ անդամներով, Գէորդ Կիրակոսեան (ատենապետ), Պաշատուր Մանուկեան (ատենադպիր), Մինաս Գ. Արոյեան (գանձապետ):

Ընկերութիւնը ունեցած է ծրագիր, որուն մտնրամտնութիւնները արուած է Մանուկ Գ. Ճիզմէճեանի վերոյիշեալ գիրքին մէջ, էջ 259-61:

1892-ի Հոկտ. 12-ին, Չըլսի (Մէսս. Ա.Մ.Ն.) կազմուած է Բազմաշէնի Լուսաւորչական Ուսումնասիրաց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է Բազմաշէն գիւղի մանչերու եւ աղջկանց Լուսաւորչեան վարժարանին նիւթական օժանդակութիւն ընել: Մինչեւ 1895 թուականը Ա. Մ. Նահանգներէն մեծագումար գրամ հասած է վարժարանին համար եւ սակայն սոյն տիրահոշակ թուականէն ետք վարժարանը կը դադարի գործելէ:

1896-ին, Ամերիկայէն հասած նիւթական օժանդակութեամբ կանգուն մնացած եկեղեցիին մէջ կը շարունակուի գասաւանդութիւնները եւ եկեղեցին իբրեւ դպրոց կը ծառայէ: Ծնորհւ. Ամերիկայի Ուսումնասիրաց Ընկերութեան, Եփրատ զոճճի չըջանաւորաներէն ուսուցիչներ կը վարձուին աշակերտներու կրթութեան համար եւ Հետճեանէ աշակերտութեան թիւք կը բարձրանայ 250-300-ի:

Նոյն գրութեամբ, Բազմաշէնի աշակերտութիւնը կը շարունակէ ուսանիլ 1900 թուականին յաջորդող ասրիներուն: (տես նոյն, էջ 272):

Հիւսէնիի Կրթասիրաց Ընկերութիւնը կազմուած է Ուսարի (Ա.Մ.Ն.) մէջ 1882-ին, նպատակ ունենալով Ս. Վառձառ եկեղեցւոյ երկսեռ դպրոցներուն նիւթական օժանդակութիւն մատակարարել: Հիմնադիրներ կը հանդիսանան. Յակոբ Պօղիկեան, Նիկողոս Նահիկեան, Մահակ Ատիշեան,

Պօղոս Տիրանեան, Մանուկ Յովսէփեան, Պօղոս Վարդապետեան, Տոնապետ Ոստիկեան, Մարտիրոս Նահիկեան:

1889-ին Հիւսէնիի Կրթասիրաց Ընկերութեան վարչական կազմը հեռուեւայներէն կազմուած էր. Կարապետ Պէրպէրեան (ատենապետ), Յակոբ Ոստիկեան (ատենադպիր), Մարդիս Սարաֆեան (գանձապետ), Մինաս Չարմանեան եւ Պօղոս Գույումճեան (խորհրդականներ):

Դպրոցը 1895-ին կը փակուի: (տես նոյն, էջ 276):

Բաշադակի Հայոց Կրթասիրաց Ընկերութիւնը կազմուած է Նիւ - Եորքի մէջ 1893 Նոյ. 13-ին:

Ընկերութեան նախաձեռնող անդամները եղած են Ա. Թֆէնքճեան, Ա. Պօյաճեան, Կ. Արապեան եւ ուրիշներ: Կր կազմուի վարչութիւն մը հեռուեւայ անդամներէն. Ա. Վահանեան, Մ. Թորոսեան, Ա. Թֆէնքճեան, Ա. Գարբէլեան, Ա. Պօյաճեան, Տ. Սէմէրճեան եւ Կ. Արապեան:

Դպրոցը կը բացուի 1897-ին ամառը 80 աշակերտներով, որոնց մէջ մի քանի թուրք աշակերտներ ալ գտնուած են: Այս դպրոցը իր գոյութիւնը պահած է մինչեւ 1914 թուականը: (տես նոյն, էջ 278):

Մորենիի Ուսումնասիրաց Ընկերութիւնը հիմնուած է 1888-ին Ուսարի (Ա.Մ.Ն.) մէջ: 1890-ին վերակազմուած է ընկերութիւնը եւ օգնած Մորենիի գիւղի Լուսաւորչական դպրոցին, որ պահած է մինչեւ 175 երկսեռ աշակերտներ:

Սոյն Ընկերութիւնը Մէզրէի մէջ պանդոկ մը դնելով բաւական եկամուտ ապահոված էր դպրոցին, որուն շնորհիւ կրթական մակարդակը բարձրացած էր: 1911-ին դպրոցը կ'ալքի:

Այս ընկերութեան հիմնադիր անդամները եղած են. Պարսամ Ասաուրեան, Իսահակ Տիրատուրեան, Մանուկ Վարդանեան, Մանուկ Միքայէլեան, Հաճի Մանուկ Մանուկեան, Հաճի Չաքար Նաճարեան, Յարութիւն Տէրաբեան, Հաճի Կարապետ

Աւագեան, Խաչատուր Աւագեան, եւ այլն: (տես նոյն, էջ 288):

Այս ընկերութիւններէն զսա զեռ կան ուրիշներ, ինչպէս՝ Բարձրան գիւղի Լուսաւորչական Ուսումնասիրաց Ընկերութիւնը, Հիմնուած Ֆէլուս (Մեհէլուսեց) մէջ: Քորրէի Ուսումնասիրաց Ընկերութիւնը կազմուած 1893-ին Լոյլէլի մէջ: Իջմէի Լուսաւորչ: Կրթասիրաց Ընկերութիւնը Հիմնուած Փրազիտէնի մէջ (Թուականը անյայտ է Յ.Տ.Պ.): Աղնցիցի Ուսումնասիրաց Ընկերութիւնը կազմուած 1896-ին, Դատեմի Լուսաւորչ: Կրթասիրաց Ընկերութիւնը կազմուած Պրայթնի մէջ (Մէսս.) 1891-ին, Չմչիւմազի Ուսումնասիրաց Ընկերութիւնը կազմուած Լարէնի մէջ (Մէսս.) 1898-ին, Շոգէի Լուսաւորչ: Ուսումնասիրաց Ընկերութիւնը Լոյլէլի մէջ (Մէսս.) 1891-ին, Չարսանճաղ-Բերբի Ուսումնասիրաց Ընկերութիւնը 1894-ին, Հապուսի գիւղի Ուսումնասիրացը 1894-ին, Լարէնի (Մէսս.) մէջ, Մոյքի Ուսումնասիրաց Ընկերութիւնը 1892-ին, Քէւէրիցի Կրթասիրաց Միութիւնը 1888-ին Ուտրի մէջ, Վարդաթիլ գիւղի Ուսումնասիրաց Ընկ.ը 1892-ին (Մէսս.), Շէնթիլի Ուսումնասիրաց Ընկերութիւնը 1891-ին Ուտրի մէջ, Խոյլու-Թլիւսին Լուսաւորչական Կրթասիրաց Ընկ.ը 1891-ին Փրազիտէնի մէջ, Եղեղի գիւղի Ուսումնասիրաց Ընկ.ը 1892-ին Ուտրի մէջ: Այս բարբի մասին զրեւ երկար պիտի բլլայ եւ աւելորդ, որովհետեւ անոնք մեծ գործունէութիւն մը շին ցուցարեցած 1895 թուականէն ստաջ, Հետեւաբար անոնք զանք բրինք սոսակոյ:

Էրզրումի մէջ յիշուած է ընկերութեան մը Հաստատումը 1852 թուականին, սակայն դժբախտաբար անոր անունը յիշուած չէ: (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 նոյ. 1898): Անկէ զսա ուրիշ ընկերութեան մը մասին գրուած է, որուն անունին յիշատակութիւնը չէ եղած, բայց եւ այնպէս կը գրուի անոր Հիմնադրութեան թուականը 1861, որուն նպատակը եղած է ուսման տարածումը քաղաքին մէջ:

1862-ին կազմուած է Ուսումնասիրաց Ընկերութիւնը (ըստ Տորթ. Տաղաւարեանի (տես «Արեւելք» թիւ 3854 6-17 1898) ի նպատակ Գայանեան վարժարանին):

Մեզի անձանթ մնացած է Գայանեան վարժարանի մը զոյտութիւնը Էրզրումի մէջ: Մենք գիտենք Արծնեան Մայր վարժարանը եւ անոր Համար Հասար Ընկերութիւնը Արծնեան Ընկերութիւն անունով, որ Հիմնուած է 1865 թուականին: (տես Յ.Ճ. Սիրունիի «Պոլիս եւ իր գերը Բ. Հասար, էջ 389):

Բացի այդ, Էրզրումի մէջ եւս Հիմնուած է Անճուէր Սանուց Ընկերութեան մասնաճիւղը 1869 թուականին, տեղւոյն վարժարաններուն իրբեւ օժանդակ մարմին: (տես «Արեւելք» թիւ 3853 5-17 նոյ. 1898 Տորթ. Տաղաւարեանի-Սիւնակ Բանասէր յօդուածաչաբքը):

Ուրիշ մանրամասնութիւններ կը պահին վերոյիշեալ Ընկերութիւններու մասին: Տեղեակ չենք անոնց Հիմնող իրներու անուններուն եւ վարչական կազմի անդամներուն անուններուն:

Երզնկայի մէջ Հասանօրէն 1856-ին Հիմնուած բլլայ ընկերութիւն մը, որուն անունը մեզի անձանթ մնացած է: Այս Ընկերութիւնը, ըստ Հր. Եփրեմ Վրդ. Պոզոսեանի ցոյց ստուած տուեաններուն, 1856 Մեպ. ի 28-ին Հիմնուած է, թաղէն Ս. Բագրատունիի կողմէ, որ սղոյտերեակ պանդուխտ մը եղած է եւ Երզնկայի Հայ Հասարակութեան կեանքը բարելաւելու, ինչպէս նաեւ կրթական Հաստատութիւնները բարեկարգելու մտօք Հիմնած է սոյն Ընկերութիւնը, ընկերակցութեամբ Էրզնկացի Տ. Ստեփաննոս քահանայի բարեջանութեամբ: (տես «Հանդէս Ամօթեայ» 1959 թիւ 1-4, էջ 148-149): Չենք գիտեր թէ որքան ասն պահած է իր զոյտութիւնը:

1859-ին Հիմնուած է Լուսաւորչեան Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է Երզնկայի մէջ ընթացասիրութիւն զարգացնել եւ ստարել Լուսա-

տրչեան դպրոցին, որուն աւագ ուսուցիչը եղած է Քաղէսս Մ.Մ. Բաղդատունին, 1859 թուականին: (նոյն, էջ 149):

Այս Ընկերութեան Հիմնադիրներու անունները եւ վարչական կազմը անձանօթ կը մնան մեզի, սակայն կը պակսին այդ ուղղութեամբ:

Երզնկայի մէջ կազմուած է նաեւ Ընկերութիւն Ընկերական Վարժարանին: Ըստ Տոքթ. Տաղաւարեանի 1870 թուականին: (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 նոյ. 1898):

Գ. Սիւրճէնեանի համաձայն, (տես «Երզնկա» էջ 130) Ընկերական մասնաւոր վարժարանը հիմնուած է 1879 թուականին: Բացի այդ, Տոքթ. Տաղաւարեան կը յիշէ Երզնկայի մէջ դարձեալ Ուսումնասիրաց Ընկերութիւնը, հիմնուած 1870 թուականին (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 նոյ. 1898):

Այստեղ շփոթութիւն մը ի յայտ կուգայ: Քննելով Տոքթ. Տաղաւարեանի վերոյիշեալ Ընկերութիւններուն հիմնարկութեան թուականները, պիտի չկրնանք ընդունիլ Ընկերական Ընկերութեան հիմնարկութիւնը 1870-ին, քանզի վարժարանը շինուած է 1879 թուականին, սակայն պէտք ենք սրբազրկել դայն 1879 թուականով, որ արժամարանական է եւ ճիշդ:

1871-ին կազմուած է Անճնուէր Ընկերութեան մասնաճիւղը Երզնկայի մէջ: Ինչպէս Կ. Պոլսոյ եւ այլ դասաններու մէջ, այս Ընկերութիւնը կը դործէր կրթական շարժումին նպաստելու համար: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1959 թիւ 1-1, էջ 150 - Հր. Եփրեմ Վրդ. Պօզոսեանի յօդուածաշարքը): Այս Ընկերութեան վարչական կազմն էր՝ Յարութիւն Ղազարեան (ատենապետ), Մ. Յակոբ Բենիքճեան (ատենադպիր), Յակոբ Մ.Մ. Փափազեան (տեսուչ), Մ. Համարձում Սիւրճենեան եւ Մ. Շուարշ համարակաշներ): (տես նոյն, էջ 151): Դժբախտաբար այս Ընկերութիւնը չի կրնար երկար առեն գոյատևել:

1880 թուականին, նախապէս գոյութիւն ունե-

ցող Արեւելեան եւ Ասիական Ընկերութիւնները իրարու միանալով կը կազմեն Միացեալ Ընկերութիւն մը, որ կ'իլիկիոյ, Վասպուրականի, Բարձր Հայքի եւ Տուրքիանի շրջաններուն մէջ կը բանայ յիսունի մօտ պարօններ: (տես Գ. Սիւրճէնեանի «Երզնկա» էջ 128):

Տիրապէքիլի մէջ հիմնուած է Լուսաւորչեան Ընկերութիւնը 1857-ին (տես «Արեւելք» թիւ 3854 6-18 նոյ. 1898), որուն նպատակը եղած է դպրոցներ բանալու: Մեզի անձանօթ կը մնայ ընկերութեան զօրձունէութիւնը, որովհետեւ տեղեկութիւններ չենք գտած դպրոցաշինութեան մասին: Ինչպէս գրեցինք իր տեղին, մեզի ձանօթ են միայն 1895էն ետք դպրոցական շարժումը, որոնք սակայն չեն բաւարարէր մեր հետաքրքրութիւնը:

1866-ին կը յիշուի նաեւ Անճնուէր Սանույ Ընկերութիւնը, որ մասնաճիւղն էր Կ. Պոլսոյ նոյնանուն Ընկերութեան, որուն նպատակը եղած էր դպրոցներու զօրձունէութեան օջիւղ:

Կարինի մէջ, Սոսնուորջ Զօրութեանի նախաձեռնութեամբ կազմուած է 1851-ին Արծնեան Ընկերութիւնը, որ ունեցած է 400 անդամ: Այս Ընկերութեան կողմէ հիմնուած է Արծնեան վարժարանը:

1869-ին Կարնոյ մէջ հիմնուած է նաեւ Անճնուէր Տիկնանց Ընկերութեան մասնաճիւղը: Նոյն թուականին հիմնուած է նաեւ Ուսումնասիրաց Ընկերութիւնը, ազգասէր երիտասարդ արհեստաւորներու կողմէ, նպատակ ունենալով աղքատ եւ անկարող դպրոցականներուն ձրիարար դիրք եւ դրեւական պիտոյք մատակարարել: 1880-ին կազմուած են Ընթերցասիրաց եւ Վարդանանց Ընկերութիւնները, որոնք առենէ մը ետք 1880-ին կը միաձուլուին ուրիշ երկու ընկերութիւններու հետ, որոնք են Ուսումնասիրաց եւ Դպրոցասիրաց ընկերութիւնները: (տես Լեւոն Զորմիսեանի «Համապատկեր Արեւմտահայոց Մէկ Դարու Պատմութեան» Ա. հատոր էջ 553): Վերոյիշեալ ընկերութիւններու միա-

ծուրվամբ կը կազմուի Բարձր Հայոց Միութիւնը, հաւանաբար օժանդակելու համար զպրոցներուն: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1959 թիւ 1-1, էջ 134 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաչափքը):

1873-ին կազմուած է Ընկերական վարժարանի Ընկերութիւնը, կարինի զպրոցներու օժանդակելու նպատակով եւ բացած է Ընկերական անուն վարժարանը, հաւանաբար 1874-75 թուականներուն: Սոյն Ընկերութեան վարչութեան կ'ատենադէպէր Ալեքսանդր Տ. Ներսէսեան եւ ատենադպիրն էր Գրիգոր Մըսրեան: (տես նոյն,):

1874-78-ին գոյութիւն ունեցած է Սիռական Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է արհեստաւորներու ուսում առ: (տես նոյն, էջ 135):

1878-ին հիմնուած է Կրթական Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է Կարինի մէջ նախակրթարանի զպրոց մը հիմնել, ընթերցարան բանալ եւ Կ. Պոլսի մամուլ բերել թերթի հրատարակելու համար: (տես նոյն, էջ 136):

1880-ին Կարինի մէջ կազմուած է Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան մասնաճիւղը, որ դարձեալ կը ծառայէր կրթական գործունէութեան:

Մարաշի մէջ մեզի ծանօթ է Կիլիկեան հայրենասիրաց Ընկերութիւնը, որուն շնաբերով հիմնուած է 1880-ին Կեդրոնական Բարձրագոյն վարժարանը: Իսկ աղջկանց զարգացումին համար հիմնուած է Հայուհեաց Ընկերութիւնը, որ շինած է նաեւ վարժարան մը: Սակայն այս Ընկերութիւնը երկար կեանք չունեար:

Կարճ յազարուսէ ետք, վերստին կը կազմակերպուի նոյնանուն ընկերութիւնը եւ Ս. Ստեփաննաս եկեղեցիին բակին մէջ, անոր ճիւղերով կը շինուի աղջկանց վարժարան մը:

Այնթապի մէջ հիմնուած է 1867-ին Վարդանանց Ընկերութիւնը, նպատակ ունենալով աղջկանց ուսման գործադրումին ուժ տալ եւ վարժարան մը բանալ:

Ընկերութեան հիմնադիրները եղած են Յ. Լու-

սարաբեան եւ Նիկողայոս Դազարէթեան: Ընկերութեան նպատակը եղած է Վարդանան անունով զպրոց մը հիմնել 1880-ին, որպէսզի հայ սղաք օտար վարժարաններ յաճախել արդիւրէ եւ սղքաս սղոց զարգացական պիտոյքները հօգայ: (տես Գեորգ Ա. Մարաթեանի «Պատմ. Այնթապի Հայոց» Ա. հատոր, էջ 880): Այս Ընկերութիւնը երկար ատեն զործած է Այնթապի մէջ եւ մինչեւ 1900 թուականը դեռ իր գոյութիւնը կը պահէր:

1868-ին կազմուած է նաեւ Ուսումնասիրաց Ընկերութիւնը, որ կրթական գործունէութեան օժանդակած է:

1875-ին հիմնուած է Ազնեական Ընկերութիւնը, որ նպատակ ունեցած է հիմնել զիւրօթիկ վարժարան մը: 1885-ին չորհիւ Ընկերութեան ջանքերուն բացուած է Որբանոց-զպրոց մը, ուր որբեր ձրի կրթութիւն կ'ստանան: Սակայն նիւթական գծուարին պայժմաներու հետեւանքով 1889-ին այս վերջինը կը փակուի:

1880-ին կազմուած է Հսիսիսիական Պարզասիրաց Ընկերութիւնը, որ 1881-ին բացած է օրիորդաց ծաղկոց մը, ուր 40 ուսանողուհիներ կրթութիւն կ'ստանան: 1888-ին այս Ընկերութեան անդամներու թիւը կը հասնէր 300-ի եւ կը կառավարէր 5 աղջկանց զպրոցներ, ուրտեղ կը յաճախէին 250 աշակերտուհիներ: 1889-ին Այնթապի աղջկանց պարտիս վարժարանը կը յանձնուէր սոյն Ընկերութեան հոգածութեան: 1900-ին այս Ընկերութիւնը դեռ կը գործէր:

1883-ին հիմնուած է Հայկազնեան Ընկերութիւնը, որ բացած է 30 աշակերտներէ բաղկացած զպրոց մը:

1884-ին կազմուած է Արամեան Ընկերութիւնը, որ թաղին ուսումը գրկուած սղոց համար կը բանայ զպրոց մը: (տես նոյն, էջ 884):

1898-ին է որ հաւանաբար կը կազմուի Հանդանակութիւն Ընկերութիւնը, որ քաղաքին երեք թաղերուն մէջ երեք ծաղկոցներ կը բանայ, որոնց մէջ

150 աշակերտներ կրթութիւն կ'առնեն:

1898-ին է դարձեալ, որ կը հիմնուի Որբախնամ Ընկերութիւնը, քաղաքին որբանոցին օժանդակլու համար: (տես նոյն, էջ 885):

Հաճընցի պանդուխտներ Կ. Պոլսոյ մէջ 1871-ին կը կազմեն Վարդանեան Ընկերութիւնը (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 10-12, էջ 580): Այս Ընկերութեան հիմնադրութեան թուականը 1860-ին եղած կը կարծուի Սոկրատ Յ. Թէրզեանի կողմէ (տես «Հաճընի Ութամսեայ Դիւցադնամարտը» էջ 69), ինչ որ սխալ է, քանզի Հր. Եփրեմի ցոյց տուած փաստերը հիմնական են ու ճիշդ:

Այս Ընկերութեան նպատակն էր դատուի հայոց, ի մասնաւորի Հաճընի մէջ ուսումը տարածել: Ընկերութեան առջին վարչութիւնը կազմուած է հետեւեալներէն. Ռուբէն Գրիգորեան (նախագահ եւ Գանձապետ), Ռուբէն Քէմհաճեան (տանապարհ), Բիւզանդ Բաղարեան, Մերտն Գրիգորեան, Կարապետ Գարամաճեան, Միքայէլ Իւզարեան, Յակոբ Աստուածատրեան, Յարութիւն Բարադեան, Յովհաննէս Թէվէքէլեան, Յ.Յ. Յովակիմեան, Պետրոս Գարակէօզեան, Սիմոնիկ Մանիէլեան, Ստեփան Չպուքճեան, Տիգրան Չպուքճեան, (տես «Հանդէս Ամսօրեայ» 1955 թիւ 10-12, էջ 580) - Հր. Եփրեմ Վրդ. Պողոսեանի յօդուածաւարքը), Աբիկ Ունճեան, Անտոն Իւզարեան, Թէվէքէլ Թէվէքէլեան, Թէվիփիէ Պողոսեան, Եւան Այվազեան, Սիմոն Փափազեան, Յովհաննէս Եսայեան: (տես նոյն, էջ 581):

Վարդանեան Ընկերութեան ջանքերով Հաճընի մէջ հիմնուած է Վարդանեան մանչերու վարժարանը 1871 Սեպտ. 20-ին, իսկ 1872 Մայիս 15-ին Վարդուհեան ազնկանց վարժարանը: 1874-ին Փետր. 10 նոյն Ընկերութիւնը կը բանալ նաեւ Վարդանեան նախակրթարան անունով վարժարան մը: Այս երեք վարժարաններու ծախքերը կը հողացուին Վարդանեան Ընկերութեան կողմէ:

1874-էն ետք ալ Ընկերութիւնը դեռ կը դորձէր,

բայց 1879-ին չենք գիտեր թէ ինչ պատճառներով կը քայքայուի ան, սակայն եւ այնպէս վարժարանները կը պահեն իրենց դարձութիւնը:

1879 Փետր. 18-ին կազմուած է Կիլիկիան Ընկերութիւնը, որ կը փոխարինէ Վարդանեան Ընկերութեան նախական գործը, որուն անդամներու մեծ մասը նախորդ ընկերութեանն էին:

1871-ին կազմուած է Նորհաստատ Ընկերացաօրաց կամ Ընթերցասիրաց Ընկերութիւնը, որ կ'երևի թէ նպատակ ունեցած է ընթերցասիրութիւնը զարդացնել հաճընցի հայ հասարակութեան մէջ:

1880-ին, վերոյիշեալ ընկերութիւնները իրարու միանալով կը կազմեն Միացեալ Ընկերութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ ստատել Հաճընի վարժարաններու կրթական գործունէութեան, ու միուելոյն ստեն Կիրակոսեայ Լատրան մը բանալ: Բացի այդ, կը բանալ Ընթերցարան մը եւ գիշերօթիկ վարժարան մը:

Միացեալ Ընկերութեան գործունէութեան անուղութիւնը մեղի ծանօթ է, բայց եւ այնպէս կը յիշուի որիչ ընկերութիւն մը Հաճընի մէջ 1880-ական թուականներուն, Հայրենասիրաց անունով, որ դարձեալ աշխատած է ի նպատակ վարժարաններուն: Այս Ընկերութիւնը կազմուած է Վարդանեան վարժարանի նախկին աշակերտներու կողմէ: (տես Արեւիկեան Մամուլ» 1880, էջ 242):

Զէյթունի կրթական գործով զբաղած է Կ. Պոլսոյ Կիլիկիան Ընկերութիւնը, որ ապա Արարատ եւ Վասպուրական ընկերութիւններու հետ միաձուլուելով կը կազմուի Հայոց Միացեալ Ընկերութիւնը 1879-ին: (տես «Զէյթունի Պատմագիրք» էջ 920):

Ապա Զէյթունի չորս թաղերուն մէջ կազմուած են մէյ մէկ ընկերութիւններ, որոնց նպատակը եղած է ժողովուրդին մէջ ընդհանրացնել ուսումը եւ կրթութեան սէրը: Այս ընկերութիւնները կապուած էին Կ. Պոլսոյ Միացեալ Ընկերութեան հետ եւ անկէ կ'ստանային անհրաժեշտ թելադրութիւններ:

1870ական թուականներուն, Զէյթունի մէջ գոյութիւն ունեցած էր Ռուբինեան Ընկերութիւնը, որ մասակարարած է զպրոցական պէտքերուն (տես նոյն, էջ 925), մասնաորոշար Ռուբինեանց Ընկերութեան վարժարանին: Այս Ընկերութեան Գործադիր Մարմինը կը կազմուէր Պաշատուր Տատուրեանի աստեղագետութեամբ եւ որուն աստեղագիրն էր Գէորգ Տ. Ղազարեան: (տես նոյն, էջ 926):

Աւելի մէջ ուսում տարածելու նպատակով 1879-ի սկիզբները հիմնուած է Կ. Պոլսոյ մէջ Հայկազեան Միութիւն Աւելիոյ ընկերութիւնը: Հանդանակութիւն անդի կ'ունենայ, Զէյթունի եւ Փոնուզի մէջ մէյ մէկ վարժարան բանալու համար: 1879 Յուլիին Ընկերութեան վարչութեան զլուխը կը կազմէին Յ. Ե. Թուղլանեան (աստեղագետ) եւ Յ. Քէմիրճեան (աստեղագիր):

1879-80 թուականներուն կազմուած է Աւստմնասիրաց Ընկերութիւնը, զարձեայ իրը զպրոցական գործունէութեան սթանդակով մարմին մը:

1881-ին հիմնուած է Սիրոյ Ընկերութիւնը, որ Զէյթունի չորս թաղերէն միոյն մէջ զպրոցներու նպատակով մարմիններէն մին եղած է: (տես նոյն, էջ 927): Հիմնադիրը եղած է Նազարէթ Պօզողլուեան, իրեն օգնած է Պետրոս Սպարթեան: Այս Ընկերութիւնը հոգացած է թաղին երկեսն աշակերտութեան, որոնց թիւը 1882-ին 100 հոգի էր:

Սիրոյ Ընկերութեան անդամներու թիւը կը հասնէր 100ի:

1881-ին կը լիւուի կրթասիրաց Միութիւնը, որ Զէյթունի չորս թաղերու ընկերութիւնները բուժարքի ենթարկելով կը կազմէ մէկ միութիւն, որուն նպատակը կ'ըլլայ այդ չորս թաղերու վարժարաններուն նրթապէս օգնել: Ասիկէ դատ Ընկերութիւնը կը բանայ կրթակոթող վարժարան մը:

Ընկերութեան աստեղագետը եղած է Յարութիւն Քէլվանեան, աստեղագիրը՝ Աւետիք Կէսրամեան: Գործ. Ժողովի աստեղագետը եղած է Նշան

Պալճեան եւ աստեղագիրը՝ Մնացական Աղճապեան: Ատանայի մէջ 1852-53-ին կազմուած է Կիլիկիոյ Ընկերութիւնը, որուն հիմնադիրները եղած են Գասպար աղա Տէլիֆէր, Յարութիւն աղա Սաւառպաշեան եւ եղբայրը՝ մհա. Մանուկ աղա: Այս Ընկերութեան ջանքերով Ատանայի մէջ կարելի եղած է որոշ շահով յատկացնել կրթական գործունէութիւնը: (տես Բիւզանդ եղիականի «Ատանայի Հայոց Պատմութիւնը» էջ 622):

1868-ին կը հիմնուի Տրիկանց Ընկերութիւնը, ազգիանց զպրոց մը բանալու նպատակաւ:

1871-ին կը կազմուի Անճուէր Ընկերութիւնը՝ միւնիսիոյ նպատակով: Այս Ընկերութեան աստեղագետն էր Նիկողայոս Մ. Դ. Մըրքեան, իսկ աստեղագիրը՝ Կարապետ Յ. Գազանճեան, գանձապետը՝ Մ. Պօղոս Թորիկեան, գրապետը՝ Պաշատուր Ս. Պանճեան:

Այս Ընկերութիւնը սկարանալով կը փակուի: Բայց տարի մը ետք կը վերակազմուի Միարանսպիրաց Ընկերութիւն անունով, որ հետզհետէ գործնալով կը բանայ Միարանսպիրաց զպրոցը:

1872-ին կը հիմնուի նաև Աւստմնասիր Ընկերութիւնը, որ իր կարգին կը բերէ նպատակաւ կրթական գործունէութեան:

1878-ին կը կազմուի Արզարեան Ընկերութիւնը, որ մեծադոշը կը հանդիսանայ Ատանայի մէջ գոյութիւն ունեցող կրթական ընկերութիւններուն մէջ: Այս Ընկերութիւնը հիմնած է Արզարեան վարժարանը, որ երկար տարիներ անխափան գործած է Ատանայի մէջ: (տես նոյն, էջ 623):

Ուրֆայի մէջ, համաձայն Տորթ. Տաղաւարեանի, 1855ին կազմուած է Քրիստոսեան Ընկերութիւնը (տես «Արեւիք» թիւ 3854 6-18 նոյ. 1898) զպրոցական հոգածութեան համար: Այս Ընկերութիւնը հոգատար մարմինը եղած է նոյնանուն զպրոցի մը:

1856-ին կազմուած է Մ. Թաղէսեան Ընկերութիւնը: Այս Ընկերութեան ճիգերուն շնորհիւ բաց-

ւած է Ս. Քաղէտեան վարժարանը: (տես «Արեւիկը» թիւ 3551 6-18 Նոյ. 1898):

1857-ին կազմուած է Աղղէեան Ընկերութիւնը, որ հիմնած է վարժարան մը իր անունով: Այս Ընկերութիւնը սակայն 1857-58-ին կը միանայ Գրիստոսեան Ընկերութեան հետ, նոր կանոնադրութեան մը համաձայն: (տես Արամ Սահակեան «Իւջագո՞նական Ուրֆան եւ իր Հայտրդիները» էջ 313):

Ապա այս միութեան հետ եկած է ծուլուելու Ս. Քաղէտեան Ընկերութիւնը եւ կրած է Քրիստոսեան Աղղային Միարանեալ Նոր Ընկերութիւն անունը 1858 Ապրիլ 3-ին (տես նոյն, էջ 314): Նորակազմ այս Ընկերութիւնը կը շարունակէ մնալ մինչև 1900 թուականը իրրեւ զգրոցանպաստ ընկերութիւն:

1858-ի վերջերք կը յիշուի ուրիշ ընկերութիւն մըն ալ նոյն նպատակին ծառայող, որուն անունը մնացած է անձանօթ:

1863-ին հիմնուած է Ռուբինեան Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է աղքատ տղայ օժանդակել եւ վարժարաններուն օգնել: Ընկերութեան հիմնադիրը եղած է Ռուֆայի Առաջնորդ Գրիգոր Արքեպ. Ռուբինեան, որուն անունով կոչուած է ընկերութիւնը:

1863 Մայիս 1-ին Ռուբինեան Ընկերութեան կողմէ կը հիմնուի Ռուբինեան վարժարանը: Այս Ընկերութիւնը ամենաերկարատեւը կ'ըլլայ Ռուֆայի մէջ: Կը կարծուի թէ ան խափանուած է 1895-ի ախար դէպքերուն:

1863-ին կը յիշուի նաեւ Լուսաւորչեան Ընկերութիւնը քաջալերելու համար աղքատ տղաքը կարգալու ու դրել սորվելու: Այս Ընկերութիւնը հիմնած է Ռուֆայի աղջկանց առաջին վարժարանը, որուն անունը հաւանաբար պիտի ըլլայ ընկերութեան անունով, որովհետեւ յիշուած չէ անունը:

1868-ի կազմուած է Անձնուէր Ընկերութիւնը, որ նպատած է Ռուֆայի զգրոցական գործունէութեան:

1870-ին կը յիշուի Հասարական Ընկերութիւնը, որ ստատարած է կրթական գործին:

1871-ին հիմնուած է Հայկազեան Ընկերութիւնը, որ քաջալերած է ուսման ծաւալումին Ռուֆայի մէջ, մանուկներու եւ պատանիներու Հայերէն լեզուն սորվեցնելու համար, սակայն դժբախտաբար երկար չի գոյատևեր: (տես Արամ Սահակեանի «Իւջագոնական Ուրֆան եւ իր Հայտրդիները» էջ 320):

1872-ին վերոյիշեալ ընկերութեան իրրեւ շարունակութիւն- 14-16 տարեկան Հայրենասէր եւ ուսումնասէր պատանիներ, ընկերութիւն մը կը հիմնեն Բողբոջ Հայկազն Ընկերութիւն անունով, որուն նպատակը կ'ըլլայ աշխուժացնել Հայերէն գրել կարգալու տարուած աշխատանքները հասարակութեան մէջ:

1872-ին կազմուած է նաեւ Համաղղային Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է ծառայել աղղային գործերուն եւ իր պիտանէէն մաս մըն ալ յատկապէս ոչ ոք չունէր:

1872-ին կազմուած է նաեւ Յովսէփեան Ընկերութիւնը, որ կը հիմնէ Յովսէփեան վարժարանը:

1877-ին Ռուբինեան վարժարանի ուսուցիչ Գևորգ Կ. Ոսկերչեանի կողմէ կը հիմնուի Որդիք Ռուբինեանց Ընկերութիւնը, նպատակ ունենալով օժանդակել Ռուբինեան վարժարանին նիւթապէտ թէ բարոյալէս: (տես նոյն, էջ 321):

1878-ին կը յիշուի հիմնադրութիւնը Վարդանանց Ընկերութեան, որ կը հօգայ աղքատ զգրոցական տղայ գրեական պիտոյնները, ինչպէս նաեւ ձրիարար թրբերէն լեզուն ուսուցանել կուտայ անոնց, Գրիգոր Տէր Յովսէփեանի կողմէ:

1880-ին հիմնուած է Ուսումնասիրաց Սորէնեան Ընկերութիւնը, որուն ֆանքերով կարելի կ'ըլլայ Ռուֆայի վարժարանները բարեկարգել:

Ռուֆայի գիւղերէն Սեւերէկի մէջ եւս 1858-ին կազմուած է Նարեկեան Ընկերութիւնը, կրթական

չարժան իրրեւ օժանդակ մարմին:

Պիւէճիկի մէջ եւս նոյն թուականին կը յիշուի զոյսեթիւնը ընկերութեան մը, որուն անունը անյայտ մնացած է: Այդ Ընկերութիւնը ստատարած է զիւրին կրթական զարգացումին: (տես նոյն, էջ 315):

Կարժուել զիւրին մէջ Հիմնուած է Հայրենադիրաց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է կրթական ձեռնարկներու համար նիւթական վարկ պատրաստել: (տես նոյն, էջ 323):

Վանի մէջ կրթական շարժումի զարգացման համար, Կ. Պոլսոյ մէջ 1876-ին Պարեգին եպ. Սրուանձուտանցի նախաձեռնութեամբ կազմուած է Սանդխտեան Ընկերութիւնը: 1871-ին այս Ընկերութիւնը Այդեաստանի մէջ Հիմնուած է ազգիանց վարժարան մը Սանդխտեան անունով: (տես Համարձուձ Երամեանի «Յուշարձան Վան-Վասպուրականի» Ա. հատոր, էջ 78-79):

1871-ին Այդեաստանի մէջ, վերոյիշեալ Ընկերութեան ձեռնարկութեամբ բնիկ հայերը կը կազմեն Հայկազնեան Ընկերութիւնը, որ Հիմնուած է համանուն վարժարան մը Նորաշէնի մէջ:

1871-ին է որ դարձեալ Այդեաստանի մէջ Նորաշէնի զարդին աշակերաներու զարգացական ծախսերը հողալու համար Հիմնուած է Ուսումնասիրաց Ընկերութիւնը: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1958 թիւ 1-4 էջ 129 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաբարը):

Վանի Արտամէտ նահանգին մէջ 1872-ին Հիմնուած է Արշակունեաց Ընկերութիւնը, նպատակ ունենալով Արտամէտի մէջ զարդ մը բանալ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1960 թիւ 1-3, էջ 149): Այս Ընկերութեան ատենապետը եղած է Մ. Մուրատ Բիւզանդեան, իրաւաստնապետը Գեղորդ Աճէմեան, ստեղծողները՝ Պօղոս Գալուստեան եւ իրաւաստնազպիրը՝ Պեարոս Ճէնամեան: (տես նոյն):

1875-ին կազմուած է Ուսումնաստարած Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է Վանի մէջ

զիւրեթիկ վարժարան մը բանալ: Այս Ընկերութեան Հիմնադիրները եղած են, Սահակ Գայճեան, Մեղրն Պարթևեան եւ Նշան Երիվանեան:

1876-ին, Վանի Հայկազնեան վարժարանի աշակերաններուն կողմէ կազմուած է Հայրենասէր Սանուց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է ընթերցարան մը հաստատել, կերակուի օքերը ձրի դաս աւարտ համար հասարակութեան: Մկրտիչ Փոք թուպայեանի առաջնորդութեամբ 1876 նոյ. 1-ին կ'իրականանայ այդ նպատակը:

Ընկերութեան վարիչները եղած են. Յովհաննէս Ա. Թէրլէմէղեան (նախագահ), Մկրտիչ Ա. Թէրլէմէղեան (քարտուղար) եւ Սահակ Մանասեան (գրասպահ): 1877-ին այս Ընկերութիւնը կ'ստանձնէ հողատարութիւնը Հայկազնեան վարժարանին: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1858 թիւ 1-4 էջ 132 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաբարը):

1877-ին կազմուած է Մամիկոնեան Ընկերութիւնը, որ Հայրց Զօրի զիւղերէն՝ Իշխանի Գում յիւղին մէջ զարդ մը բացած է (տես նոյն, էջ 132):

1878-ին Հիմնուած է Ազգանուէր Ընկերութիւնը Արարուց թաղի Ս. Մատթէոսեան վարժարանի նախկին սաներու կողմէ: Գլխաւոր Հիմնադիրներ կը յիշուին Մարկոս Նաթանեան, Պօղոս Նաթանեան եւ Սաշատուր Մանդակունեան: Այս Ընկերութեան նոյնատակը եղած է ձրի օւսում ջամբել, յարան բանալ եւ բանախօտութիւններ կազմակերպել, ուսման ծառայման համար: (տես նոյն, էջ 133):

1878-ին Հիմնուած է նաեւ Սնամատար Ընկերութիւնը: Հիմնադիրը եղած է Համբարձում Երամեան, իրեն օգնական ունենալով Ս. Յակոբի երիտասարդները: նպատակ ունեցած են ազրոս տղոց զգեստ, որքոն հայթայթել ու միեւնոյն ատեն ուշիմ մանուկները կրթելով, վարժապետացու եւ քահանայութեան պատրաստել: (նոյն, էջ 134):

1890-ին կազմուած է Սանուհեաց Կրթասէր Միութիւնը Սանդխտեան վարժարանի անդամների

ըջանաւարտութիւնը նախաձեռնութեամբ: Այս
Ընկերութեան նպատակը եղած է նիւթապէս բարձ-
րացնել վարժարանին վիճակը եւ աղջկանց սորվեց-
նել կարուծել ու ձեռագործ:

Ընկերութեան հիմնադիրն ու ատենակար ե-
ղած է Տիկին Իսկուհի Նրիմեան, որ եղբարեկեթ եւ
Մարինէ Աճէմեաններու, Մարգարիտ Պապիկեանի
եւ ուրիշներու հետ գործակցելով, գորդադործու-
թեան արուեստը զարգացուցած է: (տես նոյն, էջ
136):

1856-ին Մուշի մէջ կազմուած է Ընկերութիւն
Սուրբ Թարգմանչաց վարժարանին, որ հոգացած է
գալոցական ծախքերը: (տես «Արեւելք» թիւ 3854
6-18 Նոյ. 1898):

Նոյն թուականին հիմնուած է նաև Թարգ-
մանչաց Ընկերութիւն Մուշ, որ նպատուած է Ս-
կարապետ վանքի ուսումնարանին: (տես «Արեւելք»
թիւ 3854 6-18 Նոյ. 1898):

1878 Յուն. 1-ին հիմնուած է Գալոցասիրաց-
Արեւելեան Ընկերութիւնը կրթական զարգացու-
մի նպատակով: Նոյն թուականի Նոյեմբերին այս
Ընկերութիւնը հիմնուած է Ս. Մարիանէ թաղին մէջ
վարժարան մը: Ասիկէ դատ մէյ մէյ վարժարանի բա-
ցած է 1879-ին Բաղէշի, Ալաշկերտի մէջ: (տես
«Հանդէս Ամսօրեայ» 1952 թիւ 4-6, էջ 309): Այս
Ընկերութիւնը 1880 Յուլիսին կը դադրի գործելէ:

1880-էն ետք կը յիշուի Միսցեալ Ընկերութիւն
Մուշի կեդրոնական վարժ. ին գոյութիւնը (տես Աղան
Տարուցի «Հարազատ Պատմութիւն Տարօնայ» էջ
31):

1855-ին Վանի էրէրին գիւղին մէջ Ընկերութիւն
մը հիմնուած է, որուն անունը չէ յիշուած: Այդ
Ընկերութիւնը գիւղին մէջ գալոց մը բացած է,
բայց մեղի անձանօթ մնացած է անոր անունը: (տես
նոյն, էջ 140):

1874-ին Կ. Պոլսոյ մէջ հիմնուած է Գալոցա-
սիրաց Ընկերութիւնը, Հայոց Զօրի գիւղերու գա-
րոցներուն նպատակաւ նպատակով:

1879-ին Կ. Պոլսոյ բնակող նժդէհ Քերցցիներ
Վայոց ձորի գիւղախումբին մէջ գալոց մը բանա-
լու նպատակով, կը հիմնեն Երուանդունաց Ընկե-
րութիւնը:

1877-ին Կ. Պոլսոյ Արարատեան Ընկերութեան
Ալիւր գիւղի աշակերանները հիմնած են Սանոց Ըն-
կերութիւնը, առաջնորդութեամբ Զարար վարժա-
պետին, որպէսզի կիրակի օրերը Արարատեան
վրժ. ին մէջ կազմակերպեն զանազան նիւթերու
չորջ կասախօսութիւններ, Հասարակութեան միտ-
քի զարգացումին համար: Այս Ընկերութիւնը հո-
գացած է նաև տեղւոյն գալոցական ամբողջ կա-
րիքները:

1879-ին Գառնաշէն գիւղի Կ. Պոլսոյ բնակող
պանդուխտները հիմնած են Ասքանազեան Ընկերու-
թիւնը, նպատակու համար իրենց գիւղի գալոցին:
(տես նոյն, էջ 142):

1875-ին, Իլիսանի Գոմ-գիւղին գալոցին նպատ-
տելու համար գիւղին Կ. Պոլսեցեան պանդուխտները
էլը հիմնեն Գալոցասիրաց Ընկերութիւնը: (տես
«Հանդէս Ամսօրեայ» 1958, թիւ 5-9, էջ 313 - Հր-
եփրեմ Վրդ. Պողոսեանի յօդուածաշարքը):

1863-64-ին, Բաղէշ քաղաքի էլվիլ Մէյտան
թաղին մէջ հասարակութեան համար Կիրակեօրեայ
եւ երեկոյեան գալոց մը բացուած է Ղեւոնդեանց
Ընկերութեան կողմէ:

1867-ին Բաղէշի Մապրիօրու թաղին մէջ Լու-
սաւորչեան Ընկերութեան կողմէ հիմնուած է ման-
չերու գալոց մը:

1867-ին, դարձեալ կազմուած է Ընկերութիւն
մը Հոսիօթեան Օրիորդաց Ընկերութիւն- անուն-
ով, որուն նպատակը եղած է Բաղէշի մէջ աղջկանց
վարժարան մը հիմնել 1869-ին: (տես «Հանդէս
Ամսօրեայ» 1958 - թիւ 5-9, էջ 315, Հր. Եփրեմ
Վրդ. Պողոսեանի յօդուածաշարքը):

1867-ին Վարդանանց Ընկերութիւն մը կը
յիշուի, որ հիմնած է աղջկանց գալոց մը Բաղէշի
մէջ 1868-ի սկիզբները:

1867-ին Աբշախունեան Ընկերութեան կողմէ Թարանջի Թաղին մէջ բացուած է մանկերու դպրոց մը:

1867-ին, նոյն նպատակով հիմնուած է Գարոցատերաց Ընկերութիւնը Սախոյ Զորի դպրոցներու ծախքերը հոգալու համար:

1867-68-ին, Գոմս զիւլին մէջ զիւլբոթիկ վարժարան մը բանալու համար կազմուած է Գոմաց Ա. Աստուածածնայ Վանուց Ընկերութիւնը:

1868-ին, Բաղէշի Գոմաց Սալանձոր դաւանի մէջ երկսեռ վարժարան մը բանալու համար կազմուած է Հայրենասիրաց Ընկերութիւնը:

1869-ին Կ. Պոլսոյ Անճուռէր Ընկերութեան մասնաճիւղը բացուած է Բաղէշի մէջ կրթական նպատակով:

1878-ին ժողովրդական Ընկերութիւնը Բաղէշի մէջ կիրակնօրեայ դպրոց մը բացած է, արհեստասր աղագայիններու ուսում ստալու համար:

1879-ին, Բաղէշի մէջ կազմուած է նաև Վարդանանց Ընկերութիւնը, որ մղում տուած է բանալու Կեդրոնական դպրոցը ու ստանձնած է դպրոցին ծախքերը:

1879-ին, նոյն նպատակով հիմնուած է Գարոցատերաց - Արեւելեան Ընկերութիւնը, Բաղէշի դպրոցներուն ծախքերուն օժանդակելու համար:

1879-ին հիմնուած է Հասարակաց Ընկերութիւնը, Բաղէշի Կարմիրակ եկեղեցւոյ քով, ազբատ տոցոց համար դպրոց մը բանալու համար: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1959 թիւ 5-9, էջ 313 - չը. Եփրեմ Վրդ. Պողոսեանի յօդուածաշարքը):

1895-ին հիմնուած է նաև Հայուհեաց Ընկերութիւնը Կրթական նպատակով, որ աղջկանց վարժարան մը հիմնել կը միտի: (տես նոյն, էջ 319):

Սղերդի կրթական կեանքին մասին թէև տեղեկութիւններ չենք գտած, սակայն Անճուռէր Սանուց կրթական ընկերութեան մը մասին կը տեղեկանանք թէ՛ 1866-ին հոն իր մասնաճիւղը ունեցած է: (տես «Արեւելք» թիւ 3853 5-17 նոյ. 1898):

Կարսի վարժարաններու մասին տեղեկութիւններ չգտանք: Բայց և այնպէս հոն գտանք Սուրբ Գրեգոր Լուսաւորչեան Ընկերութիւնը, հիմնուած 1855-ին, որ ստասրած է տեղւոյն վարժարանական գործունէութեան: (տես «Արեւելք» թիւ 3894 6-18 նոյ. 1898):

Թէքէրապէ մէջ 1858-ին յիշուած է Միրառնասէր Ընկերութեան գոյութիւնը, որ մատակարարած է համանուն վարժարանի մը դպրոցական պէտքերուն: (տես նոյն):

Պանորմայի մէջ, 1859-ին յիշուած է Ընկերութիւն մը Ս. Լուսաւորչեան անունով, որ հոգաւար մարմին մը կը կազմէ տեղւոյն վարժարաններուն: (տես նոյն,):

Կիրասնի մէջ Ուսումնասիրաց Ընկերութիւն մը գոյութիւն ունեցած է 1863-ին: Դպրոցական նպատակներով է նաև ասիկա: (տես նոյն):

Զիլէի մէջ, 1864-ին գործած է Զիլէի վարժարանաց Ընկերութիւնը նոյն նպատակով: (տես նոյն):



ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿ ԿՐԹ-ԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կ. ՊՈՒՍՈՑ ԵՒ ԳԱԽԱՍԵՐՈՒ ՄԷՋ

Ինչպէս հայ առաքելականներ, նոյնպէս հայ-կաթոլիկներ ունեցած են կրթական ընկերութիւններ, որոնք օժանդակ մարմիններ հանդիսացած են գաղութներու զանազան պիտոյքներուն հայթայթումին:

Այս տեսակի ընկերութիւններու մէջ առաջինը հանդիսացած է Լուսաւորչեան Եղբայրութիւն Ընկերութիւնը, որ կազմուած է 1781-ին Ղալաթիոյ թաղին Դամինիկեանց Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ: 1803-ին այս ընկերութիւնը Սէն Բնուա եկեղեցւոյ պարտէզին մէջ հայ աղոյց կրթութիւն տալու նպատակով Մանկանց Դպրատուն մը կը բանայ, որ յետոյ կը յանձնուի Վենետիկի Միտիթարեան Միաբանութեան, ուր ուսուցիչ կը կարգուի Հր. Պօղոս Վրդ. Թընկուհան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1951 թիւ 11-12, էջ 548 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

Դժբախտաբար շէնք գիտեր թէ այս ընկերութիւնը որքան ատեն գոյատևած է: Սակայն եւ այնպէս, երբ գաղտնունը կը միանայ կղեմէսեան Եղբայրութեան հետ, այդ պատճառ կ'ըլլայ հայ-կաթոլիկներու Լուսաւորչեան վարժարանի մը հիմնադրութեան:

Ասկէ զատ կը յիշուի ուրիշ մը՝ Համազգային ընկերութիւնը, որ հիմնուած է 1846 Ապրիլ 1-ին, նախաձեռնութեամբ Մուրատեան եւ Ռափայէլեանի սաներուն: Հիմնադիրներ եղած են Մ. Սամանճեան, Յ. Տափութեան, Ա. Լուսթեան, Ս. Գալաղեան, Յ. Վարդանեան, Կ. Թիւրլէնտեան, Ա. Ասիէրեան եւ Ս. Աղնաւորեան: Այս ընկերութեան նպատակը եղած էր «առանց դատանական խարտիթեան, հայաբնակ վայրերու մէջ գաղութներ բանայ եւ ազգին մէջ գիտութիւն, ուսում, արհեստ եւ մանաւանդ երկրագործութիւնը զարդացնելու»:

Այս ընկերութիւնը մեծ ընդունելութիւն գտած

է հայ հասարակութեան կողմէ անխաբ, ու շիշ ատենէն ունեցած է ժող 600 անդամներ, ինչպէս որ նախորդ զուտին մէջ յիշեցինք իր անդին:

Համազգային ընկերութիւնը բերա թաղին մէջ տուն մը զննած էր եւ այդ իբրեւ կեդրոնատեղի դարձուցած էր: Սակայն հաջիւ քանի մը տարի կեանք կ'ունենայ այս ընկերութիւնը, դատանական իրնդիրներու պատճառաւ: Ընկերութիւնը կը լուծուի, բայց կեդրոնատեղիին շէնքը կը մնայ, որ կը վերածուի կաթոլիկ վարժարանի մը՝ Համազգային վարժարան անունով: (տես «Արեւելք» թիւ 3853 5-17 նոյ. 1898, Տոքթ. Տաղաւարեանի յօդուածաշարքը):

1847 Յունիսին սկիզբները Սամաթիոյ մէջ կազմած է Մեարտեան ընկերութիւնը, որ ծանօթ էր նաեւ Ս. Մեարտեան Եղբայրութիւն անունով: Ասիկա կը հիմնէ Համանուն վարժարան մը, միևնոյն ատեն աղքատ աղոյց գաղութական բոլոր պիտոյքները կը հալայ: (տես «Հանդէս Ամսօրեայ», 1956 թիւ 7-8, էջ 375 - Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի յօդուածաշարքը):

1859-ին հիմնուած է Մուրատեան եւ Ռափայէլեան վարժարանի Սանուց ընկերութիւնը, զարմեալ կրթական զարգացման նպատակով, որ նախորդին պէս երկար ատեն չի գոյատևեր: (տես «Արեւելք» թիւ 3858 5-17 նոյ. 1898 Տոքթ. Տաղաւարեանի յօդուածաշարքը):

1860 Դեկտ. 26-ին կազմուած է Հայկազնեան Դպրոցաց ընկերութիւնը, որ հոգածութիւնը բաժանուած է Հայկազնեան վարժարանին: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1951 - թիւ 11-12, էջ 552, Հր. Եփրեմ Վրդ. Պօղոսեանին յօդուածաշարքը):

1871-ին հիմնուած է Վարդուհեան ընկերութիւնը, որուն նպատակը եղած է բերա թաղին մէջ ազգական գիշերօթիկ վարժարան մը բանալ: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952 թիւ 4-6, էջ 302): Այս ընկերութեան հիմնադրութեան զօրմակցած է Տիգրեան մեծաւարուստ գերդաստանը:

Ժամանակաւոր վարչութիւն մը կազմուած է 1871-ին, որուն ատենապետը եղած է Անտոն Ս. Պրոբէճեան, իսկ ատենադպիրը՝ Յարութիւն Ե. Պրոյան: 1872-ին Ընկերութեան անդամներուն թիւը 130ի բարձրացած է: 1880-ին, Նաբհի այս Ընկերութեան, շինուած է աղջկանց վարժարան մը, որուն անունը մեղի ծանօթ չէ դժբախտաբար:

1875 Մարտ 1-ին, Ղալաթիոյ մէջ հիմնուած է Աղքատասէր Տիկնանց Ընկերութիւնը, որուն նպատակը եղած է աղքատ աղջկանց եւ աղոց օգնել եւ մանուսանդ հոգ տանիլ անոնց դպրոցական պիտոյքներուն, բարեկրթութեան եւ ուսման: Ընկերութիւնը 1900-ին դեռ իր գոյութիւնը կը պահէր:

1881 Դեկտ. ին, Համազդեաց Ընկերութիւնը իր բացած օրինորդաց վարժարանի ննամակալութիւնը կը յանձնէ Ազնուհի Տիկնանց Յասաղղիմասէր Ընկերութեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952, թիւ 4-6, էջ 312 Հր. Եփրեմ վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը):

1881 Յուլիս 23-ին կազմուած է Ներսիսեան Ընկերութիւնը Ստեփաննոս Պետրոս Ժ. Աղաբաբեան կաթողիկոսի կողմէ, հայ կաթողիկ հասարակութեան զպրոցներու յասաղղիմութեան ի նպաստ: (տես նոյն, էջ 313):

1884-ին հիմնուած է Վիեննական Միութարեանց Կ. Պոլսոյ վարժարանի Նախկին Աշակերտաց Ընկերութիւնը, որ Բանկայթի թաղին մէջ փակուած դէշերօթիկ վարժարանը կը վերաբանայ Սեպտ. ին, համայնքին կաթողիկոս-Պատրիարք Աղաբաբեանի եւ հայ-կաթողիկ ախանաւոր անձնաւորութիւններու օգնութեամբ: Այս Ընկերութիւնը 1900 թուականին դեռ կը գործէր: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1952 թիւ 7-9, էջ 447, Հր. Եփրեմ վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը):

1892-ին Ս. Յովսէփեան Եղբայրութիւն Ընկերութիւնը, որ հնազոյն Ընկերութիւնն էր, հիմնուած 1742-ին, դուրս կրօնական էր, վերոյիշեալ թուականին վերակազմուելով, կը վերածուի կրթա-

կան Ընկերութեան մը, որ հոգածու կ'ըլլայ աղքատ աղոց զպրոցական պիտոյքներ հայթայթելով: Այս Ընկերութեան վարչութեան ատենապետն էր Յովսէփ Ծ. վրդ. Ռօքոսեան, օգնական ունեւալով կարապետ Գարապաշեան, Յովսէփ Թընկոբեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1951 թիւ 11-12, էջ 547, Հր. Եփրեմ վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը): Այս Ընկերութիւնն ալ 1900 թուականին իր գոյութիւնը կը պահէր եւ ունէր մօտ 855 անդամներ:

Կ. Պոլիսէն դուրս, զատուներու մէջ եւս կազմուած պէտք են ըլլալ կրթական Ընկերութիւններ, որոնք ստասր հանդիսացած են դպրոցական գործունէութեան, սակայն դժբախտաբար մեր յընթացս ուսումնասիրութեան ատենալներ շղտանք բացի Կասաբեկի մէջ 1891-92-ին կազմուած Աղքատասիրաց Ընկերութեանէն, որուն հիմնադիրը եղած է Վահան Գ. Շապանեան, հաւանութեամբ կարապետ Եղ. Քալանթարի: Այս Ընկերութեան նպատակը եղած է հայ-կաթողիկ աղքատ մանուկներուն ուսման ծախքերը ապահովելու, ինչպէս նաեւ նախակրթարան մըն ալ բանալու: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1959 թիւ 1-4, էջ 138, Հր. Եփրեմ վրդ. Պօղոսեանի յօդուածաւարքը):



Հայ-բողոքական համայնքի անդամները կազմած ըլլալով ամերիկեան միտնոնաքաներուն, գործակցելով անոնց հետ, եւ իրենց դասակներն ալ միտնոնաքան վարժարաններու մէջ կրթութիւն աննելով, անհրաժեշտութիւն չեն գտած կրթական ընկերութիւններ պահելու: Բայց եւ այնպէս մի քանի կրթական ընկերութիւններու յիշատակութիւնը գտանք մեր պրպտումներուն տեսողութեան:

1871-ին Ռումէլի Հիտարի Ամերիկեան Ռոպլըթ Գոլէճի 40 ուսանողներ հիմնած են Հայ-Սանուց Ընկերութիւնը, նպատակ ունենալով Ռոպլըթ Գոլէճի հայ աշակերտներուն մատուցական զարգացման նպատակ: 1881-ին Ընկերութիւնը կոչուած է նաեւ Հայ Ուսանողաց Ընկերութիւն: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1954 թիւ 7-8, էջ 339):

1872-ին հիմնուած է Հայկեան Սումբ Ընկերութիւնը, Ռոպլըթ Գոլէճի հայ ուսանողներու կողմէ, Ռումէլի Հիտարի գիւղի ազգատիկ դպրոցին ապագայ յառաջդիմութեան օժտակելու նպատակով: (տես նոյն):

1870-ին հայ-բողոքականներ թարբերդի Հիւսէյնիկի գիւղին մէջ հիմնած են Ուսումնասիրաց Ընկերութիւնը:

1870-75-ին Հիւսէյնիկի բողոքական հայեր կազմած են նաեւ Կանանց Ընկերութիւնը, իր օժանդակ Ուսումնասիրաց Ընկերութեան: (տես «Հանդէս Ամսօրեայ» 1959 թիւ 9-11 - էջ 446):

1872-ին Եօզկատի մէջ գոյութիւն ունեցող իրենց վարժարանին իր բողոքատար մարմին, հայ-բողոքական ուսումնասէր անձեր կազմած են Վասնեան Ընկերութիւնը:

Գուցէ ուրիշներ ալ գոյութիւն ունեցած ըլլան, որոնք մեզի ծանօթ չեն, որովհետեւ անոնց մասին սեւէ տեղեկութիւն չգտանք:

Սոյն աշխատութիւնը, որ կ'ընդգրկէ թրքահայ կրթական շարժման սկիզբի տարիներն մինչեւ ժ.թ. գարու վերջերք երկարող՝ մօտ երեքարիւրամեայ պատմութիւնը, յաջորդական սերունդներու հազարաւոր մշակմանու եւ գործիչներու բեղմնաւոր գործունէութեան արդասիրքն է:

Պատմական տեսակները կ'ապացուցանեն, թէ անոնց աշխատանքը դիւրին չէ եղած, մանաւանդ սկզբնական շրջանին, երբ թուրք ժողովուրդին հետ հայ հասարակութիւնն ալ բռնատիրական ամպամած երկինքին տակ, խաւարի մէջ կ'ապրէր:

Հայ ժողովուրդը ընտղորէն յառաջդիմաւոր եղած է: Գարեբու տեսողութեան փաստուած է այլ իրողութիւնը: Սակայն թրքահայութեան պարագան անրնական պայմաններու տակ, ճակատադրուած էր այդպէս ըլլալու:

1840-ական թուականներուն Օսմանեան թուրքերը կայսրութեան մէջ բարեկարգութեան խնդիրը քիչ մը փոխեց թրքահայերու վիճակը, ու կարող մը հայ ընդունակ ուսանողներ պատահութիւն ունեցան թուրքերու հետ երթալ եւրոպական երկիրներ, ստանալու համար բարձրագոյն ուսում եւ մասնագիտանալով, վերադառնալ ծննդավայր, ծառայելու համար իրենց հայրենակիցներուն ու պետութեան:

Եւրոպական կիցադղին ընտելացած եւ արդիականութիւնը իւրացուցած վերադարձող հայ երիտասարդներ, նոր զարգացման ճանապարհներ հայտնաբերեցին Կ. Պոլսոյ հայ հասարակութեան մէջ:

Անոնք լծուելով արգաչին պաշտօններու, յեղաշրջում առաջ բերին ազգային ընդհանուր կեանքին մէջ, չհանդուրժելով հին գործելակերպին:

Այդ առումով, կրթական հնաւանդ դրութիւնն ալ փոփոխութիւն պիտի կրէր, նոր մեթոտներով պիտի կիրարկուէր դաստանդութիւնները, հայու միտքը յառաջացնել մտայնութեամբ լուսատրեկու մտադրութեամբ:

Սանդախտ այդ առաջադրութիւնով, կացինի մէկ հարուածով ուղեցին տապալել հին կրթական գրութիւնը ու անոր տակ կեցնել նորը, ետանդ մտցնելու համար կրթական շարժման դորձունէութեան մէջ:

Այն ինչ որ կը մտածուէր նորեկներու կողմէ, կրթական հին գրութիւնը հիմնովին շնչել հնարուող շեղու, սրտհեռու, ան եկեղեցական հիմերու վրայ դրուած էր և կը դունուէր կղերական դասի հոստուորութեան սակ:

Պայքարը հինին և նորին միջև շատ բուռն եղաւ: Հինը մերժեց տեղի տալ նորին և նոյնիսկ անոր արդիական դադարաբարանութեան դէմ կեցաւ ու որակեց զայն «հակաբոն»:

Այն ժամանակուայ հայ հասարակութեան միտքն ու հոգին պարտուած ըլլալով հոգեւորական երկիւղածութեամբ, ի միճակի չէր գատորշել եկեղեցին դպրոցէն, բնորունիլ առաջինին հոգեւոր հաղորդականութիւնը և երկրորդին մատուր լուստորութիւնը:

Ներմուծուած նորոյթներու հակամերժ գրութիւնը մնաստակար եղաւ թրքահայ կրթական շարժման զարգացումին համար: Սակայն ժամանակի քննադէպին փոխուեցան մարդկութեան մտածելակերպն ու իմացականութիւնը:

Հայ հասարակութեան հետ, կղերական դասին պատկանողներ ևս ճահճացած մտայնութիւնը փոխելով, հետամուտ եղան ժամանակի պահանջներու հետ ընթանալու: Այնուհետեւ հին գրութիւնը անհետացաւ: Անժխտելի իրականութիւնը այդ է, նոր նուաճումներ կրնան դորձուիլ, յամբ բայց յամառ ճիշդերով, բայց ոչ մէկ անդամէն, այլ ժամանակին հետ և անոր օժանդակութեամբ միայն:

Կ. Պոլիս Օսմ. Թուրքիոյ մայրաքաղաքն ըլլալով, իր աշխարհադրական դիրքին շնորհիւ արեւելեան և արեւմտեան երկիրներու կամուրջը կը հանդիսանար: Հոն յաճախակի օտար ազգութիւններու հետ առևտրական, մշակութային և քաղաքական

յարաբերութիւններ կը կատարուէին, որմէ կրցան նպաստուորուիլ կոստանդնուպոլստրեանկ հայերէն շատեր և յատկապէս ղեկակցեց շարժումը:

Ստանաւորելով խօսքը կրթական դորձունէութեան մասին, ազգային դորձիւններ օգտուեցան Թուրքիա թափանցող եւրոպական մատուորական առաւելութիւններէն:

Թէև, կրօնական բնոյթ կրող օտար միախնամական կողմակերպութիւններ իրենց փրօփականտով մնաս հասցուցին Հայ Առաքելական Եկեղեցւոյ, ինչով անոր կարօտեայ անդամները, սակայն միւս կողմէ մրցակցելու խիճան հանդիսացան, որպէսզի հայ կրթական դորձիւններ սթափին ու զորձեն համաձայն օրուայ սահմանջեներուն և նորութիւններուն, հաննտուր մշակուած կրթական ճրարելով:

Իրաւ է թէ հայ առաքելական եկեղեցւոյ պատասխանատու վարիչները անդժը պայքար մղեցին օտար միախնամութիւններու դէմ, սակայն ստիկա կատարուեցաւ պարզապէս Հայաստանեայց Եկեղեցւոյ և անոր հաստացելոյ ժողովուրդին ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար: Ասկայն դաւանական այդ պայքարները հեռուէնէ մեղմացան և սոյա զողորեցան, որովհետեւ տարիներու փորձառութիւնը փաստեց, թէ սէջաբ էր կողմերու միջև սակզմուէր հասկացողութեան ոգի և փոխադարձ յարգանք ու միեմտոյն տան զոյանար համադորձակցական դեռին մը, որմէ կարելի ըլլար քաղցի դրական արդիւնքներ:

Թէև ակնկալուած համադորձակցութիւնը չիրականացաւ, սակայն հակամարտութեանց զարկեցումը բուարար եղաւ, որ Հայ-Առաքելականներ կարենային աւելի կողմակերպուած աշխատանք տանիլ, կրթական շարժման զարգացումին համար: Պետականութենէ դուրի թրքահայութիւնը, տարիներ շարունակ իր լուսայէն բաժին հանած էր զպրոցաչինութեան համար: Գպրոցներու մեծամասնութիւնը շինուած է ժողովրդային հանգանակութեամբ, լրացուցիչ բաժինը թողով բարերար ու-

ուսմնասէր ազգայիններուն կամ ամերկաններուն:

Եւեղ զբամական միջոցներով դպրոցներ պահուած են, այն ալ բոնապարտական ծանր լուծին տակ: Թէև դպրոցներէն շատերը երկարատեւ չեն դաշտակաւած, նիթական մատակարարման նուազումին հետեւանքով, սակայն թրքահայ կրթական գործիչներ, փակուած կամ փլուծ դպրոցներու անց նորեր կարողացան բանալ, շրջակայքէն տիրող դժուարութիւններէն: Ահա ի՞նչ ինչու համար դպրոցական երկար ցանկեր կազմուած են դանազան սուրբերու եւ բարեբարներու անուններով:

Յաջորդող սերունդներու ուսումնական մակարդակը բարձրացնելու մտադրութեամբ, թրքահայ կրթական գործիչներ, ժամանակի պահանջները լրացնող կանոնաւոր վարժարաններ կը կառուցանեն ու զանազն կ'օժտեն որակաւոր ուսուցչական կազմերով եւ անոնց հետ մէկտեղ, հինէն գործող քաջահամբաւ կարգ մը դպրոցներու ուսումնական ծրագրերը փոփոխութեան ենթարկելով, բարձրորակ ուսումնարաններու կը վերածեն:

Բարձր մակարդակի վարժարաններ պահել, կրթիւնը մեծ ծախսեր կատարել: Բայց որովհետև Պարսիարքարանը ի վիճակի չէր յանձնառու ըլլալու, նման վարժարաններու կարիքները հոգալու, կազմակերպուեցան դանազան անուններով հոգատար ընկերութիւններ, որոնք վարչական գրութեամբ, սատար հանդիսացան շատ մը դպրոցներու եւ վարժարաններու ծախքերը հոգալու համար: Բաւական տարիներ վերջ, այդ ընկերութիւնները իրենց գործունէութեան ծաւալը ընթարձակեցին եւ աղքատ ընտանիքներու զուակներէն շատերուն առիթ ընծայեցին, որ ուսում առնեն եւ առաւել եւս, անոնք մատակարարեցին կարօտեալ աշակերտներու գրեական պիտոյքներն ու զգեստները:

Որքան լաւ պիտի ըլլար, եթէ մեր տրամադրութեան տակ գոնուէին բաւական հոխ տարիներու դպրոցական էլեւմուտքի եւ անոնց կատարուած յատկացումներու հաշուեցոյցերը: Ափսո՛ս,

յնթաց մեր պրպուսմներուն քիչ անդամներ հանդիպեցանք դպրոցական պիտոյքներու միջնակարգութիւններու եւ բնականաբար կցկատար այդ տուեալներով, կարելի չէր դպրոցներու ընդհանուր ֆինանսական տարողութիւնը ցոյց տալ, որ այնքան հետաքրքրական կը թուէր ըլլալ:

Յամենայն դէպս, կատարուած իրադարձութիւնները ցոյց կուտան թրքահայ ժողովուրդի դպրոցասիրութիւնը եւ կրթական գործիչներու եւ մշակներու անուրանալի նուիրուածութիւնը, որոնք սպաւելով թրքական գեհեկին մէջ, դիտակցական սղիով եւ համբերատար կուս կորովով, զբամական շնչին վարձատրութեամբ, կատարեցին իրենց սրբազան առաքելութիւնը:

Մաշտոցեան զօրասիւնի հերոսներն են անոնք, որոնք ի սէր հայ դպրութեան յարասեութեան ու ծաղկումին, զահարեցին իրենց ամբողջ կեանքը: Բարձր արժանիքներու տէր այս անձնուէր հայագրիները, անսակարկ սղիով ու պատուախնդրութեամբ, ծառայեցան դպրոցական սպաւելզէն ներս գործուող անիրաւութիւններու, ուսուցիչի պատմուծան հողած մակարայծներու պաշտպան կանցնող ուսումնական եւ թաղական խորհուրդներու կարգ մը փառամոլ ու շահապաւս անդամներու դէմ, ի պաշտպանութիւն յարեանական դարձնուեցան անաբգել արդիւնաբերութեան:

Թրքահայ կրթական գործունէութիւնը թէև բաւական առժամ է անբարեխիղճ ալլազան արաբներէն եւ ուսումնական յարկերէն ներս ստեղծուած անխորժ երևոյթներէն, սակայն «ժամանակը խնդիրը լուծած է» ինչպէս կ'ըսէ ժողովրդային առածը, մեկուսացումի ենթարկելով ետակեղբուն անհասները, ազգային եւ կրթական մարզերէն ներս: «Կրթական գործունէութիւնը կրնայ բարեյաջող պայմաններու եւ հողածու ձեռքերու մէջ ուսմանալ», կ'ըսուի շատ անգամ:

Իրականութեան մէջ, թրքահայ կրթական շարժումը բարեյաջող պայմաններ չգտաւ տիրող

բանասիրական վարչակարգին ներքև:

Փոստօրէն, սն ուսնացաւ շնորհիւ ազգանուէր ու ողջմիտ այն հաղարար մշակներու եւ կրթական դարձելներու անխառն ճիգերուն, որոնք կերտեցին փառաւոր պատմութիւնը թրքահայ կրթական դարձունէութեան:

Ինչ պատմութիւնը իր շարունակութիւնը ունի, քանզի կրթական աշխատանքը կը գոյատեւէ թուրքիոյ մէջ մեծ յաջողութեամբ, աւելն առնելով փառաւոր անցեալէն:

Պանծալի է թրքահայ կրթական շարժման ամէն դրուագ, որոնք ամէն հայու կուրծքը կ'ուռեցնեն հպարտութեամբ ու անոնց հեղինակներու անթառամ յիշատակը, ակնածանքով կը խոնարհեցնեն հայու ամէն գլուխ:

(ՎԵՐՁ)

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱՅ ԱԳԲԻՒՐՆԵՐ

- 1.- Ալլոյոյաճեան Արշակ - Պատմ. Հոյ Կեսարիոյ - 1937 Գահիրէ
- 2.- Ալլոյոյաճեան Արշակ - Յուշամատեն Կուտինա-Հայութեան - 1961 Պէյրութ
- 3.- Ալլոյոյաճեան Արշակ - Պատմ. Հայ Դարոցի - 1946 Գահիրէ
- 4.- Ալլոյոյաճեան Արշակ - Պատմ. Եւրոպիոյ Հայոց - 1932 Գահիրէ
- 5.- Արզումանեան Ա. Յակոբ - Էվէրէկի Պատմ. 1935 Գահիրէ
- 6.- Ալվազեան Արբահամ - Շար. Հայ Կենսադրութ. 1893 Կ. Պոլիս
- 7.- Աղատեան Թորոս - Յորեւեան, Յիշատակ. Բերայի Աղբատարն. (1861-1927) եւ Դարձանատ. - 1927 Կ. Պոլիս
- 8.- Արմաշու Դպրվ. ի 25 ամեայ Յորեւ. 1889-1914) - 1914 Կ. Պոլիս
- 9.- Գալէմբիարեան Գր. Ծ. Վրդ. - Կենսագրութիւններ - 1915 Վիեննա
- 10.- Գալուստ Վրդ. Լճեցի - Կ. Պոլիս Հայոց Գուս. Կորստեան եւ Դուս Կենաց Բացեալ - 1862 Կ. Պոլիս
- 11.- Գալուստեան Հ. Գր. - Մարաշ կամ Հերոս Զէյթուն - 1934 Նիւ Եորք
- 12.- Գալֆուեան Աղջկանց Որբանոց (1866-1934) Պատգիւղ - 1935 Կ. Պոլիս
- 13.- Դարանաղցի Գրիգոր - Ժամանակագրութիւն - (Մեարաց Վրդ. Նշանեանի) 1915 Երուսաղէմ
- 14.- Եղիայեան Բիւզանդ - Ասանայի Հայոց Պատմ. 1970 Անթիլիաս
- 15.- Երամեան Համարձուժ - Յուշարձան Վան-Վասպուրականի - 1929 Աղեքաանդրիա
- 16.- Զարդարեան Վահան - Յիշատակարան (1512-1933) - 1939 Գահիրէ

- 17.- Էսանան Երոնամեայ Պատմ. (Վրժ. ի 60ամեակ) 1955 Իսթանպ.
- 18.- Էջոէրմեան Հմայակալ Բհնյ. - Երչատակարան Հնդեակ Եսրեւեան Ս. Խաչ Եկեղեցւոյ Մկրտարու - 1676-1926 Իսթանպ.
- 19.- Թէոդիկ - Տիպ ու Տաս - 1912 Կ. Պոլիս
- 20.- Ծարեան Գ. Մ. - Գրեզոր Պատուելի Փէչլիմալեան - 1912 Գահիրէ
- 21.- Լէօ - Հայոց Պատմութիւն - 1946 Երեւան
- 22.- Զէյթունի Պատմագիրք 1960 Պուէնտս Այրէս
- 23.- Հանէսեան Մարտիրոս - Հարիրբքսանհինդամեայ Եսրեւեան Բեքայի Ս. Երբորդութիւն Եկեղեցւոյ - 1932 Կ. Պոլիս
- 24.- Ճիզմէճեան Գ. Մանուկ - Խարբերդ եւ իր զուակները - 1955 ԲայիՓորն
- 25.- Մխալեան Յ. Գրեզոր - Պարտիզակն ու պարտիզակցին - 1938 Գահիրէ
- 26.- Մեյրոն - Ասատուր - Երեքդարեան Պատմ Ս. Հրեչտակապետ Եկեղեցւոյ Պարաթու. (1627-1931) 1931 Կ. Պոլիս
- 27.- Մատաղճեան Մ. Թորոս - Եուչամատեան Թոմարդայի - 1959 Պէյրութ
- 28.- Նշանեան Մեսրոպ Արքեպ. - Երեմիա Ձէյէպի Բէօմիւրճեան - Օրապրութիւն - 1939 Երուսաղէմ
- 29.- Չորմիսեան Լեւոն - Համայնպատակեր Արեւմտահայոց Մէկ Դարու Պատմ. - 1972 Պէյրութ
- 30.- Պօղոսեան Յ. Պ. - Հաճընի Ընդհանուր Պատմ. եւ Երջակայ Գօզան-Տաղի հայ գիւղերը 1942 Լոս Անճէլըս
- 31.- Մխիթարեանց Արէլ Վրդ. - Վէպ Գաղթականութեան Հայոց Տրպալիդանու - 1857 Կ. Պոլիս
- 32.- Պատրիկ Ն. Առաքէլ - Պատմագիրք Եուչամատեան Սերաստիոյ եւ Գուսուի Հայութեան 1974 Պէյրութ
- 33.- Պիպէրեան Արտաշէս եւ Եղիշէեան Վարդան - Պատմագիրք Ատախազար (Ատուածարեակ)

- 34.- Սարգիսեան Եսարութիւն Բհնյ. (Ալեւոր) - Բարու - 1960 Փարիզ
- 35.- Սրուանճուեանց Գարեղին Վրդ. - Թորոս Ազարար - 1932 Գահիրէ 1879 Կ. Պոլիս
- 36.- Սրուանճուեանց Գարեղին Վրդ. - Համով Հոտով - Կ. Պոլիս
- 37.- Սիւրմէնեան Գ. - Երգնկա - 1947 Գահիրէ
- 38.- Սարաֆեան Ա. Գէորգ - Պատմութիւն Այնթէպի Հայոց 1953 Լոս Անճէլըս
- 39.- Սահակեան Արամ - Գիւցաղնական Ուրֆան եւ իր հայորդիները - 1955 Պէյրութ
- 40.- Սիբուսի Ճ.Յ. - Պոլիս եւ իր Գերբը - 1970 Պէյրութ
- 41.- Տ. Յակոբ Սըրազան Արքեպ. - Լուսաւորակները ու Լուսաւորութիւնը - 1858 Կ. Պոլիս
- 42.- Վարժապետեան Յակոբ - Երչատակարան 75-ամեայ Եսրեւեանի Ս. Եսարութիւն Եկեղեցւոյ Գում-Գարուի Գրքի (1855-1930) - 1931 Իսթանպ.
- 43.- Տաշեան Յակոբ Վրդ. - Մայր Եուցակ Զեռպարայ 1895 Վիէննա
- 44.- Տարոնեցի Աղան - Հարազատ Պատ. Տարօնոյ - 1962 Գահիրէ
- 45.- Փոլաեան Լ. Անդրանիկ - Պատմ. Հայոց Արարիկիբի - 1969 Նիւ Եորք
- 46.- Բուեան Յակոբ Վրդ. - Հայքի Զմիւռնիա եւ ի Երջակայս - 1890 Վիէննա
- 47.- Բէշեան Առաքել եւ Պարսամեան Մկրտիչ - Ակն եւ Ակնցիք - 1952 Փարիզ
- 48.- Բէշեան Բիւզանդ - Պատմ. Ս. Փրիշի Հիւանդանոցին Հայոց ի Կ. Պոլիս - 1887 Կ. Պոլիս
- 49.- Օրմանեան Մաղաքեա Արքեպիս. - Ազգապատում - (1960-ի ապագր.) Պէյրութ
- 50.- Արեւելք - օրաթերթ 1895, 1898, 1899 Կ. Պոլիս
- 51.- Արեւելեան Մամուլ-Լիւսամեայ - 1879-80-98 Կ. Պոլիս
- 52.- «Արեւ» - օրաթերթ - 1924 Գահիրէ
- 53.- Ազատամարտ - օրաթերթ - Օրոստոս 1910 Կ. Պոլիս

54.-	Աւետարեւր-հանդէս-	1905	Կ. Պոլիս
55.-	Բիւզանդիոն -օրաթերթ-	1898-1903	Կ. Պոլիս
56.-	Բագմազկէլ -հանդէս-	1922	Վիէննա
57.-	Հանդէս Ամսօրեայ	1890, 1898, 1908, 1951, 1952, 1953, 1954, 1957, 1958, 1959, 1960	Վենետիկ
58.-	Հայրենիք -օրաթերթ-	1892, 1893, 1894, 1895	Կ. Պոլիս
59.-	Նոր Լուր Յունիս, Յուլիս	1925	Բաթանպուլ
60.-	Նոյեան Ազանի - հանդէս	23 Այրիլ 1852	Կ. Պոլիս
61.-	Նոր Կեանք - հանդէս	1900	Լոնտոն
62.-	Մարմարա -օրաթերթ-	Հոկտ. 1965	Մարա. 1968
63.-	Մանգումէ Էֆրեար	- 1870, 1873	Կ. Պոլիս
64.-	Մասեայ Ազանի -	1858	Փարիզ
65.-	Մասիս -օրաթերթ-	1 Մայիս 1865 եւ 1880	Կ. Պոլիս
66.-	Լոյս -Հանդէս-	1908	Փարիզ
67.-	Շիրակ -ամսագիրք-	1905	Աղեքսանդրիա
68.-	Պայքար-արաթերթ-	1967	Իսթանպուլ
69.-	Սուրհանդակ -	1905	Կ. Պոլիս
70.-	Վերջին Լուր -օրաթերթ-	1922	Իսթանպուլ
71.-	Պայքար -օրաթերթ-	1963	Ա.Մ.Ն.
72.-	Փունջ -արաթերթ-	1872, 1874, 1878, 1879, 1895, 1896, 1897,	Կ. Պոլիս
73.-	Ընդարձակ Օրացոյց Ա. Փ. Ազգ.		
74.-	Հիւանդանոցի- 1901 Կ. Պոլիս		
74.-	Եզրպատհայ Տարեցոյց (Լ. Աճէմեան)	1926	Աղեքսանդրիա
75.-	Գրպանի Տարեցոյց	1834	Կ. Պոլիս
76.-	Գրպանի Տարեցոյց	1922	Իսթանպուլ
77.-	Cyrus Hamlin ((My life & times - missionary in Turkey))	Boston - Chicago	1893:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Էջ

1.-	Փոխան Յասալարանի	5
2.-	Կրթական շարժման սկզբնաւորութիւնը	11
3.-	Հանրային Գորոցներ քանալու ճիգեր	21
4.-	Պաւստնեբու կրթական հաստատութիւնը	33
5.-	Ուսումնական մակարդակի բարձրացման նկատմամբ ծրարումներ	60
6.-	Գորոցաշինութեան զարգացումը Կ. Պոլսոյ մէջ	92
7.-	Կ. Պոլսոյ թանգարանի վարժ. երու ցանկը	148
8.-	Գորոցը գաւառներու մէջ	155
9.-	Պաւստնեբու հայ վարժարանները	240
10.-	Կրթական բարեկարգման ճիգեր-	254
11.-	Որբանոցներ եւ գիւլերթիկ դպրոցներ Կ. Պոլսոյ եւ գաւառներու մէջ	278
12.-	Հայ-կաթոլիկներու կրթական գործունէութիւնը	292
13.-	Հայ-կաթոլիկ վարժարաններ	334
14.-	Հայ-բողոքական կրթական գործունէութիւնը Կ. Պոլսոյ եւ գաւառներու մէջ	337
15.-	Հայ-բողոքականներու վարժարաններ	377
16.-	Հայ-Առաքելական համայնքին կրթական ընկերութիւնները Կ. Պոլսոյ եւ գաւառներու մէջ	381
17.-	Հայ-կաթոլիկ կրթական ընկերութիւններ Կ. Պոլսոյ եւ գաւառներու մէջ	470
18.-	Հայ-բողոքական կրթական ընկ.եր	474
19.-	Վերջաբան	475
20.-	Օգտագործուած աղբիւրներ	481

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր Ը

Գահիրէ

- Ճէյմս Պրայս եւ Հայերը 1975
- Հայերու սատարը թուրք մշակույթին եւ
անտեսութեան 1976
- Ապրումներ մայր հողին վրայ 1980
- Համառօտ Հայոց պատմութեան դասագիրք
Ա. Բ. Գ. պատրաստական դասարաններու
համար (նախնական շրջանէն- Հայկ.
Կիլիկիոյ թաղաւորութիւն) 1981
- Հրատարակութեան պատրաստ եմ
Արիւ օրաթերթի մատենագրութիւնը
(1915-1925 թթ.)
- Հայ ժողովուրդին ազատագրական
պայքարը ժ.թ. դարու Ա. կիսուն

رقم الايداع ٨٤/٤١١٤

الحركة التعليمية باللغة الارمنية
في تركيا

المؤلف

أوهانيس دير بدوسيان

١٩٨٤

مطبعة جريدة « أريف »
القاهرة